6988

91(c)
U-93

СКОРОПЕЧАТНЯ
ПЕРЕПЛЕТНАЯ, ПИСЧЕБУМАЖ.
Е. А.
Акопіан
Тифлис
МАГАЗИН

13,497

ՏԱՐԵՐՔ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

91 (ռ)
Ա-93

ՏԱՐԵՐՔ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ՅՕՐԻՆԵԱՅ

Հ. ԳԱՆԻԼ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

565

Երրորդ տպագրութիւն

1804
18493

ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ՅԱԽԵԼԵԱԼ

4
20
30
7/XI–1922

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1900

3852Ե4

Ա Զ Դ

Աշխարհագրութեան պէս քիչ ուսումն կայ փոփոխութեանց ենթակայ, ըստ արտաքին երեւութին և ըստ քաղաքական անցից հողագունտս չէ նոյն՝ ինչ որ էր հարիւր տարի առաջ: Ուր երբեմն անջրդի աւազուտք կը ծածկէին ընդարձակ մակերեւոյթ մը, այժմ երկու հանդիպակաց ծովու բազուկներ իրարու ձեռն կարկառելով՝ զքաղաքականութիւն և զառատութիւն իրարու հետ կը փոխանակեն. երբեմն հեթանոսութեան և բարբարոսութեան խաւարին մէջ խարխափող ժողովուրդք, այսօր Աւետարանին լուսով պայծառացեալ կ'ածին և կը զարդանան, և իրենց թաւ անտառներն և հիւղերն գեղեցկաշէն քաղաքաց և պալատանց տեղի կու տան: Ընդհակառակն բարեբեր ցամաքներ և ծաղկեալ քաղաքներ՝ բնութեան պատուհասներուն զոհ կ'երթան, ի գետոց և ի ծովէ ջրասոյզ լինելով, կամ երկրի դղրդմանէն հիմնայատակելով: Ուրիշ կողմեր տէրութիւնք զինու զօրութեամբ իրենց սահմանները կ'ընդարձակեն, առաւելապէս Եւրոպայէ դուրս հեռաւոր աշխարհաց մէջ:

Արդ աշխարհագրութեան դասատետր մը հասարակաց ընդունելի ըլլալու համար, հարկ է որ յիշատակութեան առնու այս ամենազգի անցք:

Ի բաց թողլով սոյն ուսման վերաբերեալ գանազան ժամանակ հրատարակեալ ծանր և արդիւնաւոր գրու-

2004

21739.60

թիւնք, ժամանակաւ նաև դպրոցական դասագիրք մը լոյս տեսեր էր, որ երկու տպագրութենէ յետոյ՝ օգտակարութիւնը մասամբ կորսնցուց, վերոյիշեալ պայմանները կորսնցուցած ըլլալով:

Ուստի այս առժամանակեայ պարապութիւնս լրացնելու դիտմամբ կը հրատարակենք առաջիկայ դիւրատար և պատկերազարդ դասագրքոյկս, հետևելով ընդհանրապէս Անսար գաղղիացւոյ աշխարհագրութեան պարզ ոճոյն, որոյ մինչև ցարդ 40 տպագրութիւնն իւր յետին գովեստն չէ: Ակէ զատ աչաց առջև ունէինք նաև Է. Գորդամպէրի, Օ. Ռըգլիւի և Աքիաբբարելլիի նոր գործերն: Վիճակագրական տեղեկութիւնք ընդհանրապէս ըստ վերջին հրատարակութեանց Կոթայի դրուած են: Այսու հանդերձ կը խոստովանինք որ մանր կրկտող մը կրնայ ի թուային մասին տեղ տեղ տարբերութիւն գըտնել յօտարազգի դասագրոց. սակայն պէտք է գիտնալ որ յայդմ մասին ոչ ոք յաչխարհագրաց համաձայն է ուրիշի մը հետ. մենք այնմ հետևեցանք՝ որ աւելի հաւանական թուեցաւ:

Ցուսալով որ այս փոքրիկ երկասիրութիւնս ուսումնասէր պատանեաց ընդունելի անցնի, կը խոստանանք այժմէն ի նկատի առնուլ ամէն քաղաքական և բնական դէպք, որք օր ըստ օրէ կը հանդիպին. որպէս զի յերկրորդ տպագրութեան կարևոր սեպուած փոփոխութիւնները կատարենք:

Ի վերջ գրքուկիս կը դնենք ցուցակ մը իւրաքանչիւր տէրութեան տարածութեան, բնակչաց, մայրաքաղաքաց և անոնց բնակչաց, գործոյս տպագրութեան ժամանակ եղած ամենանոր հրատարակութիւններէ քաղելով:

1885

ԱՋԴ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Ներկայ դասագրքիս ապգին մէջ գտած մեծ համակրութիւնն, որով քիչ ժամանակի մէջ կրկին տպագրութիւնք սպառեցան, քաջալերեցին զմեզ այս երրորդ տըպագրութեանս ձեռնարկելու, պէտք եղած բարեփոխութիւնները ի գործ դնելով, ըստ մեր խոստման, այսինքն հնգետասնամեայ չրջանիս մէջ պատահած անցից հետեւելով, և գրեթէ երրորդ մասամբ մը ճոխացընելով պարունակութիւնն:

1900

ՏԱՐԵՐՔ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Աշխարհագրութիւնն է երկրիս նկարագրութիւնը:

Զեւ են Բնիւնոք երկրի. — Երկիրս գունաւ ձեւ ուներ, սրուն երկու ընդդիմակաց կողմերն քիչ մը տափակած են և կը կոչուին բեւեռք երկրի:

Արջային Բնիւնը. — Կ'ըսուի Արջային Բեւեռ՝ երկրիս այն բեւեռն որ Արջ համաստեղութեան կը նայի:

Հակարջային Բնիւնը. — Կ'ըսուի Հակարջային Բեւեռ այն՝ որ Արջային Բեւեռին հակառակ կողմն է:

2. Շրջանագիծ երկրի. — Շրջանակք երկրի կը կոչուին երկրագնաց և աշխարհացոյց տախտակաց վրայ քաշուած գծերը, զորս աշխարհագիրք երկրիս բոլորն ալ քաշուած կը համարին, թէպէտ և իրապէս չեն գտնուիր: Եւ կը ծառայեն երկրագնաթս մակերեւոյթին ուղուածը դիւրացընելու և անոր այլ և այլ մասանց դիրքը ճշդութեամբ որոշելու:

Գլխաւոր վեց շրջանակք կը համրուին, որոնցմէ երկուքը մեծ, և չորսը փոքր:

Մեծ շրջանագիծ. — Երկու մեծ շրջանակներն են Հասարակած, և Միջօրէական:

Հասարակած. — Հասարակածն է այն շրջանակն որ երկրիս վրայ կը բոլորի՝ բեւեռներէն հաւասար հեռաւորութեամբ:

Միջօրէականն. — Միջօրէականն է այն շրջանակն որ զերկրիս կը բոլորէ՝ անցնելով երկու բեւեռներէն և ուրիշ երկու

1. Ո՞ր է երկրիս ձեւը: Քանի՞ են և ի՞նչպէս կը կոչուին երկրիս Բեւեռները:

2. Որո՞նք են շրջանակք երկրի: Քանի՞ են մեծ շրջանակք, և քանի՞ փոքրերը:

բարձր տեղէ մը որուն անուամբը կը կոչուի։ Գալղիայ մէջ Բարիզու Միջօրեականը կը գործածուի։

ՓՈՓՐ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ։ — *Զարս փոքր շրջանակներն են երկու Արեւադարձներուն, և երկու Բեւեռային շրջանակները։ Ասոնք հասարակածին ուղղութեամբ ձգուած են. արեւադարձներէն*



Երիկագունա

մին և բեւեռային շրջանակներէն մէկը կը պատուին ընդ մէջ հասարակածի և արջային բեւեռին. միւս արեւադարձն և միւս բեւեռային շրջանակն են ընդ մէջ հասարակածին և հակարջային բեւեռին։

ԱՐԵՒԱԴԱՐՁ ԹԷՑԳԵՏՆԻ. — *Այսպէս կը կոչուի հասարակածին և արջային բեւեռին մէջ գծուած արեւադարձը։*

ԱՐԵՒԱԴԱՐՁ ԱՅԾԵՂՁԵՐ. — *Այսպէս կը կոչուի հասարակածին և հակարջային բեւեռին մէջ գրուած արեւադարձը։*

ԲԵՒԵՌԱՅԻՆ ԱՐՋԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ Կ'ԸՍՒԻ՝ *հիւսիսային բեւեռը շրջապատողը։*

ԲԵՒԵՌԱՅԻՆ ՀԱԿԱՐՋԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ *կը կոչուի՝ հակարջային բեւեռը շրջապատողը։*

3. ԱՍՏԻՃԱՆՔ ԼԱՅՆՈՒԹԵԱՆ. — *Լայնուռթեան Աստիճանները կը նշանակեն թէ տեղ մը որչափ հեռու է հասարակածէն. ասոնք երկրագնաց և աշխարհացոյց տախտակաց վրայ նշանակուած են հասարակածին, արեւադարձից և բեւեռային շրջանակաց ուղղութեամբ ձգուած գծերով։*

ԱՍՏԻՃԱՆՔ ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ. — *Երկայնուռթեան Աստիճանները կը ցուցընեն թէ տեղ մը որչափ հեռու է գործածուած միջօրէականէն։ Այս աստիճաններու նշանակուած են երկրագնաց և աշխարհացոյց տախտակաց վրայ միջօրէականին ուղղութեամբ ձգուած գծերով։*

Լայնուռթիւնն ու երկայնուռթիւնը ճշդութեամբ որոշելու համար, հասարակածէն զուգահեռական 180 շրջանակք կը մտածուին. 90 դէպ ի հիւսիս և 90 դէպ ի հարաւ, և ասոնք են լայնուռթեան աստիճանք։ Դէպ ի հիւսիս են աստիճանք հիւսիսային լայնուռթեան, և դէպ ի հարաւ են աստիճանք հարաւային լայնուռթեան։ Նոյնպէս բեւեռէ բեւեռ կը ձգուին 360 դլխաւոր միջօրէականներ արեւմուտքէ արեւելք, որոնք զհասարակածն հաւասար մասանց կը բաժնեն, և ասոնք են երկայնուռթեան աստիճանք։ Թէ լայնուռթեան և թէ երկայնուռթեան իւրաքանչիւր աստիճանը կը բաժնուի 60 մանրամասանց, և իւրաքանչիւր մանրամասանը՝ 60 վայրկեդրդրդ։ Այսպէս երկրիս բոլոր մակերևոյթը կը պատեն զուգահեռական և միջօրէական շրջանակներ, և այս գծերուն կամ շրջանակներուն մէկդմէկ կարած կէտը կ'որոշէ տեղւոյ մը դիրքը։ Լայնուռթեան աստիճանները կը համրուին միջօրէականաց վրայ, որոնք ամէնն ալ հաւասար ընդարձակուռթիւն ունին։ Երկայնուռթեան աստիճանները կը համրուին հասարակածին կամ զուգահեռական շրջանակներուն վրայ, որոնք հետզհետէ կը պզտիկնան դէպ ի բեւեռներն երթալով, ուր ամենևին ընդարձակուռթիւն մը չունին։

4. ԳԼԽԱՒՈՐ ԿԷՏ. — *Գլխաւոր կէտք կ'ըսուին չորս կէ-*

3. *Ի՞նչ կը նշանակեն Աստիճանք Լայնուռթեան և Երկայնուռթեան, և ինչ բանի կը ծառայեն։*

4. *Որո՞նք են գլխաւոր կէտք, և որո՞նք երկրորդական գլխաւոր կէտք։*

տեր, որոնք հնարաւած են տեղեաց դիրքը նշանակելու համար հողագնացս վրայ։

Անուններն են

Հիւսիս. – Հարաւ. – Արեւելք. – Արեւմուտք։

Ասոնց դիրքը. – Սովորաբար տախտակաց վրայ դրուած են՝

Հիւսիսը վերին կողմը.

Արեւմուտքը ձախ կողմը.

Արեւելքն աջ կողմը.

Հարաւը վարի կողմը։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԳԼՈՒԽՈՐ ԿԻՏՑ. — Բայ ի չորս գլխաւոր կէտերէն՝ չատ անգամ չորս հեռեւեալներն ալ կը գործածուին, որոնք իրենց երկու կողմը եղած գլխաւոր կէտերէն անուններին կ'առնեն.

Հիւսիսային – Արեւելք, ընդ մէջ Հիւսիսի և Արեւելից.

Հիւսիսային – Արեւմուտք, ընդ մէջ Հիւսիսի և Արեւմտից.

Հարաւային – Արեւելք, ընդ մէջ Հարաւի և Արեւելից.

Հարաւային – Արեւմուտք, ընդ մէջ Հարաւի և Արեւմտից։

5. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԳՆՏՈՑՍ Ի ՀՈՂ ԵՒ Ի ՋՈՒՐ. — Երկրագունտի կամ համամատած աշխարհացոյց տախտակի մը վրայ եթէ նայինք, կը տեսնենք որ ցամաքը գնատյս վսքր մասմը կը գրաւէ, և ջուրը չատ աւելի մեծ մասն։ Ցամաքն որ չատ մը իրարմէ բաժանեալ մասերէ բաղկացած է, գնատյս մակերեւոյթին դրեթէ երրորդ մասը կը ձեւացընէ. միւս երկու երրորդն ջրով ծածկուած են։

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՑԱՄԱՔԻ

6. ԱՇԽԱՐՀ. — Աշխարհք կը կոչուին հողագնատյ վրայ ցրուած ցամաքներուն երկու մեծագոյնքը։

Ասոնց մեծագոյնը կ'ըսուի Հին Աշխարհ, նախ մարդաբնակ եղած ըլլալուն համար։

Փոքրագոյնն որ 1492ին ծանօթացաւ, կ'ըսուի Նոր Աշխարհ։

7. ԿՂԶԻ. — Կղզի կը կոչուին այն փոքրագոյն ցամաքներն, որոնց բոլորը ջուր պատած է։

ԽՈՒՄԲ ԿՂԶԱՑ, ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍ. — Խումբ կղզեաց կը կոչուի իրարու ամենամօտ կղզեաց բազմութիւնը։ Այն

5. Երկրիս որչափ մասը ցամաք է, և որչափ մասը ջուր։

6. Քանի՞ են գլխաւոր բաժանմունք ցամաքի։

7. Ի՞նչ են Կղզի, Թերակղզի, և Պարանոց։

լմբերն որ ծովուն վրայ մեծ տարածոց մը կը բռնեն՝ կ'ըսուին Արշիպելագոս։

ԹԵՐԱԿՂԶԻ. — Թերակղզի կ'ըսուի երկիր մը, որ գրեթէ ամէն կողմէն ջրով պատած է, և միայն մէկ կողմանէ կամ նեղ հողայ գծով մը ցամաքին հետ կպած է։

Թերակղզի մը ցամաքի վրայ գտնուած լեռնոտիկ

ՊԱՐԱՆՈՑ. — Պարանոց կը կոչուի այն լեզուաձև հողն որ զթերակղզին ցամաքին հետ կը միացընէ։

8. ԼԵՐԻՆՔ. — Լեռ կ'ըսուին հողայ և ժայռեայ այն մեծ զանգուածներն, որ տեղ տեղ ցամաքին և կղզեաց երեսէն վեր կը բարձրանան։

8. Ի՞նչ կը նշանակեն Լերինք, և քանի՞ տեսակ են։

ՍԵՊԱՏԱՅՐ ԼԵՐԻՆՔ· — Այս անունը կը տրուի այն բարձր լերանց, որոնք չափարի կոնի մը ձեւն ունին:

ՀՐԱԲՈՒԼՔ· — Հրաբուղիս կ'ըսուին այն լեռներն որոնք երբեմն երբեմն կրակի հեղեղներ կը ժայթքեն:

ՇՂԹԱՅՐ ԼԵՐԱՆՑ· — Երբ չատ մը լեռներ իրարու քով կը գտնուին և շարունակութիւն մը կը ձեւացընեն, կ'ըսուին Շղթայք կամ Պարք լերանց:

ԿԻՐՃ· — Կիրճ կ'ըսուին լերանց հղթային մէջ գտնուած և կամ լերան մը և ծովու մէջ եղած նեղ անցքերը:

ԱՓՈՒՆՔ կամ ԾՈՎԵՂԵՐՔ կ'ըսուին ցամաքին այն կողմանքը՝ ուր ծովը կը թրջէ:

ԳԼՈՒԽ կամ ՀՐՈՒԱՆԴԱՆ· — Այս անուամբ կը կոչուին ծովուն մէջ երկնցած ցամաքները:

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՋՐՈՑ

9· ԾՈՎ, ՈՎԿԻԱՆՈՍ· — Կ'ըսուի Ծով կամ Ովկիանոս այն անհուն ջրոյ մակերեսոյթին՝ որ երկրագնդոյս մեծ մասը կը ծածկէ: Այս ջուրս աղային է, և անախորժ համ ունի:

Երկու աշխարհներն զծովը երկու մեծ մասերու կամ Ովկիանոսներու կը բաժնեն, որ են. Ատլանտեան Ովկիանոս, և Մեծ Ովկիանոս:

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍ· — Ատլանտեան Ովկիանոս կ'ըսուի ծովուն այն մասը՝ որուն արեւելեան կողմը կը դրաւնուի հին աշխարհը, և արեւմտեան կողմը նորը: Քանի մը երկրորդական ծովեր կը ձեւացընէ, որոնց անուններն ալ պիտի տանք, երբ նկարագրենք այն երկիրներն որոնց ափունքը կը թրջեն:

ՄԵԾ ՈՎԿԻԱՆՈՍ· — Հողագնդոյս ընդարձակագոյն ծովն է, ինչպէս անունն ալ կը ցուցընէ, և հին աշխարհի արեւմտեան և նոր աշխարհին արեւելեան կողմը կը գտնուի: Այս ալ քանի մը երկրորդական ծովեր կը ձեւացընէ:

10· ՀՆԴԿԱՑ ԾՈՎ· — Կը կոչուի Հնդկաց ծով կամ Հընդկային Ովկիանոս Մեծ Ովկիանոսի այն մասն որ հին աշխարհին հարաւային կողմն խորամուխ եղած է և ընդարձակ ցամաքի մը ծովեզերքը կը թանայ որ կը կոչուի Հնդկաստան:

9· Քանի՞ են մեծագոյն ծովերը:

10· Ուրիշ ինչ ովկիանոսներ կան, և որո՞նք են ներքին ծով ըսուածները:

ԱՐՋԱՅԻՆ ԵՒ ՀԱԿԱՐՋԱՅԻՆ ՍԱՌՈՒՑԵԱԼ ՈՎԿԻԱՆՈՍ· — Սառուցեալ Ովկիանոս կ'ըսուին ծովերու այն մասերն որոնք բևեռները կը պատեն, և միշտ սառով ծածկուած են:



Ռայա գետ ի Զուիցերի

Երկու են այս ծովերս որոնք երկու բևեռաց անուններ կը գտնագանին, այսինքն· Արջային Սառուցեալ Ով-

կիսանոս, այն որ արջային բևեռին և արջային բևեռային շրջանակին մէջտեղը կը գտնուի. և Հակարջային Առուռցեալ Ովկիանոս, որ հակարջային բևեռին և հակարջային բևեռային շրջանակին մէջտեղը կը գտնուի:

ՆԵՐՔԻՆ ԾՈՎԵՐ. — Այսպէս կ'ըսուին ծովերու այն մեծամեծ կաթներէն որոնք երկիրներու մէջ մտած են:

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ. — Ներքին ծովերու մեծագոյնն է Միջերկրական, որ հին աշխարհին մէջ մտած է: Այս և ուրիշ ներքին ծովերու վրայ աւելի մանրամասն պիտի խօսինք վերջը, նկարագրելով անոնց եղերքն եղած երկիրները:

11. ԾՈՑ կամ ԽՈՐՇ. — Ծոց կամ խորշ կ'ըսուի ցամաքի մէջ մտած ծովու մաս մը, բայց ոչ այնչափ մեծ՝ որ ներքին ծով կարենայ կոչուիլ:

ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏ. — Նաւահանգիստն է բնական կամ արուեստով շինուած պզտիկ ծոց մը՝ ուր կրնան նաւերը ապահով կենալ՝ հողմերէ պաշտպանեալ:

ՆԵՂՈՒՑ. — Նեղոյց կ'ըսուի և երբեմն ալ Անցք կամ Ջրանցք՝ երկու ցամաքներու մէջ եղած ծովու նեղ մաս մը՝ որ երկու ծովեր կամ ծովու երկու մասեր իրարու կը հաղորդէ:

12. ԼԻՃ, ԼՃԱԿ. — Լիճ կ'ըսուին ցամաքի մէջ գտնուած ջրոյ մեծամեծ կոյտերը: — Երբ լիճ մը շատ փոքրիկ է՝ Լճակ կ'ըսուի:

ԿԱՆՊԻՑ ԾՈՎ. — Հողագնոյս ամենամեծ լիճն իր ընդարձակութեանն համար ծով ըսուած է. ասիկայ է Կասպից ծովը որ հին աշխարհին գրեթէ կեդրոնն բռնած է:

ԱՂԲԵՐԲ, ԱՌՈՒԱԿԲ. — Աղբիւր կ'ըսուին լերանց ստորոտը և երբեմն դաշտաւայրանի վրայ բղխած ջրերը: Այս աղբիւրներէն կը ձևանան Առուակք:

ԳԵՏ. — Վազուկ ջուր մ'է Գետոր զանազան առուակներէն ձևացած:

ԳԵՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ. — Կ'ըսուի Գետախառնուրդ այն տեղը՝ ուր երկու գետք իրարու հետ կը միանան:

ՄԵՆ ԳԵՏ. — Յորդաջուր է քան զմիւս գետերը, և իր ջրերն մինչև ծով կը տանի:

ԳԵՏԱՓԵՐԱՆ. — Գետի մը ծովուն հետ խառնուած տեղը Գետաբերան կ'անուանի:

ՋՐՎԱԺ կամ ՍԱՀԱՆՔ. — Երբ գետ մը բարձրէն վար կը թափի, որ է ըսել թէ լեռնէ մը կամ լեռնադաշտակէ կը հոսի ստորոտի դաշտը, գետին այն մասը կը կոչուի Ջրվէժ:

11. Ի՞նչ է Ծոց, Նաւահանգիստ, և Նեղուց:
12. Ի՞նչ են Լիճք, Աղբերք, Գետք, և Ջրանցք:

ՋՐԱՆՑՔ. — Ջրանցքը մարդկանց ձեռքով փորուած գետակ մ'է, որ մերձակայ ջրոց իրարու հետ միանալովը կը ձևանայ, երկու գետեր մէկտեղ կամ գետ մը ծովուն հետ հաղորդելու վրայ:

Ջրվէժ Դիվոլիի (մերձ ի Հռոմ)

ԱՋԱԿՈՂՄԵԱՆ ԱՓՈԻՆՔ և ՁԱԽԱԿՈՂՄԵԱՆ ԱՓՈԻՆՔ. — Ջրոյն ընթացքին ուղղութեամբ գետին մէջ նաւարկել կամ ի վար իջնող և երեսն դէպ ի գետաբերանը դարձուցած անձի մը աջ կողմը կ'ըսուի գետին Աջափողմեան ափունք, իսկ ձախ կողմը Ձախակողմեան ափունք:

(1004 / 18493)
21439-60
Հայ. ԽՍՀ ... 7/XI-1922 ... Ա. ՄԱՍԻ Ի. ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԱՍՈՒՆՔ ԵՐԿՐԻ

13. Այսօրուան օրս երկիրս հինգ մաս բաժնած են, որոնք են

Եւրոպա, Ասիա, Աֆրիկէ, որ հին աշխարհը կը կազմեն.
Ամերիկա, որ նոր աշխարհը կը կազմէ.
Ովկիանիա, որ ձևացած է Մեծ Ովկիանոսի մէջ ցրուած շատ մը կղզիներէ, ուսկից նաև անունն առած է:

14. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂՔ. — Երկրիս վրայ գրեթէ հազար

15. Քանի՞ մասն կը բաժնուի աշխարհս:
14. Որո՞նք են մարդկային ցեղերը. և քանի՞ են ցեղասեռը կրօնք:

Սպիտակ

Դեղնագոյն

Պղնձագոյն

Ձիրագոյն

Սեաւ

չորս հարիւր միլիոն քնակիչ կայ, որ հինգ գլխաւոր ցեղերու կը բաժնուին, իրենց գունոց համեմատ:

Սպիտակ, որ տարածուած է Եւրոպա, Ասիոյ արեւմտեան և հարաւային արեւմտեան կողմը, Ափրիկէի հիւսիսային կողմը, և գաղթականութեամբ աշխարհիս ամէն կողմը:

Դեղնագոյն, որ տարածուած է Եւրոպիոյ և Ասիոյ հիւսիսային կողմերը, Ասիոյ կեդրոնն և արեւելքը, մաս մը Ովկիանիոյ, և յԱմերիկա:

Պղնձագոյն, որ տարածուած է Ամերիկայի երկու մասանց մէջ:

Ձիրագոյն, որ տարածուած է Ովկիանիայի կղզիները և ըստ մասին Ասիոյ հարաւային արեւելեան կողմերը:

Օդրաւիդոյի ակռք

Սեաւ, որ տարածուած է Ափրիկէի կեդրոնն և հարաւը, և Ովկիանիոյ մեծ մասը:

ԿՐՕՆՔ. — Գլխաւորներն չորս են:

Քրիստոնէութիւն որ շատ ճիւղերու կը բաժնուի, և 300 միլիոնէն աւելի հետեւող ունի:

Հրէութիւն, որուն կը հետեւին 4 միլիոն անձինք:

Մահմետականութիւն, որուն կը հետեւին 250 միլիոնէն աւելի անձինք:

Կռապաշտութիւն, որուն կը հետեւին 600 միլիոնէն աւելի անձինք:

ԵՒՐՈՊԱ

15. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ. — Եւրոպա հին աշխարհին հիւսիսային արեւմտեան կողմը մեծ թերակղզի մը կը ձեւացընէ: Աշխարհիս հինգ մասանց մէջ փոքրագոյնն է, սակայն ամենէն քաղաքականացեալն, և բազմամարդագոյնն իրեն տարածութեանն համեմատ:

ՍԱՀՄԱՆՔ. — Եւրոպիոյ սահմանքն են՝

Հիւսիսէն՝ Արկտական Սառուցեալ ովկիանոս.

Արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս.

Հարաւէն՝ Միջերկրական ծով, Սեւ ծով և Կովկաս լերանց գօտին.

Արեւելքէն՝ Կասպից ծովը, Ուրալ գետը, Ուրալ լերանց գօտին:

16. ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԼԻՄԱՅ ԵՒՐՈՊԻՈՅ. — Եւրոպիոյ տարածութիւնն է 10,180,000 քառակուսի քիլոմէթր, այսինքն քառորդ մասն Ասիոյ և Ամերիկոյ, և երրորդ մասն Աֆրիկէի. սակայն միւս աշխարհաց նման մեծ անապատներ չունի. ուստի իր տարածութեանն համեմատ չատ աւելի բազմամարդ և լաւագոյն մշակեալ է: Օդն Եւրոպիոյ մեծագոյն մասին մէջ բարեխառն է, որ մարդուս մտաւոր և մարմնական կարողութեանց զարգացման կ'օգնէ, և ճոխ բերքեր կը բուսցընէ:

ԲՆԱԿԻՉՔ ԵՒ ԿՐՕՆՔ. — Եւրոպա 350 միլիոնէն աւելի բնակիչ ունի, որոնք գրեթէ ամենքը սպիտակ ցեղին և քրիստոնէութեան զանազան ճիւղերու կը վերաբերին.

Կաթուղիկեայք	190 միլիոն
Յունադաւանք	80 »

15. Եւրոպայի սահմաններն որո՞նք են:

16. Որչափ է Եւրոպայի տարածութիւնը:

Նորագանդք, որոնք կ'ճիւղի կը բաժնուին, այսինքն՝	Լուտերականք . Կալուինականք . Երիցականք . Անգղիականք .	75 միլ.

Բայց ասոնցմէ կան 6 միլիոն Մահմետականք ի Ռուսիա և ի Թուրքիա. 4 միլ. Հրեայք ամբողջ Եւրոպիոյ մէջ և 1 ուկէս միլիոն աւետրդապաշտք ու կռապաշտք:

ԲԵՐՔ, ՁՈՐՏԱՐՈՒԹԻՒՆ. — Եւրոպա յառաջ կը բերէ ցորեն, գինի, բուրդ և կենաց ամէն կարևոր բանները: Օգտակար կենդանիք բազմացած են, և վնասակարք սակաւագիւտք: Կը գտնուին սակաւ հանք ոսկւոյ, արծաթի, և առատ՝ երկաթի, կապարի, անագի, գեանածխոյ, աղի և այլն: Բայց ամէն բանէ աւելի Եւրոպա իր ճարտարութեան արտադրութեամբքն և համատարած վաճառականութեամբը աշխարհիս սրտիչ մասերէն անհամեմատ վեր է: Անթիւ նաւք աշխարհիս ամէն կողմը կը տանին իր բամբակէ, բրդէ, քթանէ և մետաքսէ բանուածքը. ժամացոյցները, կահկարասիքը, գոհարեղէնները, մեքենաները, գործիքը, գինիներն և այլն: Դարձեալ՝ իբրև կեդրոն արուեստից և գիտութեանց՝ իր գրոց ձեռքով աշխարհիս ամէն կողմը լուսաւորութիւնը կը տարածէ:

17. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՒՐՈՊԻՈՅ. — Եւրոպա 19 գլխաւոր մասանց կը բաժնուի, որոնք են

4 հիւսիս. կողմը	Բրիտանական կղզիք. Տանիմարքա. Շուէտ և Նորուեկիա. Ռուսաստան, Լեհաստանի հետ:
7 մէջտեղը	Գաղղիա. Սուրբին–Նահանգք կամ Հոլանտա. Պելճիա. Զուիցերի. Բրուսիա. Գերմ. կայսրութիւն. Աւստրիա:

17. Քանի՞ մասանց կը բաժնուի Եւրոպա:

8 հարաւ. կողմը { Բորդուգալ. Սպանիա. Իտալիա. Տանկաստան. Յունաստան, հանդերձ Յոնիական կղզիներով. Սերպիա. Ռումանիա. Մոնդէնէկրոյ։

ԿՂԶԻՔ. — Մեծն–Բրիտանիայէն և Իռլանտայէն վերջը՝ Եւրոպիոյ մեծագոյն կղզիներն են

Սրիցպէրկ և Նոր–Զեմլա, հիւսիսային Սառուցեալ ովկիանոսին մէջ.

Իսլանտա, Ատլանտեան ովկիանոսին հիւսիսային կողմը.

Գորսիգա, կամ Գօրս, Սարտենիա, Սիկիլիա, Գաւտոս կամ Կրէտէ, } Միջերկրականին մէջ։

18. ԵՒՐՈՊԻՈՑ ԾՈՎԵՐԸ. — Տեսանք որ զԵւրոպա հիւսիսէն պատած է հիւսիսային Սառուցեալ ովկիանոսն, և արևմուտքէն Ատլանտեան ովկիանոսը: Այս երկու ովկիանոսները Եւրոպիոյ եզերաց վրայ շատ մը ծովեր կը ձևացընեն, որոնք հետևեալներն են։

ԾՈՎ. ՋԵԽԱՑ ԵՒ. ՀԻՒՍԻՍՕՍՅԻՆ ՍԱՌՈՒՑԵԱԼ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ. — Այս ովկիանոսը ծով մի միայն կը ձևացընէ, որ է

Սպիտակ ծովը որ Ռուսիոյ հիւսիսային կողմը կը մտնէ։

ԾՈՎՔ ՋԵԽԱՑԵԱԼ ՅԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍԻ. — Ատլանտեան ովկիանոսն երկու ծով կը ձևացընէ, որոնք են

Հիւսիսային ծով, Եւրոպիոյ հիւսիսային կողմը.

Միջերկրական ծով, Եւրոպիոյ հարաւային կողմը։

ՀԻՒՍԻՍՕՍՅԻՆ ԾՈՎ. — Այս ծովը արևմտեան կողմէն Բրիտանական կղզեաց մէջ կը մտնէ, իսկ արևելեան կողմէն Նորուեկիոյ և Տանիմարքայի. հարաւային կողմէն կը թըրջէ զՍաորին–Նահանգս և զԳերմանիա. այս պատճառաւ երբեմն նաև Գերմանական ծով կը կոչուի: Ասկէ յառաջ կուգայ ուրիշ ծով մ'ալ, այսինքն

18. Եւրոպիոյ ծովերուն վրայ տեղեկութիւն տուր։

Պալդիկ ծովն, որուն հիւսիսային և արևմտեան եզերքը կը պատեն զՇուէտա, արևելեան կողմն՝ զՌուսաստան, և հարաւային կողմն՝ զԳերմանիա։

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ. — Այս ծովուս սահմանն է հիւսիսէն Եւրոպա, արևելքէն Ասիա, և հարաւէն Ափրիկէ: Ունի շատ ծովեր կը ձևացընէ. այսինքն

Սիկիլիոյ ծով, Սիկիլիոյ հիւսիսային կողմը.

Յոնիական ծով, ընդ մէջ հարաւակողման Իտալիոյ և Յունաստանի.

Ադրիական ծով, ընդ մէջ Իտալիոյ, Աւստրիոյ, և Թուրքիոյ.

Արշիպելագոս, ընդ մէջ Յունաստանի, Եւրոպական և Ասիական Թուրքիոյ.

Մարմարայի ծով, ընդ մէջ Եւրոպական և Ասիական Թուրքիոյ.

Սեւ ծով, ընդ մէջ Եւրոպական Թուրքիոյ, Ռուսաստանի և Ասիական Թուրքիոյ.

Ազաքոռ ծով, չորջապատեալ ի Ռուսիոյ։

19. ԾՈՑՔ. — Եւրոպիոյ ծովերը տասնւերեք գլխաւոր ծոցեր կը ձևացընեն։

Երեք հատ Հիւսիսային ծովէն կը ձևանան.

Մըրմրի ծոց, } Սկովտիոյ եզերքը.
Ֆորտրի ծոց, }

Զոյիտերզեի ծոց, Սաորին–Նահանգաց եզերքը։

Հատ Պալդիկ ծովէն.

Տանցիգի ծոց, Բրուսիոյ հիւսիսային կողմը.

Լիվոնիոյ կամ Ռիգայի ծոց, } Ռուսիոյ արևմտեան
Ֆինլանտիոյ ծոց, } կողմը.

Պոդնիոյ ծոց, Ռուսիոյ և Շուէտի մէջ։

Մէկ հատ՝ Ատլանտեան ովկիանոսէն.

Կասկոնիոյ կամ Պիսկայիոյ ծոց, Գաղղիոյ և Սպանիոյ մէջ։

Երկու հատ՝ Միջերկրականէն.

Լիոնի ծոց, Գաղղիոյ հարաւային կողմը.

Ձենովայի ծոց, Իտալիոյ հիւսիսային արևմտեան կողմը։

Երկու հատ՝ Յոնիական ծովէն.

Դարանդոյի ծոց, Իտալիոյ հարաւային կողմը.

Բադրասսոյի կամ Լէրանդոյի ծոց, Յունաստանի մէջ։

Մէկ հատ՝ Արշիպելագոսէն.

Սեզանիկի ծոց, Թուրքիոյ հարաւային կողմը։

20. ՆԵՂՈՒՑՔ. — Եւրոպիոյ ծովերը տասնըվեց գլխաւոր նեղուցներով իրարու հետ հաղորդուած են։

19. Որո՞նք են Եւրոպայի գլխաւոր ծոցերը։

20. Որո՞նք են Եւրոպայի գլխաւոր նեղուցները։

Ասոնցմէ հինգը՝ Հիւսիսային ծովը Պալտիկ ծովուն հետ կը միացընեն.

Սքակէր–Բաք, Գադդէկադ, Սուռնտ, Մեծ–Պելդ, Փոքր–Պելդ, } Նորուեկիոյ, Շուէտիոյ և Տանիմարքեան կազմող ցամաքին և կղզեաց մէջտեղերը:

Հինգը Ատլանտեան ովկիանոսին մէջ են.

Անցք Հիւսիսոյ, Անցք Ս. Գէորգայ, } Իռլանտայի ծովով իրարու հետ միացած, ընդ մէջ Մեծին–Բրիտանիոյ և Իռլանտայի.
Անցք Գալէի, Մանչ, } որ զԱտլանտեան ովկիանոս Հիւսիսային ծովուն հետ կը միացընեն, ընդ մէջ Մեծին–Բրիտանիոյ և Գալլիոյ.

Ճիպրալդարի նեղուց, որ զԱտլանտեանը Միջերկրականին հետ կը միացընէ, ընդ մէջ Սպանիոյ և Ափրիկէի:
Վեց հատը Միջերկրականին մէջ են, և անոր ձեռացուցած ծովերն իրարու հետ կը հաղորդեն.
Պոնիֆացիոյի նեղուց, Գորսիկա և Սարտենեա կղզեաց մէջ.
Մեսսինայի նեղուց, որ զՅոնիականը Սիկիլիոյ ծովուն կը միացընէ, ընդ մէջ Սիկիլիոյ և Իտալիոյ.
Օդրանդոյի անցք, որ զՅոնիականն Ադրիական ծովուն հետ կը միացընէ, Իտալիոյ և Թուրքիոյ մէջտեղը.
Տարտանելի նեղուց, որ զԱրշիպելագոս Մարմարա ծովուն հետ կը միացընէ, ընդ մէջ Եւրոպական և Ասիական Թուրքիոյ.
Կոստանդնուպոլսոյ նեղուց, որ զՄարմարա Սև ծովուն հետ կը միացընէ, ընդ մէջ Եւրոպական և Ասիական Թուրքիոյ.
Եէնիգալէի նեղուց, որ զՍև Ծով Ազովու ծովուն հետ կը միացընէ, Ռուսիոյ Հարաւային կողմը:

21. ԳԵՏՔ. — Վերը յիշուած ծովերը, ծոցերն և նեղուցները կ'ընդունին Եւրոպիոյ բոլոր գետերը: Ասոնց գլխաւորները քսանըեօթն են:
Մէկ հատ՝ կը թափի Սառուցեալ ովկիանոսին մէջ.
Բեչորա որ կ'ոռոգէ զՌուսիա.

21. Որո՞նք են Եւրոպայի գլխաւոր գետերը:

Մէկ հատ՝ Սպիտակ ծովուն մէջ.
Տվինա, որ նոյնպէս կ'ոռոգէ զՌուսիա:
Հատ՝ Պալտիկ ծովուն մէջ.
Տռվնա, որ կ'ոռոգէ զՌուսիա և կը թափի Լիվոնիոյ ծոցը.



Դաւիթ գետ ի Լոնտրա

Նիեմեն, որ կ'ոռոգէ զՌուսիա և զԲրուսիա.
Վիսդուլա, որ կ'ոռոգէ զԼեհաստան և զԲրուսիա, և Տանցիկի ծոցը կը թափի.
Օտեր, որ կ'ոռոգէ զԲրուսիա:

Երեք հատ՝ Հիւսիսային Ծովուն մէջ.
Էդպա, որ կ'ուռոգէ զԳերմանիա.
Հռեւնոս, որ Զուիցերիէն կը բղխէ, կ'ուռոգէ զԳերմանիա եւ զՍաորբրն–Նահանգս.
Դաւիզ, որ կ'ուռոգէ զԱնգղիա:
Մէկ հատ՝ Մանչի մէջ.
Սէն, որ կ'ուռոգէ զԳաղղիա:
Եօթը հատ՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ.
Լուարա, Ժիրոնտ, } որոնք կ'ուռոգեն զԳաղղիա.
Մինհոյ, Տուրօ կամ Տուէրոյ, Դակոյ, Կուադալուիվիր, } որոնք կ'ուռոգեն զԱպանիա եւ զԲորտուգալ.
Կուադալքիվիր, որ կ'ուռոգէ զԱպանիա:
Երկու հատ՝ Միջերկրականին մէջ.
Էպրոյ, որ կ'ուռոգէ զԱպանիա.
Ռօն կամ Հռոդանոս, որ կ'ուռոգէ զԳաղղիա:
Մէկ հատ՝ Սիկիլիոյ Ծովուն մէջ.
Տիբերիս, որ կ'ուռոգէ զմիջին Իտալիա:
Մէկ հատ՝ Ադրիականին մէջ.
Բոյ, որ կ'ուռոգէ զհիւսիսային Իտալիա:
Երեք հատ՝ Սեւ Ծովուն մէջ.
Դանուբ, որ կ'ուռոգէ զԳերմանիա, զԱւստրիա եւ զՈւնգարիա.
Տնիեստր, որ կ'ուռոգէ զԿալիցիա եւ զՌուսիա.
Տնիեբր, որ կ'ուռոգէ զՌուսիա:
Մէկ հատ՝ Ազաքսու Ծովուն մէջ.
Տօն, որ կ'ուռոգէ զՌուսիա:
Երկու հատ՝ Կասպից Ծովուն մէջ.
Վոլկա, Ուրալ, } որ կ'ուռոգեն զՌուսիա:

22. Լիճեր. — Եւրոպիոյ լճերուն մէջ գլխաւորքն տասուերկու են:
Զորս հատ՝ Ռուսիոյ մէջ.
Սայմա լիճը, Ֆինլանտիոյ բազմաթիւ լճերուն ամենամեծը.
Օնեկա լիճը՝ Հաղորդակից Լատոգա լճին հետ, որ Եւրոպիոյ մեծագոյն լիճն է, և որուն ջրերը Ֆինլանտիոյ ծոցը կը թափին լայն և ամենակարճ գետով մը, որ է Նեվա.
Բէյքոնս լիճը, որուն ջրերը Ֆինլանտիոյ ծոցը կը թափին:

22. Որո՞նք են Եւրոպիոյ գլխաւոր լճերը:

Երեք հատ՝ Շուէտի մէջ.
Մէլար, Վէտթեր, } որոնց ջրերը Պալթիկ Ծովը կը թափին.
Վէնէր, որ Գադգիկաղ Նեղուցը կը թափի.
Երկու հատ՝ Զուիցերիի մէջ.
Գօնտաանի կամ Գոտաանցայի լիճը, որուն միջէն կ'անցնի Հռենոս.
Լեւան կամ Թրևիվի կամ Ճինեւռայի լիճը, որուն միջէն կ'անցնի Հռոդանոս կամ Ռօն:
Երկու հատ՝ Իտալիոյ հիւսիսային կողմը.
Մաձձիօրէ լիճը, Կարտայի լիճը, } որոնց ջրերը Բոյ գետը կը թափին:
Մէկ հատ՝ Աւստրո–Հունգարիոյ մէջ.
Պալատոն որ Գանուբ գետը կը թափի:

23. Թերակղզիք. — Եւրոպիոյ մէջ վեց գլխաւոր թերակղզիք կը համրուին, որոնցմէ երեքը մեծ և երեքը պզտիկ են:
Երեք մեծերն են.
Շոռհտ՝ Լաբրոնիոյ հետ միկտեղ, Եւրոպիոյ հիւսիսային կողմը. որուն սահմանն է հիւսիսէն Արկտիական Սառուցեալ ովկիանոսը, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոսն, և արևելքէն ու հարաւէն Պալթիկ Ծովը.
Սպանիա՝ Բորդոզալի հետ, Եւրոպիոյ հարաւային արևմտեան կողմը, որուն սահմանն է արևմտեան հիւսիսէն, արևմուտքէն և արևմտեան հարաւէն՝ Ատլանտեան ովկիանոսը. իսկ հարաւէն՝ Ճիպրալդարի նեղուցը. և արևելեան հարաւէն և արևելքէն՝ Միջերկրական Ծովը.
Իտալիա, Եւրոպիոյ հարաւային կողմը, որուն արևմտեան կողմը կ'ընկնայ Միջերկրական Ծովը, հարաւային կողմը Յոնիականը, և արևելքէն՝ Ադրիականը:
Երեք պզտիկ թերակղզիներն են.
Եռոդանոս, Գերմանիոյ հիւսիսային կողմը. սահմանն է արևմուտքէն Հիւսիսային Ծովը, հիւսիսէն՝ Սքակէր–Բաք որ կը կոչուի նաև Նեղուց Եուղլանտի. և արևելքէն՝ Գադգիկաղ.
Մոռեա, Յունաստանի հարաւային կողմը, որուն սահմանն է հիւսիսէն Լեբանդոյի Ծոցը, արևմուտքէն և հարաւէն Յոնիական Ծովը, և արևելքէն՝ Արշիպելագոսը.
Ղրիմ, Ռուսիոյ հարաւային կողմը, որուն սահմանն է արևմուտքէն և հարաւէն Սև Ծովը, արևելքէն Եէնիքալէի նեղուցը, և արևելեան հիւսիսէն՝ Ազաքսու Ծովը:

23. Որո՞նք են Եւրոպիոյ գլխաւոր թերակղզիք:

24. ՊԱՐԱՆՈՑՔ. — Վերը յիշուած թերակղզիներուն առաջին չորսը պարանոց չունին՝ ցամաքին հետ միացած կողմերնին չատ լայն ըլալուն պատճառաւ. ուստի երկու պարանոց կայ միայն Եւրոպիոյ մէջ, և են.

Կորնթոսի պարանոց՝ որ զՄոռէան Յունաստանի միւս գաւառներուն հետ կը միացընէ.

Բէրեզոդի պարանոցը, որ զԼոմիմ Ռումասատանի միւս մասերուն հետ կը միացընէ:

25. ՀՐՈՒԱՆԴԱՆՔ. — Եւրոպիոյ գլխաւոր հրուանդանները՝ տասն են:

Երեք հատ՝ հիւսիսային կողմը.

Սառուցեալ գոռհա, Նոր Զեմլայի հիւսիսային կողմը.

Նորտ–Գաբ այսինքն Հիւսիսային հրուանդան Նորուեկիոյ հիւսիսային կողմը Մակերօք կղզւոյն մէջ.

Լիւնտես–Նես, Նորուեկիոյ հարաւային կողմը:

Չորս հատ՝ արեւմտեան կողմը.

Գլէր, Իռլանտայի արեւմտեան հարաւային կողմը.

Լէնտ'ս Էնտ, Մեծին–Բրիտանիոյ արեւմտեան հարաւային կողմը.

Ֆինիսդերրա, Սպանիոյ արեւմտեան հիւսիսային կողմը.

Սոդրը–Վիսենտիս, Բորդուգալի արեւմտեան հարաւային կողմը:

Երեք հատ՝ հարաւային կողմը.

Լեզրա, Իտալիոյ արեւելեան հարաւային կողմը.

Բասսարոյ, Սիկիլիոյ հարաւային կողմը.

Մադաբան. Մոռէայի հարաւային կողմը:

26. ՇՂԹԱՅՔ ԼԵՐԱՆՑ. — Եւրոպիոյ գլխաւոր լերանց շղթայք եօթն են.

Ուրալ լեռները, որ զԵւրոպա Ասիայէն կը բաժնեն.

Սգանտինաւեան լերինք, Նորուեկիոյ արեւելեան կողմը.

Պիւրենեեան լերինք, ընդ մէջ Գալղիոյ և Սպանիոյ.

Ալպեան, Գալղիոյ, Զուիցերիի, Գերմանիոյ և Իտալիոյ մէջ:

Եւրոպիոյ բարձրագոյն լերանց շղթայն Ալպեանք են, և

24. Որո՞նք են Եւրոպայի պարանոցք,

25. Քանի՞ են Եւրոպայի գլխաւոր հրուանդանք, և որո՞նք են:

26. Քանի՞ են Եւրոպիոյ լերանց շղթայք:

1. Քանի մը տարի առաջ այս պարանոցս կտրուեցաւ, որով Ատլանտիկեան ծովակալութիւնը Յոնիական ծովուն հետ միացաւ ջրանցքով մը, և Մոռէա կղզի մը դարձաւ:

անոնց ամենէն բարձր գագաթը՝ Սպիտակ լեռն է, որուն բարձրութիւնը կը հասնի 4,810 մէտրի:

Ապենինեան լերինք, որ գիտալիա վերջէն վար կը բաժնեն.

Կարպատ լեռները, Աւստրիոյ արեւելեան հիւսիսային կողմը.

Պալքան լեռները, Թուրքիոյ մէջ:

27. ՀՐԱՒԻՒՂՔ. — Եւրոպիոյ մէջ երեք գլխաւոր հրաբուղխք կան:

Մէկ հատ՝ ցամաք երկրի վրայ, Իտալիոյ մէջ, որ է.

Վեսուվ, Նաբուղի մօտ:

Երկու հատ՝ կղզեաց վրայ.

Հեգլա, Իսլանտայի մէջ.

Ետնա, Սիկիլիոյ մէջ:



Ետնա

Բաց ասոնցմէ, կան ուրիշ հրաբուղխք Իսլանտայի և Լիպարեան կղզեաց մէջ:

ԲԱՐԱՅՔ. — Նշանաւոր է Անգլիոյ մէջ Էլտեի այրը, որ 9,600 ոտնաչափ խորութիւն ունի. — Դրեստի մօտ Ադելսպերկի այրը, որ 6 մղոնէն աւելի ընդարձակ է. — Սկովտիոյ մէջ Ֆինկալ այրը, որուն արձագանգքն ահաւոր են հովի առեն:

27. Քանի՞ են Եւրոպայի հրաբուղխք:

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿՂԶԻՔ

28. ԴԻՐՔ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Բրիտանական կըղզիք (Միացեալ Թագաւորութիւն Անգղիոյ, Սկովտիոյ և Իռլանտայի), Եւրոպիոյ արեւմտեան հիւսիսային կողմը արշիպեղագոս մը կը ձեւացընեն, երկու մեծ կղզիներով, չորս գլխաւոր խմբերով, և եօթն փոքրիկ կղզիներով։
Երկու մեծ կղզիներն են.
Մեծն–Բրիտանիա. արեւելեան կողմը.
Իռլանտա, արեւմտեան կողմը։
Չորս գլխաւոր խմբերն են.
Շէտլընտ կղզիք
Օրքնէ կամ Որկադեանք } հիւսիսային կողմը.
Ոչհադեռն կամ Հեբրիդեանք
Շիլլի կամ Սորլինկեան կղզիք, հարաւային կողմը։
Եօթն փոքր կղզիներն են.
Մեն
Ինկլըսի } Իռլանտայի ծովուն մէջ.
Ոշայր
Օրքնեի
Կըռնըզի } Մանչի մէջ.
Ճըրզի
Հէլիօլանտ, Հիւսիսային ծովուն մէջ։

28. Բրիտանական կղզիք քանի՞ մասէ կը ձեւանան։

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Մեծն Բրիտանիա կը պարունակէ երկու թագաւորութիւն, որ են.



Լոնտրա

Անգղիա՝ հարաւային կողմը և Սկովտիա, հիւսիսային կողմը։

ԱՆԳԼԻԱ

29· Անգղիոյ բնակիչքն են 29 միլիոն։ Կը բաժնուի քառասուն կոմսութեան, որոնցմէ քսանը ծովային են, և քսանը ցամաքային։

Թագաւորութեան և ամբողջ տէրութեան մայրաքաղաքն է Լոնտրա կամ Լընտրն, որ Եւրոպիոյ ամենէն հարուստ և բազմամարդ քաղաքն է (բն. 4,700,000). Դամիզ կամ Դէմզ գետը մէջէն կ'անցնի, որուն վրայ է նաւահանգիստը 7 քիլոմէտր երկայնութեամբ։ Շէնքերուն մէջ նշանաւոր են Ս. Պօղոսի եկեղեցին, և Ուեսթմինսդրի աբբայութեան գոթաձև եկեղեցին, Ուեսթմինսդրի պալատն, ուր կը գումարի խորհրդարանը, Ուսթերլոյի կամուրջն, Դամիզ գետին տակի թիւնէլն և Լոնտրայի աշտարակը։ Եորք (բն. 70,000) համանուն կոմսութեան գլխաւոր քաղաքն, արքեպիսկոպոսական աթոռ է և գեղեցիկ գոթական մայր եկեղեցին։ — Շէֆֆիլտ (բն. 325,000) համբաւաւոր են պողպատի և դանակեղինաց գործարանները։ — Լիտս (բն. 370,000) բրդեղինաց բազմաթիւ գործարաններ ունի։ — Նիւքասլ (բն. 190,000) Նորթըմպերլանտի կոմսութեան մէջ, նշանաւոր են ածխահանքերն։ — Գեհդրպրի (բն. 30,000) Քէնդի կոմսութեան մէջ, հոս կը նստի Անգղիոյ նախագահ արքեպիսկոպոսն։ — Նոդիհիամ (բն. 220,000) և Լիչհադր (բն. 180,000) համանուն դքսութեանց մէջ. երկուքն ալ անուանի են մետաքսեայ, բամբակէ և բրդէ գուլպայից գործարաններովնին։ Գհեսթրհիլ (բն. 50,000) և Օքսֆորտ (բն. 40,000) համանուն կոմսութեանց մէջ, անուանի են համալսարաններն։

Քէնդ կոմսութեան մէջ նշանաւոր է Կրիճիէ քաղաքը (բն. 140,000) իր աստղաբաշխական դիտարանաւը, որոյ վրայէն անցընել կուտան առաջին միջօրէականը Անգղիացի աստեղաբաշխք. — Սաուտհհեմբրըն (բն. 80,000), բանուկ նաւահանգիստ համանուն կոմսութեան մէջ։ —

29· Որո՞նք են Անգղիոյ երեւելագոյն քաղաքները։

Բորդամըտհ (բն. 160,000) հռչակաւոր տէրութեան նաւարանաւը։ Այս կոմսութեան մասն է Ուիթ կղզին, որ կլիմային բարեխառնութեան համար Պարտէզ Անգղիոյ կ'անուանուի, ուր կը գտնուի թագաւորական դղեակն Օզպոռն։ — Լանգասդրը կամ Լէնգհէյիր կոմսութեան մէջ՝ Լիվրպուլ (բն. 550,000) Անգղիոյ ամենէն բանուկ և վաճառաշահ նաւահանգիստը. և Մանչըսդրը (բն. 540,000) իր մետաքսի, թաւշի, ազնիւ կտաւեղինաց և լաթեղինաց բազմաթիւ գործարաններով. քաղքին մէջ բաւական թուով հայազգիք կը գտնուին, որոնք վաճառականութեամբ կը զբաղին։ — Ուարվիք կոմսութեան մէջ Պըրմինկհամ (բն. 400,000) զինուց գործարաններով։ — Նշանաւոր են դարձեալ Նորտհիչ (բն. 100,000) Պրատֆորդ (բն. 220,000) կտաւեղինաց գործարաններով. և Պրիսդլ (բն. 220,000) ու Հըլ (բն. 200,000) իրենց բանուկ նաւահանգիստներով։

Անգղիոյ արեւմտեան եզերքը կ'ինայ Կալէսի (անգղ. Ուէլս) երկիրը. որուն գլխաւոր քաղաքներն են Գարտիֆ (բն. 130,000) և Սուոնսի (բն. 100,000) երկուքն ալ երկաթի գործարաններով և ածխահանքերով անուանի։

ՍԿՈՏԻԱ

30· Սկովտիա բաժնուած է երեսունուիրեք կոմսութեանց։ Ունի 4,050,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Էտինպըրկ (բն. 270,000), Ֆորտհ ծոցին մօտ. ունի նշանաւոր համալսարան։ Լիթ (բն. 70,000) Ֆորտհ գետին վրայ. Էտինպուրկի նաւահանգիստը կը սեպուի։ — Կրինօք (բն. 70,000) Գլայտ գետին բերանը չատ բանուկ նաւահանգիստ է։ — Բեռլի (բն. 72,000) նշանաւոր են մետաքսեղինաց ու բամբակեղինաց գործարաններն։ — Ա.հենէն նշանաւոր քաղաքն է Կլասկոյ (բն. 660,000) Գլայտ գետին վրայ, բանուկ նաւահանգիստ և համալսարան անուանի։ — Տընտի (բն. 160,000) Դայ գետին բերանը, բանուկ նաւահանգիստ

30· Ի՞նչ կայ գիտնալիք Սկովտիոյ վրայ։

է։ — Ապրտին (բն. 130,000) համանուն կոմսութեան գլխաւոր քաղաքն, անուանի են նաւահանգիստն ու համալսարանն և Պալմորալ արքունի պալատն։



Էդինբուրգի

Ի Ռ Լ Ա Ն Տ Ա

31. Իռլանտայի բնակիչքը 4,710,000 են։ Զորս նահանգ կը բաժնուի, որոնք երեսուն և երկու կոմսութիւն

կը կազմեն։ Դարուս կիսուն Իռլանտա 8 միլիոն բնակիչ ունէր. սակայն մշակութիւնն վարձատրեալ չըլլալուն պատճառաւ՝ ժողովուրդն աղքատութենէ բըռնադատեալ ամէն տարի բազմութեամբ յԱմերիկա կը գաղթի։

Տբլինի

Մայրաքաղաքը Տբլին (բն. 350,000), Իռլանտայի ծովուն վրայ, Բրիտանական կղզեաց երկրորդ գլխաւոր քաղաքը։ — Քաղաքաց մէջ նշանաւոր են Գորք (բն.

75,000), վաճառաշահ նաւահանգիստ և երկրորդ քաղաք Իռլանտայի։ — Պէլֆաստ (բն. 256,000) ծովային բերդաքաղաք։ — Լիվերփուլ (բն. 40,000) Շեննոն գետին բերանը բանուկ նաւահանգիստ։ — Արմա (բն. 14,000) ճարտարարուեստ քաղաք է, աթոռ Իռլանտայի կաթողիկէ նախագահին։

32. Տարածութիւն, բնակիչք, կրօնք, վարչութիւն. — Բրիտանական կղզեաց տարածութիւնն է 315 հազար քառակուսի քիլոմէտր. բնակիչքը 38 միլիոն։ Կրօնքն Անգլիոյ մէջ անգլիական նորադաւանութիւն, և Սկովտիոյ մէջ երիցական նորադաւանութիւն, իսկ Իռլանտա գրեթէ ամբողջ կաթոլիկեայ է։ Վարչութիւնը թագաւորի կամ թագուհւոյ մը ձեռքն է, որ է միանգամայն ինքնակալ Հնդկաստանի։ Օրէնք և տուրք կը հաստատէ խորհրդարանին հետ միաձայնութեամբ, որ երկու ժողովարաններէ կը բաղկանայ և պաշտօնին է զայդը ներկայացընել և անոր շահուց պաշտպան կենալ. մէկն է Աւագորեայ կամ լորտերու ժողովարան, որ յորդւոց արդի իրաւունք ունին անդամակցութեան այդ ժողովոյն. և միւսն երեսփոխանաց ժողովարան, հասարակութենէ ընտրուած անդամներէ բաղկացեալ։

33. Կլիմայ, բերք, վաճառականութիւն, ձեռագործք, ծովային զօրութիւն։ Չեռաւոր կալոնաժք։ — Թէպէտ Բրիտանական կղզեաց կլիմայն ընդհանրապէս խոնաւ և մառախլապատ է, սակայն երկիրը բարեբեր է։ Ունի բազմաթիւ հանքեր երկաթի, կապարի, պղընձի և մանաւանդ հանքածխոյ. բայց բրիտանական կայսրութեան ճշմարիտ զօրութիւնը կայացած է անթիւ ձեռագործաց ընդարձակ վաճառականութեան վրայ, որուն կենդանութիւն կու տան իր 33 հազարէն աւելի նաւերն, աշխարհիս ամէն կողմը Անգլիոյ կերպով մը հարկատու ընելով։ Այս վաճառականութիւնը գիւրացընելու համար՝ բացուած են ի Բրիտանիա չատ մը ջրանցք և երկաթուղիք որք ամէն ուղղութեամբ կը կարեն երկիրը։ Այս տէրութիւնս ունի նաև հին և նոր աշխարհաց, բոլոր ծովուց և մինչև Ովկիանիոյ մէջ ընդարձակ կալուածներ և չատ մը կղզիներ, զորս յետոյ ըստ

32. Բրիտանական կղզեաց տարածութիւնը որչափ է. բնակիչքը քանի՞. ինչ կրօնք ունին. և որպիսի՞ վարչութիւն։
33. Վաճառականութեան կողմանէ ինչ վիճակի մէջ են Բրիտանական կղզիք։

տեղեաց պիտի յիշենք և որոնց բնակիչներն ընդ ամէնը 340 միլիոնի կը հասնին։

ՏԱՆԻՄԱՐՔԱ

34. ԴԻՐՔ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Տանիմարքա Պալտիկ ծովուն բերանը կը գտնուի, և երկու կը բաժնուի. ցամաքային, և կղզիները։

ՄԱՍՆ ՑԱՄԱՔԱՅԻՆ. — Տանիմարքայի ցամաքային մասն Եւրոպիոյ գաւառն է։

ԿՂԶԻՔ. — Կը ձևանան երկու խմբերէ, և մեծ կըղզիէ մը։ — Երկու խմբերն են.

Կղզիք Պալտիկ ծովուն մէջ, որոնց գլխաւորներն են Զէլանտ, Ֆիւնիա, Ֆալստեր, Լալանտ, Պոռնհոլմ և Լաւկիլանտ։

Գոբենհաւկ

Ֆէրօեր կղզիք, Ատլանտեան ովկիանոսին մէջ։

Մեծ կղզին է Իսլանտա, Ատլանտեան ովկիանոսին հիւսիսային կողմը։

Մայրաքաղաքն է Գոբենհաւկ կամ Քիոպենհաւն (բն. 375,000) Զէլանտ կղզւոյն մէջ. ամուր քաղաք, և Եւրոպիոյ գեղեցիկ մայրաքաղաքներէն մէկն է։ — Հնդսհնկոր, նոյն կղզւոյն վրայ բանուկ նաւահանգիստ է։

34. Քանի՞ կը բաժնուի Տանիմարքա։

Միւս նշանաւոր քաղաքներն են՝ Ֆիոնիա կղզւոյն մէջ Օտենզէ, իսկ ցամաք երկրին վրայ Վիպորկ, Ալպորկ, Ասրոս Եուդլանտի մէջ։

ԻՍԼԱՆՏԱ. — Այս հրաբղխային մեծ կղզիս, որոյ մէջն է Հէքլա, Եւրոպայի գլխաւոր հրաբուղխներէն մին, գեղեր միայն ունի, որոնց գլխաւորն է Ռէյքիավիք ա-րեւմտեան հարաւային կողմը։ Կղզւոյն բնակիչն է 70,000։

35. Տարածոյթիւն, բնակիչք, կրօնք և վարչոյթիւն. — Տանիմարքայի տարածութիւնն է դրեթէ 38 հազար քառակուսի քիլոմէդր. որուն վրայ հարկ է աւելցընել 88 հազար ալ Իսլանտայի և Ֆէրօեր կղզեաց համար։ Բնակիչքն 2,300,000, որոնք դրեթէ ամբողջ լուտերական են։ Վարչութիւնն է միապետութիւն, չափաւորեալ երկու ժողովրանով։ Այս թագաւորութիւնս յամին 1864 իր ժողովրդեան կէսը կորսնցուց Շլէզուիկ, Հոլշտայն և Լաւէնպուրկ գաւառներով, որոնք Բրուսիոյ անցան։

Կլիմայ, բերք. — Դանեմարկ Արշիպելագոսն տերութեան բարեխառն և ախորժելի մասն է. և յառաջ կը բերէ արմաւիք, վուշ, և այլն։ Եուդլանտի դրեթէ ամէն մասերը ցուրտ են, ճահճային և մացառուտ։ Իսլանտա կղզին լեռնոտ և շատ ցուրտ երկիր է, ուր ոչ ցորեն և ոչ մեծ ծառեր կը բուսանին. գլխաւոր մշակութիւնը գետնախնձորն է։ Տեսակ մը հրաբուղխներ կան այս կղզւոյն մէջ, որ եռացեալ ջրոյ հեղեղներ (Geiser) վեր կը նետեն սաստիկ բարձրութեամբ։

Ճարտարոյթիւն, վաճառականութիւն. — Ճարտարութիւնը ընդհանրապէս քիչ յառաջացած է Տանիմարքայի մէջ. սակայն քանի մը տարիէ ի վեր վաճառականութեան աճելովը՝ հետզհետէ զարգանալու վրայ է։

Հեռաւոր կալուածք. — Տանիմարքա ունի կրօհլանտիա ցամաքը ի հիւսիսային Ամերիկա և քանի մը կղզիներ Փոքր Անդիլեանց մէջ։

35. Ի՞նչ կայ դիտնալիք Տանիմարքայի վրայ։

ՍԳԱՆՏԻՆԱՒԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՇՈՒԷՏ ԵՒ ՆՈՐՈՒԵԿԻԱ

36. ՍԱՀՄԱՆՔ. — Սգանտինաւեան թագաւորութեան սահմանն է հիւսիսէն՝ հիւսիսային Սառուցեալ ովկիանոս. արեւմուտքէն՝ Ատլանտեանն և Հիւսիսային Ծովը. հարաւէն՝ Աքակեր–Բաք և Պալդիկ Ծովն. և արեւելքէն՝ Պալդիկ Ծովը, Պաղնիոյ Ծոցն և Ռուսիա։

ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Սգանտինաւեան թագաւորութիւնը երկու թագաւորութիւններէ կը ձեւանայ, որ են.

Շուէտ, արեւելեան կողմը, և Նորուեկիա՝ արեւմտեան։

Ունի նաև շատ մը կղզիներ։

ՇՈՒԷՏ

37. Շուէտը կը բաժնուի երեք մասն, և կը ստորաբաժանի քսանուչորս գաւառ (լեն, loen)։

Մայրաքաղաքն է Սդոքհոլմ (բն. 255,000), Մէլար լիճը Պալդիկ ծովուն հետ միացնող նեղուցին վրայ. շատ աղուոր դիրք ունի, թագաւորական պալատն Եւրոպայի գեղեցկագոյներէն մին է։ — Ուրժանի են յիշատակութեան Ուբսալա, որուն անուանի են մայր եկեղեցին, աստղաբաշխական դիտարանն և համալսարանը։ — Կոդեմպուրկ (բն. 110,000) Գազդեկաթի վերայ, տերութեան երկրորդ բանուկ նաւահանգիստն է։ — Հարաւ. կողմն դարձեալ նշանաւոր են Մալմէ (բն. 50,000) իւր նաւահանգստովն. Գաւլեար, յամին 1397 տեղի ունեցած

36. Քանի՞ մասն կը բաժնուի Սգանտինաւեան թագաւորութիւնը. և ի՞նչ կայ դիտնալիք իւրաքանչիւրին վրայ։

37. Ի՞նչ կայ դիտնալիք Շուէտի և Նորուեկիոյ վրայ։

դաշնագրութեամբն Սգանտինաւիոյ միութեան համար, և Գարլսգրոնա, ամուր բերդերովը և պատերազմական նաւահանգստովը:



Ուբսալա

ՆՈՐՈՒԵԿԻԱ

Նորուեկիա կը բաժնուի երկու մասն, և կը ստորաբաժանի տասնևւոթ գաւառ (ամդ, amt):

Քրիստիանիա

Մայրաքաղաքն է Քրիստիանիա (բն. 150,000), համանուն ծոցին մէջ, ունի նշանաւոր համալսարան: — Նշանաւոր են վաճառականութեամբ Տրոնդհայմ բերդաքաղաքը: — Պէրկեն (բն. 55,000) հարաւակողմն՝ ծովային բերդաքաղաք և բանուկ նաւահանգիստ. — Սդաւանկեր (բն. 25,000) հիւսիս. ծովուն մէջ ձկնորսութեան ամէնէն բանուկ նաւահանգիստն:

ԿՂԶԻՔ

Գլխաւոր կղզիներն են.

Պալդիկ ծովուն մէջ՝ Էլանտ, հարաւային կողմը. և Կորլանտ, հիւսիսային կողմը:

Սառուցեալ ովկիանոսին մէջ, Նորուեկիոյ ափանց վրայ, Լօֆֆոտեն և Տրոնհեն կղզեաց խումբերը. և աւելի դէպ ի հիւսիս Սրիցպէրկ անբեր ու ապառաժուտ կղզին:

Տրոնդհայմ

38. Տարածութիւն, բնակիչք, կրօնք և վարչութիւն. — Շուէտի և Նորուեկիոյ թագաւորութիւնները մէկտեղ առած՝ Եւրոպիոյ երկրորդ տէրութիւնը կը ձևացընեն տարածութեան կողմանէ, որ գրեթէ 776 հազար քառակուսի քիլոմէդր է. բնակիչքը՝ 6,700,000, յորոց 4,700,000 Շուէտի է, և 2 միլիոնն Նորուեկիոյ. լուտերական են ըստ դաւանութեան: Վարչութիւնը սահմանադրական է: Շուէտի և Նորուեկիոյ երկու թագաւորութիւնները թէպէտ մի միայն թագաւոր ունին, սակայն զատ սահմանադրութիւն և իւրաքանչիւրն անկախ խորհրդարան ունին. և երկուքն ալ առան-

38. Ինչ կայ գիտնալիք Սգանտինաւեան թագաւորութեան, երկրին, և բերքոյը վրայ:

ձին առանձին թագաւորութիւն կը կոչուին: Շուէտ երկու ժողովարան ունի. իսկ Նորուեկիա՝ մէկ:

Կլիմայ, բերք. — Շուէտի գրեթէ ամէն կողմը կլիմայն ցուրտ է, և երկիրն քիչ բարերար, բաց ի հարաւային կողմանէն. հոս մը գեղեցիկ լճեր ունի: Նորուեկիան գրեթէ ամբողջ լեռներով պատած է, ուսկից նաւաշինութեան ընտիր փայտ կ'ելլէ, որ իրեն մեծ նիւթ է վաճառականութեան: Այս թագաւորութեան հիւսիսային կողմը Լաբոնիա կը կոչուի, որուն բնակիչները նշանաւոր են իրենց հասակին կարճութեամբ: Մեծ շահ ունին Բխի ըսուած եղջերուի մեսակէ մը, որ հիւսիսային կողմերը միայն կրնայ ապրիլ. ասոր միսն և կաթը կ'ուտեն և գրեթէ ամբողջ տարին իրենց բալխիրներուն կը լծեն և ձեամբ ու սառով ծածկուած երկրին վրայ կը շրջին: — Շուէտ պղնձի և երկաթի շատ հանք ունի. կը գտնուին նաև ոսկւոյ և արծաթի հանքեր:

Լօֆֆօտէն կղզեաց հարաւակողմը Մալադրեօմ ըսուած յորձանքը կայ, որուն ալիքը, մանաւանդ պատ ձմեռ առեն և երբ արեւմտեան հիւսիսային հողմը կը փչէ՝ սոսկութեամբ կը պոռտայ, կը քաշէ նաւերն և կ'ընկղմեն այնպիսի չառաչմամբ՝ որ ձայնը շատ քիլոմէթր հեռուէն կը լսուի:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ

39. ՍԱՀՄԱՆՔ. — Ռուսիոյ, որուն մէջ կը պարունակուին Կովկասու հիւսիսային գաւառներն և Լեհաստանի թագաւորութիւնը, սահմանակն են, հիւսիսէն՝ հիւսիսային Սառուցեալ ովկիանոսը. արեւմուտքէն՝ Շուէտ, Պալտիկ ծովը Բրուսիա և Աւստրիա. հարաւէն՝ Կովկաս, Սև ծով, Ասիական Թուրքիա և Պարսկաստան. իսկ արեւելքէն՝ Կասպից ծովը, Ուրալ գետը և Ուրալ լեռներն:

Եւրոպական Ռուսիա ունի վաթսուն և մի կուսակալութիւն. և գինուորական երկիր մի, որ է Տօն գետին

39. Ի՞նչ կայ գիտնալիք Եւրոպական Ռուսիոյ վրայ:

Խազախաց երկիրը. և Ֆինլանտիոյ մեծ–դքսութիւնը. և երեք կովկասեան երկիրներ, որ են Քուպան, Դերբէք, և Տաղըստան: Կուսակալութեանց ծանօթագունիցն նունները հետեւեալքն են. Արխանկէլ, Ս. Բեդրպուրկ, Եսթոնիա, Լիվոնիա, Գուրլանտիա, Լեհաստան, Պեսարապիա, Քերսոն, Տաւրիկէ կամ Խրիմ, Եքադերինոսլավ, Բոտոլիա, Վոլինիա, Ոլբրանիա, Ամտերխան, Նիժնի–Նովկորոտ, Խազան, Սարատով, Մոսգուա, և Սդավրօբոլ:



Մայրաքաղաքն է Բեդրպուրկ (Ս). Նէվա գետին բերանը՝ Ֆինլանտիոյ ծոցին մէջ, (քն. 1,250,000): Եւրո-

պիոյ ամենէն փառաւոր մայրաքաղաքաց մին է. 40 քիլոմէդր չրջապատ ունի: Մեծն Պետրոս չինած է այս քաղաքը, որուն պղնձէ արձանը չինուած է կրանիդեայ մեծ ժայռի մը վրայ: Յիշատակութեան արժանի են ամառուան և ձմեռուան արքունի պալատներն, Աղեքսանդրեան սիւնն: — Նշանաւոր քաղաքներն են՝ հիւսիսային կողմը՝ Արխանկել (բն. 20,000), բանուկ նաւահանգիստ Սպիտակ ծովուն վրայ՝ Տվինա գետին բերանը: — Մէջտեղը Մոսկուա (բն. 900,000), ուր է հռչակաւորն Քրեմլին՝ խառնուրդ պալատան եկեղեցեաց և բերդի, որ էր տէրութեան ինքնակալաց նախկին ապարանքը: Մայրաքաղաք էր Ռուսիոյ Բեղրպուրկէն առաջ. և այսօր իսկ

Մոսկուա

հարստութեան և բազմամարդութեան կողմանէ կայսրութեան երկրորդ քաղաքն է: Շրջապատն է 50 քիլոմէդր: — Թուլա (բն. 70,000) անուանի է զինուց, դանակեղինաց և սամովարներու արտադրութեամբ: Աբխազեան կողմը՝ Տուննա գետին վրայ Բիկա (բն. 180,000), չատ վաճառաշահ նաւահանգիստ համանուն ծովին վրայ: — Տորբատ, անուանի է համալսարանն: — Խարքով, (բն. 200,000) համալսարան ունի: — Նիժնի Նովկորոտ (բն. 70,000) անուանի են իր տարեկան տօնավաճառներն: — Խազան (բն. 140,000) Վոլկայի մօտ, անուանի է համալսարանն և Ռուսիոյ կաշիի գործարաններն: — Աժտերխան. (բն. 100,000) Վոլկայի բերանը կղզւոյ մը վրայ չատ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ է: —

Քրոնշդատ (բն. 50,000) Ֆինլանտիոյ ծոցին մէջ նշանաւոր բերդաքաղաք է:

Պետերպուհոյ կուսակալութիւնն, ընդ մէջ Տնեպէր Դանուբ և Բրուխ գետերուն, զոր Թուրքիա Ռուսիոյ տուաւ յամին 1812, կը պարունակէ հետևեալ քաղաքներն. Քեշնիհ (բն. 120,000) և Արևելեան պատերազմաց մէջ անուանի Պենտեր, Աքերման: Իսկ Քիլիա, Իսմայլա, Ռենի քաղաքներն Դանուբի վրայ զոր Ռուսիա յամին 1856 ստիպուեր էր Ռումանիոյ Թագուոյ՝ 1878ին դաշնագրութեամբ դարձեալ ետ առաւ: — Վիլնա (բն. 80,000), մայրաքաղաք Լիթուանիոյ հին լեհացի գաւառին: — Սարատով (բն. 125,000) Վոլկայի վրայ: — Հարաւային կողմը՝ Քիեվ. Տնիեպր գետին վրայ (բն. 180,000), Ռուսիոյ հնագոյն մայրաքաղաքը. սուրբ քաղաք կը համարուի, և ունի նշանաւոր համալսարան: — Քհարսոն բն. 65,000) համանուն կուսակալութեան մէջ Տնիեպրի վրայ. — Նիքոլայիվ (բն. 80,000) Պուկ գետին վրայ, զինուորական նաւահանգիստ. — Օտեսսա, Սեւ ծովուն վրայ (բն. 459,000), կայսրութեան ամենէն վաճառաշահ նաւահանգիստը: Տաւրիկէի կամ Տաւրիոյ Քերսոնէսոսի մէջ, որ է այժմեան Խրիմ թերակղզին կան Սիմֆերոպոլ (բն. 20,000 : — Սեւաստոպոլ, բերդաքաղաք հարաւային կողմը, մեծ նաւարան ունի. յամին 1855 Գաղղիացիք և Անգլիացիք յարձակմամբ տիրեցին քաղաքիս: — Քեֆէ կամ Թեոդոսիա, առևնօք ճենովացւոց ձեռքն եղած ժամանակ չատ ծաղկեալ և բազմամարդ էր: — Խարաւուբազար, Քերչ և Ենիքալէ փոքրիկ բերդաքաղաքներ, որոնք ցորենի բանուկ վաճառականութիւն ունին: Հարաւային ծովեզերաց վրայ կայ Լիվատիա, արքունական փառաւոր պալատն: Թերակղզւոյս մէջ բաւական թուով հայաղդիք կը գտնուին, որոնք Անիէն հոս գաղթած են: — Եքատերինոսլավի կառավարութեան մէջ, Թահանրոկ կամ Թայղան քաղաքը (բն. 60,000). բանուկ նաւահանգիստ. — և Նոր-Նախիջևան, որ ունի բաւական ձեռագործներ, և որուն հայ բնակիչքը գաղթած են ի հին Նախիջևանէ:

ԼԵՀԱՍՏԱՆի մէջ նշանաւոր է Վարշաւիա (բն. 610,000), Վիսդուլա գետին վրայ, Լեհաց հին թագաւորութեան մայրաքաղաքը, գեղեցիկ պալատներով և ուսումնական

չէնքերով. զքաղաքս ի զուր պաշտպանեցին Լեհացիք ընդդէմ Ռուսաց յամին 1831։ — *Լոձկի* (բն. 55,000)։ — *Լոձ՝* (բն. 300,000) *գաւառին ամենէն ճարտարարուեստ քաղաքն է.* — *Զհադոչովա, երևելի է Աստուածամօր հրաշագործ պատկերի մը համար որուն ուխտի կու գան տարին մինչև* 200,000 *հոգի։*



Վայրենիներ

40. ՌՈՒՍԻՈՅ ԿՂԶԻՔ. — *Գլխաւորներն են Նորգեվկա, Վայկաց, Քալկոչիվ, Սառուցեալ ովկիանոսին մէջ։ Եւ Ալաւնտ, Տակոյ, Լօգէլ, Պալդիկ ծովուն մէջ։*

40. Որո՞նք են Եւրոպական Ռուսաստանի կղզիք։

41. Տարածութիւն, բնակիչք, կրօնք և վարչութիւն. — Ռուսիոյ ինքնակալութիւնը, տարածութեան և բնակչաց կողմանէ Եւրոպիոյ տէրութեանց մէջ առաջինն է. 5,400,000 քառակուսի քիլոմէտր ընդարձակութիւն ունի. և 98 միլիոն բնակիչ, որոնց մեծ մասն յունադաւան է. իսկ Լեհաստան կաթուղիկեայ է, և Ֆինլանտիա լուտերական։ Կան նաև մահմետականք Տարաւային և արևելեան կողմերը, և բազմաթիւ հրեայք ամէն գաւառաց մէջ, որոնք սակայն օտար երկիր գաղթելու հետ են։ Կայսրն, որ Զար (Tzar) կը կոչուի, բացարձակ իշխանութիւն ունի։

Ռուսաստանի գլխաւոր ժողովուրդք՝ Սլաւ է, որ են Ռուսք, և Լեհք։ Առաջիններն կը բաժնուին քանի մը տեսակի. Մեծ–Ռուսք, Փոքր–Ռուսք, Սպիտակ–Ռուսք, և Բոռթենք։

Ուրիշ բազմազգի ժողովրդոց մէջ յիշենք հոս մեկ քանիին անուններն. Ֆինլանտացիք կամ Զուոմք, Գերմանացիք (Լիվոնիոյ և Գուրլանտիոյ մէջ), Հայք, Ռումինք, Զերքէզք, Ասպազայք, Լեզկիք և Օսահտք։

Արխանկէլի կառավարութեան արևմտեան կողմը կը բնակին Լաբոնք, որոնք կը գտնուին նաև Սկանտինաւեան թագաւորութեան մէջ, ինչպէս տեսանք։ Իսկ արևելեան կողմը Սամոյետք. որոնց դէմքը տափակ է, աչքերնին փոքր և երկայն, քիթերնին ցած, բերաններն ամենամեծ, մազերնին սինդ և փայլուն, ականջնին երկայն, և գոյներնին մթնագոյն. կէս վայրենի վիճակի մէջ են։

Կլիմայ, բերք. — Ռուսիա գրեթէ ամբողջապէս ընդարձակ դաշտագետիններէ ձևացած է, որոնց օդն ցուրտ է, սակայն հողն ըստ մեծի մասին բարեբեր։ Հարաւային մասնը և մասնաւորապէս Խրիմ անոյշ և զուարճալի կլիմայ մ՚ունի. առատութեամբ յառաջ կու գան հոն ցորեն, կտաւ, կանեփ, ծխախոտ և գինի։ Հիւսիսային կողմն ցրտաստանայց ըլլալուն պատճառաւ՝ բոլորովին անբեր է։ Արևելեան կողմն ընդարձակատարած անտառներ կան, և արևելեան հարաւային մասին մէջ աղտ աւազի դաշտեր։ Ուրալ լեռներն ոսկւոյ, բլատինի, պղընձի, երկաթի, նաև պատմանդի հանք կը պարունակեն։

Հեռաւոր կալոռւածք. — Որչափ ալ ընդարձակ ըլլան եւրոպիոյ մէջ Ռուսիոյ հպատակ երկիրները, սակայն աստնք

41. Որչափ է Ռուսիոյ տարածութիւնը. և ինչ կայ գետնալիք բնակչաց և երկրին վրայ։

ինքնակալութեան միայն քառորդը կը կազմեն, որ Ասիոյ հիւսիսային կողմերը կը տարածուի, և որուն ամբողջ կալուածները միանգամայն՝ մարզաբնակ աշխարհին եօթներորդ մասնը կը ձևացընեն:

42. Պատմական տեղեկութիւն Լեհաստանի վրայ. — Լեհաստան որ մինչև անցեալ դարուն վերջերն Եւրոպիոյ մեծ թագաւորութիւններէն մէկն էր, բաժնուեցաւ 1772, 1793 և 1795 տարիներուն Ռուսիոյ, Բրուսիոյ և Աւստրիոյ մէջ: Յամին 1807 նոքեն կազմուելով Մեծ-դքսութիւն Վարշաւիոյ անուամբ, 1815ին դարձեալ թագաւորութիւն Լեհաստանի կոչուեցաւ՝ Ռուսիոյ կայսեր գերագահութեան տակ. սակայն յամին 1830 Վարշաւիոյ խռովութենէն և արիւնահեղ պատերազմէ վերջը, Լեհաստան Ռուսիոյ ինքնակալութեան գաւառ մը վճռուեցաւ: — Վերջին անկախ մնացած մաս մը, որ էր Դրագովիոյ հանրապետութիւնը, Աւստրիոյ տէրութեան հետ միացաւ յամին 1846: — Տասնըհինգ տարի վերջը, այսինքն յամի 1861, Ռուսիոյ Լեհաստանն դարձեալ ապստամբութիւն մը փորձեց. և անօգուտ կատարածներէ ետքը՝ բոլորովին ընկճուեցաւ յամին 1863:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱ

ԳԱՂԼԻԱ

43. ՍԱՀՄԱՆՔ. — Գաղղիոյ սահմանն է հիւսիսէն Բա-տը-Գալէ, Մանչի ծով Պելճիա և Հիւսիսային ծով. արևմուտքէն՝ Մանչ և Ատլանտեան ովկիանոս. հարաւէն՝ Սպանիա և Միջերկրական ծով. իսկ արևելքէն՝ Գերմանիա, Զուիցերի և Իտալիա:

ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Գաղղիա որ ժամանակաւ երեսուն և վեց նահանգի կը բաժնուէր, 1790ին գաւառներու (département) բաժնուեցաւ, որոնց թիւը ներկայապէս

42. Լեհաստանի պատմութեան վրայ ի՞նչ կայ գիտնալիք:
43. Որո՞նք են Գաղղիոյ սահմանքը. և քանի՞ կը բաժնուի:

ութսունեւվեց է, հանդերձ յաւելուածովք Սաւոյայ և Նիցցայի, և 1870-71ի պատերազմէն ետքը կորուստներով: Այս գաւառաց մեծ մասը՝ զիրենք առգրող գետակաց անուամբ կը կոչուին:



Ցցմոլորիկ Սեմաւորացրի նամակներ

44. Մայրաքաղաքն է Բարիզ (2,500,000), Սէն գե-

44. Ո՞ր է Գաղղիոյ մայրաքաղաքը. և ի՞նչ ուրիշ նշանաւոր քաղաքներ կան:

տին վրայ, Եւրոպիոյ երկրորդ քաղաքը թէ ժողովրդեան և թէ հարստութեան կողմանէ։ Շրջապատն է 33 քիլոմէդր։ Անուանի են՝ չէնքերուն մէջ մայր եկեղեցին Նոդրը Տամ, նոր Օրէրաև, Լուվրի պալատը, Անկարող զինուորաց Անկելանոցը, Պանթէոնը կամ նախկին եկեղեցի Ս. Ժընըվիէվի, եկեղեցի Ս. Մագդաղենացւոյ, և Աստեղ յաղթական կամարը։ Գեղեցիկ են պուղլվար ըսուած ծառազարդ լայն փողոցները. և Շան–զէլիզէ



Մայր եկեղեցին Նօդրը–Տամ

կոչուած երկայն ճեմելիքը, որ կը տանի Պոռա տը Պոռ-ժոլիեր անուանեալ անտառանման հասարակաց պարտէզը։

Նշանաւոր է Տնկաբանական պարտէզը իր բնական պատմութեան թանգարանովը. երեւելի են Կոպլէէն անունով գորգերու գործատունը և զինուորական դպրոցը։

Հրապարակաց մէջ գեղեցիկ են Գօնգօրտի և Վառոզէլի հրապարակները, և Արեւի դաշտը՝ ուր տեղի ունեցան 1867 և 1878 տարիներուն Համաշխարհական

Արուեստահանդէսքը։ Էյֆէլի գերեզմաննոցն անուանի է։ Գիտութեանց, ճարտարութեանց, գեղեցիկ դպրութեանց և գրաւորական գործունէութեան կեդրոն է քաղաքս Գաղղիոյ մէջ. որով Գաղղիացւոց գրեթէ ամէն երեւելի մարդիկը հոս ժողվուած են։ 1870 տարւոյն վերջը և 1871ին սկիզբներն ահաւոր պաշարումի մը կրեց գերմանական բանակէն. եւ քաղաքը ռամկավարական ապըստամբութեան թատրոն եղաւ, և խռովարարաց գըլխաւորքը քարիւղով այրեցին քաղաքիս պետական գլխաւոր հոյակապ չէնքերը. յորս յիշենք միայն Գիւլ-



Կաւհարն Աստեղ

երի արքունական պալատն, և Հասարակաց ժողովարանը՝ որ արդ դարձեալ չինուեցաւ։ — Բարիզ բաժնուած է քսան շրջանակի։ Բոլորեալ է պատուարով. և պաշտպանուած այլեւայլ բերդերով, որոնց մէջ զօրաւոր բազոյն է Վալերիէն բլրոյն բերդը։

Այս քաղաքիս մէջ մեռաւ Ռուբինեանց վերջին թագաւորը Լեւոն Ե. 1393ին։

Նշանաւոր քաղաքներն են Վերսայ (բն. 51,000), Բարիզու արեւմտեան հարաւային կողմը, հռչակաւոր թագաւորական դղեկովը, որ ունի պատմական նշանաւոր

պատկերաց Թանգարան, և հիանալի ընդարձակ պարտէզ մը։

Լիւ (բն. 260,000), Գաղղիոյ ամրագոյն քաղաքաց



Հին պալատն Դիժոնի

մին, ամէն տեսակ կտաւեղինաց գործարաններ ունի։ — Տիւնքէրք (բն. 40,000) հիւսիս. ծովուն վրայ, բերդաքաղաք և բանուկ նաւահանգիստ է։ — Ռուշֆ (բն.

115,000) բուրդի և բամբակի գործուածներ ունի. — Գալէ (բն. 60,000) բերդաքաղաք է համանուն նեղուցին վրայ։ — Ամիան (բն. 83,000) անուանի է գոթական մայր եկեղեցին, և թաւիշի ու գորգի գործարան-



Եկեղեցի Ս. Մագդաղենացւոյ

ներն։ — Դրոզ (բն. 50,000) Սէնի վրայ, կտաւեղինաց ու չուխայի շատ գործարաններ ունի։ — Ռէնս (բն. 105,000) մեծ և հին քաղաք է, փառաւոր է գոթական մայր եկեղեցին ուր կ'օծուէին Գաղղիոյ հին թագա-

ւորք: — Պրեսդ (բն. 75,000) գինուորական ու վաճառականական մեծ նաւահանգիստ է, անուանի է իւր նաւաբանն: — Նաևսի (բն. 90,000) Գերմանիոյ սահմանակից վերջին քաղաքն է դէպի Հոլլանդիա, մանաւանդ մօտ, ուսումնական հաստատութիւններ ունի. անուանի են ձեռագործներն. — Ռոշան (բն. 112,000), հոյակապ է մայր եկեղեցին, այս քաղքիս մէջ Անգղիա-



Հոլլանդիոյ վանքեցի

ցիք այրեցին զՃանն տ'Արք: — Գաղղիոյ մէջտեղերը, Նանդ (բն. 125,000), Լուառ գետին վրայ նաւահանգիստ և վաճառաշահ քաղաք. — Օրլեան (բն. 65,000) Լուառի վրայ մեծ և գեղեցիկ քաղաք է. չաքարի գործարաններ, և գինւոյ մեծ վաճառականութիւն ունի: — Դոռդ (բն. 60,000) Լուառի վրայ մետաքսի գործարաններ ունի: — Անժէ (բն. 72,000), գինւոյ, արջառոց և



Վեներիի

հերձաքարի (ardoise) մեծ վաճառականութիւն ունի։ — Պզաւռե (բն. 56,000) ամուր և գեղեցկադիր քաղաք է, ժամացուցի չատ գործարաններ ունի։ — Տիժոն (բն. 65,000) գեղեցիկ է իւր դիրքն և մայր եկեղեցին, հոս



Լիլ

ծնած են Պոսիւէ և Գրէպիյեօն։ — Լը Հաւրը (բն. 116,000) Սէնի բերանը, երևելի նաւահանգստով, ա- մուր և չատ վաճառաշահ քաղաք է։ — Գաղղիոյ հարա- ւակողմը կան Լիոն (բն. 440,000), ճարտարութեան

կողմանէ հռչակաւոր. անուանի են մետաքսեայ դիպակ- քը։ — Սենդ-Էդիէն (բն. 135,000) նոր և նշանաւոր քաղաք է. ղինուց, դանակեղինաց և մետաքսեղինաց չատ գործարաններ ունի. հարուստ ածխահանքեր կան



Ռուան

քովերը։ — Պորտոյ, կաուօն գետին վրայ, (բն. 250,000) գինւոյ վաճառականութեամբն չատ անուանի է։ — Մար- սէյլ, Միջերկրականին վրայ (բն. 400,000), առաջին վաճառաշահ նաւահանգիստն է։ — Աւհնեւռն Ռօն գե-

տին վրայ, (բն. 43,000), ճարտարագործ են կապերտ-
ները. չէնքերուն մէջ երևելի է դղեակն սուրբ Հրեշտակ. —
Լիմոժ (բն. 72,000) գեղեցիկ դիրքի վրայ հին քաղաք
է. անուանի են յախճապակւոյ և կտաւեղինաց գործա-



Նանսի

բանները. — Բուռադիհ (բն. 40,000) հին աւերակներ
ունի, չատ գեղեցիկ է գոթաձև մայր եկեղեցին. — Դուռ-
ռուզ (բն. 150,000) ուսումնական և ճարտարարուեստ
քաղաք է. երկաթէ գործեաց, թաւիշի և կերպասուց

վաճառականութիւն ունի. — Մոնբէլիէ (բն. 70,000)
գեղեցիկ բլրոյ մը վրայ. անուանի են բժշկութեան վար-
ժարանն և բուսաբանական պարտէզն. կտաւեղինաց գոր-
ծարաններ և գինւոյ բանուկ վաճառականութիւն ունի: —



Լը Հաւրը

Կրընուպլ (բն. 60,000) Իզերի վրայ չատ հին քաղաք է,
ձեռնոցի գործարաններ ունի: Փարքէս 29 քիլոմէդր դէպ
ի հիւսիսակողմն կը գտնուի Կրանտ-Շարդրէօզ անուանի
վանքն, հիմնեալ ի Ս. Պրիւնոյէ յամին 1082. — Դուռ-

շոն (բն. 77,000) Միջերկրականի գինուորական նաւահանգիստ է և Գաղղիոյ առաջին նաւահանգիստն. գինւոյ, ձէթի և աճառի մեծ վաճառականութիւն ունի. — Նիս կամ Նիցցա (բն. 90,000) Միջերկրականի վրայ ամիս-



Լիոն

Թատրոնաձև բլրոյ մը ոտքը սքանչելի դիրք ունի. կլիմային մեղմութեան համար շատ օտարականք հոս կը ձմեռեն: Միջերկրականի մէջ Գաղղիա ունի Գօրս կամ Գորսիգա

կղզին, որ կը ձևացընէ գաւառ մը: Գլխաւոր քաղաքն է Աժաչչիոյ, հայրենիք Ս. Նաբոլէոնի. Երկրորդ քաղաքը Պաստիա:



Պաստիոյ

45. Տարաժոռթիւն, բնակիչք, կրօնք, վարչոռթիւն. — Գաղղիա ընդարձակութեան կողմանէ Եւրոպիոյ չորրորդ

45. Ո՞րչափ է Գաղղիոյ տարածութիւնը. և ինչ գիտելիք կայ բնակչաց, կրօնից, վարչութեանը, և բերոց վրայ:

թէրութիւնն է, և քնակչաց կազմանէ երրորդ. 528,000 քառակուսի քիլոմէթը տարածութիւն ունի. և 38,500,000 քնակիչ, որ կաթուղիկեայ կրօնք կը դաւանին, և 600,000 միայն նորաղանդ կայ: Գաղղիա 1870 տարւոյն սեպտեմբեր 4ին



Մարսէյլ

ի վեր Հասարակապետութիւն է, որուն վարիչն է գահերէց մը երկու խորհրդարանաց օգնութեամբ, այսինքն ծերակուտին և երեսփոխանաց, որոնք օրէնք կը դնեն և գործը կը սահմանեն: Եօթնամեայ է գահերիցութեան պաշտօնը:

կլիմայ, բերք. — Գաղղիոյ կլիմային մեծաւ մասամբ բարեբեռան է, օդը մաքուր և առողջարար: Արևմտեան հիւսիսային գաւառներն, որոնք ուղիղ ցրտին և խոնաւ են քան զմիւս մասերը, գրեթէ ամենայն տեսակ արմտիք յառաջ կը բերեն. ունին բազմաթիւ գեղեցիկ արօտներ որոնք



Աւիւեռն — Դղեակն Ս. Հրեշտակ

ընտիր արջառներ կը սնուցանեն. գինի չեն տար, սակայն անոր փոխարէն կը մատակարարեն գարեջուր և խնձորօղի: Արևելեան և հարաւային գաւառներն Եւրոպիոյ ընտրելագոյն գինիները կուտան, որոնք ծանօթ են Շանբաներ, Պուրկոներ և Պորտոյ անուամբք: Արևելեան հարաւային

կողմը պաշտպանեալ լեռներով՝ հիւսիսային ցուրտ և արեւմտեան ու արեւմտեան հիւսիսային խոնաւ հողմերէն, տաք երկրի պտուղները կը հասունացընէ. զոր օրինակ ձիթապտուղ, նարինջ, կիտրոն, նուռ և այլն։



Այսպէս։

46. Հեռաւոր կալոնաժք. — Գլխաւորներն ասոնք են. Ասիոյ մէջ՝ Բոմպէյերի, Մահէ, Քարիքալ, Եանաոան և Զանզիբարևակոր Հնդկաց մէջ. և Ստորին Գոյիանային ի Հնդկաստան։ Ափրիկէի մէջ՝ Ալժիրի կամ Ձեզայիր, Սենեկալի գաղթականութիւնը, հիւսիս. և հարաւային Կուինէայ մէջ քա-

56. Ի՞նչ կալուածներ ունի Գաղղիա հեռաւոր տէրեաց մէջ։

նի մը երկիրներ, Պոռպոն կամ Ռէհունիոն կղզին, Ս. Մարիամ կղզին, և Մայոթ ի Գոմորեան կղզիս։ Մատակասգար կղզւոյն ալ 1896ին բոլորովին տիրեց, և Գաղղիոյ կալուածք մ՚ըրաւ զայն։ Ամերիկոյ մէջ՝ Ս. Պետրոս և Միքելոն կղզիները Նոր–Երկրի մօտ. Մարդինիկէ, Կուատղուբ, և այլն Անդիլեանց մէջ. Կոյանա գաղղիական, (գլխ. քաղաք Գայէն) ի հարաւային Ամերիկա։ Ովկիանիոյ մէջ Մարքիզեան կղզիները և Նոր–Գալետոնիա, Թահիդի կղզիներն և մօտիկ փոքր արշիպեղագոսներ։ 1880ին ի վեր Ափրիկէի մէջ Թունուզի երկիրն իր պաշտպանութեան տակն առաւ։ Այս վերջերս ալ Ասիոյ հարաւային կողմը Թոնքինի մէջ հաստատուեցաւ պատերազմով։

47. Պատմական տեղեկութիւն։ — Գաղղիա մեծ մասը բռնած է հին Կելտաց աշխարհին, որ ընկճեցաւ ի Յուլիոս Կեսարէ և Հռովմայեցւոց ձեռքը մնաց հինգհարիւր տարի։ Քրիստոնէութեան հիմներորդ դարուն մէջ ասպատակեցաւ գերմանական պատերազմասէր ազգերէ՝ որոնք Փրանկք կը կոչուէին։ Կլովիս, անոնց իշխաններէն երեւելագոյնը, տէրութիւն մը հաստատեց, որ Մեծին Կարոլոսի ժամանակ Եւրոպիոյ գլխաւորագոյն ինքնակալութիւնն եղաւ։ Սակայն անոր յաջորդաց ժամանակ շատ մը մասանց բաժնուելով, այլևայլ քացարձակ փոքր իշխանաց տէր եղաւ. այնպէս որ երբ Հիւկ Գաբէդ թագաւորեց յամին 987, ունէր միայն Գաղղիոյ կղզին, Բիգարտիա և Օռլեանի գաւառը. միւս գաւառները վերջը յաջորդաբար միացան։

1789 տարւոյն մեծ յեղափոխութիւնը բոլորովին այլափոխեց քաղաքական կարգերը։ Հաւասարակապետութիւնն և Նաբոլէոն Ա. Գաղղիոյ սահմանները ընդարձակեցին. սակայն չուտով հին թագաւորութեան սահմաններուն վերադարձան Ռուսիոյ և Ուաթերլուի արկածներովը, յամին 1815։ — Նաբոլէոն Գ.ի ժամանակ Գաղղիա տասգաւ ընդարձակեցաւ Սաւոյա և Նիցցա. սակայն մեծագոյն կորուստ ունեցաւ՝ Բրուսիոյ դէմ յամին 1870 հրատարակած պատերազմէն ետքը, և Փրանգֆորտի (Մէնի վրայ) դաշնագրութեամբ տիպ ուեցաւ թողուլ վերջնոյս զԱլսաս և մաս մը Լորէնի։

47. Համառօտ տեղեկութիւն մը տուր Գաղղիոյ պատմութեան վրայ։

ՀՈԼԱՆԴԱ

ԿԱՄ

ՍՏՈՐԻՆ–ՆԱՀԱՆԳԻ

48. ՍԱՀՄԱՆԻ. — *Հոլանտա, որ կ'ըսուի նաև Ստոր-ին–Նահանգք կամ Նեթերլանտ, իրեն սահման ունի հիւսիսէն և արեւմուտքէն՝ Հիւսիսային ծովը. հարաւէն՝ Պելճիա. իսկ արեւելքէն՝ Գերմանիա:*

Հոլանտա կը բաժնուի տասնուվեց նահանգի:

Մայրաքաղաքն է Ամստերտամ (բն. 440,000), Ամստերտամ գետի վրայ. անուանի վաճառականութեամբն և հարստութեամբը. Վենետկոյ պէս այլևայլ կղզիներէ ձևացած



Ամստերտամ

է, որոնց թիւն իննսուն է, և երկուհարիւր իննսուն կամրջովք իրարու հետ միացած են. ատենօք Հայոց ա-նուանի տպարան կար հոս:

Ուշագրութեան արժանի են արքունի պալատը, և Ս. Նիկողայոսի ու Ս. Կատարինեայ եկեղեցիք, ինչպէս նաև Հատարակաց Ժողովարանը:

48. Ո՞ւր կ'էյնայ Հոլանտա, և որո՞նք են նշանաւոր քաղաքները:

Ռոտրտամ (բն. 70,000), նշանաւոր պատմութեան մէջ՝ հոս կնքուած դաշնագրութեանց համար. հռչակուած են չուխայի և թաւշի գործարանները:

Լա Հէ

Նոյնպէս նշանաւոր է, Լա Հէ կամ Հաակ (բն. 170,000), ուր է թագաւորին բնակութիւնը. գեղեցիկ քաղաք, մօտ Հիւսիսային ծովուն: — Լէյտա կամ Լէյտըն (բն. 45,000), անուանի համալսարանաւը, և ասուեայ գործուածքներովը. նշանաւոր եղած են իր էլզե-



Լէյտա

վիր տպարանները. հոս ծնած է երևելի Ռէմպրանդ նըկարիչը: — Ռոդդերտամ (բն. 225,000), Մէօզի վրայ, շատ վաճառաշահ քաղաք: — Հարլեմ (բն. 51,000), մայր եկեղեցին հոյակապ է, որուն երգիռնն անուն հա-նած է: — Լէյդսանպոռրի Մեծ–դպրոցութիւնը՝ հպատակ է Ստորին–Նահանգաց թագաւորին, բայց չի համարուիր

մասն Հոլանտայի։ Ընդարձակութիւնն է 2,600 քառակուսի քիլոմէդր։ Բնակիչքն են 210,000։ Մայրաքաղաքն է Լիւքսեմպուրգ, որուն բնակիչքն են 18,000։

ԿՂԶԻՒ. — Հոլանտայի արեւմտեան հիւսիսային կողմը շատ մը կղզիներ կան, որոնց գլխաւորն է Դեքսել։



Հարլեմ

Բայց աւտի կան ուրիշ կղզիք ալ, որոնք գՊելճիա և գՍտորին–Նահանգս առագով կետոց բերաններէն ձևացած են. գլխաւորն է Ռաղիներեմ։

Ռոտդերտաամ

49. Ջանազան գիտելիք. — Ստորին–Նահանգք 33,600 քառակուսի քիլոմէդր տարածութիւն ունին, և 4,370,000 բնակիչ, մեծաւ մասամբ կալուինական։ Վարչութիւնը սահ-

49. Ի՞նչ գիտելիք կայ Հոլանտացւոց, և իրենց գաղթականութեանց վրայ։

մանադրական միապետութիւն։ — Հոլանտացւոց ճարտարութիւնն և գործօնէութիւնը՝ ճախճախուտ երկիրները բերքեր դաշտերու և պարարտ արօտներու վերածած է, որոնց երեսը ծովուն մակերեւութէն այնչափ քիչ բարձր է, որ ջրոց ողողմանէն պաշտպանելու համար բարձր և ամրապինդ ամբարտակներ չինուած են։ — Ովկիանիոյ մէջ մեծ գաղթականութիւններ ունին, մանաւորապէս Մալեզիոյ մեծ մաս մը. և Ամերիկայի մէջ, Կույանայի և Անտիլեանց մաս մը։ Իսկ Կափինէոյի և Հնդկաստանի մէջ ունեցած երկիրներն Անգլիացւոց տուին։ 26,700,000 բնակիչք կան Հոլանտայի գաղթականութեանց մէջ։

ՊԵԼՃԻԱ. ԿԱՄ ՊԵԼԺԻՔ

50. ՍԱՀՄԱՆՔ. — Պելճիոյ սահմանն է հիւսիսէն՝ Ստորին–Նահանգք, արեւմուտքէն՝ Հիւսիսային ծով, հարաւէն՝ Կաղղիա. և արեւելքէն՝ Գերմանիա և Ստորին–Նահանգք։

Ինը նահանգի կը բաժնուի Պելճիա։

Մայրաքաղաքն է Պրիւսել, Պելճիոյ մէջտեղը, Սէն գետին վրայ (բն. 185,000). գեղեցիկ քաղաք, յոյժ նըշանաւոր է Հասարակաց Ժողովարանը՝ գոթաձև, սրածայր աշտարակաւ. նշանաւոր է և արքունական պալատը. քաղքիս հարաւակողմն կ'ինայ Վաթերլօ գիւղը, նշանաւոր՝ ճակատամարտովը յորում յաղթուեցան Գաղղիացիք Դաշնակիցներէն յամին 1815։ — Մալին (բն. 55,000). անուանի է մայր եկեղեցին, գեղեցիկ ժանեակներն և քթանէ գործուածներն։ — Լուվէն (բն. 40,000) համբաւաւոր է իր համալսարանն և Հասարակաց Ժողովարանն։ — Նշանաւոր քաղաքն են՝ հիւսիսային կողմն Անվերսա կամ Անդուէրբրն, Էսգոյ գետին վրայ բանուկ նաւահանգիստ (բն. 240,000). անուանի է ճարտարութեամբը, յոր առաջին տեղին ունի ոսկերչութիւ-

50. Որո՞նք են Պելճիայի գլխաւոր քաղաքները։

նը: — Կանտ, ի գետախառնուրդս Լագոյի և Լիի (բն. 155,000). Պելճիայի ամենէն մեծ քաղաքը. ունի համալսարան, հասարակաց չէնքեր, կտաւի և ժանեակի շատ մը գործարաններ: — Պրիժ (բն. 50,000) արևմտակողմն մեծ և հարուստ քաղաք է. ժանեակի գործարաններ ունի: — Օսդանտ, բանուկ նաւահանգիստ,



Պրիւժ

ոստրէի մեծ վաճառականութիւն ունի. միջին Եւրոպան արևելքէն արևմուտք միացնող երկաթուղւոյն գլուխն է: — Դոռտրեխ (բն. 36,000), Գոուդդրէ (բն. 30,000) Գաղղիոյ սահմանագլխոյն մօտ. ձեռագործներն անուանի քաղաքներ են: — Նամիւր (բն. 32,000) հարաւակողմն, շատ ընտիր են զէնքերն և դանակեղէն գործուածներն: — Լիէժ (բն. 160,000) Բրուսիոյ սահմանակից, ձեռագործոց մէջ նշանաւոր են զէնքերն, ապակեղէնքն և չուխաներն. գաւառին մէջ բնածխոյ անսպառելի հանքեր կան:

Անվերսա

Ջանազան գիտելիք. — Պելճիա 29,500 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունի, և 6,200,000 բնակիչ: Կրօնքն կէսէն աւելի կաթոլիկ, մնացածն բողոքական. վարչութիւնն է սահմանադրական միապետութիւն: Այս թագաւորութիւնը 1831 տարւոյն հաստատուած է, բաժնուելով Սաորին–Նահանգներէն: — Օդն առողջարար է, և երկիրը շատ բարեբեր արմտեաց և ծխախոտի կողմանէ. առատ հանք ունի բնածխոյ. ունի նաև հանք երկաթի և գիւնկի: — Պելճիա և Հոլանտա նշանաւոր են իրենց ճարտարութեամբը. և մանաւանդ ապէս լաթեղէնքը, ասղնեգործքը կամ ժանեակները (dentelle), մետաքսեղէնքն և չուխաներն յոյժ ընտիր են:

ԶՈՒԻՑԵՐԻ

51. ՍԱՀՄԱՆՔ. — Զուիցերիի, որ գերմաներէն կ'ըսուի Շուայց, սահմանն է հիւսիսէն՝ Գերմանիա, արև-



Պեռնա

մուտքէն՝ Գաղղիա, հարաւէն՝ Գաղղիա և Իտալիա, և արևելքէն՝ Աւստրիա:

51. Որո՞նք են Զուիցերիի սահմանքը, և գլխաւոր քաղաքները:

Զուիցերի հասարակապետութիւն մ'է՝ իրարմէ անկախ քսանևերկու նահանգներէ (canton) ձևացեալ:

Պեռնա, (բն. 46,000), մայրաքաղաք հելուետական դաշնակցութեան, ունի համալսարան. դիրքը շատ գեղեցիկ է: — Գլխաւոր քաղաքներն են՝ հիւսիսային



Լուչեռնա

կողմը Պաղ կամ Պազիլեա, Հռենոսի վրայ (բն. 70,000), Զուիցերիի ամենէն վաճառաշահ քաղաքը, Գաղղիոյ սահմանագլխայն մօտ: — Ցուրիք համանուն լճին վրայ (բն. 25,000). ունի համալսարան: — Շաֆհուզ, Զուիցերիի ամենէն հիւսիսային նահանգին գլխաւոր քաղաքը: —

Սհե–կաղ (բն. 27,000) Գոնսգանս լճին մօտ. բամբակեղինաց և ասղնեգործաց մէջ նշանաւոր է: — Նէօշադիլ, համանուն լճին վրայ (բն. 16,000). ժամացուցից վաճառականութիւն կ'ընէ: — Ֆրիպուրկ, Պեռնայի արեւմտեան հարաւային կողմն, (բն. 12,000). պանրոյ մեծ վաճառականութիւն ունի: — Լոյչեռնա, (բն.



Ձիւնեռնա

20,000) համանուն լճին ափանց վրայ շինուած է. ասքաղքիս քովերն է 26 ոտք մեծութեամբ լերան կտորէ փորած առիւծ մը: — Արեւմտեան հարաւային կողմը Ժրնեւի կամ Ձիւնեռնա, Հռոդանոսի Լէման լճէն ելած տեղւոյն վրայ (բն. 50,000), Զուիցերիի ամենէն երեւելի քաղաքն է՝ գիտնական մասին. միանգամայն համ-

բաւաւոր իր ձեռագործներուն, գոհարեղէններուն և ժամացոյցներուն համար: — Լոզան (բն. 33,000) նոյնպէս Լէման լճին վրայ աղուոր քաղաք է:

52. Տարածութիւն, բնակիչք, կրօնք, վարչութիւն. — Զուիցերի Եւրոպիոյ բարձրագոյն երկիրներէն մէկն, Ալպեանց զանազան ճիւղերովը չրջապատած է: Տարածութիւնն է 41,000 քառակուսի քիլոմէդր և բնակիչք 2,920,000 որոնց 1,750,000 կալուինական են, և 1,170,000 կաթոլիկեայ: Իւրաքանչիւր նահանգ իրեն վարչութիւնն ունի, սակայն դաշնակցութեան չահուն խնդիրքն ազգային ժողովով կ'որոշուին:

Կլիմայ, բերք. — Յատկանշական առոյգով պատեալ լերանց պատճառաւ, որոց բարձրագոյնքն են Մոն–Ռոզա և Մոն–Պլան (մեղր 4640), Զուիցերիի կլիմային մեծաւ մասամբ ցուրտ է. սակայն կրնանք ըսել որ քանի մը ժամուան մէջ ամբողջ Եւրոպիոյ օդուն զանազան աստիճանները կրնայ մէկն զգալ այն տեղ. վասն զի մինչդեռ Ալպեանց գագաթը խիստ և չարաչունչ ձմեռ մը կը տիրէ, հովտաց մէջ ախորժական գարուն մ'է: Արմտեաց նուազութեան փոխարէն գեղեցիկ արօտներ ունի որոնցմով բազմաթիւ հօտք կը սնանին. նոյնպէս կարագն և պանիրն մեծ նիւթ են վաճառականութեան: — Վալէ նահանգին մէջ, որ հարաւային կողմը կ'ինայ, բթամիտ մարդոց (Կրէտինեն) ցեղ մը կայ, որոնք խուլ և համր են և գրեթէ անզգայ, և վզերնուն տակը մեծ խոյլ մ'ունին:

Բնութեան զարմանալիք. — Զուիցերիի գլխաւոր զբաղմանալիքն են, անսահման սառնարաններն որոնք ծանօթ են Ծով սառոյցի անուամբ. Հռենոսի սահանքը, Շաֆհաուզէն 5 քիլոմէդր հեռու, ուր այս գետս 110 մեղր լայնութեամբ, 20 մեղր բարձրութենէ վար կը թափի, հիանալի տեսարան մ'ընծայելով աչաց. Նպաւպախի ջրվէժն որ 250 մեղր բարձրութենէ կը հոսի: Գեղեցիկ են նաև բազմաթիւ լճերը, յորս գեղեցկագոյնն է Լիւտեռնի լիճը, որուն մէջ Գուլիելմոս Թել՝ ազատելով Կեսլեր իշխանին ձեռքէն, գլուխ կեցաւ ապստամբաց որ Աւստրիոյ հպատակութենէն կ'ուզէին ելլել:

52. Ի՞նչ գիտնալիք կայ Զուիցերիի բնակչաց, և վարչութեան վրայ:

ԳԵՐՄԱՆԻԱ

53. ՍԱՀՄԱՆՔ. — Գերմանիոյ սահմանն է հիւսիսէն՝ Պալտիկ ծով, Տանիմարքա և Հիւսիսային ծով. արեւմուտքէն՝ Սորին-Նահանգք և Գաղղիա. հարաւէն՝ Զուիցերի և Աւստրիա. և Արեւելքէն՝ Աւստրիա և Ռուսիա:

Գերմանիա քանաւվեց մասէ կազմեալ դաշնակից կայսրութիւն մ՚է. և գլխաւոր մասը կը ձևացընէ Բրուսիա: Արդ այս մասերն են. չորս թագաւորութիւն, վեց



Տրեզդա

մեծ–դքսութիւն, հինգ դքսութիւն, եօթն իշխանութիւն, երեք ազատ քաղաք, և կայսերական գաւառ մը:

Չորս թագաւորութիւններն են,

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲՐՈՒՍԻՈՅ, որուն վրայ առանձին տեղեկութիւն պիտի տանք:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԱՔՍՈՆԻՈՅ, Բրուսիոյ հարաւային կողմը. 15,000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն, և երեք ու կէս միլիոնէն աւելի բնակիչ ունի: Մայրաքաղաքը՝ Տրեզդա, Էլպա գետին վրայ (բն. 276,000).

53. Որո՞նք են Գերմանիոյ սահմանք, և քանի՞ տերութեանց կը բաժնուի:

գեղեցիկ քաղաք: Նշանաւոր է և Լայբցիկ (բն. 353,000). երևելի համալսարան ունի, և գրոց մեծ վաճառականութիւն կ՚ընէ: Տարին երեք անգամ մեծ տօնավաճառ ունի, ուր և կը դիմեն խուռն բազմութիւն. — Շեմնից (բն. 140,000) բամբակէ գործուածոց համար նշանաւոր է:



Լայբցիկ, ընդհանուր տեսարան

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՒԻԵՐԱՅԻ, Սաքսոնիոյ արեւմտեան հարաւային կողմը, 75,000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն ունի. բնակիչքն են 5,300,000: Մայրա-

քաղաքն է Միւնիխ կամ Մինխէն Իզար գետին վրայ (բն. 350,000). Նշանաւոր են պատկերաց մուզէոնը, թագաւորական գրատունը, և ուրիշ ուսումնական հաստատութիւններ: — Յիշելի է նաև Նիւրեմպէրկ (բն.



Աղբուեի պալատն Միւնխէնի

150,000), ուր անուանի գործարաններ կան երաժշտական և չափաբերական գործեաց: — Աչխապուրկ (բն. 80,000) Հասարակաց ժողովարանը չատ մեծաչէն է. անուանի են ուսումնական տեղուանքը: — Վիւրցպուրկ (բն. 65,000) Մայնի վրայ, բերդաքաղաք է, համալսարան և անուանի այգիներ ունի:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՎԻՒՐԴԷՄՊԷՐԿԻ, Պաւիերայի արեւմտեան կողմը. տարածութիւնն է 19,500 քառ. քիլոմէդր, բնակիչքն են 2,000,000: Մայրաքաղաքն է



Աչխապուրկ

Շդուդկարտ (բն. 140,000): Նշանաւոր է նաև Ուլմ (բն. 40,000), որ ամուր բերդ ունի:



Մայր եկեղեցի Ուլմի

Վեց մեծ–դքսութիւններն են.

ՊԱՏԻՆ, Վիւրդէմպէրկի արեւմտեան կողմը. բնակիչքը՝ 1,660,000: Մայրաքաղաքը Գարլսրուհէ (բն. 75,000): — Հայտէլպէրկ, (բն. 40,000) անուանի համալսարան ու-

նի։ — Մանհայմ (բն. 85,000) գեղեցիկ և շատ վաճառաշահ քաղաք է Հռենոսի ձախ ճիւղին վրայ։ Իսկ հանքային բաղնիքներուն համար անուանի է Պատրև–Պատրև։

ՀԷՍՍԷ–ՏԱՐՄՇԴԱՏ, առաջնոյն արևելեան հիւսիսային կողմը, (բն. 1,000,000)։ Մայրաքաղաքը՝ Տարմշդատ (բն. 60,000)։ — Մայենցա (բն. 80,000), Հռենոսի վրայ. ամուր բերդաքաղաք է։

ՍԱՔՍ–ՎԱՅՄԱՐ (բն. 330,000), արևելեան կողմը. մայրաքաղաքը Վայմար (բն. 30,000)։

ՄԷՔԼԷՄՊՈՒՐԿ–ՍՏՐԷԼԻՑ (բն. 110,000) և ՄԷՔԼԷՄՊՈՒՐԿ–ՇՈՒԷՐԻՆ (բն. 600,000) հիւսիսային կողմը, որոնք համանուն մայրաքաղաքներ ունին։

ՕԼՏԷՆՊՈՒՐԿ, առաջնոյն արևմտեան կողմը (բնակիչք 320,000). մայրաքաղաքն Օլտենպուրկ։

Մայենցա

Հինգ գաւառութիւնները.

ՊՐՈՒՆՋՈՒԻԿ (բն. 420,000). մայրաքաղաքը՝ Պրունզուիկ։

ՍԱՔՍ–ԳՈԹՈՒՐԿ–ԿՈԹԱ. մայրաքաղաքը Գոտուրկ։ — Կորա, ուսումնական հաստատութիւններ ունի. անուանի է գրատունն։

ՍԱՔՍ–ՄԱՅՆԻՆԿԷՆ (բն. 220,000), և ՍԱՔՍ–ԱԼԴԷՆՊՈՒՐԿ (բն. 170,000). մայրաքաղաքները Մայնինկէն և Ալդենպուրկ։

ԱՆՀԱԼԴ (բն. 260,000). մայրաքաղաքը Տեսաւ։

Եօթն իշխանութիւնները.

ԼԻԲԲԷ–ՏԷԴՄՈԼՏ, ՇԱՈՒՄՊՈՒՐԿ–ԼԻԲԲԷ, ՎԱԼԴԵԿ,

ՇՎԱՐՑՊՈՒՐԿ–ՌՈՒՏՈԼՇԴԱՏ, ՇՎԱՐՑՊՈՒՐԿ–ՍՈՆՏԵՐՍՀԱՈՒԶԷՆ, ՌԱՅՍ–ԿՐԱՅՑ, և ՌԱՅՍ–ՇԼԱՅՑ։

Երեք ազատ քաղաքները.

ՊՐԵՄԱ (բն. 130,000). մեծ վաճառաշահ քաղաք է, մանաւանդ շաքարի գործարաններովը։



Հայոց եկեղեցի

ՀԱՄՊՈՒՐԿ, Էլպա գետին վրայ (բն. 330,000). հըռչակաւոր նաւահանգիստ վաճառականութեամբ, և ապրանքներու, մանաւանդ շաքարի և խահուէի ամենամեծ մթերանոցներովը. և Լիւպէկ (բն. 65,000)։

Կայսերական գաւառ.

ԱԼՍԱՍ-ԼՕՐԷՆ, որ յամին 1871 Գաղղիայէն Գերմանիոյ անցաւ. կայսեր տեղակալ մը կը վարէ զայն: Մայրաքաղաքն է Սդրասպուրկ, Իլ գետին վրայ (բնակիչք 130,000). երևելի է մայր եկեղեցին, և անոր վրայի սքանչելի



Սդրասպուրկ

54. Բնակիչք, կրօնք, վարչութիւն. — Գերմանական կայսրութիւնը գրեթէ 51 միլիոն բնակիչ ունի: Տարածութիւնն է 545,000 քառակուսի քիլոմէտր, բովանդակելով ի նմա և վրուսիա: Հանքերու կողմանէ հարուստ է. ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, կապար, անդիկ, զառիկ, և գետնածուխ: — Գլխաւոր կրօնքը նորաղանդութիւնն է. սակայն տասնուեօթը միլիոն կաթոլիկներով կը գտնուին: Իւրաքանչիւր տերութիւն ներքին գործոց համար իւր առանձին վարչութիւնն ունի. բայց զօրքը, ծովային զօրութիւնն և արտաքին յարաբերութիւնք Բրուսիոյ առաջնորդութեան ներքև են: Հասարակաց վերաբերեալ խնդիրները ժողովարանէ մը կ'որոշուին, որուն անդամք ժողովրդենէ ընտրուած են:

Հետաքրքրական կայծակ. — Վերջին տարիներուս մէջ Գերմանիա Ափրիկէի արևելակողմն Զանկեպարի ափանց վրայ ընդարձակ երկիրներ գրաւեց, որ կոչուեցան Գերմանական արևելեան Ափրիկէ: Նոյնպէս հարաւ. կուինէոյ և Օգենդացւոց երկրին մէջ հաստատուեցաւ:

ԲՐՈՒՍԻԱ

55. ՍԱՀՄԱՆՔ. — Բրուսիոյ սահմանքն են հիւսիսէն՝ Պալտիկ ծովը, Մեքլէմպուրկ, Տանիմարքա և Հիւսիսային ծովը. արևմուտքէն՝ Սաորին–Նահանգք, Պելճիա և Գաղղիա. հարաւէն՝ Գաղղիա, Հէսսէ, Պաւիերա, Սաքսոնիա և Աւստրիա. իսկ արևելքէն՝ Ռուսաստան:

Կրնայ երկուքի բաժնուիլ Բրուսիա, այսինքն հին նահանգներու, և նոր ստացած նահանգներու:

Հին նահանգներն ութ են. Բոզէն, Բրուսիա, Բռանտէնպուրկ, Պրանտէնպուրկ, Սիլեզիա, Սաքսոնիա, Վեսթֆալիա, և Հոհենոսեան նահանգ:

54. Ի՞նչ կայ գիտնալիք Գերմանիոյ բնակչաց և վարչութեան վրայ:

55. Քանի՞ կը բաժնուի Բրուսիա, և որո՞նք են գլխաւոր քաղաքները:

Մայրաքաղաքն է Պեռլին, Պրանտէպուրկ նահանգին մէջ, Սբրէ գետին վրայ, (բն. 1,600,000)։ Հոյակապ են արքունական պալատը, համալսարանի շէնքը, Մեծին Փրեդերիկոսի ձիաւոր արձանը, և Յաղթութեան յիշատակարանը կանգնեալ ի պատիւ գերմանական զօրաց։ — Բօցտամ. կրնայ Պեռլինի վերայլն անուանուիլ. գե-



Պեռլին

ղեցիկ քաղաք Հավէլ գետին վրայ, (բն. 60,000) թագաւորական անուանի պալատներ ունի, յորոց մէկը կը կոչուի Սան–Սուսի, Մեծին Փրեդերիկոսի բնակարանը։ — Ֆրանկֆորդ, (Օտէրի վրայ) (բն. 60,000) գեղեցիկ քաղաք է. անուանի տօնավաճառներ ունի։

Քէօնիգսպէրկ (բն. 170,000) Բրուսիոյ գաւառին մէջ,

բերդաքաղաք. համալսարանն հռչակաւոր է։ — Տանցիկ, Վիսդուլա գետին բերնին մօտ (բն. 130,000). անուանի ծովային բերդաքաղաք է։

Սդեդին, Բոդերանիոյ մէջ, Օտէր գետին վրայ, (բն.

Դուռն Պրանտէպուրկայ ի Պեռլին

125,000). Բրուսիոյ առաջին վաճառաշահ նաւահանգիստն է։

Պրեզլաւ, Սիլեզիոյ մէջ, Օտէր գետին վրայ, (բն. 350,000). հոյակապ է մայր եկեղեցին. համալսարանը



Հրապարակ գիւնուորաց ի Պեռլին

հռչակեալ։ — Մակտէպուրկ (բն. 210,000) Սաքսոնիա գաւառին մէջ. հոյակապ է մայր եկեղեցին. հոս ծնած է Օթթօ Կուէրիք օդահան մեքենային հնարողն։ — Հալլէ (բն. 110,000) Սա ալ գետին վրայ, անուանի հա-

մալսարան ունի. — Էրֆուրդ (բն. 80,000) զօրաւոր բերդաքաղաք է, մեծ գործարաններ ունի ժապաւինաց։

Գոպլենց, (բն. 40,000), բերդաքաղաք, և գեղեցիկ դիրքով Մօզելի և Հռենոսի իրարու խառնուած տեղւոյն



Արքունի պալատն Սան-Սուսի

վրայ։ — Գոլոնիա կամ Քէօլն, Հռենոսի վրայ, (բն. 300,000)· Եւրոպայի առաջին երեւելի չէնքերէն մէկն է մայր եկեղեցին, հոս կը չինուի Գոլոնեայի անուշահոտ ջուրը։

Տիւսէլտորֆ, (բն. 160,000) Հռենոսի վրայ գեղեցիկ

քաղաք է. նկարչութեան բարձր վարժարան ունի։ — Էքս–լա–Շաբէլ, գերմ. Ախեն (բն. 110,000)· զուարճալի դիրքի մը վրայ, շատ հին քաղաք է, նշանաւոր են մայր եկեղեցին և հանքային տաք լուրերն։



Ամրոցն Էհրենպրայդդայն ի Գոպլենց

Նոր նահանգները չորս են. հիւսիսային կողմը՝ Շլեզուիկ–Հոլշտայն։ — Լաւենպուրկի դքսութիւնը. — Անովեր, որուն մայրաքաղաքն է Անովեր (բն. 170,000) և ունի նշանաւոր քաղաք Կեդդինկեն հռչակուած հա-

Գոլոնիա

մալսարանաւ։ — Հեսէ–Նասսաւ. որուն մէջ յիշատակութեան արժանի է Ֆրանկֆորդ (Մէնի վրայ) (բնակիչ 190,000)· Գերմանական հին դաշնակցութեան ժողովարանը հոս կը գումարուէր. և այս քաղքին մէջ կնքուեցաւ 1871 տարւոյն Բրուսիոյ և Գաղղիոյ մէջ հաստատուած դաշնադրութիւնը։

ԿՂԶԻՔ. — Բրուսիա Պալդիկ ծովուն մէջ ունի երեք կղզի, որ են Վօլլին, Ռյգոտ, և Ռոյհեն։
Հիւսիսային ծովուն մէջ Հելիգոլանտ։



Գոպենհագ

56. Տարածութիւն, բնակիչք, կրօնք, վարչութիւն. — Բրուսիոյ տարածութիւնն է այսօրուան օրս 350,000 քառակուսի քիլոմէդր, մինչդեռ 1866 տարիէն առաջ՝ 279,000

56. Բրուսիոյ տարածութեան և բնակչաց վրայ տեղեկութիւն տուր։

քառակուսի քիլոմէդր էր։ Բնակիչքն, որ առաջ 19 միլիոն էր, հիմա 30 միլիոն է, որոնց մեծագոյն մասն լուտերականն կամ կալուինական քաղաքական են, և ութ միլիոնի մօտ կաթոլիկեայ։ Վարչութիւնը տահմանադրական է, երկու խորհրդարանաւ։ Ուսմունք և դիտութիւնք շատ յառաջադէմ են Բրուսիոյ մէջ և հասարակ ժողովրդեան մէջ ուրիշ ամէն երկիրներէ աւելի նախնական կրթութիւնը ծաւալած է։

Տիւսսէլտորֆ

Ա.ԻՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ.

57. ՍԱՀՄԱՆՔ. — Աւստրօ-Հունգարիոյ կամ Աւստրիոյ-և-Մահառստանի կայսրութեան սահմանքն են, հիւսիսէն՝ Ռուսաստան, Լեհաստան, Բրուսիա և Սաքսոնիա. արևմուտքէն, Պաւիերա և Շուիցերի. հարաւէն՝ Իտալիա, Ադրիական ծովն և Թուրքիա. և արևելքէն՝ Ռուսիա։

Աւստրիա-և-Մահառստանի կայսրութիւնն ունի քսան նահանգ, որք միահամուռ՝ երկուքի կը բաժնուին, այսինքն Աւստրիայեան, և Ունդրիայեան աշխարհք։

Ցիշեալ նահանգներն են, Արշիդքսութիւն Աւստրիոյ, Դքսութիւն Սալցպուրկի, Տիրիա, Գարինթիա, արև-

57. Աւստրօ-Հունգարիոյ կայսրութեան սահմաններն օրո՞նք են. և քանի՞ նահանգի կը բաժնուի։

մտեան կողմը։ — Դիւրոյ, Գառնիոյա, և Լիւրիկեան ծովախոռնիք, արևմտեան հարաւային կողմը։ — Պոռնեմիա, Մորաւիա, Սիլեզիոյ դքսութիւնը, հիւսիսային կողմը։ — Կալիցիա, և Պոզրովինա, արևելեան հիւսիսային կողմը։ — Հոռնգարիա կամ Մաձառստան, Տրանսիլվանիա, Ֆիոմէ, Խոռուադստան և Սկլաւոնիա, արևելեան



Վիեննա

կողմը։ — Տալմացիա, Աղրիական ծովուն վրայ, հարաւային կողմը։

58· Մայրաքաղաքն է Վիեննա, որ գերմաներէն Վիե

58· Որո՞նք են Աւստրիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքները։

նի՝ ըսուի, Աւստրիոյ Արքդքսութեան մէջ, Դանուբի ալ եզերքին քով, (բն· 1,370,000)։ Ամենէն երեւելի շէնքն է Ս· Ստեփանոսի գոթաձև մայր եկեղեցին, որուն սրածայր աշտարակին բարձրութիւնն առաջիններէն է Եւրոպիոյ մէջ։ Նշանաւոր է նաև Պուրկ ըսուած կայսերական պալատը, մեծ օբերան։ Փողոցներուն մէջ զարմանալի է Րինկ–շդրասսե (մատանւոյ ուղի) ըսուած ծառազարդ լայնարձակ փողոցը, որ բոլորաձև կը պարուրէ քաղաքիս կեդրոնը, և հոյակապ շէնքերով զարդարուած



Ս· Ստեփանոս

է և օրէ օր կը զարդարուի։ Բուդէր կոչուած ճեմելիքն ալ գեղեցիկ է։ Հոս է Վիեննական Մխիթարեանց վանքն։ Վիեննայի մօտ, արևմտեան կողմը, Շեօնպրունի կայսերական գեղանի պալատն և պարտէզը կայ։ — Լինց (բն· 50,000) Դանուբի վրայ ձեռարուեստական քաղաք է։

Սալցպուրկի դքսութեան մէջ նշանաւոր են Սալցպուրկ, Սալցա գետին վրայ (բն· 30,000), որ աղահանք ունի։

Գարինթիոյ դքսութեան մէջ Կլակենֆուրդ (բնակիչ 20,000) չուխայի գործարաններ ունի։

Սդիրիոյ դքսութեան մէջ Կրաց, Մուր գետին վրայ (բն. 115,000), որ պղպատի գործարաններ ունի։

Դիրոլի կոմսութեան մէջ՝ Ինսբրուք Ինն գետին վրայ (բն. 25,000), գեղանի դիրքով։ — Դրեզդ, նշանաւոր

Պոզրկ, պալատ կայսերական

է վեչտասաներորդ դարուն մէջ հոս կատարուած եկեղեցական ժողովը։

Իլլիրիոյ կամ Լիւրիկեան ծովափանց և Իսդրիոյ գլխաւոր քաղաքն Դրիեզդ, Ադրիական ծովուն վրայ,

Սալցպուրկ

(բն. 160,000), որ կայսրութեան առաջին նաւահանգիստն է, միանգամայն աւստրո-հունգարական յոյժ չոգենաւուց ընկերութեան կեդրոնը։ — Կօրց կամ Կօրիցիա Իզոնցոյ վրայ, և անոր մօտ Աքուիլէա, որ համանուն

հին քաղաքին տեղւոյն վրայ չինուած է։ Իսդրիոյ ծովեզերաց վրայ բանուկ նաւահանգիստներ են Ռովինեոյ և Բոլա որ նշանաւոր հնութիւններ ունի։

Գառնիոլայի դքսութեան մէջ Լայպախ կամ Լուպիանա (բն. 32,000) վաճառաշահ քաղաք է. կտաւեղինաց և յախճապակւոյ գործարաններ ունի։

Պոհեմիոյ մայրաքաղաքը Բրակ, Մոլտաւ գետին վրայ (բն. 190,000), որուն համալսարանն հռչակեալ է, և շատ ձեռագործներ ունի. — Դէրլից, Գարլսպատ, Մարիէնպատ. անուանի են իրենց հանքային ջուրերով։

Մորաւիոյ մէջ կան Պրիւնն (բն. 100,000) և Օլմիւց բերդաքաղաքներն։



Բրակ

Սիլեզիոյ դքսութեան մէջ Դրոբրաւ (բն. 25,000) ճարտարարուեստ քաղաք է։

Գալիցիոյ մայրաքաղաքը Լեմպէրկ կամ Իվով (բն. 130,000), ընդարձակ քաղաք, ուր կայ Հայոց արքեպիսկոպոսարան և քանի մը հարիւր հայ բնակիչ։ — Գրագովիա, Վիսդուլա գետին վրայ, (բն. 75,000) որ նշանաւոր յիշատակարաններ ունի։

Պուքովինայի գլխաւոր քաղաքն է Զերնովից (բնակիչ 35,000)։

Հունգարիա կամ Մաճառստանի թագաւորութիւնը չորս չրջանակի կը բաժնուի (բն. 15,000,000)։ Պուտա-Բէշդ է մայրաքաղաքը, Դանուբի վրայ, (բն. 510,000) երկու քաղաքներէ ձեւացած. Բէշդ՝ գետին ձախակող-

մեան ափանց վրայ է, իսկ Պուտա կամ Օֆըն՝ ձախ կողմեան ափանց: Օրէ օր գեղեցկանալու վրայ է Բէչդ մեծագործ չէնքերով: Համալսարանն անուանի է, վաճառականութեան կողմանէ ալ քաղաքն գործունեայ է: — Բրեզպուրկ կամ Բօժօն (բն. 53,000). սահենօք Մաճառաբա-

Պուտա-Բէշդ

տանի մայրաքաղաքն էր: — Զեկետին (բն. 90,000) մեծ և վաճառաշահ քաղաք է Թիզցա գետին վրայ. 1879ին քաղաքս գրեթէ ամբողղ կործանեցաւ այս գետին ողողմանէն. և յետոյ աւելի գեղեցիկ չինուեցաւ: — Շեմ-

Բրեմնից

նից և Բրեմնից. ոսկիի, արծաթի ու կապարի հանքեր ունին որ Եւրոպայի մէջ ամենէն մեծերն են: — Ֆիւրմե (բն. 25,000) Աղրիականի վրայ ազատ նաւահանգիստ է, որ օր օրէ զարգանալու հետ է: Հունգարիոյ մասն է նաև Դրանսիլվանիա, որուն մայրաքաղաքն է Գլաւզենպուրկ

կամ Գլոժ (բն. 34,000), որ ունի հայ բնակիչներ: Իսկ Սաւօյ–ռէյվար կամ Կեռլա կամ Ալմենհիւղատ, և Էշիգապէդդատ կամ Էրժիպէդ–վարօշ կամ Պաշվարով, և Ճոդրաձով քաղաքներն Հայոց քաղաք են, և առաջ շատ ազատութիւններ ունէին, զորս ետքը կորսնցուցին:

Խուռադատանի և Սկլաւոնիոյ միացեալ գաւառաց* մէջ կան Ակրաւ կամ Զակրապ (բն. 40,000) համալսարան ունի: — Կրատիսքա բերդաքաղաք է: — Փեդերվարտայի Դանուբի վրայ, Եւրոպայի ամուր բերդաքաղաքաց մին է: — Զէմլին վաճառաշահ և ամուր քաղաք է:

Տալմացիոյ մայրաքաղաքն է Ծարա (բն. 20,000), Ադրիականին վրայ: — Յիշելի է նաև Ռագուզա, նոյնպէս Ադրիական ծովուն վրայ, որ առեւնօք զօրաւոր հասարակապետութիւն մի էր:

Սբալադրոյ

Սբալադրոյ. ասոր մօտ են հին Սալոնա քաղաքին աւերակքը:

Ռուսա–տաճկական պատերազմէն ետքը, Աւստրիա Պեռլինի վեհաժողովին և Տաճկաստանի հաւանութեամբը՝ առժամանակեայ զինուորական կերպով գրաւեց Պոսնիա և զէրցեկովին կամ Հէրսեք, որոց մէջ կան Սերայեվօ և Մոսդար քաղաքները:

ԿՂԶԻԲ. — Ադրիական ծովուն մէջ ունի կայսրութիւնս Լիւրիկեան և Տալմացիոյ կղզիները, որոնք բազմաթիւ են՝ թէպէտ փոքրիկ, և եղերաց մօտ են:

* Ժամանակաւ Զիւռոդրական Սահմանք կոչուած գաւառն այժմ միացած է մաս մը այս գաւառիս և մաս մ'ալ Հունգարիա–Դրանսիլվանիոյ հետ:

59. Տարածոռթիւն, բնակիչք, կրօնք, վարչոռթիւն. — Աւստրիա–Ա–Մաճառստանի տարածութիւնն է 624,000 քառակուսի քիլոմէտր: Բնակիչքն են 41,000,000, որոնք այլ և այլ ազգերէ են. Գերմանացիք են 10 միլիոն. Մաճառները 7 միլիոնի մօտ. Սլաւք 17 միլիոն. Ռումէնք՝ 5 միլիոն. Իտալացիք՝ 1 միլիոն. և 1 միլիոնի չափ ալ այլ և այլ ազգեր, որոնց մէջ են 10,000 Հայք: Տիրող կրօնքը՝ կաթոլիկեայ է. բայց կը գտնուին նաև բողոքականք (լութերական և կալուինական) և յունադաւանք, և այլն: Կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է, վասն զի ունի Ռայխսրատ ժողովարանն և Մաճառստանի Տիէտան կամ խորհրդարանը: Երկու պաշտօնարան կայ. մին Աւստրէյթայեան երկիրներուն համար, որ են Աւստրիոյ արշիդքսութիւնը, Սալցպուրկ, Պոհեմիա, Մորաւիա, Սիլեզիոյ դքսութիւնը, Սդիրիա, Տիրոլ, Գարինթիա, Գառնիոլա, Լիւբլիկեան ծովեզերքը, Տալմացիա, Կալիցիա և Պուքովինա. իսկ միւսն Անդրլէյթայեան աշխարհաց համար, որ են Մաճառստան ընդ Տրանսիլվանիոյ, Խռուադստանի և Սկլաւոնիոյ թագաւորութիւնը, և Ֆիումէի երկիրը:

Կլիմայ, բերք. — Աւստրո–Հունգարիոյ կայսրութեան հիւսիսային մասերը ցուրտ են. բայց երկիրը առատ ցորեն կը բերէ: Մաճառստանի գինիներն անուանի են, մանաւանդ Թոքայի գինին. և եզանց ու ձիերու կողմանէ չատ հարուստ ըլլալուն՝ մեծ վաճառականութիւն կ'ընէ օտար աշխարհաց հետ: Ադրիականին մօտ երկիրները ջերմին կլիմայ ունին, և ձիթենիք և որթերն ադեկ առաջ կու գան: Կայսրութեան մէջ կան ոսկւոյ, արծաթի, պղնձի, երկաթի, անդիկի, աւազի և աղի հանքեր, և բնածուխ:

59. Աւստրիոյ–և–Մաճառստանի վրայ ինչ գիտելիք կայ:

ԲՈՐԴՈՒԳԱԼ

60. ՍԱՀՄԱՆՔ. — Բորդուգալի սահմաններն են, հիւսիսէն և արևելքէն՝ Սպանիա. և արևմուտքէն ու հարաւէն՝ Ատլանտեան ովկիանոսը:



Լիսպոնա

Բորդուգալ կը բաժնուի հիմա տասնուեօթն գաւառի. բայց սովորաբար հին վեց նահանգներուն անունները կը

60. Որո՞նք են Բորդուգալի սահմանները և գլխաւոր քաղաքները:

տրուի, որ են Տուրոյ և Միևիոյ գետերուն միջոցը. Անդրիմատուրա. Աւեմ-Դէյոյ. Աւկարվա. և Մերձակայ կղզիք:

Մայրաքաղաքն է Լիզպոնա, կամ ըստ Բորդուգալցոց Լիզպոա, Էսդրէմատուրա նահանգին մէջ, Դակոյ գե-



Ο Բօրդոյ

տին ալակողմեան ափանց վրայ (բն. 250,000), հիանալի դիրք ունի: Շէնքերուն մէջ ամենէն նշանաւորն է Ջրմուղը՝ 19 քիլոմէդր երկայնութեամբ, որ քաղքին ջուրը կը մատակարարէ: Քաղքիս մերձակայքը շատ չէն են: — Ասդուպալ (բն. 20,000) բանուկ նաւահանգիստ է:

Ο Բօրդոյ կամ Բօրդոյ, Տուրոյ գետին բերանը, (բն. 110,000), վաճառականութիւնը բանուկ. երեւելի են քաղքիս գինիները: — Պրագա (բն. 21,000) հոս կը նըստի տէրութեան նախագահ արքեպիսկոպոսը:

Գոյիմպրա, Մոնտէկոյ գետին վրայ (բն. 20,000). համալսարանն համբաւաւոր է:

Էլվաս (բն. 14,000) Աւեմ-Դէյոյ նահանգին մէջ. Եւրոպայի ամուր բերդաքաղաքաց մէկն է:

Մերձաւոր կղզիներն են Ազորեանց և Մատերեանց խումբերն. որոնք ալխարհագրականօրէն Ափրիկէի վերաբերելուն՝ հոն պիտի խօսուի:

61. Տարածութիւն, ժողովուրդ, կրօնք, վարչութիւն. — Բորդուգալի տարածութիւնն է 91,000 քառակուսի քիլոմէդր. և ունի 4,730,000 բնակիչ, որոնք գրեթէ բովանդակ կաթոլիկեայ են: Վարչութիւնն է սահմանադրական միապետութիւն:

Կլիմայ, բերք. — Բորդուգալի կլիմայն շատ տաք է ծովեզերաց վրայ, իսկ ներսերը բարեխառն, և ընդհանուր առմամբ կլիմայ է, յարմար խաղողի, ձիթենւոյ և նարընջի մշակութեան: Երկիրն, որ լեռներով, բլուրով և գեղեցիկ հովիտներով ընդհատեալ է՝ ընդհանրապէս բարեբեր է, սակայն քիչ մշակուած: Շատ աղ կը հանեն ծովէն. իսկ հանքերուն կողմանէ ունի Բորդուգալ երկաթ, և Կուաստինա գետին մօտ պղինձ: Կան ուրիշ հանքեր ալ, բայց երեսէ ձգուած են:

Հեռաւոր կալուածք. — Աւելիօք Բորդուգալ ամենամեծ երկիրներ ունէր Եւրոպային հեռու, ինչպէս Պրազիլն ու Հնդկաստանի մեծ մաս մը: Իսկ հիմա ունի Ասիոյ մէջ ի Հնդկաստան՝ Կօա և քանի մը ուրիշ քաղաքներ, և ի Չինաստան Մաքաոյ. Ափրիկէի մէջ Մօզամպիք, Անկոլա, Բորդուգալեան Սեներկամպիան, Ազորեան, Մատերեան և Կանուչ-Գիխոյ կղզիները, Իշխանի կղզին և Ս. Թովմայի կղզին. իսկ Մալեզիոյ մէջ Դիւոր կղզւոյն մէկ մասը: Այս կալուածոց բնակիչքն են 14,140,000:

61. Ինչ գիտելիք կայ Բորդուգալի ժողովրդեան, բերոց, և գաղթականութեանց վրայ:

Ս Պ Ա Ն Ի Ա.

62. ՍԱՀՄԱՆՔ. — Սպանիոյ սահմաններն են, հիւսիսէն՝ Պիւրենեան լեռներն և Ատլանտեան ովկիանոս, արեւմուտքէն՝ Ատլանտեանն և Բորդուգալ, հարաւէն՝



Մադրիտ

ձիբալդաբի նեղուցն և Միջերկրական ծովը. իսկ արեւելքէն՝ Միջերկրական ծովը։

62. Ըսէ Սպանիոյ սահմանները, և գլխաւոր քաղաքները։

Սպանիա կը բաժնուի քառասունևեօթն նահանգի։

Մայրաքաղաքն է Մադրիտ, Սպանիոյ կեդրոնը, Մանսանարէզ գետակին վրայ, որ մեծագործ կամուրջ մը ունի, (բն. 470,000)։ Եւրոպիոյ ամենէն բարձր մայրաքաղաքն է, 680 մէտր ծովուն երեսէն վեր։ Ունի քանի մը նշանաւոր չէնքեր. նշանաւոր է մեծ հրապարակը, ուր կը կատարուին ցլամարտութիւնք և հասարակաց հանդէսները։ Ասոր մօտ է Էսգորիալ՝ հոյակապ և ընդարձակ արքունի պալատն։ — Թոլետօ (բն. 20,000) ժամանակաւ չատ նշանաւոր քաղաք էր։

Նշանաւոր քաղաքներն են Պարչէլօնա կամ Պարցհէլօնա, Գադալօնեայի մայրաքաղաքը, Միջերկրական ծովուն վրայ (բն. 275,000). ամուր բերդ ունի և ծո-

Ալհամպրա

վային զինուորութեան նաւարան է. գեղեցիկ է մայր եկեղեցին. վաճառականութիւնն ալ բանուկ։ — Սարագոսա (բն. 100,000) Ալրակոնայի մէջ. նշանաւոր է իր դիմադրութիւնն Գաղղիացւոց յամին 1809։ — Սալամանկա (բն. 25,000) հին Լէոն թագաւորութեան մէջ՝ անուանի է համալսարանն։ — Վալենցիա, Կուատալավիար գետին բերնին մօտ (բն. 170,000). չքեղ է մայր եկեղեցին, ինչպէս նաև արքեպիսկոպոսին պալատը, և դատաստանարանը։ Աւենոք Վալենցհիայի փոքրիկ թագաւորութեան մայրաքաղաքն էր։ — Մուրչիա (բն. 100,000) համանուն գաւառին մէջ Սեկուրայի վրայ գեղեցիկ քաղաք է։ — Գարթագենա (բն. 80,000) անուա-

նի նաւահանգիստ։ — Ալիգանիէ (բն. 40,000) բանուկ նաւահանգիստ է. անուանի է գինին։ — Կրանատա, հին Կրանատայի թագաւորութեան մայրաքաղաքը, գեղանի դիրք ունի, (բն. 75,000)։ Շէնքերուն մէջ չատ երևելի է Ալհամպրա ըսուած հին պալատը, որ Մաւրի-



Մալակա

տանացւոց ժամանակէն մնացած է, որուն մէջ գարմացման արժանի է ալապաստրէ կրկին աւազանները՝ տասնուերկու առիւծներու կռթընած։ — Մալակա, վաճառաշահ քաղաք, (բն. 115,000). գինին անուանի։ — Գորոնեա (բն. 40,000) Կալիչիա գաւառին մէջ, ընդ-

արձակ և բանուկ նաւահանգիստ է։ — Սանդիակօ Գոմբոստելլա (բն. 30,000) անուանի է գոթաձև հոյակապ մայր եկեղեցին, որ մեծ ուխտատեղի է իր մէջ պարունակելուն Մեծ և Փոքր Ս. Յակոբոս Ալաքելոց գերեզմանները։ — Հին Գասդիլիոյ մէջ Սանդանտեր (բն. 43,000) չատ վաճառաշահ նաւահանգիստ։ — Վա-

Գորտովա

լիատոլիդ (բն. 62,000) նշանաւոր է համալսարանաւն և ցորենի վաճառականութեամբ։ — Սեւիլիա, Անտալուզիոյ մայրաքաղաքը, (բն. 145,000), մեծ քաղաք է. անուանի է մայր եկեղեցին մեծութեամբը, գեղեցիկ ճարտարապետութեամբն և հարստութեամբը, և ազգա-

Գատիչ

զար անուանեալ մաւրիտանական պալատը. հոս ծնած է Մուրիլլօ պատկերահանը։ — Գորտովա, Կուատալքիվիր գետին վրայ, (բն. 55,000). հիանալի է մայր եկեղեցին, որ առենօք մզկիթ էր Մաւրիտանացւոցմէ չինուած, ինչպէս նաև անոնց չինածն է գետին վրայի կամուրջն և բերդը։ — Գատիչ, Լէոն կղզւոյն արևմտեան հիւսիսային ծայրը, Ատլանտեան ովկիանոսին վրայ, (բն.

65,000)։ ամուր բերդաքաղաք է. ունի հոյակապ մայր եկեղեցի. վաճառականութիւնը շատ բանուկ է։ — Խերեզ տէ լա ֆրոնդերա (բն. 65,000) անուանի է գինին։ — Պիտգայոյ մէջ կան Պիլպաօ (բն. 50,000), ծովեզերքին մօտ շատ վաճառաշահ քաղաք է։ — Ս. Սեբաստիանոս (բն. 30,000) բերդաքաղաք և բանուկ նաւահանգիստ։

ԿՂԶԻՔ. — Սպանիոյ թագաւորութեան մասն կը կազմեն Պաւկարեան կղզիները, որոնց մեծերն են՝ Մայորքա, Մինիորքա, և Իվիցա. իսկ փոքրիկներն են՝ Ֆորմենտերա և Գաւպրերա։ — Նահանգ մը կը կազմեն նաև Գանարեան կղզիները, Աֆրիկէի ափանց մօտ, որ Աֆրիկէի մասն կը սեպուին։

Ճիպրալդար

63. Ճիպրալդար, Սպանիոյ հարաւային կողմը, համանուն նեղուցին վրայ, Աֆրիկէի եղերաց դիմացը, անառիկ բերդ մի է 460 մէդր բարձրութեամբ ժայռի մը վրայ չինուած։ Անգղիացւոց ձեռքն է 1704 տարիէն ի վեր, Բնակիչքն են 25,000։

64. Տարածութիւն, բնակիչք, կրօնք, վարչութիւն. — Սպանիոյ տարածութիւնն է գրեթէ 507,000 քառակուսի քիլոմէդր. բնակիչքն են 17,500,000, և ամէնքը կաթոլիկեայ են։ Կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է։ Ունի երկու խորհրդարան, որ են ծերակուտին, և երեսփոխանաց, և երկուքն ի միասին կը կոչուին Գօրդես։ 1868ին առաջամանակեայ կառավարութիւն մը ունեցաւ այս

63. Ո՞ւր կ'էյնայ ճիպրալդար. և ո՞ր տէրութեան ձեռքն է։
64. Ի՞նչ գիտնալիք կայ Սպանիոյ վրայ։

երկիրս. երկու տարի ետքը՝ նորէն միապետութեան փոխուեցաւ. յետոյ 1873ին հասարակապետութիւն եղաւ. իսկ 1875ին դարձեալ թագաւորութիւն անուանեցաւ։

Կլիմայ, բերք. — Սպանիոյ մէջ լեռները շատ ըլլալուն, կլիմային բարեխառն է, մինչդեռ իր դրիցը համեմատ շատ աւելի տաք պէտք էր ըլլար. ասկայն հարաւային ափանց ջերմութիւնը ասստիճ է, և Աֆրիկէի սոյաւնոյ ըսուած հրաշկէզ հովը մինչև հոն կը հասնի։ Հողը քիչ մշակուած է. բարեբաղդաբար շատ բարեբեր ըլլալուն՝ Եորդուգալի բերքերն առաջ կը բերէ։ Ոսկւոյ և արծաթի հանքերը, ուսկից կարբեդոնացիք և Հռովմայեցիք անբաւ գանձեր հանեցին, հիմա հազիւ կը բանին. բայց ունի երկաթի, կապարի և պղընձի հանքեր, և աղնիւ մարմարիոններ։ Մերինոս ոչխարներուն աղնիւ բուրդը, մեռաքսը, և տեսակ տեսակ աղնիւ գինիներ՝ գլխաւոր նիւթերն են Սպանիոյ վաճառականութեան։ Գեղեցիկ են նաև ձիերն։

Հեռաւոր կալոնիաժք. — Սպանիա առենօք բազմաթիւ երկիրներ ունէր յԱմերիկա. 1898ին Ամերիկոյ Միացեալ-Նահանգաց հետ պատերազմաւ կորնցուց Գուպա և Բօրդոյ-Ռիգոյ կղզիներն Անդիլեանց մէջ, և Փիլիպպեան, Գարոլինեան և Մարիանեան կղզեաց մեծ մասն Ովկիանոսի մէջ։ Աֆրիկէի մէջ, Մարոքի հիւսիսային ափանց վրայ ուներ Սէուտա, Մելիլլա և քանի մը ուրիշ բերդեր։ Կուինէոյ ծովին մէջ ունի զՖերնանտոյ-Բոյ և զԱնիապօլ։

ԻՏԱԼԻԱ

65. ՍԱՀՄԱՆՔ. — Իտալիոյ սահմաններն են, հիւսիսէն՝ Աւստրիա և Զուիցերի, արեւմուտքէն՝ Գաղղիա և Միջերկրական ծովը, հարաւէն՝ Յոնիական ծովը, և արեւելքէն՝ Ադրիական ծովն ու Աւստրիա։

Աչխարհագրական օրս Իտալիա եօթանասունևերկու գաւառի (prefettura) կը բաժնուի։

65. Որո՞նք են Իտալիոյ սահմանքն և ինչ կայ գիտնալիք Հռոմի վրայ։

Մայրաքաղաքն է Հռոմի, Տիբերիս գետին վրայ, հարաւային Իտալիոյ մէջ. առաջ Եկեղեցւոյ վիճակին մայրաքաղաքն էր, և մինչև հիմա Սրբազան Քահանայապետին աթոռն է, (բն. 440,000): Աշխարհիս առաջին քաղաքն է հեթանոսութեան և քրիստոնէութեան ժամանակաց հիանալի անթիւ յիշատակարաններովը: Հեթանոսութեան մեծագործութեանց մէջ յիշենք միայն զԿոլոսէոն՝ մեծ ամփիթէատրոնը, զՊանթէոն կամ Ամենադից մեհեան, զոր հիմա եկեղեցւոյ փոխարկած են, Դիոկղետիանոսի բաղանիքը, Անտոնինեան և Տրայիանոսի կոթողները, Կապիտոլիոնը, հռոմէական Փորոնը կամ հրապարակը, Կայսերաց պալատը, և Վեստայի



Հռոմի

տաճարը: Քրիստոնէութեան մեծագործութեանց առաջին և հրաշալին է Ս. Պետրոսի կաթուղիկէն, որ աշխարհիս ամենէն մեծ եկեղեցին է, միանգամայն ունի ամենաբարձր գմբէթ: Զարմանաց արժանի են Սանտա Մարիա Մաձիօրէ և Ս. Յովհաննէս Լատերանու կաթուղիկէք, և ուրիշ անթիւ եկեղեցիք, մի քան զմի չքնաղագեղչէնք, և ճոխք մարմարիոնօք, ոսկիէ դրուագներով և պատկերօք: Ս. Պօղոսի կաթուղիկէին շինութիւնն ալ նոր լմնցած է, որուն մարմարիոնաց և միւսիոն նկարուց հարստութիւնը մեծ է: Ս. Պետրոսի եկեղեցւոյն միացած է Վատիկանու պալատը, Ս. Պապին արքունիքը, որոյ արձանաց և պատկերաց հաւաքմունքն աքանչելի են. գեղեցիկ պարտէզ ալ ունի: Ինչպէս նաև յիշատա-

կութեան արժանի է Կուիրինալի պալատը, և Ս. Հրեշտակի դղեակը, որ Ադրիանոս կայսեր մահարձանն է:

66. Նշանաւոր քաղաքներն են. Դուբլի կամ Դորիւնդ, Բոյ գետին վրայ, (բն. 310,000), Բիւեմոնդի մայրաքաղաքը, և Իտալիոյ տէրութեան առաջին մայրաքաղաքը. գեղեցիկ են արքունի պալատը, եգիպտական հնութեանց թանգարանը, և մայր եկեղեցին: — Նովա-

Պանթէոն

րա (բն. 33,000). ասոր մօտ նշանաւոր պատերազմներ եղած են 1513ին և 1849ին: — Ալեքսանդրիա (բնակ. 65,000) ամուր բերդաքաղաք է, որուն մօտ է Մարէնկո

66. Իտալիոյ ուրիշ նշանաւոր քաղաքներն որոնք են:

գիւղն, ուր Գաղղիացիք մեծ յաղթութիւն մ՚ըրին Աւստրիացւոյ վրայ 1800ին։

Ձենովա, Լիգուրիոյ մայրաքաղաքը, Միջերկրական ծովուն վրայ, որ առեւտրական անուանի հասարակապետութիւն էր, (բն. 210,000). փառաւոր պալատներ ունի.



Ս. Պետրոս ի Հռոմ

հոյակապ է գերեզմանատունն. մեծ վաճառականութիւն կ՚ընէ։ — Սրեցիա (բն. 25,000) տէրութեան նաւարան է։

Միլան կամ Միլանոյ, Լոմպարտիոյ մայրաքաղաքը, (բն. 300,000). Իտալիոյ ամենէն գործունեայ քաղաքն է. հիանալի է և փառահեղ գոթացի մայր եկեղեցին

մանաւանդ արտաքին տեսքը. մետաքսեղինաց շատ գործարաններ ունի։ — Պէրկամօ (բն. 38,000) բրդեղինաց գործարաններ ունի։ — Բռէշիա (բն. 29,000) հին հա-

Ձենովա

մալսարան ունի։ — Պրէշիա (բն. 60,000) անուանի են հրացինուց գործարաններն։ — Մանդովա (բն. 30,000) շատ գօրաւոր քաղաք է։

Վենետիկ կամ Վենեցիա, Վենետկոյ գաւառին մայ-



Մայր եկեղեցին Միլանոյ

բաքաղաքը, որ առեւտրով մեծ և հռչակաւոր հասարակապետութիւն էր, (բն. 150,000). Ադրիական ծովին ծայրը 72 կղզեակներու վրայ շինուած մեծագործ քաղաք է, որուն շատ փողոցաց մէջ կօնտոլա ըսուած նաւակօք կը պտըտին։ Աչխարհիս նշանաւոր շէնքերէն են Սուրբ

Մարկոսի մայր եկեղեցին, զանգակատունը, դքսերուն և կամ Տոժից պալատը, նոր արքունական պալատը, և Ռիալտօ միակամար կամուրջը: Հոս բացուեցաւ Ռաֆայէլեան ազգային վարժարանը՝ յամին 1836: — Վենետ-



Վենետիկ

կոյ քով եղած մանր կղզիներէն մէկն է նաև Սուրբ Ղազար Հայոց, Մխիթարեանց մայրավանքը, զոր հիմնեց Մխիթար Աբբահայր յամին 1717:

Բառոռա, Վենետկոյ մօտ, (բն. 66,000). ունի շատ հին համալսարան, և աստղաբաշխական դիտարան: — Վիչենցա (բն. 40,000) զուարթ դիրքի վրայ. ասոր քով



Վենետիկ — Եկեղեցի Ս. Մարկոսի

է Պէրիքօ բլուրն, երեսէի ուխտատեղի Ս. Աստուածածնայ: — Վէրոնա (բն. 75,000) շատ ամուր բեր-

դաքաղաք է Ատիճէի վրայ։ — Ռոտիճ (բն. 38,000) Աւստրիոյ սահմանագլխոյն մօտ. կտաւեղինաց գործարաններ ունի։



Վենետիկ — Մեծ ջրանցք

Ֆիրենցէ կամ Ֆիօրենցա, Առնոյ գետին վրայ, (բն. 185,000), Թոսգանայի մայրաքաղաքը. 1865էն մինչև 1870

Իտալիոյ մայրաքաղաք եղաւ։ Հոյակապ են մայր եկեղեցին, Մէտիչիներուն հին պալատը. և երևելի է Մէ-



Ս. Ղազար

տիչիներուն պատկերաց և հնութեանց թանգարանը։

Լուքքա (բն. 70,000) համանուն հին դքսութեան գլխաւոր քաղաքն. անուանի է գաւառիս ձէթն: — Բիզա (բն. 55,000) Առնոյի վրայ. միջին դարու մէջ շատ նշանաւոր եղած է. անուանի են մայր եկեղեցին, ծուռ

Կաւհուրջ Ռիալթոյի

աշտարակն, գերեզմաննոցն, որուն հողն Երուսաղէմէ բերուած է. հին համալսարան ունի. հոս ծնած է Գալիլէոս: — Լիվոռնօ (բն. 110,000) Միջերկրականի վրայ շատ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ է: — Սիե-

Ֆիրենցէ

նա (բն. 30,000) անուանի է համալսարանն և չրջակայ-ներէն եղած մարմարիոնն:

Ջենուա (բն. 50,000) Մարքէ գաւառին գլխաւոր քաղաքն Ադրիականին վրայ, ամուր նաւահանգիստ է. ա-

ռոր մօտ է Լօրետոյ աւանն, յորում անուանի է Ս. Աստուածածնայ տան հռչակաւոր ուխտատեղին:

Ընդ մէջ Ապենեան լերանց և Ադրիականի՝ Ռոմանիա գաւառին գլխաւոր քաղաքներն են Պոլոնիա (բնակիչ 140,000) որուն նշանաւոր են համալսարանն և չէնքերն,



Բիզայի աշտարակը

մասնաւորապէս մայր եկեղեցին: — Ֆերրարա (բնակիչ 75,000) գեղեցիկ քաղաք է, առեւնօք դքսութիւն էր: — Ռավեննա (բն. 60,000) ծովեզերքին մօտ, միջին դարու մէջ նշանաւոր եղած է:

Նապոլի

Էմիլիա գաւառին մէջ Բարմա (բն. 50,000) գեղեցիկ քաղաք, որ ժամանակաւ առանձին դքսութիւն էր: — Բիաչենցա (բն. 40,000) ամուր բերդաքաղաք Բօի վրայ: —

Մոտենա (բն. 60,000) գեղեցկաչէն քաղաք, Իտալիոյ միութենէն առաջ նոյնպէս դքսութիւն էր։ — Ռեձձիօ (բն. 50,000) հայրենիք Աբիոսդոյի։

Նէապոլսական երկիրն որ Իտալիոյ հարաւային մասը կը գրաւէ՝ 16 գաւառներ կը պարունակէ. հողն չատ բարեբեր է և կլիման ախորժելի. գլխաւոր քաղաքն է Նաթօլի կամ Նէապօլիս. Միջերկրականին վրայ, (բն. 600,000), աքանչելի դիրք ունի, և գեղեցիկ շէնքեր։ Աւսր քովերն են Հերգուլանում ու Պոմպէյա հին քաղաքները, որ Քրիստոսէ 79 տարի ետքը Վեսուվ հրաբուղխ լերան լաւայովն ու մոխրովը ծածկուեր էին և



Մեսսինա

1755 տարիէն ի վեր կը փորեն ու կը բանան։ — Պրինտիզի (բն. 30,000) Ադրիականի վրայ, գեղեցիկ նաւահանգիստ ունի, Աբևելքի հետ յարաբերութեամբ օրէ օր զարգանալու վրայ է։ — Պարի (բն. 60,000) Ադրիականի վրայ չատ վաճառաշահ գեղեցիկ քաղաք է։

67. ԿՂԶԻՔ. — Միջերկրականին մէջ են Իտալիոյ կղզիները։ — Սիկիլիա (բն. 3,100,000), աքանչելի և չատ բարեբեր մեծ կղզի մի է, որուն մայրաքաղաքն է Բալէրմոյ (բն. 265,000), գեղեցիկ դիրքով. Իտալիոյ առաջին եկեղեցիներէն մէկն է Ս. Ռօզալիայի մայր եկեղեցին։ — Մեսսինա (բն. 135,000), համանուն նե-

67. Որո՞նք են Իտալիոյ կղզիները։

ղուցին վրայ, վաճառաշահ քաղաք։ Ցիչատակութեան արժանի է նաև Գադաւնիա (բն. 110,000), Եանա լերան ստորոտը, գեղեցիկ նաւահանգիստ։ — Մարսալա (բն. 45,000) անուանի է գինին։



Գադաւնիա

Սարտենիա ալ մեծ կղզի է. բայց Սիկիլիոյ պէս մըշակուած չէ. ունի կապարի և զինկի հարուստ հանքեր։ — Էլպա կղզին Դոսգանայի ափանց մօտ է. հարուստ հանքեր ունի երկաթի։ Մեծն Նաբոլէոն յամին 1814 կըղ-

Մալդա

զոյս իշխան դրուեցաւ, և ինց հոս տասն ամսոյ չափ։ — Լիպարեան փոքր կղզիները հրաբղխային են։

68. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿՂԶԻՔ. — Գլխաւորն է Մալդա. քովի փոքր կղզիներով ունի 175,000 բնակիչ։ Անգղիացւոց

68. Անգղիացւոց ձեռքն ինչ կղզիք կան։

ւոց ձեռքն է 1800 թուականէն ի վեր, որով Միջերկրականին մէջ նաւական մեծ ոյժ ստացած են. և Սիկիլիայէն հող բերելով՝ ապառաժուտ կղզին բարեբեր ըրած են: Միւս երկու փոքր կղզիներն են՝ Գոմիլոյ, և Կոցցոյ:

69. ՍԱՆ ՄԱՐԻՆՈՅԻ ՀԱՆՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ. — Մի-ջին Իտալիոյ Ումպրինոյ և Զէդէնա քաղաքներուն մէջ կ'իյնայ այս ամենափոքր անկախ հասարակապետութիւնը, որ Եւրոպիոյ ամենէն հին տէրութիւններէն մէկն է: Մէկ քաղաք մը միայն ունի, որ է Սան Մարինոյ: Ամբողջ երկրին բնակիչքն են 8,000. իսկ տարածութիւնն է 61 քառակուսի քիլոմէդր:

70. Տարածոէրիւն, բնակիչք, կրօնք, վարչոէրիւն. — Իտալիա՝ իրեն վերաբերեալ կղզիներովն հանդերձ 296,300 ռակուսի քիլոմէդր տարածութիւն ունի և 30,800,000 բնակիչ, որ գրեթէ ամբողջ կաթոլիկ են. վարչութիւնն է սահմանադրական միապետութիւն, որ ունի երկու խորհրդարան, ծերակուտին և երեսփոխանաց:

Կլիմայ, բերք. — Իտալիա Եւրոպիոյ երկիրներուն մէջ ամենէն ղուարթ և դեղեցիկ կլիմայ ունեցողն է: Ալպեան լերինք միանալով Ապենեան լերանց հետ որ երկրին մեծ բողջ երկայնութիւնը կը կտրեն, մի միայն շղթայ կը ձևացընեն: Հիւսիսային կողմն որ շատ մը լճեր և գետակներ ունի, թեպետ և նուազ ջերմութիւն ունի, սակայն ամենէն մշակեալ մասն է: Ցիչ մը վարերը կը բուսանին ձիթենի, կիտրոն, պիստակ, նռնենի, բամբակենի և շաքարեղէգն: Ընդ մէջ Հռոմայ և Նաբուլիի կը գտնուին վատառողջ դաշտերն որ կ'ըսուին Պոնտիներեան ձահիճք: Իսկ հարաւային կողմն, բսա մասին լեռներով և անտառներով ծածկուած, թեպետ շատ բարեբեր՝ բայց քիչ մշակուած է, և սակայ ենթակայ է երկրաշարժերու:

71. Պատմական տեղեկոէրիւն. — Իտալիա 1859 տարիէն առաջ՝ ինն տէրութիւնէ ձևացած էր, որոնք էին. Ա. Սարտինեայի թագաւորութիւն. Բ. Մօնագոյի իշխանու-

69. Իտալիոյ մէջ կայ անկախ տէրութիւն մը:
70. Ինչ կայ գիտնալիք Իտալիոյ վրայ:
71. Իտալիոյ վերջին տարիներուն պատմութեան վրայ տեղեկութիւն տուր:

թիւն. Գ. Լոմպարտիայի և Վենետկոյ թագաւորութիւնը (որ Աւստրիոյ հպատակ էր). Դ. Բարմայի դքսութիւնը. Ե. Մոտենայի դքսութիւնը. Զ. Թոսգանայի մեծ-դքսութիւնը. Է. եկեղեցւոյ վիճակ. Ը. Սան-Մարինոյ հասարակապետութիւն. և Թ. Կրկին Սիկիլեայց թագաւորութիւնը, որ Նաբուղիի թագաւորութեամբն և Սիկիլիա կըղզւով կը ձևանար: Բայց 1859 տարւոյն պատերազմէն ետքը՝ նախ Լոմպարտիա անցաւ Բիէմոնդի կամ Սարտենեայի թագաւորութեան. ետքը կամաց կամաց դքսութիւնք միացան ընդ վերոյիշեալին. և յաջորդաբար միւս մասերն ալ, մինչև յամին 1870 սեպտեմբերի 20ին Հռոմ ալ մտան պատերազմով վիկտոր Էմմանուէլի զօրքը. և բոլորը մէկտեղ Իտալական թագաւորութիւնը ձևացուցին:

Հետաքրքիր կարգադրութիւն. — Իտալիա յամին 1870 Ապրիլ մէջ կարմիր ծովու ափանց վրայ Պապ էլ Մանդէպի նեղուցին մօտ՝ առաջին անգամ Աւսապի ծոցը գնեց երբև մը թերանոց վաճառուց. յետոյ յաջորդաբար առաւ Պայրուղ, Մասաուա և ուրիշ երկիրներ, և ամբողջ կալուածները Էրիտրէա անուանեց: Բայց երբեմն թշնամի ցեղերէ նեղութիւն կրելով՝ զանազան արշաւանօք դէպ ի ենթովպիոյ ներսերը գիմեց, և ընդարձակեց աշխարհակալութիւնն մինչև ի Դիկրէ և ի Սուսան. սակայն Եթովպացիներէն յաղթուելով յԱտուա՝ ստիպուեցաւ գրեթէ ամբողջ Դիկրէն թողուլ: — Սոմալի մէջ ալ տիրած են Պենաադրի ծովեզերաց, կոչելով զայն Իտալական Սոմալիա:

ԵՒՐՈՊԱԿԱՆ

ԹՈՒՐՔԻԱ ԿԱՄ ՏԱՃԿԱՍՏԱՆ

72. ՍԱՀՄԱՆՔ. — Օսմանեան կայսրութեան մէկ մասն է միայն Եւրոպական Թուրքիա կամ Տաճկաստան, որուն սահմաններն են, հիւսիսէն՝ Ռումանիա, Սերպիա

72. Որո՞նք են Եւրոպական Տաճկաստանի սահմանքը, և գլխաւոր նահանգները:

և Ա.ստրիա. արևմուտքէն՝ Ա.ստրիա, Մոնդէնէկրոյ և Ադրիական ծով. հարաւէն՝ Յունաստան, Արշիպեղագոս և Մարմարայի ծով. իսկ արևելքէն՝ Սեւ ծով:

Ըստ աշխարհագրաց գլխաւոր նահանգներն են Ռումէլի, Պուլղարիա, Ալպանիա, և Թեսալիոյ մաս մը: Ռումէլին կը բովանդակէ հին Թրակիա և Մակեդոնիա: Իսկ Պոսնիա, զոր առ ժամս Ա.ստրիա կը կառավարէ, կը ձևանայ ի բնիկ Պոսնիայէ, ի Ռաչիայէ, ի տաճկական Խառազատանէ, և ի Հերսեքէ կամ Հերցեկովինայէ: Սակայն Օսմանեան Տէրութիւնն Եւրոպայի մէջ ունեցած անմիջական գաւառներն քաղաքականօրէն 7

Կոստանդնուպոլիս

ընդհանուր կուսակալութեանց կամ վիլայէթներու կը բաժնէ. այսինքն է, Կոստանդնուպոլիս, Էտիրնէ, Բրիզրեռնտ, Եանիա, Սելանիկ, Ճէզայիրի Պահրի Սեֆիտ (այսինքն Արշիպեղագոսի և Միջերկրականի կղզիներն* բաց ի Կիպրոսէն) և Կիրիտ:

73. Մայրաքաղաքն է Կոստանդնուպոլիս կամ Ստամպօլ (բն. 1,000,000)**, Թրակեան Վոսփորին վրայ, ընդ մէջ Մարմարայի և Սեւ ծովու. աշխարհիս առաջին քաղաքը կը համարուի դրից գեղեցկութեան կողմանէ: Շէն-

73. Ո՞ր է Տաճկաստանի մայրաքաղաքը. և որո՞նք են ուրիշ նշանաւոր քաղաքները:

* Ասոնց մեծ մասն Ասիոյ վերաբերելուն՝ հոն պէտի խօսուի:

** Բնակչաց կէսն Թուրք է, 150,000 Յոյն, 100,000 Հայ. միացեալքն Հրեայ և ուրիշ եւրոպական ազգեր:

քերուն մէջ առաջին տեղին ունի Ա.յա Սոֆիայի հոյակապ մզկիթը, որ Յուստինիանոս կայսեր ատեն շինուած է և երկնային իմաստութեան նուիրուած էր: Նշանաւոր են նաև Սուլդան Ահմէտի մզկիթն և Էթ-մէյտանի յիշատակարանք, և թագաւորական հին պալատը: Շուկայն անուանի է ընդարձակութեամբն և արևելեան դը-



Կոստանդնուպոլիս — կամարջը

բոյնովը. 1894ին երկրաշարժէն մեծապէս վնասուեցաւ: Արուարձանաց մէջ առաջին տեղին ունին Բերա և Գալաթա՝ որ կեդրոնն է քաղաքիս վաճառականութեան:

Ռումէլիի նշանաւոր քաղաքներն են Սելանիկ կամ Թեսաղոնիկէ, նաւահանգիստ համանուն ծոցին վրայ, (բն. 150,000). մեծ վաճառականութիւն կ'ընէ:—Ադրիանոպոլ (բն.

20,000) Մարմարայի վրայ բանուկ նաւահանգիստ: — Կելիպօլոյ (բն. 20,000) Տարտանելի նեղուցին բերանը, խաղողի և ձիթոյ վաճառականութիւն ունի: — Քավալա (բն. 10,000) նաւահանգիստ մօտ Սելանիկի, լաւ ծխախոտ կ'արտադրէ: — Օրֆանի ծոցին մօտ Սէրէզ (բն. 30,000) ծխախոտի և բամպակի վաճառականութիւն ունի: — Յամաքային քաղաքներն են Ադրիանուպոլիս կամ Էտիրնէ (բն. 75,000) Մարիցա գետին ափանց վրայ, գեղեցիկ դիրք ունի: — Իշաքիւյ (բն. 20,000) Վարտար գետին վրայ, Եւրոպայի հետ երկաթուղեաց միացմամբ յառաջադիմելու վրայ է: — Պիրոլիա կամ Մոնաստիր (բն. 40,000) լեռնային դրից վրայ. տարեկան մեծ ծոնավաճառներ ունի:

Ալպանիոյ մայրաքաղաքն է Եանինա կամ Եանիւնա, համանուն լճին վրայ, (բն. 40,000). աղուոր դիրք ունի: — Բրեվիզա (բն. 10,000) Արթա ծոցին բերանը բերդաքաղաք է: — Շքոտրա, համանուն լճին հարաւային ծայրը, (բն. 38,000): — Տուրացցօ և Բրինդիւնտ նաւահանգիստներ են:

74. Պուլկարիա տարածուած է ընդ մէջ Դանուբի և Սեւ ծովուն, Արեւելեան Ռումելիի հիւսիսակողմը: Հարկատու իշխանութիւն է. և իշխանը գերմանական ցեղէ է, յայնորդութիւնը՝ ժառանգական: Երկրին տարածութիւնն է 100,000* քառակուսի քիլոմէդր. բնակիչքը 3,320,000: Մայրաքաղաքն է Սոֆիա (բն. 45,000), Պալքան լերանց մօտ, Պոյանա գետին վրայ: Նշանաւոր քաղաքներն են, Վառնա, բանուկ նաւահանգիստ Սեւ ծովուն վրայ: — Ռուսճուք (բն. 30,000), Պուլկարիոյ մեծագոյն քաղաքը՝ Դանուբի վրայ: — Դռնովա (բն. 14,000) հին մայրաքաղաքը՝ Եանդրայի վրայ:

Ռումելիի արեւելեան մասը՝ որ արդէն առանձին վարչութիւն ունէր, վերջերս միացաւ Պուլկարիոյ հետ, և անոր իշխանէն կը կառավարուի: Գլխաւոր քաղաքն է Ֆիլիպէ կամ Փիլիպպոպոլիս Մարիցա գետին վրայ, (բն. 45,000): Նշանաւոր քաղաքն է Սլիվնոյ (բնակիչ

74. Ո՞րն է Եւրոպ. Թուրքիոյ Հարկատու իշխանութիւնն:

* Արեւելեան Ռումելիի հետ մէկտեղ:

20,000). որ երեւելի ծոնավաճառ ունի: — Փզաւիլըք վարդի իւղի գործարաններ ունի: — Պուրկազ, Սև ծովու վրայ նաւահանգիստ:

75. Կ'ԱՅԻՒ. — Արշիպելագոսի հիւսիսային կողմը Թուրքիա ունի քանի մը փոքր կղզիներ, որոց գլխաւորներն են՝ Դասոս, Սամոդրակի կամ Սեմենտրէք, Սդալիւեմ կամ Լեմնոս, Իմպրոս և Թենեդոս կամ Պոճձա տտաար Տարտանելի նեղուցին մօտ:

Իսկ արշիպելագոսի հարաւային և Մոռէայի արեւելեան հարաւային կողմը, ունի զԳաւնտիա կամ Կրետէ կամ Կիրիտ մեծ կղզին (բն. 150,000, որոնց մեծ մասն յոյն է և վերջերս ինքնօրինութիւն ստացան յոյն իշխանի մը կառավարութեամբ). բարերեր հող ունի, և բաւական վաճառականութիւն կ'ընէ, մանաւանդ իւղոյ, սապոնի, պտղոց, գինւոյ, մեղրամոմի և մետաքսի: Մայրաքաղաքն է Գաւնտիա (բն. 15,000), կղզւոյն հիւսիսային կողմը: Նշանաւոր է նաև Գաւնիա կամ Չաւնիա նաւահանգիստը:

76. Տարածութիւն, բնակիչք, կրօնք, վարչութիւն. — Եւրոպական Տաճկաստանի տարածութիւնը՝ մէկտեղ առնելով նաև հարկատու գաւառներն՝ է 326,400 քառակուսի քիլոմէդր: Բնակչաց թիւն է հանդերձ վերոյիշեալ գաւառներով 9,000,000, որոնց 3 միլիոնը մահմետականք են. իսկ մնացեալ ազգերուն գլխաւորներն են Սլաւք, Յոյնք, Հայք (400,000), Հրեայք. և այլն: Տէրութեան վարչութիւնն է բացարձակ միապետութիւն, որոյ գլուխը կ'ըսուի Խան կամ Սուլդան, որ հաւասարազօր է կայսր բառին:

Սլիվնայ, բերր. — Թուրքիոյ երկիրն ընդհանրապէս լեռնոտ ըլլալով շատ տաք չըներ. իսկ Պալքաններուն կողմն ցուրտ է: Սակայն ունի նաև գեղեցիկ հովիտներ և դաշտագետիններ, մանաւանդ հարաւային կողմերն, ուր առատութեամբ կը գտնուին նարնջենիք, նռենիք, թզենիք, ձիթենիք, այգիք, ցորեն, բրինձ, բամբակ, ծխախոտ, կաներ, և այլն: Ձեռագործոց մէջ անուանի են մետաքսեայ բանուածքը, գիպաղն ու շալը. ընթր է նաև ոչխարը: Հանքայ մէջ գլխաւորներն են կապար, երկաթ, մարմա-

75. Որո՞նք են Տաճկաստանի կղզիք:

76. Ինչ կայ գիտնալիք Եւրոպական Թուրքիոյ վրայ:

ըլիոն, որոնց արտաբերութիւնն երթալով յառաջադիմութեան մէջ է, ինչպէս նաև ուրիշ ձեռագործք և ճարտարութիւնք:

Հետաքրքրական կալուածք. — Եւրոպայէն դուրս անմիջական կալուածներն են Աֆրիկան Տաճկաստանի գաւառները. իսկ հարկատու կամ իրեն գլխաւորութիւնը ճանչցող երկիրներն են Ասիոյ մէջ Արաբիոյ արեւմտեան և հիւսիսային կողմն եղող քանի մը մանր աշխարհներ. իսկ Ափրիկէի մէջ Եգիպտոս և անկէ կախումն ունեցող երկիրները, Դուռնուզ, և Տարապուլուս կամ Տրիպոլի:

ՌՈՒՄԱՆԻԱ

77. ՍԱՀՄԱՆՔ. — Ռումանիոյ թագաւորութեան (որ առեղծ Մոլտո-Վալաքիոյ իշխանութիւն էր) սահմանքն են, հիւսիսէն՝ Ռուսիա և Աւստրիա, արեւմուտքէն՝ Աւստրիա և Սերպիա, հարաւէն՝ Պուլկարիա, և արեւելքէն՝ Ռուսիա և Սև ծով:

Մայրաքաղաքն է Պուքրէշ կամ Պուքարէսդ (բնակիչ 250,000), հարաւակողմը, Տիմպովիցա գետին վրայ. գեղեցիկ գիրք ունի:

Իսկ նշանաւոր քաղաքն են Եաշ, հիւսիսային կողմը, Մոլտաւիոյ մայրաքաղաքը (բն. 90,000): — Պոթոշան (բն. 40,000) և Ֆոքշան (բն. 25,000) ցամաքային քաղաքներն են, որոնց մէջ շատ Հայազգիք կան: — Կաղաց (բն. 80,000), և Պրայիլա (բն. 30,000), բանուկ նաւահանգիստներ են Դանուբի վրայ, մանաւանդ առջինը:

Տօպրուճայի գաւառն 1878 տարւոյն ստացաւ, ետ դարձընելով Ռուսիոյ՝ մոլտաւական Պեսարապիան: Այս ճախճախուտ և ցեխոտ երկիրը կ'իյնայ ընդ մէջ Սեւ ծովուն և Դանուբի վերջին ձեղման: Նոյնպէս յետնոյս ձեռացուցած տէդրան՝ այսինքն երեքանկիւնի երկիրը,

77. Ըսէ Ռումանիոյ սահմանները:

Ռումանիոյ մասն է: Դանուբի բերնին վրայ շինուած է Սուլինա քաղաքը, բանուկ նաւահանգիստ: — Հրշովա և Դոշչա, նոյնպէս Դանուբի վրայ: Սեւ ծովուն վրայ



Պուքրէշ

ալ նշանաւոր է Քիւստէնճէ կամ Քոսդանցա նաւահանգիստը:

78. Զանազան գիտելիք. — Ռումանիոյ տարածութիւնն է 133,000 քառակուսի քիլոմէտր. բնակչաց թիւը 5,400,000: Տէրութեան կրօնքն յունադաւան է. օտար ազգաց մէջ գլխաւորներն են Հրեայք (400,000) և Հայք (8,000): Վարչութիւնն է սահմանադրական միապետութիւն: Օգը՝ երկրին մեծագոյն մասին մէջ ցրտին է. գլխաւոր բերքն են արջառեղէնք, և մանաւանդ արմաւիք և ի մանաւորի ցորեն, որուն վաճառականութիւնը շատ սակ կը մանէ ի Ռումանիա:

ՍԵՐՊԻԱ

79. ՍԱՀՄԱՆՔ. — Սերպիոյ թագաւորութեան սահմանքն են, հիւսիսէն՝ Աւստրիա, արևմուտքէն և հարաւէն՝ Եւրոպական Թուրքիա, և արևելքէն՝ Պուլկարիա և Ռումանիա:

Մայրաքաղաքն է Պէլկրատ (բն. 38,000), հիւսիսային կողմն, ի գետախառնուկս Սավայի և Դանուբի: Իսկ նշանաւոր քաղաքներն են Սէմենտրիա, և Գրակոչեվաց, ուր կը գումարի ազգային ժողովարանը (Skouptchina): Աչերսիևաց, 1876ին պատերազմաց մէջ անուանի եղած է:

Հինն Սերպիա որ առաջ Թուրքիոյ կը վերաբերէր՝ 1878ին միացաւ Թագաւորութեանս հետ. գլխաւոր քաղաքն է Նիշ, Մորավայի մէկ ճիւղին վրայ, արևելակողմն:

80. Զանազան գիտելիք. — Սերպիոյ տարածութիւնն է 49,000 քառակուսի քիլոմէտր. բնակչաց թիւը՝ 2,200,000 և կրօնքնին յունադաւան է. տէրութեան վարչութիւնը սահմանադրական միապետութիւն: Երկրին օդը բարեխառն. մեծամեծ անտառներ և արօտներ ունի. արջառոց և խոզերու վաճառականութիւն կ'ընէ:

78. Ի՞նչ կայ գիտնալիք Ռումանիոյ վրայ.
79. Սերպիոյ սահմանքն որո՞նք են. և մայրաքաղաքն ինչպէ՞ս կը կոչուի:
80. Սերպիոյ երկրին վրայ ինչ տեղեկութիւնք կան հարկաւոր:

ՄՈՆԴԷՆԷԿՐՈՑ ԿԱՄ ԳԱՐԱՏԱՂ

81. ՍԱՀՄԱՆՔ. — Մոնդէնէկրոյ կամ Գարատաղի իշխանութեան սահմանքն են, հիւսիսէն՝ արևմուտքէն և արևելքէն՝ Տաճկաստան, իսկ հարաւէն՝ Ադրիական ծով:

Մայրաքաղաքն է Զէտդիվնէ (բն. 1,500): Իսկ քաղաքաց մէջ արժան է յիշատակել Բոտկորիցա (բն. 4,000) Նիքշիք. և նոր ստացած երկիրներուն մէջ Տուլչինեոյ և Անդիվարի նաւահանգիստները՝ Ադրիականին վրայ:

82. Զանազան գիտելիք. — Մոնդէնէկրոյ՝ Ալպանիոյ և Պոսնիոյ կողմէն ստացած երկիրներովը չհանդերձ 9,400 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունի. բնակիչքը 290,000, որոնք կարիճ լեռնցիներ են. կրօնքնին յունադաւանութիւն է: Վարչութիւնը բացարձակ իշխանութիւն է: Երկիրը լեռնոտ ըլլալուն պատճառաւ՝ օդն ընդհանրապէս ցուրտ է. գլխաւոր բերքն են մեղր և ոչխար:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԵՒ ՅՈՆԻԱԿԱՆ ԿՂԶԻՔ

83. ՍԱՀՄԱՆՔ. — Յունաստանի սահմանքն են, հիւսիսէն՝ Թուրքիա, արևմուտքէն՝ Յոնիական ծով, հարաւէն՝ Միջերկրական, և արևելքէն՝ Արչիպելագոս: Տասնուվրեք գաւառի բաժնուած է Յունաստան:

Մայրաքաղաքն է Աթենք (բն. 85,000), թերակղզւոյ մը վրայ, արևելեան հարաւային կողմը. հին ժամանակի անուանի քաղաքներէն մին՝ իր քաղաքականութեան և

81. Չրուցէ Գարատաղի սահմանքը:
82. Ի՞նչ տեղեկութիւն կայ գիտնալիք Գարատաղի վրայ:
83. Ըսէ Յունաստանի սահմանքը, և գլխաւոր քաղաքները:

երևելի շինուածոց պատճառաւ. որոնց մէջ Պարթենոնի տաճարն Ակրոպոլոյ մէջտեղն՝ յունական ճարտարապետութեան գլուխ գործոցն է, որոյ որմունքն ինչուան հիմա կանգուն կեցած են:

Իսկ նշանաւոր քաղաքներն են Պիրէոն (բն. 30,000), Աթենքի նաւահանգիստն, որ օր ըստ օրէ յառաջադի-



Աթենք և Ակրոպոլիս

մելու վրայ է: — Փադրաս, արևմտեան կողմը՝ համանուն ծոցին վրայ (բն. 40,000), որ բերդաքաղաք է, և բանուկ վաճառականութիւն ունի: — Նաւարին, նաւահանգիստ արևմտեան, հարաւային կողմ:, նշանաւոր յամին 1827 եղած նաւական պատերազմին պատճառաւ: — Նաւարխիա, նաւահանգիստ արևելեան կողմն, երբեմն ա-

թոռ տէրութեան: — Կորնթոս (բն. 25,000), Մոռէան Յունաստանի հետ միացնող պարանոցին վրայ, որ քիչ տարի առաջ կտրուելով՝ Յոնիական ծովը Արխիպելագոսին հետ միացաւ: Անուանի է գաւառիս չամիչն ու ձէթն:

Տաճար Թեսեոսի Աթենս

Պեղինու դաշնադրութեամբ Յունաստան ստացաւ ի Թուրքիոյ Եպիւռոսի և Թեսալիոյ հարաւային մասերը.

Կորնթոս

որոնցմէ առաջնոյն մէջն է Արդա. իսկ երկրորդին մէջ Լարիսա, Դրնդզա, Զարդզա և Վոլո քաղաքները:

84. ԿՂԶԻՔ. — Յունաստանի կը վերաբերին.

Ա. Եբրեա կամ Նեկրոռոնդէ տե. Լյրխպոզ (բնակիչ 100,000) մեծ կղզի մ'է նեղ անցքով մը զատուած յա-մաքէն, որուն հետ կամրջով միացած է:

Ամֆիթեատրոն Կորնթոսի

Բ. Յոնիական կղզիք, Յունաստանի արեւմտեան և հա-բաւային ծովեզերաց վրայ, 1863էն առաջ հասարակա-պետութիւն մը կը կազմէին Անգլիոյ պաշտպանութեան ներքև: — Գլխաւորներն եօթն են, հիւսիսայիններէն



Հիդրա

դէպ ի հարաւայիններն երթալով. այսինքն՝ Գորֆու (բն. 100,000), Բաքսո, Սանդա-Մաւրա, Թեաքի (Իթակէ),

84. Որո՞նք են Յունաստանի գլխաւոր կղզիք:

Քեֆալոնիա (բն. 80,000), Յոնիական կղզեաց մեծա-գոյնը. Զանդա (բն. 50,000) և Զէրիկոյ (Կիթերա):

Գ. Շատ մը մանր կղզիք, որոնց գլխաւորներն են Հիդրա, Մոռէայի ափանց վրայ. և Կիւկլադայք, Արշի-պելագոսին վարի կողմերը, որոնց գլխաւորներն են Շի-րա կղզին (բն. 35,000), Արշիպելագոսի վաճառակա-նութեան կեդրոնը: — Անտրոս, հողն չատ բարեբեր: — Դիլոս, գինին անուանի: — Նաքսոս, Կիւկլադայց մե-ծագոյնը: — Բարոս, անուանի է մարմարիոնն: — Սան-դորին, ընտիր գինի ունի, սակայն հրաբղխային ըլլա-լուն ամէպ երկրաշարժի ենթակայ է:

Շիրա

85. Ընդհանուր տեղեկութիւնք Յունաստանի վրայ. — Յունաստան իր կղզիներովն և նոր ատացած երկիրներովն հանդերձ 65,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ու-նի, և 2,200,000 բնակիչ: Կրօնքն յունադաւան է. կան նաև բաւական կաթոլիկեայք: Վարչութիւնն սահմանա-դրական միապետութիւն է. թագաւորը Տանիմարքայի թա-գաւորին որդին է՝ 1865ին ընտրեալ: Երկրին բարեբերու-թիւնը, Յունաց գործունէութիւնն և յարմարութիւնն վա-ճառականութեան և նաւարկութեան, զգալի չարժում մը տուած են իր նաւահանգիստներուն: Կլիմայն տաք է, և կղզեաց բնակութիւնը չատ ախորժելի: Հողն ընդհանրա-պէս ժայռուտ և չոր է, և յառաջ կը բերէ ձիթենի, նա-րինջ, լեմոն, թուզ և խաղող:

85. Ի՞նչ տեղեկութիւն կայ Յունաստանի վրայ:

ՄՕՆԱԳՈՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

86. **Մօնագոյի իշխանութիւնը** կը գտնուի Գաղղիոյ արեւելեան հարաւային ծովեզերաց վրայ, ընդ մէջ Նիս և Մանդոն քաղաքաց: Տարածութիւնն է 21 քառակուսի քիլոմէդր. բնակիչքը 10,100. գլխաւոր քաղաքը՝ Մօնագոյ, (բն. 2,900): — Գաղղիոյ պաշտպանութեան ներքև է այս երկիրը:

ԱՆՏՈՐՐԱ

87. **Անտորրա հասարակապետութիւնը** Գաղղիոյ հարաւային կողմը կ'իյնայ Պիւրենեանց վրայ, ընդ մէջ Արիէժ գաւառին և Սպանիոյ Լէրիտա գաւառին. և Գաղղիոյ պաշտպանութեան տակ է:

Վարչութիւնը՝ չորեքամեայ իշխանութեամբ քսանեչորս անձինքներէ բաղկացեալ ժողովոյ մը ձեռքն է, որոնց վրայ նախագահ մը կայ: Դատաստանական պաշտօնք երկու դատաւորաց յանձնեալ են, յորոց զմին կ'ընտրէ Գաղղիոյ կողմէն Ալեզեւան Պիշոնեւանց գաւառապետը, իսկ զմիւսը Սպանիոյ Ուրճել քաղաքին եպիսկոպոսը:

Տարածութիւնն է 452 քառակուսի քիլոմէդր. բնակիչքը գրեթէ 8,000, որոնք մեծաւ մասամբ արջառոց վաճառականութեամբ կը զբաղին: Գլխաւոր քաղաքը Անտորրա շա Վիէյխա, (բն. 1,000):

86. Ի՞նչ կայ գիտնալիք Մօնագոյի իշխանութեան վրայ:
87. Ի՞նչ կայ գիտնալիք Անտորրայի հասարակապետութեան վրայ:

ԱՍԻԱ

88. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ.** — Ասիա հին աշխարհի ամբողջ արեւելեան մասը կը գրաւէ: Հողագնտոյս հինգ մասերուն մէջ ամենէն մեծն և ամենէն բազմամարդն է:

ՍԱՀՄԱՆՔ. — Ասիոյ սահմանքն են հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս Հիւսիսային. արեւմուտքէն՝ Քարա գետն, Ուրալ լեռներն, Ուրալ գետը, Կասպից ծովը, Կովկասու շղթայն, Սեւ ծովը, Միջերկրականն և Կարմիր ծովն. հարաւէն՝ Հնդկաց ծովը, և արեւելքէն՝ Մեծ ովկիանոս:

89. **Տարածութիւն, կլիմայ, և բերք Ասիոյ.** — Ասիա իրեն վերաբերեալ կղզիներովն հանդերձ գրեթէ 44,092,000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն ունի. սակայն մեծամեծ անապատներ ալ կը պարունակէ, որոնց մեծագոյնը կ'ըսուի Կոպի կամ Շամոյ որ Ասիոյ մէջտեղը ամենամեծ և բարձր պաշտագետին մը կը ձևացընէ, ուր ձմեռն խիստ և երկայն է, և հազիւ բուսաբերութեան հետք կը տեսնուի: Հիւսիսային կողմի երկիրներն, ընդ մէջ այս գաւառիս և Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի, ձմեռը չափազանց ցրտոյ ենթակայ են և ամառը թանձր մառախուղներ, որուն պատճառաւ չատ խեղճ է մշակութիւնը: Արեւմտեան և արեւելեան կողմի երկիրները մեղմ և առողջաբար կլիմայ ունին, որով կը հասցընեն չատ տեսակ արմըտիք, ձիթենի, բամբակ և աղնիւ պտուղներ: Իսկ անոնք որ հարաւային և արեւմտեան հարաւային կողմը կ'իյնան, երկու եղանակ միայն ունին, չարունակ անձրևներ կամ տարօրինակ չորութիւն մը տարիէն մինչև նոյեմբեր, իսկ տարւոյն մնացած մասը՝ պայծառ զովութիւն: Ասիոյ այս մասին մէջն է ամենէն հրաշալի բուսաբերութիւնը. վասն զի Արաբիոյ մէջ կը բուսնին խահուէ, արմաւենի և խընձ-

88. Ասիոյ սահմաններն որո՞նք են:
89. Ո՞րչափ է Ասիոյ տարածութիւնը:

կենի. քոքոյ, լեղակ և չաքալի եղէդ Այսրգանգեսեան և Անդրգանգեսեան Հնդկաստանի մէջ. կինամոն ի Սէյլան. իսկ Զինաստանի մէջ թէյ և ուրիշ շատ պիտանի առուներ:

Բնակիչք և կրօնք. — Ասիա մարդկային ցեղին խանձարուրքն եղած ըլլալուն պատճառաւ՝ հնագոյն կայսրութիւնք իր մէջ ծաղկած են. արուեստք, գիտութիւնք և գրերէ ամենայն կրօնք հոն ծագումն ունեցած են: Բնակչաց թիւն ստոյգ չէ. մօտ 750 միլիոն կը համարուի, ուրոնց գրեթէ կէսը կովկասեան և կէսն ալ մոնկոլեան ցեղին կը վերաբերի: Առնց մէջէն 7 միլիոնը միայն քրիստոնեայք են. 80 միլիոն Մահմետականք, կէս միլիոն Հրեայք. մնացածներն այլեւայլ կռապաշտական աղանդներ, որոնց գլխաւորներն և առաւելագոյն հետեւող ունեցողներն են Պուտտայեան և Կոնֆուկեան աղանդք:

90. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՍԻՈՅ. — Ասիա գլխաւոր 11 մասանց կը բաժնուի, որոնք են

1 հիւսիս. կողմը — Ասիական Ռուսիա.

2 արեւմտ. կողմը — Ասիական Տաճկաստան. Արաբիա:

4 մէջտեղը — Թուրան, կամ արեւմտեան Թուրքաստան. Պարսկաստան. Աֆղանիստան. Պելուչիստան:

2 հարաւ. կողմը — Հնդկաստան. Հնդկա–Զին:

2 արեւել. կողմը — Զինաստան. Ճաբոն:

91. ԿՂԶԻՔ. — Ասիոյ կղզեաց գլխաւորներն են Ճաբոնի կայսրութիւնը ձեւացընող կղզիները՝ Մեծ ովկիանոսին

90. Քանի՞ մասանց կը բաժնուի Ասիա:
91. Որո՞նք են Ասիոյ գլխաւոր կղզիք:

նոսին մէջ, Ասիոյ արեւելեան եզերաց մօտ: Այս ամենածանօթ արշիպելագոսէն զատ յիշելի են նաև հետեւեալ կղզիք.

Լիաքօֆ կամ Նոր Սիպերիա անուանեալ տխուր և անապատ արշիպելագոսը, Սառուցեալ ովկիանոսին մէջ: — Յամին 1876 գտնուեցաւ ընդ մէջ այս արշիպելագոսին և Պէհրինկի նեղուցին՝ ընդարձակ երկիր մի, որուն Վրանկիլ անունը տրուեցաւ:

Սախալիան կղզին, Ճաբոնի հիւսիսային կողմը.

Սէյլան կղզին
Անտաման և Նիկօպար կղզեաց խումբք
Լաքետիվեան կղզիք
Մալտիվեան անհամար կղզիք
} Հնդկաց ծովուն և անոր խորշերուն մէջ:

Սալսեդ կղզի

Հայ–ևան կղզին, Զինաց ծովուն մէջ.

Ֆօրմօզա կղզին
Քուրիլեան բազմաթիւ կղզիք
} Մեծ ովկիանոսին մէջ:

92. Ասիոյ ծովերք. — Բաց ի կասպից, Սեւ, Մարմարա, Արշիպելագոս և Միջերկրական ծովերէն, որոնք ինչ-

92. Ասիոյ ծովերուն վրայ տեղեկութիւն տուր:

պէս ըսինք, մասամբ մը Ասիոյ արեւմտեան սահմանը կը ձեւացընեն, Մեծ ովկիանոսն որ արեւելեան ափունքը կը թրջէ՝ վեց ծով կը ձեւացընէ հիւսիսէն դէպ ի հարաւ.

Պէհրինկի ծով, ընդ մէջ Սիպերիոյ արեւելեան ծայրին և Քամչադքա թերակղզւոյն՝ արեւմտեան կողմէն, և հիւսիսային Ամերիկայի՝ արեւելեան կողմէն.

Օխոդսքի ծովը, ընդ մէջ Սիպերիոյ՝ արեւմտեան կողմէն, և Քամչադքայի՝ արեւելեան կողմէն. ասոր հարաւային մասը կը կոչուի նաև Գարդաքայի կամ Քոռիլեական ծով.

Ճաբոնի ծով, ընդ մէջ Մանչուրիոյ (որ Չինաստանի մասն է) արեւմտեան հիւսիսային կողմէն, և Ճաբոնի կղզեաց՝ արեւելեան կողմէն.

Դեղինի ծով, Կապոյտ ծով } Չինաստանի արեւելեան կողմը.

Չինաց ծով, Չինաստանի և Հնդկա–Չինու արեւելեան հարաւային կողմը:

Նաւ Չինաց

93. ԾՈՑՔ. — Ասիոյ ծովերն իրեն գլխաւոր ծոցեր կը ձեւացընեն.

Մէկ ծոց կը ձեւանայ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսէն.

Օպիի ծոցն, համանուն գետին բերանը, Սիպերիոյ հիւսիսային ծովեզերքը:

Երեք ծոցք Մեծ ովկիանոսին մասերէն.

Անատիրի ծոցը, Պէհրինկի ծովէն ձեւացեալ, Սիպերիոյ արեւելեան կողմը.

Դոնքինի ծոցը, Սիամայ ծոցը } որոնք Չինաց ծովէն կը ձեւանան՝ Հնդկա–Չինու արեւելեան հարաւային կողմը:

93. Որո՞նք են Ասիոյ գլխաւոր ծոցերը:

Հինգ ծոցք Հնդկաց ծովէն.

Պենկալայի ծոցն, Հնդկաստանի և Հնդկա–Չինու մէջ.

Իօմհնի ծոցն, Արաբիոյ և Հնդկաստանի մէջ.

Պարսկայիի ծոցն, Արաբիոյ և Պարսկաստանի մէջ.

Առեմի ծոցն, Արաբիոյ և Ափրիկէի մէջ.

Արաբիոյ ծոցը կամ Կարմիր ծովն որ զԱրաբիա Ափրիկէէն կը բաժնէ: Այս ծոցը Սուէզի ջրանցքովը Միջերկրականին հետ միացած է հիմա:

94. ՆԵՂՈՒԹՔ. — Կոտտաւինհուոյոյոյ և Տարտաւելի նեղուցներէն զատ, զորս առաջ յիշեցինք*, վեց գլխաւոր նեղուցներ կան Ասիոյ մէջ.

Պապ–իլ–Մաւնտեպի նեղուցն, որ Ադէնի ծոցն Արաբիոյ ծոցոյն հետ կը միացընէ. ընդ մէջ Արաբիոյ և Ափրիկէի.

Հիւրմիւզի նեղուցն, որ Իօմհնի ծոցը Պարսկային ծոցոյն հետ կը միացընէ, ընդ մէջ Արաբիոյ և Պարսկաստանի.

Մալաքքայի նեղուցն, որ Հնդկաց ծովը Մեծ ովկիանոսին հետ կը միացընէ. ընդ մէջ Մալաքքա թերակղզւոյն (որ է Հնդկա–Չին) և Սումադրա կղզւոյն (Յովկիանիա).

Անցք Դարդաքայի, Ռուսաց Մանչուրիոյ և Խարբաքայի կղզւոյն մէջ:

Լաբերդոզի նեղուցն, որ կը միացընէ Ճաբոնի ծովը Դարբաքայի ծովուն հետ, ընդ մէջ Դարբաքայի կղզւոյն, և Եսսոյ կղզւոյն որ Ճաբոնի կղզեաց մին է.

Պէհրինկի նեղուցն, որ կը միացընէ Պէհրինկի ծովը Արջային Սառուցեալ ովկիանոսին հետ, ընդ մէջ Ասիոյ և հիւսիսային Ամերիկայի:

95. ԳԵՏՔ. — Գլխաւոր տասնուերկու գետեր կան Ասիոյ մէջ, որոնք զանազան ծովերու մէջ կը թափին հետեւեալ կերպով.

Երեք գետ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոս կը թափին.

Լենա, Ենիսէյ, Օպի } որոնք Սիպերիոյ մէջէն կ'անցնին:

Հինգ գետ Հնդկաց ծով կը թափին.

Շատ–էլ–Արապ, Պարսից ծոցին մէջ, որ ձեւացած է Եփրատայ և Տիգրիսի միաւորութենէն, և կ'անցնի Ասիական Տաճկաստանէն.

Սինտ կամ Ինդոս, Իօմհնի ծոցին մէջ որ կ'անցնի Աֆ-

94. Որո՞նք են Ասիոյ գլխաւոր նեղուցները:

95. Որո՞նք են Ասիոյ գլխաւոր գետերը:

* Տես թ. 20:

զանխատանէն և Հնդկաստանի արևմտեան հիւսիսային կողմէն.

Գանգես } որոնք Հնդկաստանի արևելեան հիւ-
Պրահմապուտրա } սիսային կողմէն կ'անցնին.

Իրաշատոխ, որ Դիպէզէն և Հնդկա–Զինէն կ'անցնի: Այս երեքն ալ Պենկալայի ծոցին մէջ կը թափին.

Մէկ գետ Զինաց ծովը կը թափի.

Մէ–քոնկ կամ Գարկոճ, որ Դիպէզէն կու գայ և Հընդկա–Զինէն կ'անցնի, արևմտեան հիւսիսէն դէպ ի արևելեան հարաւ:

Երեք գետ Մեծ ովկիանոս կը թափին.

Կապոյտ կամ Եաև–լոռ–քեաև, Կապոյտ ծովին մէջ, որ Զինաստանէն կ'անցնի.

Դեղին գետ կամ Հոանկ–հօ, Դեղին ծովին մէջ, որ նոյնպէս Զինաստանէն կ'անցնի.

Ամուռ կամ Սահալիան–ոչյա, Օխոտսքի ծովին մէջ, որ Մոնկոլիայէն և չինական ու ռուսական Մանչուրիայէն կ'անցնի:

96. Լիճ. — Շատ լճեր կան Ասիոյ մէջ. բայց ի Կասպից ծովէն զոր յիշած ենք իբրև աշխարհիս ամենէն մեծ լիճն, երկու հետեւեալքն մեծագոյններն են.

Արալ լիճը, որ երբեմն Արալ ծով ալ կ'ըսուի իր մեծութեան պատճառաւ, Թուրքաստանի մէջ.

Պայքալ, Սիպերիոյ հարաւային կողմը.

Լոպ, Քոչքոշ–նոռ և Պալքալ լճերը, կեդրոնական մեծ լեռնահարթին վրայ.

Վանայ լիճը, Ասիական Թուրքիոյ մէջ.

Որմիա լիճը, Պարսկաստանի մէջ.

Աքթալդիտեաև լիճ կամ Մեռեալ ծով, Ասիական Թուրքիոյ արևելեան հարաւային կողմը, անուանի է Հրէից պատմութեան մէջ:

97. Թերակղզի. — Ասիոյ մէջ եօթն թերակղզիք կան, որոնցմէ չորսը մեծ են և երեքն պզտիկ:

Զորս մեծերն են.

Անատոլու, ընդ մէջ Սեւ ծովուն, Կոստանդնուպոլսոյ նեղուցին, Մարմարա ծովուն, Տարտանէլի նեղուցին, Արշիպելագոսին և Միջերկրականին.

Արաբիա, ընդ մէջ Կարմիր ծովուն և Պարսից ծոցին.

Հնդկաստան, ընդ մէջ Իւմէնի և Պենկալայի ծոցերուն.

Հնդկա–Զին, ընդ մէջ Պենկալայի ծոցին և Զինաց ծովուն:

96. Որո՞նք են Ասիոյ գլխաւոր լճերը:

97. Որո՞նք են Ասիոյ գլխաւոր թերակղզիք:

Երեք պզտիկներն են.

Մալաքքայի թերակղզին, ընդ մէջ Մալաքքայի նեղուցին, Զինաց ծովուն և Սիամի ծոցին.

Գորէա, ընդ մէջ Դեղին և Ճաբոնի ծովերուն.

Քաուչդրա, ընդ մէջ Պէհրինկի և Օխոտսքի ծովերուն:

98. Հրուանդան. — Ասիոյ գլխաւոր հրուանդաններն սա՛ք են, այսինքն.

Գլուխ Արևելեան, կամ Վոստոչնի Սիպերիոյ արևելեան հիւսիսային կողմը.

Գլուխ Հիւսիսային, կամ Սեվերնայա, Սիպերիոյ հիւսիսային կողմը.

Պայ–խոյ–Մաանոխ, Ռազխկոյ, Ֆարտուչ, Արաբիոյ հարաւային կողմը.

Գոնորին, Հնդկաստանի հարաւային կողմը.

Ռոմանիա, Մալաքքայի հարաւային կողմը.

Պայա Պոռոնոռ, Ասիական Տաճկաստանի արևմտեան կողմը:

99. Լերինք. — Բայ ի Ոչրալ լեռներէն, զորս առաջ յիշեցինք, տասնումէկ գլխաւոր լերանց չղթայք կան.

Կովկաս, որոց բարձրագոյն կատարն է Էլպրուզ. Սեւ և Կասպից ծովերուն մէջտեղ.

Այրարատ (բրձր. 5,250մ.) Ռուսահայոց և Կորդուաց լերինք, Տաճկահայոց մէջ.

Տաւրոս և Անտիտաւրոս, Լիբանան և Անտի Լիբանան ոռ Ասիական Տաճկաստանի մէջ.

Ադիտիրմ, Ադդայի, Սդաանովոյ } հիւսիսային կողմը, Սիպերիոյ և Զինուաստերուեթեան մէջ.

Պոլոր և Բաւիր, Հիմաոռա–Քոռչ, Քռուան–Լոռն } Ասիոյ մէջտեղը, Թուրքաստանի և Զինաց մէջ.

Հիմալայա, Հնդկաստանի և Զինաց մէջտեղը.

Կադ, Հնդկաստանի արևմտեան ափանց երկայնութեամբը:

Ասիա իւր այս չղթայներովն աշխարհիս ամենէն բարձր լեռները կը պարունակէ, որոնք Հիմալայա այսինքն Տեղի ձեաև կոչուածներուն մէջ կը գտնուին. ասոնց բարձրագոյն կատարն որ կ'ըսուի Քաոչիհինկիհինկա 8,900 մեդրը կ'անցնի ծովուն երեսէն. մինչդեռ Անտեանց չղթային ամենաբարձր լեռներն Ամերիկայի մէջ՝ հազիւ 7,700 մեդրի կը հասնին.

98. Որո՞նք են Ասիոյ գլխաւոր հրուանդանք:

99. Քանի՞ են Ասիոյ լերանց չղթայք:

իսկ Սպիտակ լեռն, Եւրոպայի ամենէն բարձրն 4,800 մէտր է: Ասիոյ այս բարձր լերանց այլեայլ չղթայքը կը ձևացընեն այն կեդրոնական ընդարձակ լեռնահարթը, որ Ասիոյ կեդրոնը բռնած է:

ԱՍԻԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ

100. ՍԱՀՄԱՆՔ. — *Ասիական Ռուսիոյ սահմաններն են, հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոս և Եւրոպական Ռուսիա, արևմուտքէն՝ Ուրալ լեռներն և Սեւ ծով, հարաւէն՝ Ասիական Թուրքիա, Պարսկաստան, Ինքնագլուխ Թուրքաստան և Չինաստան, և արևելքէն՝ Ճապոնի, Օխոդսքի և Պէհրինկի ծովերն և Պէհրինկի նեղուցը:*

ԲԱԺԱՆՈՒՄՆ. — *Ասիական Ռուսիան երեք մաս կը բաժնուի. այսինքն Սիպերիա, որ Ասիոյ հիւսիսային կողմը բռնած է. Կովկաս և Ռուսիոյ Հայք՝ արևմտեան կողմը, և Ռուսական Թուրքաստան՝ հարաւային կողմը: Մանչուրիոյ հիւսիս. արևելեան կողմէն վերջերս Ռուսք մաս մը երկիր գրաւելով Սիպերիոյ հետ միացուցին. սոսր գլխաւոր քաղաքն են Նիքոլայեվսք և Վլատիվոստոք, ուր կ'աքսորուին ընդհանրապէս քաղաքական յանցաւորք: Այս ծովեզերաց մօտ ունին Սախալեան մեծ կղզին, զոր Ճապոնէն առին:*

101. *Սիպերիոյ նշանաւոր քաղաքներն են՝ Դոպոլսք, արևմտակողմը, Իրդիշ գետին վրայ (բն. 30,000): — Օմսք (բն. 35,000) հարաւակողմն, որուն մօտ կը բնակի Խրխըզ կոչուած Թափառական ցեղն: — Դոմսք (բն. 37,000) գաւառիս մէջ ոսկւոյ և արծաթի հարուստ հանքեր կան: — Եաքուդսք, Լէնա գետին վրայ: — Եվիւեյսք, Սիպերիոյ մէջ տեղ: — Իրքուդսք, հարաւակող-*

100. Որո՞նք են Ասիական Ռուսիոյ սահմանք:

101. Որո՞նք են Ասիական Ռուսիոյ նշանաւոր քաղաքները:



Այրարատ լեռ և Պայազիտ քաղաք



Պարխարք Անիոյ

մը, Պայքալ լճին մօտ, (բն. 45,000)։ — Օխօդուք, ա-բևելեան կողմը, նաւահանգիստ և նաւարան համանուն ծովուն վրայ։

Թիֆլիզ, արևմտեան հարաւային կողմը, Կուր գետին վրայ (բն. 150,000), մայրաքաղաք Կովկասու, որ օրէ օր կը բարգաւաճի։ Երկրորդական քաղաքներն են Պաքու, նաւահանգիստ Կասպից ծովուն վրայ, անուանի նաւթի աղբիւրներովը. Պաթում, բանուկ նաւահանգիստ Սեւ ծովուն վրայ. Բոդի, Ռիոն գետին բերանը և Խուրթայիս Ռիոնի վրայ. Կորի, և այլն։

Ռուսաց Հայոց՝ որ կը պարունակէ Սիւնիք, Արցախ, Ուտի և Փայտակարան նահանգները, և Այրարատ ու Գուգարք և Տայոց նահանգներուն մէկ մասը, գլխաւոր քաղաքներն են. Երեւան, համանուն նահանգին գլխաւոր տեղին և բերդաքաղաք, Զէնկի գետին վրայ, (բն. 20,000). վաճառաշահ քաղաք է։ Երեւանայ արևմտակողմն է Էջմիածին, որուն Շողակաթ եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Տրդատ թագաւորն հիմնարկեցին, այն տեղը՝ ուր Ս. Լուսաւորիչ տեսլեան մէջ տեսաւ զԲրիստոս երկնքէն իջած. իսկ Ս. Հռիփսիմեայ և Ս. Գայիանեայ եկեղեցիք իրենց նահատակութեան տեղը չինուած են։ Երեւանէն 65 քիլոմէդր հեռու է Մասեաց գագաթը կամ Այրարատ լեռը, բարձր 5,250 մէդր։ — Կարս կամ Ղարս, ամուր բերդաքաղաք, համանուն գետին վրայ, (բն. 20,000). 1878ին անցաւ Ռուսաց. որոնք ձեռք ձգեցին նաև զԱրտահան բերդաքաղաք, և զՕլթի։ Կարսի նահանգին մէջ կ'ինկնան հին Անի քաղաքին աւերակները։ — Գանձակ կամ Եղիսաւեթերուպոլիս, Գանձակ նահանգին մէջ Կուր գետին մօտ, (բն. 20,000)։ — Կիւմրի կամ Մանաւանդ Աղեքսանդրապօլիս՝ Ռուսաց կայսրուհւոյ մը անուամբը, Ախուրեանի արևելեան եզերաց վրայ, (բն. 25,000). օր աւուր կը յառաջադիմէ քաղաքս վաճառականութեան մէջ։ — Նախիջեւան, Երասխայ ձախ եզերաց վրայ (բն. 15,000), պարսպապատ քաղաք, որ Նոյ նահապետի առաջին բնակութեան տեղը կը կարծուի։

Ռուսիոյ կը վերաբերի Թուրքաստանի մեծ մասն, որոյ վրայ տ. ի թիւն 109

ԿՂՋԻՒ. — Նոր-Սիպերիոյ կղզիք և Սախալեան կամ

Դարրաքայի մեծ կղզին, որ 940 քիլոմէդր երկայնութիւն ունի և ցամաքէն նեղ ջրանցքով մը զատուած է, որ կ'ըսուի ընդհանրապէս Անցք Թաթարաց կամ Դարդանելլայի:



Սուրբ Հռիփսիմէ

102. *Ջանազան գիտելիք.* — Ասիոյ Ռուսաստան աւելի քան 16,800,000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն ունի, այսինքն Եւրոպայէն չատ աւելի մեծ է. սակայն բնակիչքն հազիւ 15 միլիոնի կը հասնին, որոնց մէկ մասն Ռուս են և Հայ և ուրիշ յունադաւան ազգեր. իսկ միւացածը բարբարոս և կռապաշտ ցեղերու կը վերաբերին: Ա.Մ.

102. Ինչ կայ գիտնալիք Ասիական Ռուսիոյ վրայ:



Աղեքսանդրապոլիս

Կարս

քաղք հիւսիսային կողմը մշտասառոյց ճահիճներով և ընդարձակ անապատներով ծածկուած է: Վաճառականութեան գլխաւոր նիւթ են ընտիր մուշտակներ և քարխուլ: Կովկասու հարաւային կողման, Թուրքաստանի և Հայ գաւառաց մէջ չատ բարեբեր հովիտներ կը գտնուին. իսկ Կասպից ծովուն և Արալ լճին եզերքը մեծամեծ և աղային ապալեր դաշտեր (ադեր) բռնած են:

ԱՍԻԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ

103. ՍԱՀՄԱՆՔ. — Ասիական Տաճկաստանի սահմանքն են, հիւսիսէն՝ Ռուսաստան և Սեւ ծով, արևմուտքէն՝ Կոստանդնուպօլսոյ նեղուցը, Մարմարա ծովը, Տարտանէլի նեղուցն, Արշիպելագոսն և Միջերկրական ծովը, հարաւէն՝ Արաբիա, և արևելքէն՝ Պարսկաստան:

104. Նշանաւոր քաղաքներն են՝ Բիւթանիոյ գաւառին մէջ, Մարմարայի եզերաց վրայ Սկիւտար (բնակ. 50,000), Քաղկեդոն (բն. 30,000) Կ. Պոլսոյ դիմաց, և Նիկոմիդիա կամ Իզմիտ (բն. 25,000), հին քաղաքներ են, և վերջինս աթոռ հռոմէական կայսերաց: — Պրուսա, Կոստանդնուպօլսոյ մօտ, Ողիմպոս լերան ստորոտը (բն. 60,000). չատ ջերմուկներ ունի. ատենօք Օսմանեան թագաւորաց աթոռն էր: Փոքր Ասիոյ մէջ՝ Զմիւռնիա կամ Իզմիր (բն. 200,000), Ասիական Թուրքիոյ ամենէն վաճառաշահ ծովային քաղաքը: — Գառրահիսար (բն. 60,000). անուանի է ափիոնը: — Տրապիզոն (բն. 60,000), Սեւ ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ. ատենօք Յունաց կայսերաց մէկ ճիւղը հոս կը թագաւորէր ինչուան Կոստանդնուպօլսոյ առումն, ասոր մօտ են Կիրասուռն ուսկից ելած է կեռասենին, և

103. Ըսէ Ասիական Տաճկաստանի սահմանքն և բաժանումը:

104. Որո՞նք են Ասիական Տաճկաստանի գլխաւոր քաղաքները:

Զմիւռնիա



Տրապիզոն

Կիւմիւշխանէ որուն անուանի են արծաթի պղնձոյ և կապարի հանքերն: — Սինոպ և Սամսուն, Սև ծովու վրայ բանուկ նաւահանգիստներ են: — Անկիւրիա, որ է Գաղատիա, կամ Էնկիւրիւ, (բն. 50,000). շատ հին քաղաք է. անուանի են ցխին (շալի), և այծերուն մազը, որ երկայն ու մետաքսի պէս բարակ է: — Կոտիաևա կամ Քեօթահիա (բն. 60,000): — Իկոնիոն կամ Գոնիա (բն. 30,000). ատենօք Սէլճուգեանց մայրաքաղաքն էր: — Եւդոկիա կամ Թօքադ, (բն. 25,000), Ասիոյ վաճառաշահ քաղաքաց մին է. անուանի են պղընձէ գործուածքը: — Սեբաստիա կամ Սըվազ (բն. 50,000), ուր ծնաւ Մխիթար Աբբայ: — Ամասիա (բն. 30,000), որ մետաքսի վաճառականութիւն կ'ընէ: — Նշանաւոր են դարձեալ Խարբերդ, Արաբկիր, Մալաթիա և Մարաշ:

Գարամանիոյ կամ Կիլիկիոյ մէջ կան Սիս, Ադանա, Տարսոն և Զէյթուն հին քաղաքները Միջերկրականին վրայ, որ ատենօք նշանաւոր էին:

Հայաբնակ գաւառաց գլխաւոր քաղաքն է Էրզիւռում, որ հին ատենը կ'ըսուէր Կարնոյ քաղաք և Թէոդոսուպօլիս, (բն. 100,000). շատ բարձր է դիրքը. չէնքերուն մէջ անուանի են բաղնիքները, վաճառանոցքը, մզկիթները, մանաւանդ Ուլու ճամիին քով չինուած Զիֆթէ մինարէն: Վաճառաշահ է կարին. Թուրքիոյ սրեղէն ընտիր զէնքերն հոս կը շինուին: — Թոքթում, բարերար ձորի մը մէջ, զուարճալի դիրք ունի: — Բաբերդ կամ Պայպուրդ, ճոխ գետին վրայ, բերդաքաղաք: — Երզինկա, սահմանակ Էրզիւնճանի, Գայլ գետին քով. շատ երկրաշարժ կ'ըլլայ այս կողմերը: Քաղքիս մօտ է Սեպուհ լեռը, որոյ վրայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանեայ այրին մէջ երկայն ատեն ճգնեցաւ: — Վան, հին Շամիրամակերտը, համանուն ծովակին կամ լճին վրայ, (բն. 30,000). ունի հին բերդ: Լճին հարաւային կողմը կայ Նարեկ գեղն, ուր և Նարեկայ հռչակաւոր վանքը, որոյ մէջ են Ս. Գրիգորի Նարեկացւոյ և Ս. Անդխտոյ գերեզմանները: Վանայ ծովուն մէջ կան Աղթամար, Աղտեր, Կտուց և Լիմ կղզիք: — Բաղէշ կամ Պիթլիս, բերդաքաղաք. բնակչաց մեծ մասը Քիւրտ են: Քաղքիս մօտ են Գրգուռ լեռները: — Մուշ, բերրի դաշտի մէջ: Քաղքիս մօտ է Ս. Կարապետի հռչակաւոր վանքը, որ մեծ ուխտատեղի է Հայոց:

Միջագետաց գլխաւոր քաղաքն են. Եդեսիա կամ



Ուրհա, (բն. 30,000): — Տիգրանակերտ կամ Տիարպեքիր, (բն. 50,000). բերդաքաղաք, որուն պարիսպներուն

Էրզիւռում կամ Կարին

վրայ երկու կաւաք քովէ քով կրնան քալել։ — Մոտտուլ



Աղբարեար

(բն. 70,000), Տիգրիս գետին վրայ վաճառաշահ քաղաք է. անուանի են բամբակէ լաթերը։



Բաբելիդ



Ալեպիոյ հայկական թաղ

Իրագ Ա.բապիւ մէջ գլխաւոր քաղաք է Պաղտատ, Տիգրիս գետին վրայ. խալիֆայից իշխանութեան ժամանակ անուանի քաղաք էր, (բն. 100,000). ամուր ու վաճառաշահ է: Ա.սոր քովերն են հին ատենի հռչակաւոր քաղաքաց աւերակները, որ են Բաբելոն, Սելեւկիա, Տիզբոն և հին Պաղտատ: — Պասրա (բնակիչ



Տաճար արեւոյ Վերեգելանի

60,000), վաճառաշահ նաւահանգիստ, Շատ էլ Ա.բապիւ վրայ:

Ա.սորւոց նշանաւոր քաղաքներն են Բերիա կամ Հալէպ, (բն. 90,000), հարուստ և վաճառաշահ քաղաք: — Դաւասկոս կամ Շամ (բն. 140,000), աշխարհիս



Լիբանանու ձուտի բերդը

հին քաղաքներէն մէկն է. շատ բարեբեր, և վաճառաշահ: — Անտիոք կամ Անդաքիա (բն. 10,000). ատենօք Սելեւկիացւոց մայրաքաղաքն էր: — Այնթապ (բն. 25,000), կաշւոյ գործարաններ ունի: — Տրապօլիս կամ Դարաբղուս, (բն. 16,000), նաւահանգիստ Միջերկրականին վրայ: — Երուսաղէմ, (բն. 30,000), Քրիստոսի և Ս. Աստուածածնայ ուխտատեղեաց համար աշխարհիս ամենէն անուանի քաղաքը: — Պէյրութ, (բն. 65,000) բանուկ նաւահանգիստ Միջերկրականին վրայ, որուն մօտ է Լիբանան քաղաքն ու լեռը:

105. ԿՂԶԻՔ. — Գլխաւոր կղզիքն են Մարմարա, համանուն ծովուն մէջ, որուն անուանի է մարմարիոնը: — Հռոդոս, որ հին ատենը հռչակաւոր էր: — Կիպրոս (Գպրըզ) մեծ կղզին (բն. 190,000), որ առժամանակեայ Անգլիացւոց ձեռքն է. գինին անուանի է. գլխաւոր քաղաքն է Նիկոսիա, (բն. 16,000): Այս երկուքը Միջերկրականին մէջ են: — Լեսբոս կամ Միտիլլի (բն, 50,000): — Սամոս կամ Սոռսամ Ադասը, (բն. 40,000). յոյն իշխանութիւն մ'է Թուրքիոյ հպատակ: — Քիոս կամ Սագըզ, (բն. 70,000), որ 1881ին մեծաւ մասամբ կործանեցաւ երկրաշարժէ. շատ բարեբեր է հողը. վաճառականութիւն կ'ընէ գինւոյ և պըտղոց, մանաւանդ նարնջի և թզոյ:

106. Ջանազան գիտելիք. — Ասիական Տաճկաստանի տարածութիւնն է գրեթէ 1,320,000 քառակուսի քիլոմէտր. իսկ բնակիչքը մօտ 22 միլիոն, որոնց մեծ մասը մահմետական են, մնացածը քրիստոնեայ: Այս գեղեցիկ աշխարհին մէջ այլևայլ զօրաւոր տէրութիւններ եղած են հին ժամանակ. զոր օրինակ Նինուէ, Բաբելոն, Տրոյա, Երուսաղէմ, Պաղատա, և ուրիշ անուանի քաղաքներ. իրենց զօրութեամբն, հարստութեամբն և ժողովրդովն հռչակաւոր էին: Հողին աննման բարեբերութիւնը, մեղմ և զանազան կլիմայն՝ որով տեսակ տեսակ և ամենընտիր բուսաբերութիւնք կը յաջողին, սկսած են զարգացումն տալ երկրին:

105. Որո՞նք են Ասիական Տաճկաստանի կղզիք:
106. Ի՞նչ կայ գիտնալիք Ասիական Տաճկաստանի վրայ:

Ա. Ր Ա Բ Ի Ա.

107. ՍԱՀՄԱՆՔ. — Արաբիոյ սահմանքն են, հիւսիսէն՝ Ասիական Տաճկաստան, արեւմուտքէն՝ Կարմիր ծո-



Մէքքէ

վը, արեւելքէն՝ Ատէնի և Էօմէնի ծոցերը, և հարաւէն՝ Էօմէնի ծոցն, Հիւրմիւզի նեղուցն և Պարսկային ծոցը:

107. Ի՞նչ կայ գիտնալիք Ասիական Տաճկաստանի վրայ:

Նշանաւոր քաղաքներն են, արեւմտակողմը Մէքքէ (բն. 50,000), հայրենիք Մահմէտի, որոյ գերեզմանն է ի Մէտինէ. երկուքն ալ Հէճազ գաւառին մէջ: — Մէքքէի նաւահանգիստն է Ճիտտէ, Կարմիր ծովուն վրայ: — Ատէն, համանուն ծոցին վրայ (բն. 35,000), Արաբիոյ ամենէն հարաւային քաղաքը և նաւահանգիստ, ու բերիր՝ Պապէլ Մանտէպի բերանը Անգլիացւոց ձեռքն են:

Եէմէնի մայրաքաղաքն է Սանա (բն. 40,000), որուն շրջակայից մէջ առաջ կու գայ աղնուագոյն խահուէն: — Մոքա, ատենօք անուանի նաւահանգիստ Կարմիր ծովուն վրայ, որ Եէմէնի գաւառին խահուէին վաճառականութեան գլխաւոր ամբարանոցն էր. իսկ այսօրուան օրս Հոտէյտա և Պէյրէլ-Ֆաքիհ քաղաքները կ'ընեն այս վաճառականութիւնը:

Մաշկադ, գլխաւոր քաղաք Էօմէնի գաւառին (բն. 60,000), գեղեցիկ նաւահանգիստ ունի. Արաբիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է:

Մոքա

108. Զանազան գիտելիք. — Արաբիա 2,850,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն ունի: Երկրին ներսերն որ քիչ ծանօթ են՝ լեռնոտ և բաւական բազմաբնակ են, բաժնուած ծովեզերքներէն՝ ամայի և անբեր գաշտերով, անսահման աւազի ծովերով, զոր Արաբք իրենց ուղտերովը կը կտրեն՝ նուռ անապատի կոչելով զանոնք: Այս կենդանեաց դիւրաւ դիմանալը նեղութեանց՝ մանաւանդ ծարա-

108. Ի՞նչ կայ գիտնալիք Արաբիոյ վրայ:

ւոյ՝ մի միակ յարմար կ'ընէ զերծնիք այս աշխարհին մէջ ճանապարհորդելու, ուր ուղեւորք անցած տեղերնին օրերով կաթիլ մը ջուր չեն գտներ: Անուանի է Արաբիոյ ձին գեղեցկութեան և արագութեան համար:

Ծովափնոյ վրայ հողն աւելի բարեբեր է, մանաւանդ Եմէնն գաւառն այնքան արգաւանդ է՝ որ երջանիկն Արաբիա կը կոչուէր: Խահուէէն զատ առաջ կը բերէ նաև առատօրէն խնկեղէն, խէժ, լեղակ, արմաւ, և այլն: Պարսից ծոցոյն ափանց վրայ առատ մարգարիտ կ'որսացուի: Արաբիոյ բնակիչքը 8 միլիոն կը կարծուի. ոմանք քաղաքներու և գիւղերու մէջ կը բնակին. Հէճազ և Եմէն գաւառները Թուրքիոյ հպատակ են: Ալլք կը թափառին իրենց հօտերով անապատներու մէջ. այս թափառաշրջիկ ազգը Պետուին կը կոչուի: Գրեթէ ամբողջ Արաբք մահմետական կրօնքը կը դաւանին: Ուխտատեղերուդ դարուն մէջ տեղերը զօրաւոր աղանդ մը դուրս եկաւ, որուն հետևողք Վահապեանք կոչուեցան իրենց վահապ հիմնադրին անուամբը. այս աղանդը տարածուած է արևելեան և ներքին կողմն Արաբիոյ: Նաև շատ Հրեայք կան Արաբիոյ մէջ:

ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

109. ՍԱՀՄԱՆՔ. — Թուրքաստանի սահմաններն են, հիւսիսէն՝ Սիպերիա, արևմուտքէն՝ Կասպից ծով, հարաւէն՝ Պարսկաստան և Աֆղանիստան, և արևելքէն՝ Չինաստան:

Այս աշխարհիս մեծաւ մասամբ տիրած կամ պաշտպանութեան տակ առած են Ռուսք, որոց նշանաւոր քաղաքքն են, հարաւակողմն՝ Պոխարա (բն. 70,000), Թուրքաստանի ամենէն մեծ քաղաքը: — Սմրղանտ (բն. 35,000), որ 1400ին Լենկդիմուրի մեծ կայսերութեան մայրաքաղաքն եղաւ: — Պալխ, Ասիոյ ամենահին քաղաքներէն մին: — Խոշևնտ, Սիր Տերիա գետոյն վրայ,

109. Որո՞նք են Թուրքաստանի սահմանքն և քաղաքները:

և Խիվա, Ամուր Տերիայի վրայ, Ֆերղանա գաւառին քաղաքները:

Ամբողջ միայն դեռ անկախ մնացած է 3,500,000 բնակչօք, Թուրքմանիա անուամբ:

110. Զանազան գիտելիք. — Թուրքաստանի մէկ մասը չարժական աւազոյ դաշտերով ձևացած է. տարածութիւնն է 3,345,000 քառակուսի քիլոմէտր և բնակիչքը 8 միլիոն, մեծաւ մասամբ մահմետական, որոնք ինքնագլուխ ցեղեր կը կազմեն, և ասոնց իշխաններն Խան կը կոչուին, որոնց մէջ շատերն ինչպէս Խրղզ գաւառիններն Ռուսաց գլխաւորութիւնը կը ճանչնան: Արևմտեան կողմը կը գտնուի Թուրքմանիա երկիրը, ուսկից ծագեցան Օսմանեանք: Հարաւային երկիրը՝ Մեծն Պոխարա անուամբ՝ ամենէն բազմամարդն և ամենէն հարուստն է Թուրքաստանի. բնակիչքը ճարտար են և վաճառականք: Արևելեան հարաւային կողման լերինք՝ ոսկւոյ, արծաթի հանքեր ունին և աղնիւ ակունք:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

111. ՍԱՀՄԱՆՔ. — Պարսկաստանի սահմանքն են, հիւսիսէն՝ Ռուսաց Թուրքաստան, Կասպից ծով և Կովկաս. արևմուտքէն՝ Ասիական Տաճկաստան. հարաւէն՝ Պարսկային ծոցն և Հիւրմիւզի նեղուցը, և արևելքէն՝ Պելուճիստան և Աֆղանիստան:

Մայրաքաղաքն է Թեհրան, Իրաք Աճէմի նահանգին մէջ, որ 215,000 բնակիչ ունի ձմեռը, և ամառը 90,000. չահին պալատը շատ ընդարձակ է և հարստութեան կողմանէ զարմանալի:

Նշանաւոր քաղաքներն են, Ասպահան կամ Իսպահան, նոյն նահանգին հարաւային կողմը, հին մայրաքաղաքն

110. Թուրքաստանի վրայ ի՞նչ գիտելիք կայ:

111. Պարսկաստանի սահմանքն և գլխաւոր քաղաքներն ըսէ:

և հիմա ևս Պարսկաստանի ամենէն մեծ քաղաքն. ա-
տենօք միլիոն մը բնակիչ ուներ, իսկ հիմա 60,000։
Քոմը է նոր Ջուղան, որ հին Ջուղայէն եկած Հայոց
բնակած տեղն է։ — Գազպին (բն. 60,000), ատենօք թա-
գաւորանիստ. անուանի
են պղնձեղէն ձեռակերտ-
քըն և սրեղէնք։ — Հա-
մատան (բն. 45,000).
Եկբատան քաղաքին ա-
ւերակաց մօտ շինուած
է, և գեղեցիկ դիրք ու-
նի։



Վեզիրան

Շիրազ, Ֆարսիստան նահանգին գլխաւոր քա-
ղաքը (բն. 35,000), մըշ-
տագարուն հովտի մը մէջ
շինուած, որ Ասիոյ ազ-
նուագոյն գինիները կը
մատակարարէ, ինչպէս
ուրիշ պտուղներն ալ ա-
նուանի են։ — Մէշհէտ,
Խորասան նահանգին մէջ
(բն. 70,000), ուր շատ
ուխտաւորք կու գան
հռչակաւոր մկրտիչի մը
այցելութեան։ — Ա-
դերպայճան, Կասպից ծո-
վուն մօտ, (բն. 12,000).
ազնիւ տորոն կը բուսնի
հոս։ — Պալֆիրուշ (բն.
50,000) առաջնոյն քով
բանուկ վաճառականու-
թիւն և ձեռագործներ
ունի։

112. Պարսից Հայ գաւառները՝ մեծին Հայոց Ա.յրա-
րատ, Վասպուրական, Փայտակարան և Պարսկահայք
նահանգներուն մասերէն ձեւացած են։ Երկիրը շատ բա-

112. Պարսից Հայոց գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

րերբեր ու զուարճալի է, և ամէն տեսակ պտուղ կը բուս-
ցընէ։ — Գլխաւոր քաղաքներն Դավրէժ կամ Թէվրիզ,
(բն. 180,000), շատ վաճառաշահ է և գեղեցկանիստ՝
պարտէզներով զարդարուած։ — Ա.րտաշիր կամ Էրտէկիր
կասպից ծովուն մօտերը, որ վաճառականութեամբ շատ
ծաղկած է, և մէջը անուանի մզկիթներ ու չէնքեր ու-
նի։ — Որմիա կամ Ուռմի քաղաք, Որմեայ ծովակին
արևմտեան կողմը, որոյ անունով ծովակն ալ այսպէս
կոչուած է, որ կ'ըսուի նաև Դավրիժոռ ծով. ջուրը սաս-



Իսպահան

տիկ աղի է, մէջը անբնակ մանր կղզիներ կան։ — Սա-
չաւաստ կամ Սաւաստ քաղաք, որ հին ատեն կ'ըսուէր
Սաղաւաս, և կ'իյնայ Որմեայ ծովակին արևմտեան հիւ-
սիսային կողմը. արմտիք շատ ունի, գինին ալ ազնիւ.
հիմա աւերակ է. իրեն մօտ են Տիւնաւան գիւղաքաղաքը,
և Խոսրովա գեղը։ — Խոյ քաղաք, որ է հին Չէր քա-
ղաքը, Որմեայ ծովակին հիւսիսային կողմն, ընդարձակ
դաշտի մը մէջ շինած, (բն. 25,000). պարտէզներ շատ
ունի. չրկակայ սահմաններն ալ բարեբեր են։

Մակու քաղաքաւանը Ա.յրարատայ կողմը, ամուր քա-
րափոր բերդ ունի. ասոր քովերն է Ա.րտազու դաշտը,
ուր նահատակեցան Ս. Վարդանանք։ Հոն է նաև Թա-
դեի վանքը, Ս. Թադէոս առաքելոյն և Ս անդուխտ կու-
սին նահատակութեանց տեղը. ուր որ հին ատեն Շա-
ւարշան անունով իշխանական բնակարան մը կար։

113. Զանազան գիտելիք. — Պարսկաստանի տարածու-

113. Ո՞րչափ տարածութիւն ունի Պարսկաստան, և ի՞նչ
գետեղիք կայ։

թիւնն է 1,648,000 քառակուսի քիլոմէդր. բնակիչք 8 միլիոն, որոնց մեծ մասն մահմետականութիւն կը դաւանին՝ Ալիի աղանդով: Թագաւորը Շահ կը կոչուի, և բացարձակ իշխանութիւն կը վարէ: Այս երկիրս մեծ բարձրաւանդակի



Աւերակք Պերսեպոլեայ Շիրազի մօտ

մը վրայ է, որոյ մէկ մասն աւազուտ աղային դաշտերով ծածկուած է. կը դանուին սակայն դաւառներ ալ որ առատ և ընտիր պտուղներ յառաջ կը բերեն: Պարսկաստանէն եկած են թուզ, դեղձ, սալոր և նուշ:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ — ԳԱՊՈՒԼ ԵՒ ՀԵՐԱԴ

114. ՍԱՀՄԱՆՔ. — Աֆղանիստանի սահմանքն են, հիւսիսէն՝ Թուրքաստան, արեւմուտքէն՝ Պարսկաստան, հարաւէն՝ Պելուճիստան, իսկ արեւելքէն՝ Հնդկաստան:

Աֆղանիստան յաճախ յուզեալ ըլլալով ներքին խռովութիւններէ, ներկայապէս երկու թագաւորութեանց կը բաժնուի, որոնք իրենց մայրաքաղքին անունը կը կրեն.— Գապուղ, հիւսիսային կողմն, ափղան իշխանաց արդի առթոռանիստը (բն. 60,000), գեղեցիկ դիրք ունի, շրջապատեալ պտղաւէտ պարտիզօք: — Հերադ, արեւմտեան հիւսիսային կողմը, որ մայրաքաղաք է ինքնագլուխ վարչութեամբ իշխանի մը, (բն. 100,000). շատ վաճառաշահ է, և ունի գործարաններ սրեղինաց, գորգերու և վարդեղրոյ: — Գանտահար, Աֆղանիստանի կեդրոնին մէջ, (բն. 50,000). առաջ մայրաքաղաքն էր. մեծ և գեղեցիկ քաղաք է:

115. Զանազան գիտելիք. — Աֆղանիստան գրեթէ 680,000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն ունի, և 5 միլիոն բնակիչք, որոնց մեծ մասն մահմետական է, ծնացածը Պրահմայի կրօնքը կը դաւանի: Այս աշխարհիս իշխաններն հաստատուն և զօրաւոր կառավարութիւն ու աղեցութիւն չունենալնուն՝ տեպ ենթակայ եղած են Անգլիացւոց միջամտութեան, որոնք գարձեալ մերձաւոր ժամանակներս, յամին 1880, իրենց ազդին դէմ եղած անպատուութեան մը համար՝ բանակ մը ղրկեցին հոն և Խայպէր կրճին մօտ մեծ յաղթութիւն մը կատարեցին, ուր 1842ին այնպիսի ջարդ մը կրած էին, ուսկից վրնուար մը միայն աղատեր էր: Երկիրը լեռնոտ է և օդը փոփոխական. կը դանուին, մասնաւորապէս արեւելեան հիւսիսային կողմերը, բարեբեր և աղեկ մշակեալ դաշտագետիններ, ուր տարին երկու հունձք կ'ըլլուին, և ամէն տեսակ արմտիք, բամբակ և շաքարի եղէգ կը բուսնի:

114. Աֆղանիստանի սահմանքն և քաղաքքն որո՞նք են:
115. Ի՞նչ գիտելիք կայ Աֆղանիստանի վրայ:

ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ

116. ՍԱՀՄԱՆՔ. — Պելուճիստանի սահմանքն են, հիւսիսէն՝ Աֆղանիստան, արեւմուտքէն՝ Պարսկաստան, հարաւէն՝ Էօմէնի ծովը, և արեւելքէն՝ Հնդկաստան:

Մայրաքաղաքն է Քէլատ (բն. 15,000), հիւսիսային կողմը, ճարտար և վաճառաշահ քաղաք:

Նշանաւոր քաղաքք՝ Կոնտավա (բն. 14,000), Քէլատի արեւելեան հարաւային կողմը, անոր պէս ընդարձակ: — Պէյա (բն. 10,000) հարաւակողմն գեղեցիկ արօտներ ունի:



Մեհեան ի Քէլատ

117. Ջանազան գիտելիք. — Պելուճիստան՝ վերը յիշուած թագաւորութեանց նման ճիւղ մ'է Աֆղանիստանի ազնուացած ընդարձակ կայսերութեան, որ հիմնուեցաւ Ահմէտ-Շահէն անցեալ դարուն վերջը: Շատ ծանօթ չէ այս երկիրը, որուն ընդարձակութիւնը 430 հազար քառակուսի քիլոմէտր կը կարծուի, և բնակիչքը 2 միլիոն: Ծովեզերքը զանազան չէյխերու կամ խաներու կը հնազանդի, որոնց

116. Ո՞ր կողմը կ'իյնայ Պելուճիստան. և ի՞նչ քաղաքներ ունի:

117. Ի՞նչ գիտելիք կայ Պելուճիստանի վրայ:

գլուխը Քելատ կը նստի. և սա իսկ Անգղիոյ հովանաւորութիւնը կը ճանչնայ: Այս երկիրս բարձր լերանց չղթայներով և աւազուտ անապատներով բաժնուած է. բայց ունի նաև բարեբեր հովիտներ, որոնք կը բուսցընեն արմաւիք, բամբակ, լեղակ, չաքար, արմաւ, նուշ, և այլն:

ՀՆԴԿԱՍՏԱՆ

118. ՍԱՀՄԱՆՔ. — Հնդկաստանի սահմաններն են, հիւսիսէն՝ Չինու կայսրութիւնը, արեւմուտքէն՝ Աֆղանիստան, Պելուճիստան և Էօմէնի ծովը. հարաւէն՝ Հընդկաց ծով, և արեւելքէն՝ Պենկալայի ծոցն և Հնդկա-Չին:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Հնդկաստան չորս մասն կրնայ բաժնուիլ. այսինքն

Ազատ երկիրներ.
Անգղիական կալուածներ.
Անգղիացւոց հարկատու կամ դաշնակից երկիրներ.
Գաղղիոյ և Բորդուգալի կալուածներ:

ԱԶԱՏ ԵՐԿԻՐՆԵՐ

119. Գլխաւոր ազատ երկիրը ներկայապէս է Նէբալ Հիմալայայի հարաւային կողմը. մայրաքաղաքն է Քադմանտու, նշանաւոր իւր կոտաւմբք:

Մալտիվեան կղզիք ալ՝ թուով գրեթէ 12 հազար փոքր կղզիներ, անկախ են. ասոնց մէջ գլխաւորն է Մալէ, ուր կը նստի արշիպեղագոսին սուլտանը:

118. Ըսէ՛ Հնդկաստանի սահմանները:
119. Որո՞նք են ազատ երկիրներն ի Հնդկաստան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

120· **Անգլիական Հնդկաստանի փոխարքայութիւնը զանազան նախագահութեանց և կուսակալութեանց կը բաժնուի։**



Մայրաքաղաքն է Կալկադա (բն· 900,000), Գանգեսի ճիւղերէն մէկուն վրայ, Պենկալայի նախագահութեան

120· Որո՞նք են Անգլիական Հնդկաստանի գլխաւոր քաղաքները։

գլխաւոր քաղաքն և աթոռ վարչութեան ամբողջ անգլիական Հնդկաստանի. հարուստ և չատ վաճառաշահ. հոս նաև Հայոց բաւական բազմութիւն մը կայ, որ յատուկ եկեղեցի և հեմարան ունին։



Աշերակը Ակրայ

Նշանաւոր քաղաքներն են, Լոռքնօ, հիւսիսային կողմը (բն· 300,000), Ագուտա հին թագաւորութեան մայրաքաղաքը։ — Տըլհի, (բն· 190,000), գեղեցիկ քաղաք



Պենարես

է, աթոռ հին Մողոլի թագաւորութեան։ — Ակրա (բն· 165,000), նախագահութիւններէն մէկուն գլխաւոր քաղաքն է։ — Պենարես, Գանգեսին մօտ, (բն· 225,000),

Հնդկաստանի առաջին ուսումնական քաղաքն է և ուխտատեղի։ — Միրզապուր (բն. 83,000) և Բադնա (բն. 170,000) Գանգեսի վրայ։ — Ալլահապատ (բն. 170,000) Գանգեսի վրայ, Հնդկաստանի առաջին սրբազան քաղաքներէն մին է։

Պոմպէյ

Լահոռ, արևմտեան հիւսիսային կողմը, (բն. 170,000), հին Շէյխերու մայրաքաղաքը։ — Ամրեդսիր, Լահոռի արևելեան կողմը (բն. 136,000), այս գաւառիս ամենէն վաճառաշահ քաղաքն է, անուանի է շալն։



Երկարաշէն պանդոկ ի Պոմպէյ

Սուրատ, Կուճրատ նահանգին հարաւային կողմը (բն. 110,000), բերդաքաղաք. ձեռագործքն և վաճառականութիւնն անուանի։

Պոմպէյ, Քոնքան նահանգին մէջ, արևմտեան ափանց մօտ պզտիկ կղզւոյ մը վրայ (բն. 825,000). ամուր և շատ վաճառաշահ քաղաք է, աթոռ նախագահութիւնն ներբէն մէկուն։

Պենկալայի ծոցին մէջ երեք գաւառ ունին Անգլիացիք։ Ա. Օրիսա, գլխաւոր քաղաքն Քադաք (բն. 100,000) և Ճակրնադ (բն. 50,000) անուանի է մեհեանն, ուր տա-

Մանկալոր

րին 1 միլիոն ուխտաւորք կ'երթան։ Բ. Սէրքար, գլխաւոր քաղաքն Մատարաղաս, անուանի է բամբակէ գործուածներն որ քաղքին անուամբ կը կոչուին։ Գ. Քարնադիք կամ Այիուճք Գորոմանտէլի, գլխաւոր քաղաքն Մատրաս, (բն. 450,000), աթոռ ուրիշ նախագահութեան մը, և այն կողմերուն ամենէն վաճառաշահ քաղաքը։



Սէրինկարադամ

Մանկալոր, հարաւ. արևմտեան կողմն, Քանարա գաւառին մէջ, լճի մը վրայ չինուած, որ Էօմէնի ծովուն հետ հաղորդակցութիւն ունի, վաճառաշահ քաղաք։ — Գալիքոդ Մալապարի ափանց վրայ, առաջնոյն հարաւակողմն։

Ահմետապատ, հարաւակողմն՝ Մայսուր գաւառին մէջ բերդաքաղաք է. ունի հին աւերակներ։

ԱՆԳԼԻԱՑԻՈՑ ՀԱՐԿԱՏՈՒ ԿԱՄ ԴԱՇՆԱԿԻՑ ԵՐԿԻՐՆԵՐ

121. *Հիւսիսային կողմը կայ Գաշմիր երկիրը, որուն մայրաքաղաքն է Գաշմիր կամ Սրինակար, (բնակիչ 130,000), ամենաբեղուն հովտի մը մէջ. և անուանի են շալերը։*

Հնդկաստանի մէջտեղերը կը բնակի մեծ ցեղ մը՝ Մահրաթ անուամբ։ Երեք տէրութիւն ունին ասոնք. Սինտեահ իշխանական ցեղին տէրութիւնը, որուն մայրաքաղաքն է Կուալիոր, նշանաւոր բերդաքաղաք. — Կիշկրավար իշխանաց տէրութիւնը, որուն մայրաքաղաքն է Պարոտա, (բն. 140,000). — և Հոլքար իշխանաց տէրութիւնը, որուն մայրաքաղաքն է Ինտոր։



Մզկիթ ի Հայտէր–ապատ

Տէքհաև երկրին ներսերուն մեծ մասին վրայ կը տիրէ Նիզամ անուամբ իշխան մը. և ունի իրեն աթոռանիստ՝ Հայտէր–ապատ քաղաքը, (բն. 300,000)։

Հարաւային կողմը կը գտնուի Մայսուր երկիրը, որուն

121. Որո՞նք են Անգլիացւոց հարկատու կամ դաշնակից երկիրները։

ռաձան կը նստի ի Մայսուր. բայց ամենէն մեծ քաղաքն է Պանկալոր, (բն. 150,000)։

Հնդկաստանի հարաւային մասին ծայրը կը գտնուին երկու պզտիկ տէրութիւններ, Դրավանկոր և Գոչին։

ԳԱՂԼԻԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

122. *Գաղղիացիք ունին ի Հնդկաստան, հիւսիսակողմը, Զանտերնակոր կամ Զանտրանակոր քաղաքը Հուկլի գետին վրայ, (բն. 30,000)։ — Հարաւակողմն ունին Բոնտիչէրի կամ Բոնտուչէրի, Գորոմանտէլի ափանց վրայ, (բն. 150,000). բանուկ նաւահանգիստ է, և Գաղղիոյ Հնդկաստանի մէջ ունեցած կալուածոց գլխաւոր տեղին։ — Մահէ, Մալապարի ափանց վրայ. նշանաւոր է պղպեղի վաճառականութեամբ։*

Ասոնցմէ զատ ունին ուրիշ երկու քաղաքներ ալ։ Գաղղիական կալուածոց ամբողջ բնակիչքն են 285,000։ (Տես թիւ 46)։

ԲՈՐԴՈՒԳԱԼԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

123. *Բորդուգալցիք ունին ի Հնդկաստան, արեւմտեան ափանց վրայ, Տիու քաղաքը, բերդաքաղաք համանուն կղզւոյն մէջ։ — Կօա, հարաւակողմը, ծովեզերքին մօտ պզտիկ կղզեայ մը մէջ, որ Բորդուգալի կալուածոց ի Հնդկաստան կեդրոնն է։*

Ուրիշ երկու քաղաքներ ալ ունին. և իրենց կալուածոց բնակչաց ամբողջական թիւն է 530,000։ (Տես թիւ 61)։

122. Ինչ քաղաքներ ունին Գաղղիացիք ի Հնդկաստան։
123. Որո՞նք են Բորդուգալցւոց քաղաքները։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿՂԶԻՆԵՐԸ

124. *Հնդկաստանի ափանց մօտ կան երկու խումբ կղզեաց, և մեծ կղզի մը.*

Երկու խումբքն են

Լաքէտիվեանք, Մալապարի ափանց արեւելեան կողմը. սոքունք 42 ամենափոքր կղզիներ են, որոնց իշխանը հարկատու է Անգղիոյ:

Մալտիվեանք, որոնց վրայ տեղեկութիւն տուինք ի թիւն 119:

Իսկ մեծ կղզին է Սէյլան, Հնդկաստանի արեւելեան հարաւային ծայրը. մայրաքաղաքը Գոլոմպոյ, (բնակիչ 110,000), նաւահանգիստ արեւմտեան հարաւային կողմը: — Գալնտի, կղզւոյն մէջտեղը, հին մայրաքաղաքն է: Անգղիացիք ամբողջապէս տիրած են կղզւոյս 1810էն ի վեր:

125. *Տարածութիւն, բնակիչք, կրօնք, դասակարգութիւնք.* — *Հնդկաստան 3,350,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունի, և 260 միլիոն բնակիչ, որոնցմէ 204,500,000 Անգղիոյ հպատակք են, մեկտեղ առնելով Սէյլան կղզին. 40 միլիոն Անգղիոյ դաշնակիցք կամ հարկատու. 14 միլիոն անկախ են. և մնացածներըը, ի բաց առնելով Գաղղիոյ և Բորդուգալի սակաւաթիւ հպատակները, օտար ազգեր են: Գլխաւոր կրօնքներն են, Պրահմայութիւնն, որուն կը հետևին 100 միլիոն. Պուտտայականը, որուն կը հետևին 70 միլիոն, և Մահմետականութիւնն՝ որուն կը հետևին 70 միլիոն. 6 միլիոնի չափ ալ քրիստոնեայք կան: Կրօնական սկզբանց պատճառաւ մէջերնին բաժանումներ կան, որոնք դասակարգութիւնք (Castes) կ'ըսուին, և ամենեին իրարու հետ չեն խառնուիր. սոնց գլխաւորներն են Պրահմիներ կամ քահանայք, որ առաջին կարգը կը կազմեն. յետոյ պատերազմողք, երկրագործք, գործաւորք, և այլն: Ցեղատգոյնը, որ Բարիա կը կոչուի՝ ալիշ կը համարուի, և քաղաքներէն ու տաճարներէն մերժեալ է:*

124. *Ինչ կղզիներ կան Հնդկաստանի մօտ:*
125. *Ինչ կայ գիտնալիք Հնդկաստանի բնակչաց վրայ:*

126. *Վարչութիւն.* — *Մեծ Մողոլներու զօրաւոր տէրութիւնն առենօք իշխած էր Հնդկաստանի մեծագոյն մասին. իսկ այժմ այս տէրութիւնս ոչնչացած է Անգղիոյ ձեռքով, որ 1857 տարւոյն Սիբայից՝ ահաւոր խռովութենէն վերջը, ստիպուեցաւ պատերազմիլ, կրկին անգամ ձեռք բերելու համար Հնդկային ընկերութեան կալուածները, յորմէ տէրութեան անցաւ իր հիմնած ընդարձակ աշխարհակալութիւնը: Անգղիոյ թագուհին 1877էն ի վեր Հնդկաստանի ինքնակալութեան տիտղոսը կը կրէ:*

127. *Կլիմայ, բերք.* — *Հնդկաստանի անհուն ընդարձակութեան և երկրին զանազան կերպարանք ունենալուն պատճառաւ՝ կլիմայի և բարեխառնութեան մեծ տարբերութիւններ կան: Հիւսիսային կողմը, Հիմալայա լերանց ստորոտն, որոնց բարձրագոյն գագաթունք մշտնջենաւոր ձեամբ ծածկեալ են, և 8 ու կէս քիլոմէտր բարձրութիւն ունի, ինչպէս առաջ յիշեցինք, բարերար հովիտներ կը գտնուին: Սինտ կամ Ինդոս գետին և Գանգեսի ողողմամբ պարարտացեալ դաշտերն ընդարձակ աւազուտ անապատով մը բաժնուած են: Աւելի դէպ ի հարաւ, բարձրաւոյ մը և Կաթ լեռները երբեմն արեւմտեան և երբեմն արեւելեան ամպերն արգիլելով՝ իրարու բոլորովին հակառակ բարեխառնութիւններ առաջ կը բերեն Մալապարի և Գորոմանտէլի ափանց վրայ: Այս լեռներէս չատ մը գետակներ կը ծնանին, որոնք ամենայն ուղղութեամբ կտրելով զՀնդկաստան՝ խառնաւ կը պահեն զհողը, որուն վրայ աւելնալով կլիմային ջերմութիւնը՝ ուռճալի բուսաբերութիւն մը յառաջ կուգայ: Այս հարուստ երկրին գլխաւոր բերքերն են բրինձ, պանան, չաքար, համեմունք, մեռաքս, բամբակ. ունի նաև ադամանդի հանք, և մարգարիտ որ առատօրէն կ'ելլէ իր և Սէյլան կղզւոյն մէջ եղած նեղուցէն: Սակայն չատ մը ահաւոր գազաններ ալ կը սնուցանէ իր մէջը. ինչպէս՝ ռնգեղջիւր, վագր, առիւծ, պօա և ուրիշ զեռասակար օձեր: Շատ գեղեցիկ են փղերը, մանաւանդ Սէյլանինները:*

126. *Որո՞ն ձեռքն է Հնդկաստանի մեծ մասը:*
127. *Ինչ կլիմայ և բերք ունի Հնդկաստան:*

1 Cipayes, *հնդիկ զինուորք ի ծառայութեան Անգղիոյ:*

ՀՆԴԿԱ – ՉԻՆ

128. ՍԱՀՄԱՆՔ. — Հնդկա–Չինու կամ Յայնկոյս Գանգեսի սահմանքն են, հիւսիսէն՝ Չինու կայսրութիւնը, արեւմուտքէն՝ Հընդկաստան և Պենկալայի ծոցը, հարաւէն՝ Մալաքքայի նեղուցը, Սիամի ծոցն և Չինու ծովը, և արեւելքէն՝ Չինու ծովն և Դոնքինի ծոցը։



Մկնկտան

ԲՆԱԺԱՆՄՈՒՆՔ ԵՒ ԳՐԱԽՕՐ ԿԱՑՈՒՔ. — Հընդկա–Չին գլխաւոր վեց մասերէ կը ձևանայ.

Ա. ՀՆԴԿԱ–ՉԻՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ, արևմտեան կողմը. յորում նշանաւոր է Արաքան, երբեմն մայրաքաղաք համանուն հին թագաւորութեան, որուն յաջորդած է Ագեպ։ — Ռանկոռն, Բէկու նահանգին մէջ, (բն. 180,000). երևելի նաւահանգիստ։ — Ասաամ, հիւսիսակողմը բարերեր և ճարտարարուեստ գաւառ մ'է Պրահմաբուդրա գետին երկայնութեամբ։ — Մալաքքա, համանուն թերակղզւոյն ծայրը։ — Սինկապուռ, (բն. 100,000), փոքրիկ կղզւոյ մը վրայ, որ իր վաճառաշահութեամբն անգլիական Հնդկա–Չինու մայրաքաղաք դառնալու վրայ է։

128. Քանի՞ են մասունք Հնդկա–Չինու։

Բ. ՄԱԼԱՔՔԱ կամ ՄԱԼԱՔԱ ԻՆՔՆԱԳԼՈՒԽ, յորում կը պարունակուին հետևեալ թագաւորութիւնները և քաղաքներն, Բէրաք, Սալանկոր, Ջոհոր, Բահանկ և Ռոռնկոյ։

Գ. ՊԻՐՄԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ, (բն. 3,600,000), յաբևելս անգղիական Հնդկա–Չինու, որուն մէկ մասին տիրած են Անգղիացիք։ Մայրաքաղաքը Մանտալա, (բն. 100,000)։ Նախկին մայրաքաղաքն էր Աւա, Իրաւատոի գետին վրայ։



Քոռմ կամ Մենաստան Պիրմանաց

Դ. ՍԻԱՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ, (բն. 9,000,000), Պիրմանի արևելեան հարաւային կողմը։ Մայրաքաղաքը Պանկքոք, (բն. 400,000). չատ բանուկ նաւահանգիստ է Մէյնամ գետին վրայ։

Ե. ԱՆՆԱՄ, Հնդկա–Չինու արևելեան ծայրն, որ ժամանակաւ զօրաւոր կայսրութիւն մ'էր, չատ մասանց կը բաժնուի որոնք Գաղղիոյ պաշտպանութեան տակ են։ — ԳՈՉԻՆՉԻՆ, կամ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՆՆԱՄ, որուն մէջն է ամբողջ կայսրութեան արդի մայրաքաղաքը՝ Հիւե կամ Ֆոչռուան, (բն. 50,000), որ իր ընդարձակ ամրոցներովն Ասիոյ ամենէն զօրաւոր բերդաքաղաքներէն մին

է։ — ԴՈՆՔԻՆ, կամ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՆՆԱՄ. մայրաքաղաքը Հանոի կամ Քեչոյ, (բն. 150,000)։ — ԳԱՄՊՈՃԻ թագաւորութիւն, որ հարաւ. արեւմտեան կողմը կ'իյնայ, և որուն հին մայրաքաղաքն է Ուտոռ, իսկ նորը Բնումբենկ կամ Նամ-Վանկ։

Թագաւոր Սիամի

Զ. ՀՆԴԿԱ-ՉԻՆ ԳԱՂՂԻԱԿԱՆ. — Կը պարունակէ իւր մէջ Աննամէն առնուած հարաւային Գոչինչինի վեց գաւառները. գլխաւոր քաղաքն է Սայկոն (բն. 55,000),



Պաղոն՝ նաւակ Սիամի

վաճառաշահ և մեծ քաղաք. և նշանաւոր քաղաքք են՝ Միթո և Վինհ-լոն, Մէ-Քոնկ գետին վրայ։ — Հնդկա-Չինու մէջ Գաղղիոյ պաշտպանեալ գաւառներն 16 միլիոն՝ իսկ անմիջական կալուածներն 2 միլիոն բնակիչ ունին։

129. ԿՂԶԻՔ. — Սովորաբար Հնդկա-Չինու մասն կը համարուին հետեւեալ կղզեաց երեք խումբերը.

Անտաման, Նիկոպար — Պենկալայի ծոցին մէջ, Անգղիոյ ձեռքը.
Բարացիլ, Զինաց ծովուն մէջ։

130. Տարածութիւն, բնակիչք, կրօնք, վարչութիւն. — Հնդկա-Չինը, որ կ'անուանի նաև Անդրգանգեական կամ Արեւելեան թերակղզի Հնդկաց, ձեւացնող գաւառները 2,135,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունին և 32 միլիոն բնակիչ, որոնց մեծ մասը պատահական աղանդն ունին. սակայն Աննամ որ մասամբ մը չինացի գաղթականներէ ձեւացած է, Կոնֆուկիոսի՝ չինացի միաստուածեան փիլիսոփային հետեւող չատ մը աղանդաւորներ կը պարունակէ։ Մահմետականութիւնն Արաբանի և Մալաքքայի թերակղզւոյն մէջ կը տիրէ, որոց բնակիչքը մալայեցի ցեղին կը վերաբերին, ինչպէս նոյն ցեղին են նաև Ովկիանիոյ ժողովրդոց մեծագոյն մասը, և լեզուին չատ տարածուած է Հնդկաստանի մէջ։ Պիրմանք, և Սիամի ու Աննամի երկիրներուը՝ բացարձակ իշխանութեամբ թագաւորաց կը հնազանդին։ Աննամի կայսրութեան ծովային զօրութիւնը բաւական նշանաւոր է. սակայն անգղիական կալուածոց երագերագ ընդարձակիլը գուշակել կու տայ թէ քիչ աւեն՝ Եւրոպիոյ տէրութիւնք, ինչպէս Հնդկաստանի՝ նոյնպէս և Հնդկա-Չինու պիտի տիրեն։ Արդէն 1883 տարիէն ի վեր Գաղղիացիք պատերազմաւ Թոնքինի մէկ մասին տիրած են, և երթալով հաստատուելու վրայ են հոն։

131. Կլիմայ, բերք. — Հնդկա-Չինու երկիրն գրեթէ ամէն մասերուն մէջ խոնաւ և տաք է կլիման։ Բերքերն են բրինձ, շաքար, խահուէ, թէյ, բամբակ, լեղակ և համեմունք. և ունի ոսկւոյ, արծաթի, անագի, յակինթի, շափիւղայի և մարմարիոնի հանք։ Հնդկաստանի գրեթէ ամէն կենդանիներն ունի։

129. Որո՞նք են Հնդկա-Չինու կղզիք։
130. Ինչ կայ գիտնալիք Հնդկա-Չինու բնակչաց վրայ։
131. Ինչ բերք ունի Հնդկա-Չին։

ՉԻՆ ԿԱՄ ՉԻՆԱՍՏԱՆ

132. ՍԱՀՄԱՆՔ. — Չինու կայսրութեան սահմանքն են, հիւսիսէն՝ Սիպերիա, արեւմուտքէն՝ Թուրքաստան և Հնդկաստան, հարաւէն՝ Հնդկաստան և Հնդկա–Չին,



Բէրլին

և արեւելքէն՝ Չինաց ծով, Կապոյտ ծով, Դեղին և Ճապոնի ծով։

132. Ըսէ Չինու սահմանները։

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Այս կայսրութիւնս կը ձևանայ Բուռն Չինաստանի և հարկատու երկիրներէ։

ԲՈՒՆ ՉԻՆԱՍՏԱՆ

133. Բուն Չինաստանի մայրաքաղաքն է Բէքին (բն. 1,650,000), արեւելեան հիւսիսային կողմը, երեք անգամ մեծ քան զԲարիզ. Գաղղիացիք և Անգլիացիք պատերազմաւ առին գայն յամին 1860. կայսեր պալատը 8 քիլոմէդր շրջապատ ունի։ — Դիհն–չին, (բն. 950,000), մեծ վաճառաշահ քաղաք է, Բէյ–հօ գետին վրայ. Բէքինի նաւահանգիստը կը համարուի. Եւրոպացիք մուտ ունին հոս։

Մանտարինք և կանայք Չինաց

Նշանաւոր քաղաքներն են, Գիանկ–Սու գաւառին մէջ միջին կողմը՝ Նանքին, Կապոյտ կամ Եան–չու–քեան գետին վրայ, (բն. 500,000), հին մայրաքաղաքն և ուսումնական քաղաք Չինու. անուանի է իւր դեղին բամբակն որ մօտերը կը բուսնի, որով նանքին կտաւը կը չինեն։ — Սու–Չհու (բն. 700,000) Չինաստանի ամենէն զուարճալի քաղաքն է։ — Շանկ–հայ (բն. 380,000)

133. Ո՞րն է Չինու մայրաքաղաքը, և նշանաւոր քաղաքները։

ծովեզերեայ չատ վաճառաշահ քաղաք է, ուր օտար ազգեր ալ ազատ մուտ ունին: — Հանկ–չհոռ (բնակիչք 1,000,000) Ձէ–Քիանկ գաւառին մէջ, զօրաւոր բեր-

Յախձապակեայ աշտարակն ի Նանքին

դաքաղաք է: — Ֆոռ–չհոռ–ֆոռ (բն. 400,000) և Էմոյ (բն. 100,000) Ֆորբիէն գաւառին մէջ երկուքն ալ օտարաց ազատ վաճառաշահ նաւահանգիստներ են: — Գանդոն, հարաւակողմը, Զինաց ծովուն վրայ, (բնակ.



Ապարանք Ճաշի–Լռւնպոյ

1,600,000). առնուեցաւ պատերազմաւ ի Գաղղիացւոց և ԱՆգղիացւոց յամին 1858, առաջին քաղաքներէն մին ուր թոյլ տրուեցաւ Եւրոպացւոց վաճառականութիւն ընելու: — Հոնկ–Քոնկ (բն. 200,000) Գանդոնի ծովին

մէջ կղզի մ'է, որուն տիրած են Անգղիացիք 1842ին ի վեր, գլխաւոր քաղաքն է Վիկտորիա: — Մագաօ, Բորտուգալացիներուն ձեռքը փոքր կղզի մ'է:

Զինաստանի ներսերը դեռ չատ մեծամեծ քաղաքներ կը գտնուին, սակայն օտար ազգաց հետ յարաբերութիւն չունենալնուն համար զանց կ'ընենք յիշատակել:



Շիրիւ Պոկտոյ Լամայի

ԶԻՆՈՒ ՀԱՐԿԱՏՈՒ ԵՐԿԻՐՆԵՐ

134. Զինաց հարկատու երկիրները չորս են, առանց համրելու զՄանչուրիա, որուն մէկ մասն այսինքն Ամուր գետին հիւսիսային կողմը, Ռուսաց անցաւ յամին 1859. իսկ մնացածը Բուն Զինու հետ միացած է:

ԳՈՐԷԱ, Զինու արեւելեան կողմը՝ մեծ թերակղզի է, գրեթէ Իտալիոյ չափ ընդարձակ: Ինը միլիոն բնակիչք ունի. մայրաքաղաքն է Հան–եանկ կամ Սէուլ (բնակ. 250,000): Այս երկրիս պաշտպանութեան նկատմամբ Զին և Ճաբոն միշտ խնդրոյ մէջ են:

134. Քանի՞ են Զինաց հարկատու երկիրները:

ՄՈՆԿՈԼԻԱ, Չինու հիւսիսային կողմը, ուսկից բաժնուած է 2,600 քիլոմէդր երկայնութեամբ պարսպով մը, զոր Չինացիք կանգնած են Մողոլ Թաթարներու յարձակումներէն պաշտպանուելու համար: Գլխաւոր քաղաքներն են Ուրկա, հիւսիսային կողմը. Մայմաչին, Սիբերիոյ սահմանագլխոյն վրայ կեդրոն վաճառականութեան է ընդ մէջ Չինաց և Ռուսաց: Կոպի անապատը կը գրաւէ այս երկրիս արեւմտեան մասը, որուն հարաւակողմն կ'ինկնայ Գոբդոբ–նոր գաւառն համանուն մեծ լճովը:

ՓՈՓՐ ՊՈԽԱՐԱ կամ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՈՒՐԲԱՍՏԱՆ, Կոպի անապատին արեւմտակողմն, կը տարածուի մինչեւ Բամիրի և Պոլորի բարձրատափերը, մեծ անապատին արեւմտեան կողմը: Գլխաւոր քաղաքներն են Եարքեանտ և Քաշկար, (բն. 120,000) արեւմտեան հարաւային կողմը:

ԴԻՊԷՏ, մեծ անապատին հարաւային կողմը. կը պարունակէ զՓոքր Դիպէդ, արեւմտեան կողմը, որուն մայրաքաղաքն է Լատաք. — զՄեծ Դիպէդ, արեւելեան կողմը, որուն մայրաքաղաքն է Լհասսա. — զՊոռդան, հարաւային կողմը, որուն մայրաքաղաքն է Դաստիսոռոտօն. վերջին գաւառիս մէկ մասն Անգլիացիք գրաւեցին մօտ ժամանակներս:

ՉԻՆՈՒ ՀՊԱՏԱԿ ԿՂԶԻՔ

135. Չինու հպատակ գլխաւոր մեծ կղզի մը և բաւական ընդարձակ արշիպեղագոս մը կան.

Հայ–Նան, հարաւային կողմը, ազնիւ փայտեր և ոսկեայ հանք ունի:

Լիոռ–Զոռ կղզեաց արշիպեղագոսը, Կապոյտ ծովուն արեւելեան կողմը, Չինաց և Ճաբոնաց միանգամայն հարկատու է:

136. Տարածութիւն, բնակիչք. կրօնք, վարչութիւն. —

135. Քանի՞ են Չինու հպատակ կղզիք:

136. Ո՞րչափ է Չինաստանի տարածութիւնը, և ո՞րչափ բնակիչքը:

Չինու կայսերութիւնը, աշխարհիս ամենէն բազմամարդաբնակն և Ռուսիայէն վերջը մեծագոյն տերութիւնն է: Գրեթէ 11,500,000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն ունի, և 400–410 միլիոն բնակիչք, որոնք դեղին ցեղէն են. և աոնց մեծ մասն Պուտտայի աղանդոյն կը հետեւի, որոյ գլուխն կը կոչուի Տալայի լառնս. սակայն կայսրն և Մանտարիններու կամ գրագիտաց դասն, որոնք հասարակաց ամէն պաշտամունքը կը վարեն, Կոնֆուկեան աղանդն ունին (տես թիւ 130): Կայսեր իշխանութիւնը բուն Չինու վրայ միայն կը զօրէ, և իւր կարողութիւնը չափաւորեալ է առենակալաց այլ և այլ դասերու երեսփոխանաց ժողովովը: Տերութեան մէջ եղած միւս երկիրները կը հպատակին յատուկ թագաւորաց կամ խաներու, որոնք հարկ կը վճարեն Չինաստանի, կամ իւր պաշտպանութիւնը կը ճանչնան: Չինաստանի ամբողջ հիւսիսային ժողովուրդք թաթար անուամբ ալ կը կոչուին երբեմն, և իրենց աշխարհն ալ Չինու Թաթարստան:



Բնիկ Չինք

137. Կլիմայ, բերք. — Չինու պէս ընդարձակ աշխարհի մը ինչպէս կլիման նոյնպէս բերքը յայտնի է թէ չատ զանազան են: Բուն Չինաստան ընդարձակ դաշտաբերիններ ունի, որոնք առատօրէն յառաջ կը բերեն ցորեան, բրինձ և ամենայն տեսակ արմտիք: Ըստ բարեխառնութեան կլիմային կը բուսանին թթենին, նարընջենին, բամբակ, լեղակ, շաքարի եղէգ, թէյ, և այլն: Գործեայի մաս մը ոսկւոյ և արծաթի առատ հանքերով լեռներ ունի: Մոնկոլիոյ դաշ-

137. Ի՞նչ տեսակ բերք ունի Չինաստան:

տագետիններըը յառաջ կը բերեն խաչնդեղ. Դիպեդի բարձր լեռներն ընտիր այծեր կը սնուցանեն, որոնց բարակ մաղերովը քաշմիրի գոնիւ հիւսուածքներ կը շինուին. սոսկ ալ առատ ոսկւոյ հանքեր ունին: Բաց ի այս բերքերէն Զինաստան ղուրս կը ղրկէ նաև մետաքս, յախճապակի, թուղթ և անուանի մելան:

ՃԱՒՈՆ

138. ԴԻՐՔ ԵՒ ԿՂԶԻՔ ՃԱՒՈՆԻ. — Ճաւոնի կայսրութիւնն՝ Ասիոյ արեւելեան կողմը կ'ինկնայ, ուսկից զատուած է ծովով մը որ իւր անունը կը կրէ. և չորս մեծ կղզիներէ ու արշիպեղագոսէ մը կը ձևանայ. որոնք են, Եսոյ, Ռուսաց Դարրաքայի կղզւոյն արևելեան հարաւային կողմը.

Ճաւոնաց զգեստուն ձևը

Նիֆոն, մէջտեղը, Ճաւոնի ամենէն մեծ կղզին.
Սիքոք, Քիուշիու } Նիֆոնի հարաւային կողմը.
Քուրիլեաց արշիպեղագոս, որուն հիւսիսային կողմը ի Ռուսաց ստացան, անոր փոխարէն տալով Սախալիան կղզին:

138. Քանի՞ մասն կը բաժնուի Ճաւոն:

139. Մայրաքաղաքները են, Ետոյ կամ Դոքիոյ, (բն. 1,160,000), արդի մայրաքաղաքը Նիֆոն կղզւոյն մէջ, Ասիոյ ամենէն գեղեցիկ քաղաքներէն մին. հոս կը նստի Միքատոն, որ է գերագոյն կայսր և գլուխ կրօնից. — և Միաքոյ կամ Քիոտոյ, (բն. 280,000) հին մայրաքաղաքը, Նիֆոնի հարաւային կողմը, որ Ճաւոնի ուսումնական քաղաքն է:

Նշանաւոր քաղաքն են, Նանկասաքի, (բն. 55,000) Քիուսիու կղզւոյն արևմտեան կողմը, այն հինգ քաղաքներէն մին, որոնց հետ ներելի է Եւրոպացւոց վաճառակիլ: — Օսաքա, (բն. 476,000), Միաքոյի արևմտեան հարաւային կողմը. գեղեցիկ ծովային քաղաք է, նոյնպէս բաց Եւրոպացւոց: — Եոքոհամա (բն. 125,000) նոր և վաճառաշահ քաղաք է, բանուկ նաւահանգիստ ընդմէջ Ճաւոնի, Եւրոպիոյ և Միացեալ Նահանգաց:

Ճաւոն 1895ին Զինաստանի վրայ տարած յաղթութեամբ՝ առաւ իրմէ Դայ-վան կամ Ֆորմոզա մեծ կղզին, որ կ'ինկնայ Զինու հարաւ. արևելեան կողմն:

140. Տարածութիւն, բնակիչք. կրօնք, վարչութիւն. — Ճաւոնի Ասիոյ հիւսիսային արևելեան կողմը բռնած դիրքը նման է Բրիտանական կղզեաց Եւրոպայի հիւսիսային արևմտեան կողմը բռնած դիրքին: Տարածութիւնը գրեթէ 382,000 քառակուսի քիլոմէդր կը համարուի, և բնակիչքը 41,000,000, որ Մալայեզի ցեղէ են հաւանօրէն: Ճաւոնի մէջ երկու աղանդ կը տիրէ գլխաւորապէս. Ա. Սինդոյի աղանդը, կայսրութեան հին կրօնքն, որ ուրիշ տեղ չէ գտնուիր, և որոյ հիմն է դիւցազանց պաշտամունքը. Բ. Պուտտայականութիւն, որ հինգերորդ դարուն կիսուն մը տաւ ի Ճաւոն, և ներկայապէս ամենէն տարածուած աղանդն է. կը գտնուին նաև Կոնֆուկեան աղանդաւորներ: Վերջին տարիներուս մէջ կրօնից ընդհանուր ազատութիւն տրուեցաւ. և սկսաւ հոն քրիստոնէութիւնն տարածուիլ: Տէրութեան վարչութիւնը բոլորովին Միքատոյ ձեռքն է, որ երկրին հին չաստուածոց ցեղէն իջած կը համարուի, և դեռ ևս աստուածական պատիւ ունի, մանաւանդ Սինդոյի աղանդի հետևողներէն, որոնց երևելի գլուխն է: Երկոտասաներորդ դարուն մէջտեղերը՝ Դայդոնը կամ փոխ-

139. Ի՞նչ քաղաքներ ունի Ճաւոն:
140. Որո՞նք են Ճաւոնի աղանդները:

արքային, որ մինչև այն ժամանակ զինուորական իշխանութեան գլուխ էր՝ կառավարութեան մեկ մասն յափըշտակութեամբ իրեն սեփականեց, առանց իւր մեծարանքը պակասեցընելու առ սրբազան անձն Միքատոյի, որուն առաջին հպատակն ինքզինքը կ'անուանէր: Սակայն 1869ին վերջը Միքատոյ զարձեալ իւր ամբողջական իշխանութիւնը ստացաւ, և Դայգուն ստիպուեցաւ հնազանդելու երկրին ուրիշ կաւուածական իշխանաց պէս: Իր ուսումնական հաստատութիւններովը, ցամաքային և ծովային զօրութեան կարգաւորութեամբն, Եւրոպայի յառաջադէմ ազգաց հաւասարելու վրայ է ձգտուն:

141. Կլիմայ, բերք, ձեռագործք. — Ձաբոնի կղզիք լեռներով ընդհատեալ են և ստէպ երկրաշարժի ու սարսափելի փոթորկաց ենթակայ: Բարեխառնութիւնը չատ փոփոխական է. ձմեռները ցուրտ, ամառները կիզիչ, և մըրիկք յաճախ: Երկիրը կը պարունակէ, կ'ըսեն, ոսկւոյ, արծաթի, պղնձի և ածուխ քարերու հանք. բայց քիչ բարեբեր է, և բուսաւցածն ալ բնակչաց անխոնջ աշխատութեամբն է, որք Ասիոյ ամենէն ճարտարարուեստ ազգն կը համարուին, և կ'արտադրեն մետաքսեայ բանուածք, բամբակ, յախճապակի, թուղթ, և այլն:

141. Ի՞նչ բերք ունի Ձաբոն:



Ա Փ Ր Ի Կ Է

142. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ. — Ափրիկէ հին աշխարհին երրորդ մասն է. մինչև մօտ տարիներս մեծ թերակղզի մ'էր, Սիւէզի պարանոցով Ասիոյ հետ կպած ըլլալով. այժմ ջրանցքով մը զատուած է:

ՍԱՀՄԱՆՔ. — Ափրիկէի սահմանքն են, հիւսիսէն՝ Միջերկրական ծով, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Մեծ ովկիանոս, և արևելքէն՝ Հնդկաց ծով, Կարմիր ծով և Սիւէզի ջրանցքը:

143. Տարածութիւն և անապատք Ափրիկէի. — Ափրիկէ գրեթէ 29,700,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն ունի. սակայն այս անհուն ընդարձակութեան մեկ մասը, մանաւանդ հիւսիսային կողմերը, մեծ աւազուտ անապատներ կը գրաւեն: Բայց կը գտնուին ասոնց մէջ չատ մը բարեբեր տեղիք Ոասիս անուամբ, կղզեաց նման շրջապատեալ այս ահագին աւազի ովկիանոսներէ, որոնք յաճախ հողմով տեղափոխելով՝ հանտեղէն անցնող ճանապարհորդաց և վաճառուց կարաւաններն իրենց մէջ կը թաղեն:

Մինչև անցեալ դարուն վերջը՝ Ափրիկէի ծովեզերքը միայն յայտնի էին Եւրոպացւոց. սակայն չատ ճանապարհորդաց յանդուգն գննողութեանց արդեամբք՝ այժմ այս մեծ թերակղզւոյս ներքին կողմերն ալ ըստ կարի ծանօթացած են:

Բնակիչք և կրօնք. — Ափրիկէի բնակիչքը որոշ չի գիտցուիր. գրեթէ 150,000,000 կը համարուի. հիւսիսային կողմը կը բնակին Արաբք, որ զմահմետականութիւնը հետ տարածեցին, և խառնուած են Ղփտիներուս, Պերպերներուս,

142. Ափրիկէի սահմաններն որո՞նք են:
143. Ո՞րչափ է Ափրիկէի տարածութիւնը:

և Մաւրիտանացւոց հետ, որք աշխարհին հին ժողովուրդքն էին. մնացած բնակիչքը սեմմորթ ցեղին կը վերաբերին և կոպաշաք են: Ծովեզերաց երկայնութեամբ և կղզեաց մէջ տարածեալ եւրոպական գաղթականութիւնք՝ քրիստոնեայ ժողովուրդ կը պարունակեն, որոնց մեծ մասը կաթողիկեայք են:

Ալեպցոյ Մանպարի

Կլիմայ, բերք, անասուններ. — Ափրիկէ, զոր գրեթէ մէջտեղէն կը կարէ հասարակածը, ամբողջ տարին արեգական ուղղահայեաց ճառագայթներովը կը խարշի: Երկու եղանակ միայն ունի. չորն՝ յորում ջերմութիւնը գոգցես անտանելի է, և անձրևայինն՝ որ այրեցեալ գետնոյ տակ երեք ամիս գրեթէ անընդհատ կը տևէ, և ողողել կու տայ այն երկիրներուն մէջ բղխեալ գետերը. բայց այս ողողմունքս փոխանակ վնասելու բուսաբերութեան՝ պարարտացուցիչ տիղմ մը կը սփռեն. անանկով ամէն առոգեալ երկիրները, մանաւանդ ծովափանց մօտ, զարմանալի բարեբերութիւն մ'ունին: Բուսուցած ծառերուն մէջ գլխաւորն է պտղապտղ, որոյ բունն երբեմն մինչև 33 մէդր չրջապատ ունի:

Ափրիկէ հարուստ է գոհարեղինաց կողմանէ: Բազմաթիւ են ընտանեկան կենդանիք, ինչպէս վագր, առիւծ, ընձառիւծ, բորենի, և չնագայլ. գետոց մէջ ահագին կոկորդիլոսներ կան, անտառաց մէջ վիթխարի օձեր, որոց ամենէն նշանաւորն է պօա ըսուածը: Կը գտնուին զարձեալ փիղ, ռնգեղջիւր, ձիագետի, ընձուղտ, գոմէշ, ուղտ, և տեսակ տեսակ յամոյրներ, վիթք և նմանիք:

144. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՓՐԻԿԷԻ. — Ափրիկէ կրնայ 17 գլխաւոր մասանց բաժնուիլ, որոնք են:

2 արևել. հիւս. կողմը	Եգիպտոս, Նուպիոյ հետ.
	Եթովպիա:
6 արևմտ. հիւս. կողմը	Ալճերի.
	Մարոք.
	Պէյլիքիւն Դրիբոլիի.
	» Դունուզի[1].
	Սահարա.
	Սենեկամպիա:
2 արևմտ. հար. կողմը	Կուինէա հիւսիսային.
	Կուինէա հարաւային:
3 մէջտեղը	Սուտան.
	Նիկրիտիա հարաւային.
	Քաֆրաստան:

144. Քանի՞ մասունք կը բաժնուի Ափրիկէ:

1. Այս չորս տէրութիւնք երբեմն ամէնքը մէկտեղ Պէրպէրիստան կամ Բարբարոսաց աշխարհ կը կոչուին:

3 արևել. հար. կողմը { Այան. Զանկեպար. Մոզամպիք։

1 հարաւային կողմը Բարեյուսոյ Գլխոյն վարչութիւնը, և Օդդենդացւոց երկիրը։

ԿՂԶԻՒ. — Ափրիկէ չրջապատեալ է չատ մը կղզիներէ, որոնք ցրուեալ են Ատլանտեան ովկիանոսին և Հնդկաց Ծովուն մէջ. գլխաւորն է Մատակասգար մեծ կղզին, արևելեան հարաւային կողմը։

145. ԾՈՑՔ. — Բաց ի Ատենի ծոցէն, որուն վրայ արդէն խօսուեցաւ (թիւ 93), Ափրիկէի եղերաց վրայ վեց շքեղ ծոցեր կան որոնք կը ձևանան,

1. կարմիր ծովէն,

Սիւեզի ծոցը, Եգիպտոսի արևելեան կողմը.

2. Միջերկրական ծովէն,

Գապեսի ծոց, Սիրդի ծոց } Պէրպէրիստանի հիւսիսային կողմը.

1. Ատլանտեան ովկիանոսէն,

Կոռիվեղոյ ծոցն, որ հիւսիսային և հարաւային կուինէյ մէջ կը մտնայ և ուրիշ երկու ծոցեր կը ձևացընէ, որոնք են

Պենեն, Պիաֆրա } հիւսիսային կուինէյ եղերքը։

146. ՆԵՂՈՒՑՔ. — Բաց ի ձիպրալդարի և Պապ-իլ-Մանտեպի նեղուցներէն, որոնք առաջ յիշուեցան (տես թիւ 20 և 94), կայ Ափրիկէի արևելեան հարաւային կողմը,

Մոզամպիքի չրանցքը, ընդ մէջ Մոզամպիքի ափանց և Մատակասգարի։

147. ԳԵՏՔ. — Ափրիկէի հօթն գլխաւոր գետերէն

145. Որո՞նք են Ափրիկէի գլխաւոր ծոցերը։
146. Որո՞նք են Ափրիկէի գլխաւոր նեղուցները։
147. Որո՞նք են Ափրիկէի գլխաւոր գետերը։

1. կը թափի Միջերկրական ծովը.

Նեղոս, որ արևելքէն կապոյտ Նեղոսի և հարաւէն Սպիտակ Նեղոսի ճիւղերէն ձևանալով՝ կ'առնդէ զՆիկրիտիա, Սուտան, Եթովպիա, Նուպիա և Եգիպտոս։

5. Ատլանտեան ովկիանոսին մէջ.

Սենեկալ, Կարնպիա } որ կը թրջեն զՍենեկամպիա.

Նիկեր, որ Սուտանի մէկ մասէն կ'անցնի և կը թափի Կուինէյ ծոցին մէջ.

Գոնկոյ կամ Զայիրէ կամ Լիվինկսթոն, որ խորերէն կուգայ և կը թրջէ հարաւային Կուինէյան.

Կարիէր կամ Օրանժ, որ կը թրջէ Օդդենդացւոց աշխարհը։

1. Մոզամպիքի չրանցքին մէջ.

Զամպեզ, որ կը թրջէ զհարաւային Նիկրիտիա, Քաֆրաստան և Մոզամպիք։

148. ԼԻՃՔ. — Ափրիկէի լիճերը քիչ ծանօթ են. գլխաւորներն են.

Զատ, Սուտանի մէջ.

Տեռնգեա կամ Զանա, Եթովպիոյ մէջ, որուն մէջէն կ'անցնի կապոյտ Նեղոսը.

Ռոքերեվէ կամ Վիկտորիա-Նիանզա.
Ըմվոռդա-Նգիկե կամ Ալպերդ-Նիանզա.
այս երկու լճերուն մէջէն կ'անցնի Սպիտակ Նեղոսը.
Լոռթա-Նգիկե.
Դանկանիքա կամ Ռեմիմի.
Նիասսա կամ Մարավի.
Պանկոռեղօ.
Շիրվա.
Ընկամի, արևմտեան հարաւային կողմը.
} Նիկրիտիոյ, և Քաֆրաստանի մէջ։

149. ՀՐՈՒԱՆԴԱՆՔ. — Ափրիկէ գլխաւոր տասն հրուանդան ունի։

148. Որո՞նք են Ափրիկէի գլխաւոր լճերը։
149. Որո՞նք են Ափրիկէի գլխաւոր հրուանդանք։

1. *Հիւսիսային կողմը.*

Պոն, Պէրպերիստանի հիւսիսային կողմը:

3. *արեւմտեան կողմը.*

Պոյատոր, Սպիտակ Գլուխ } *Սահարայի արեւմտեան կողմը.*

Դալարի Գլուխ, Սենեկամպիոյ արեւմտեան կողմը.
Բաղնա, հիւսիսային Կուինէոյ հարաւային կողմը.
Լորեզ, երկու Կուինէայից մէջտեղ:

2. *հարաւային կողմը.*

Գլոռիս Բարէյոռսոյ. Ակոշհաս կամ Աղաղնց Գլուխ. } *Բարէյոռսոյ Գլխոյ կառավարութեան հարաւային կողմը.*

2. *արեւելեան կողմը.*

Գորրիհենդես Գլուխ, Մոզամպիքի ծովեզերքը.
Կոշտրտաֆոռի, Այանի արեւելեան հիւսիսային եզերքը:

150. ՇՂԹԱՅՒ ԼԵՐԱՆՑ. — *Գլխաւորապէս հինգ կը համարուին.*

Ատլաս, Պէրպերիստանի մէջ.
Քոնկ լեռները, Կուինէոյ հիւսիսային կողմը.
Լոռանի լեռները, Ապիսինիոյ հարաւային կողմը.
Քենիա (6000 մ.) և Քիլիմանճարոյ (5600 մ.) լեռները, հարաւային Նիկրիտիոյ արեւելեան կողմը.
Շնեօվպերկ և Նիոռվիվիտ, Օդդենդացւոց երկրին արեւելեան հարաւային կողմը:

150. *Քանի՞ են Ափրիկէի լերանց շղթայք:*

ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ՆՈՒԻԱ

151. ՍԱՀՄԱՆՔ. — *Եգիպտոսի սահմանքն են, հիւսիսէն՝ Միջերկրականը, արեւմուտքէն՝ Լիբիոյ անապատը, հարաւէն Ապիսինիա և Սուտան. և արեւելքէն՝ Կարմիր ծով, և Սիւէզի ջրանցքն որ զՄիջերկրականը Կարմիր ծովուն հետ կը միացընէ:*

Մայրաքաղաքն է Գահիրէ, (բն. 375,000), Սուրբն Եգիպտոսի մէջ Նեղոսի ալ ափանց մօտ:

Նշանաւոր քաղաք են, Աղեքսանդրիա, հիւսիսակողմը, (բն. 250,000), Նեղոսի ձեւացուցած տէլդային առջև Միջերկրականին վրայ, Եգիպտոսի ամենէն բանուկ



Գահիրէ

և վաճառաշահ նաւահանգիստը. այս քաղաքս երթալով չէննալու վրայ է: — Ռոզէդ կամ Ռաշիտ, (բնակիչ 17,000), և Տամիադ, (բն. 38,000), նշանաւոր նաւահանգիստներ են Նեղոսի երկու գլխաւոր գետախառնուածքներուն վրայ: — Մանսուռահ: — Դաղիդահ (բն. 35,000): — Զաղիկազիկ (բն. 20,000), – Իսմայիլիա: – Բորդ–Սայիտ (բն. 17,000) Միջերկրականին վրայ՝ կը-

151. *Որո՞նք են Եգիպտոսի սահմանքը, և գլխաւոր քաղաքները:*

բանջքին բերանը բանուկ նաւահանգիստ է։ — Սիւեզ, (բն. 15,000), նաւահանգիստ Կարմիր ծովուն վրայ, որուն անուամբ կը կոչուի նաև ջրանջքը։

Սիուդ, (բն. 30,000), վերին Եգիպտոսի արդի մայրաքաղաքը. հինն է Ճիրճեհ։ — Հարիւրդռնեանի Թուրքի աւերակները կը տեսնուին Նեղոսի երկու ափանց վրայ, ուր կան Քառնակ և Լուքսոր գիւղաքաղաքները։ — Մեմֆիեդ — Այսու գեղին մօտ հին թագաւորաց գետնադամբանք կան, ինչպէս նաև ժողովրդեան ընդարձակ գերեզմաննոցը։

Միջին Եգիպտոսի մէջ, Մեմֆիս քաղքին տեղւոյն մօտ, քիչ մը հիւսիսային կողմը, կան հռչակաւոր Բուր-



Աղեքսանդրիա

գերը, որոնք քսան և մի են թուով և երեսի թէ թագաւորաց գերեզմանք էին. գրեթէ չորս հազար տարուան հնութիւն ունին. Կէոփսի բուրգը՝ գրեթէ 143 մէդր բարձրութիւն ունի։ Այսր մօտ է Սփինքս անուանի արձանը, որ 30 մէդր բարձրութիւն ունի։

Յիշատակութեան արժանի են նաև մումիայք, որ աղէկ զմբռնուած ըլլալնուն՝ անարատ մնացած են։ Ասոնցմէ անթիւ կը գտնուին Սաւուռն ըսուած քարայրին մէջ, որ Միջին Եգիպտոսի հարաւային մասին մէջն է։

152. ՆՈՒԻՊԻԱ, *որ հպատակ է Եգիպտոսի, իրեն գլխաւոր քաղաք ունի Էլ–Օրտե կամ Տոնկոլա, Նեղոսի ձախակողմեան ափանց վրայ. Ոհատի Հալֆա և Պէրպէր, Նեղոսի աջ ափանց վրայ։*

152. *Որո՞նք են Նուպիոյ գլխաւոր քաղաքները։*

Նուպիոյ հարաւային մասն կ'ըսուի Սուտան արևելեան. նշանաւոր քաղաքն են, Քարդոֆան, հարաւակողմը, Նեղոսի երկու բազկաց խառնուրդին վրայ. նոր քաղաք է և կեդրոն վաճառականութեան վերին Նեղոսի՝ Եգիպտոսի և Եւրոպայի հետ։ — Քասալա, Թագայի գլխաւոր քաղաքն, որ Իտալացւոց է։ — Սոռաքիմ (բն. 8,000) կարմիր ծովու վրայ նաւահանգիստ է։ — Սեննաար, Տեմպէա լճէն եկլող Նեղոսի մէկ ճիւղին վրայ չինուած, որ կ'ըսուի Պահր–էլ–Ազրաք, այսինքն Կապոյտ գետ. համանուն երկրին մայրաքաղաքն է։ — Ֆաշէր, Տարֆուրի մայրաքաղաքն։ — Էլ Օպէիտ, Քորտոֆանի մայրաքաղաքն։



Բրգունք Եգիպտոսի

153. ՈԱՍԻՍՔ. — *Եգիպտոսէն կախումն ունեցող ոսախաներուն գլխաւորքը՝ հետևեալներն են, երկրին արևմտեան կողմը.*

Սիուտահ, ուր էր երբեմն Ամմոնի Աբրամազդայ երևելի մեհեանը.

Էլ–Պահարիէ, կամ Փոքր Ոասիս, դէպ ի հիւսիս.

Տաքէլ և Էլ–Քարձեհ կամ Մեծ Ոասիս, դէպ ի արևելեան հարաւային կողմը։

154. *Զանազան գիտելիք. — Եգիպտոս Աֆրիկէի ամենէն ծանօթ և ամենէն նշանաւոր աշխարհն է, մանաւանդ պատճառաւ հին հոյակապ շինուածոց պատճառաւ, որոնք անթիւ են։*

155. *Քանի՞ են Եգիպտոսի գլխաւոր Ոասիսք։*

156. *Ի՞նչ կայ գիտնալիք Եգիպտոսի և Նուպիոյ վրայ։*

Եգիպտոս հարկատու երկիրներով 2,987,000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն ունի. սակայն ասոր մեծ մասն, արևմտեան և արևելեան կողմը, աւազուտ և անբեր անապատներ կը գրաւեն: Իրապէս ղեգիպտոս կազմողն է նեղոսի նեղ հովիտը, որ ծովուն մօտ լայնելով, կը պարարտացընէ իւր պարբերական ողողմամբն, որ այն երկրին մէջ անձրևին քիչութեան պակասը կը լեցընէ: Հոն կը բուսնին արմաւենի, նարընջենի, շաքարի եղէգ, բամբակ, վուշ, կանեփ, բրինձ, ցորեն, պապիր, որուն կեղևները հին ատեն գրելու կը գործածէին. ունի գեղեցիկ մարմարիոններ, աղնիւ ալաբաստր և ժմրուխտ:

Եգիպտոսի բնակիչքը 6,800,000 են, իսկ հարկատու երկիրներով 17,600,000. որ այլևայլ ազգաց կը բաժնուին. այսինքն Ղիտիք, հին եգիպտացիներէն սերեալ, որոնք քրիստոնեայ են. Արաբք, որոնց թափառական ցեղերն անապատներուն մէջ կը շրջին. Տաձիկք, աշխարհին տիրապետողքն, որոնք քաղաքաց մէջ կը բնակին. և շատ մը եւրոպական ազգեր, ինչպէս Անգղիացիք, Իտալացիք, Յոյնք, Հայք (20,000) են: Եգիպտոս Թուրքիոյ մասն կը կազմէ. սակայն փոխարքայք (Խդիվ) ժառանգական իշխանութիւն ունին: Եւրոպական քաղաքակրթութիւնն Եգիպտոսի մէջ մտցընելու շատ ջանք եղած է. անոր համար ալ զգալի յառաջադիմութիւն կը նշմարուի:

Եգիպտոսի փոխարքային իշխանութիւնն Նուպիոյ և Արևել. Սուտանի մէջ շատ նուաճած է 1882էն ի վեր, յորում ծագեցաւ ապստամբութիւնն Մահեհեանց, որ այսպէս կոչուեցան իրենց գլխաւորին անունէն. և իրենց ապստամբութիւններովն շատ վնաս տուին եգիպտական տէրութեան, զոր պաշտպանելու և բարեկարգելու պատրուակաւ Անգղիա նոյն թուականէն ի վեր յեգիպտոս հաստատուեցաւ:

ԱՊԻՍԻՆԻԱ ԿԱՄ ԵԹՈՎՊԻԱ

155. ՍԱՀՄԱՆՔ. — Ապիսինիոյ սահմանքն են, հիւսիսէն՝ եգիպտական Նուպիա, արևմուտքէն՝ Նուպիա և Սուտան, հարաւէն՝ Նիկրիտիա և Ազանի ծովափունքը,

155. Որո՞նք են Ապիսինիոյ սահմանքն, և գլխաւոր քաղաքները:

և արևելքէն՝ Պապ–իլ–Մանտէպի նեղուցն և Կարմիր ծով:

Ապիսինիա չատ գաւառներու կը բաժնուի:

Գլխաւոր քաղաքն են, Ատուա, արևելեան հիւսիսային կողմը, Դիկրէ Թագաւորութեան մայրաքաղաքը, որուն մէջ կայ նաև Աքսում, հին մայրաքաղաք Ապիսինիոյ, և Ափրիկէի գեղեցկագոյն քաղաքներէն մին: — Կոնտար՝ Տեմպէա կամ Զանա լճին հիւսիսային կողմը, Ամհարա Թագաւորութեան մայրաքաղաքը: — Ազքոպէր, հարաւակողմը, Շոա Թագաւորութեան մայրաքաղաքը:

156. Զանազան գիտելիք. — Եթովպիոյ մակերևոյթը 1,190,000 քառակ. քիլոմէդր կը համարուի, և բնակիչք 3,000,000, որոնց մէկ մասը քրիստոնէութիւն կը դաւանի, այլ հրեական և աւելորդապաշտական սովորութիւններով խանգարած: Առաջուց՝ ինքնակալն, որ կը կոչուէր Մեծն–Նէկուս, միայնակ կ'իշխէր Ապիսինիոյ վրայ. հիմա երկրին մէկ մասին ուրիշ իշխաններ կը հրամայեն, որոնք Ափրիկէի վարի կողմերէն յառաջ եկած վայրագ և բարբարոս կաղնաս ցեղէն են: Եթովպիա՝ Եգիպտոսի և Նուպիոյ ամէն բերքը կը բուսցընէ: Կ'ելլէ նաև ոսկւոյ փոշի, ջայլամի փետուր և փղոսկր:

Իտալիա 1870էն ի վեր Ապիսինիոյ եզերաց վրայ հաստատուած է. (տ. թ. 71):

ՊԷՐՊԷՐԻՍՏԱՆ

157. ՍԱՀՄԱՆՔ. — Պէրպէրիստանի սահմանքն են, հիւսիսէն՝ Միջերկրական ծով, Արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Սահարա, և արևելքէն՝ Եգիպտոս:

ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Պէրպէրիստան չորս տէրութիւններէ կը բաղկանայ, որոնք արևելքէն արևմուտք կը ձգուին.

Դրիքոլիի և Դուռնուզի պէյութիւնքը, Ալձէրիի գաղղիական նահանգն, և Մարոքի կայսրութիւնը:

156. Ի՞նչ գիտէլիք կայ Եթովպիոյ վրայ:
157. Զրուցէ Պէրպէրիստանի սահմանքը:

ԴՐԻԲՈԼԻ ԿԱՄ ԴԱՐԱՊՈՒԼՈՒՍ

158. Դրիբոլիի Պէյութեան (բն. 1,000,000) մայրաքաղաքն է Դրիբոլի կամ Դարապուլուս, (բն. 30,000),



Գեղգիանք ի Սիւրմէնէ, ի Դրիբոլի պէյութեան

Միջերկրականին վրայ նաւահանգիստ. հոս կը նստի պէյն կամ իշխանը։

158. Որո՞նք են Դրիբոլիի գլխաւոր քաղաքները։

Նշանաւոր քաղաքք են, արեւելեան կողմը Պենղազի (Բերինիկէ) Միջերկրականի վրայ բանուկ նաւահանգիստ։ — Տրիւհի, Պարքահի անապատին գլխաւոր քաղաքը։ — Օձիւհ, համանուն ոսպիսին մէջ։

Հարաւակողմը՝ Մուրզուք, Ֆէզզանի գլխաւոր քաղաքը։

Արեւմտեան հարաւային կողմը՝ Կատամէս, համանուն ոսպիսին մէջ։

ԴՈՒՆՈՒԶ

159. Դունուզի Պէյութիւնը (բն. 2,000,000) Գաղղիա իր պաշտպանութեան տակ առած է 1881ին ի վեր, և կամաց կամաց իրեն կալուած ընելու վրայ է։

Մայրաքաղաքն է Թունիզ, (բն. 145,000), Միջերկրականին վրայ նաւահանգիստ, Կարթեգոնի աւերակներէն քիչ հեռու։ Պէյը հոս կը նստի. պալատը քաղքէն 2 քիլոմէդր հեռու է, և կը կոչուի Պարտոյ, զոր ամրացուցած են։ — Պիզերդա, Աֆրիկէի ամենէն հիւսիսային քաղաքը, զոր Գաղղիացիք ամրացընելու եւ տևէ են։

Նշանաւոր քաղաքներ են, Սֆաքս, Սուզա, և Գաբէս, արեւելեան կողմը նաւահանգիստներ։

Խայրուան, ներսերը, (բն. 60,000). սրբազան քաղաք կը համարուի։

159. Որո՞նք են Դունուզի գլխաւոր քաղաքները։

ԱԼՃԷՐԻ

160· Ալճէրի, (բն· 4,700,000) Գաղղիոյ գաղթակա-
նութեանց ամենէն նշանաւորն է, որուն տիրեցին 1830ին։
Սահմանն է, հիւսիսէն՝ Միջերկրականը, արևելքէն՝ Դու-



Ճիգայիր

նուզ, արևմուտքէն՝ Մարոք, և հարաւէն՝ Սահարա։ Ե-
րեք գաւառաց կը բաժնուի։

160· Որո՞նք են Ալճէրիի գլխաւոր քաղաքները։

Մայրաքաղաքն է Ալժէ կամ Էլ Ճէզայիր, (բնակիչ
85,000), նաւահանգիստ Միջերկրականին վրայ, ամփի-
թատրոնաձև շինուած. երկու մասն ունի, մէկը՝ հին
արաբական քաղաքը, և երկրորդը՝ նոր գաղղիական քա-
ղաքը։

Կոնստանտին

Նշանաւոր քաղաքք են, արևմտեան կողմը՝ Օրան,
(բն· 70,000), գաւառին գլուխ. ամուր բերդաքաղաք
է։ — Մուդաքահիմ (բն· 15,000) բանուկ նաւահան-
գիստ։ — Մարգարա, Ապտ էլ Քատէրի մայրաքաղաքն
էր։ — Դլիմսեն, հին արաբական շէնքեր ունի։

Ա.րևելեան կողմը՝ Ֆիլիբվիլ, (բն. 22,000) ծովեզերքը, կառուցեալ ի Գաղղիացւոց յամին 1838։ — Պօնա, (բն. 30,000), նաւահանգիստ. և Գօնդաւանդիւն, (բնակ. 45,000), որուն տիրեցին Գաղղիացիք պատերազմաւ 1837ին, գաւառին գլուխ. հռոմէական գեղեցիկ աւերակներ կան։

ՄԱՐՈՔ ԿԱՄ ՄԱՂՐԲՊ

161· **Մաղրբպի կայսրութեան** (բն. 8,400,000) մայրաքաղաքն է **Մարոք**, (բն. 50,000), արևմտեան հարաւային կողմը. չրջակայքը բարերեր են։

Նշանաւոր քաղաք են, Ֆէս, (բն. 150,000), երկրորդ մայրաքաղաք և սրբազան քաղաք կը համարուի. մետաքսի, բրդեղինաց և կաշւոյ ընտիր ձեռագործներ ունի։ — **Դեդուան**, Միջերկրականի վրայ, անուանի են սրեղէն զէնքն։ — **Մէքինէզ**, (բն. 20,000), ուր կը բնակի սովորաբար Մարոքի կայսրը։ — **Դանձեր**, Ատլանտեան ովկիանոսին մէջ, Ճիպրալդարի նեղուցին արևմտեան մուտքին վրայ. շատ բանուկ նաւահանգիստ է։ Հարաւային կողմը՝ **Մոկատոր**, (բն. 20,000), Ատլանտեանին վրայ, վաճառաշահ նաւահանգիստ է։

Սպանիոյ կը վերաբերին **Միջերկրականի** վրայ **Սէուտա** բերդաքաղաքն Ճիպրալդարի դիմաց և **Բենեռո տէ Վէլէզ, Ալհուզեմաս** և **Մելիլլա** ամրոցներն որ արգելավայրի կը ծառայեն։

162· **Ջանազան գիտելիք**· — Պէրպերիստան թէպէտ Գաղղիոյ չորս մեծութիւնն ունի, այսինքն գրեթէ 2,315,000 քառակուսի քիլոմէտր, սակայն հազիւ 14,500,000 բնակիչ ունի, որոնց մեծ մասն մահմետական է. կան նաև շատ Գաղղիացիք, Սպանիացիք և Հրեայք։ Ինքնիշխան և բացարձակ կառավարութիւն ունին Պէրպերիստանի իշ-

161· Որո՞նք են Մաղրբպի գլխաւոր քաղաքները։
162. Ի՞նչ կայ գիտնալիք Պէրպերիստանի վրայ։

խանք, բայ ի Ալճերիէն՝ որուն վերջին էմիրն Ապտել-Քատէր և ամենէն զօրագոյնն՝ երկար տաեն քաջութեամբ ընդդիմացաւ Գաղղիացւոց տիրապետութեան։ Մարոքի իշխանը՝ կայսր կ'ըսուի, Դուննուղի և Տրիբոլիի իշխանքն՝ պէյ։ Դաշտաց մէջ թափառական Արաբք, և Պէրպերք որ

Բուեցոյտոպիոն մեհեան

ընդհանրապէս Ատլաս լերանց վրայ կը բնակին, չեմ տնուտամբ տառնձին գլուխներու կը հնազանդին Արաբիոյ պէս։ — Պէրպերք երկրին բնիկ ժողովուրդն են, ուսկից աշխարհն ալ Պէրպերիստան կոչուած է։

Ատլասի շղթայն որ զՊէրպերիստան արևմտեաքէն արևելք կը կտրէ, երկու երկիրներու կը բաժնէ զայն, որոնք բո-

լորովին տարբեր կլիմաներ ունին: Հիւսիսային կողմն որ Ասիա՝ լեռներով պաշտպանեալ է անապատի կիզիչ հովերուն ձնասակար ազդեցութենէն, ուր որ ոռոգեալ է՝ հիանալի բուսաբերութիւն մը կը ներկայացընէ, և Եւրոպայի զանազան աշխարհաց ցորեն կը մատակարարէ: Ձիթենի,



Ցորեցքաղում Մատղեց գետին վրայ

նշենի, թզենի, լիմոնենի և նարնջենի առատ կը պտղաբերեն: Հարաւային կողմը կայ Պէյտ-էլ-Ճերիտ կամ Երկիր Արեւաւեւելեաց, որ անապատի նմանութիւն ունի, և իւր տափարակ, աղտոտ և գրեթէ անբեր դաշտագետիններէն՝ յաճախ մարախներու ամպով կը ծածկուին: Պերպերիստան Ափրիկէի ամէն ձնասակար կենդանիներն ունի. ամենէն ահա-

ւորն Ատլասի առիւծն է: Օգտակարներուն մէջ յիշատակութեան արժանի է տաճիկ ուղտն, որ այնքան արագընթաց է՝ մինչև 380 քիլոմէտր ճամբայ կրնայ կտրել օրուան մը մէջ:



Պէյսիկէտ տաճկական

ՍԱՀԱՐԱ.

163. ՍԱՀՄԱՆՔ. — Սահարայի կամ Մեծ–Անապատին սահմանքն, որուն արևելեան մասը Լիբիոյ Անապատ կ'անուանուի, հետևեալներեն են. հիւսիսէն՝ Պերպերիատան, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Սուտան, և արևելքէն՝ Եգիպտոս և Նուպիա:

ԺՈՂՈՎՈՒՐԴՔ ԵՒ ՔԱՂԱՔՔ. — Մեծ–Անապատին նուազ տաք եղող մասերուն և բազմաթիւ ոասիսներուն մէջ կը բնակին կէս վայրենի ժողովուրդներ, որոնց մէջ գլխաւոր ցեղերն են հետևեալք.

Դիպպոյ, արևելեան հարաւային կողմը.

Թուարեկ, մէջտեղն և հարաւային կողմը, ուր Ղատես անուամբ վաճառաշահ քաղաք մ'ունին, իրենց զօրաւոր բագոյն գլխոյն բնակութեան տեղը.

Թուադ, որ արևմտեան կողմէն մինչև Մարոք կը տարածուին. իրենց մայրաքաղաքն է Ֆէսպի:

164. Ջանազան գիտելիք. — Սահարայի կամ Մեծ–Անապատին տարածութիւնը 4,130,000 քառակուսի քիլոմէտր կը կարծուի, այսինքն Եւրոպիոյ մակերեսութեան գրեթէ վեցերորդ մասը: Ներքին կողմերն անծանօթ են, ինչպէս նաև բնակչաց թիւը, 4,000,000ի մօտ կը կարծուի. Արաբաց և Պերպերներու ցեղ են, կրօնքով մահմետական և շատ մը ազատ գլուխներու կը հնազանդին:

Բնաւ գետ մը Սահարայի մէջէն չանցնիր. հազիւ երկու կամ երեք գետակներ կան, որք Ատլանտեան ովկիանոս կը թափին. ներսերը կը գտնուին քիչ տարածութեամբ քանի մը ջրոյ ընթացք, որ փոքր ձորեր կարելնէն վերջը, զոր բարեբեր ոասիսներու կը փոխեն, աւազներու մէջ կը թաղուին: Այս ոասիսներուն մէջ չինուած են Սահարայի ժողովրդոց քաղաքներն և գիւղերը. բայց բնակչաց մեծ մասը վրաններու ներքև կ'ապրին և ոասիսէ ոասիս կը քալեն իրենց ուղտուց, այծերու և ոչխարներու հօտերն արածե-

163. Որո՞նք են Սահարայի սահմանքը, և գլխաւոր ժողովուրդները:

164. Ի՞նչ գիտելիք կայ Սահարայի վրայ:

լու համար: Շատ անգամ իրենց փնտռած աղբիւրներուն մօտենալու համար կը հարկադրուին պատերազմելու ասիւծներու, ինձերու և ահագին օձերու հետ, որ բուն տէրերն են այս անհուն միայնութեան, ուր կը թափառին նաև ջայլամք և սակաւաթիւ այծեամք: Միակ յարգի ծառերը Սահարայի մէջ՝ են արմաւենին, որուն պտուղն ոասիսներու բնակչաց սնունդն է, և ակոսիայի տեսակ մը՝ ուսկից արաբական խէժ կ'ելլէ:

ՍԵՆԵԿԱՄԲԻԱ.

165. ՍԱՀՄԱՆՔ. — Սենեկամպիա, որոյ անունը Սենեկալ և Կամպիա գետերէն յառաջ եկած է, իրեն սահման ունի, հիւսիսէն՝ Սահարա, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Կուինէա, և արևելքէն՝ Սուտան:

ԺՈՂՈՎՈՒՐԴ. — Սենեկամպիոյ գլխաւոր ժողովուրդներն են

Եոլոֆ,
Ֆուլալ, } դէպ ի արևմտեան հիւսիսային կողմը.
Մանտինկ, դէպ ի հարաւային կողմը.
Քաարդա, արևելեան կողմը.
Ֆուլդա–ձաւռն, մէջտեղը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱԼՈՒՆԻՔ. — Գաղղիացիք, Անգլիացիք և Բորդուգալցիք այս երկրիս մէջ, մանաւանդ ծովեզերաց վրայ, կալուածներ հաստատած են, որոնց գլխաւորներն են Սէն–Լուի (բն. 20,000), Սենեկալ գետոյն կղզւոյ մը վրայ, գաղղիական կալուածոց գլխաւոր քաղաքը: Նոյնպէս Գաղղիացւոց են Տակաւա, Բոտոր Մադամ և Պաթհի, Սենեկալի վրայ. Մետին, արևմտեան կողմն, Կորէա կղզին, և Տաքար, բանուկ նաւահանգիստ, Դալարի Գլխոյ մօտ[1]:

165. Ո՞ր կողմը կ'էյնայ Սենեկամպիա. և Եւրոպայի ո՞ր տէրութիւնք կալուածք ունին հոն:

1. Սենեկամպիոյ մէջ ալ Գաղղիա իր իշխանութիւնն ընդարձակելու վրայ է, ուր արդէն 1 միլիոն հպատակ ունի:

Պատհրդաւդ, Կամպիա գետոյն բերանը, Անգղիոյ կալուածոց գլխաւոր կեդրոնը: Ունին դարձեալ Ալպրետա և Ճորձիաւն:

Քաշէոյ, առաջիններուն արևելեան հարաւային կողմը, Բորդուգալի գլխաւոր կալուածն, և Կեպտ. իրենց կը վերաբերին նաև Պիսակոս կղզիք:

166. Զանազան գիտելիք. — Այս երկրիս տարածութիւնը կը կարծուի 1,100,000 քառակուսի քիլոմէդր, և բնակիչքը 6,000,000. որոնք զանազան ցեղերու կը վերաբերին. հիւսիսայինները մաւրիտանացիք են Միջերկրականի ծովեզերքէն եկած, և կրօնքով մահմետական են՝ կռապաշտութեամբ խառն. հարաւայինները սեւամորթ են և կռապաշտ:

Սենեկամպիոյ ծովեզերաց այն մասունքն որ քիչ բարձր են, և գետոց Եգիպտոսի նման ողողմամբ, և յուլիսէն մինչև հոկտեմբեր պարբերական անձրևներով պարարտացեալ երկիրները, արտաքոյ կարգի բարեբեր են: Այս տեղ պատպաղն հակայածև բարձրութիւն կը ստանայ. արմաւենիք, քօքոյի ծառերը, լիմոնենիք և նարնջենիք մարդուս աչքը կը զաւրացընեն. սակայն միւս կողմանէ անտանելի ջերմութիւնը, վատառողջ օդը, կսկորդիլոսներու և վնասակար սողնոց գարշելի տեսքը, կը նուազեցընեն այս գեղեցիկ երկրին յարգը, ուսկից կ'ելլէ ոսկի, աղաթ, խէժ, պղպեղ, բալասանք, Նայլոսի փետուր, և այլն:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ.

167. ՍԱՀՄԱՆՔ. — Հիւսիսային Կուինէոյ սահմանքն են, հիւսիսէն՝ Սուտան և Սենեկամպիա, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Կուինէոյ ծոցն և հարաւային Կուինէա, և արևելքէն՝ Սուտան:

Այս երկրիս մեծաւ մասամբ տիրած են Եւրոպացիք, մանաւանդ ծովեզերաց:

166. Զրուցէ Սենեկամպիոյ տարածութիւնը:
167. Ո՞ւր կ'իյնայ Հիւսիսային Կուինէա. և որո՞նք են նշանաւոր քաղաքները:

Անգղիացիք ունին արևմտեան կողմն Սիերրա Լէոնէ ափունքն, որուն գլխաւոր քաղաքն է Ֆրիդաւն: Ոսկւոյ ափանց վրայ Գղուխ Բորս, Բրիտդհանզպորկ, Էլմինա: Նոյն գաւառին ներսերը Անգղիացիք մօտերս գրաւեցին Աշանդիի թագաւորութիւնն, գլխաւոր քաղաքն Գումասի:

Տրամիկոյդ ի Ֆրիդաւն

Պէնինի ծոցին մէջ սկսեալ Լագոս գաւառէն մինչև Գամերունի սահմանը:

Գերմանացիք ունին Պիաֆրայի ծոցին մէջ Գամերոնի լերանց և գետին կալուածներն, որոնց գլխաւորքն են Ակուա, Պէղ ևն: Նոյնպէս Տահոմէյի հիւսիս. և արևմտեան կողմերն նոր երկիրներ գրաւելու ետևէ են:

Գաղղիացիք ունին Փոռտկրի ափանց վրայ Մեծն–Պասամ, Ասինի և Տապու։ Պենին ծովին մէջ Գերեաց ափանց վրայ գրաւեցին 1895ին Տահոմէյի թագաւորութիւնը, որուն գլխաւոր քաղաքներն են Ապոմէյ, Բորդո Նովո և Քոթոնու, Պիաֆրայի հարաւակողմն ունին Կապոնի ծովափունքն գլխաւոր քաղաքն Լիթրըվիլ։

Պենինի ափանց վրայ կայ համանուն տեղացի թագաւորութիւնն և մայրաքաղաքը։

Յորենոյ ըսուած ծովեզերայ վրայ 1820ին Ամերիկեան գաղթական ընկերութիւնը փրկանաւորեալ սևամորթաց համար գաղթականութիւն մը հաստատեց Լիպերիա անուամբ, որ յետոյ հասարակապետութիւն մը եղաւ. մայրաքաղաքն է Մոնրովիա (բն. 25,000)։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ.

168. ՍԱՀՄԱՆՔ. — Հարաւային Կուինէա, որ իր մէջ պարունակած թագաւորութեան մ'անուամբ չատ անգամ Գոնկոյ ալ կը կոչուի, իրեն սահման ունի, հիւսիսէն՝ Հիւսիսային Կուինէա, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն և արևելքէն՝ Հարաւային Նիկրիտիա։

Ներսերը նշանաւոր քաղաք է,

Սան–Սալվատոր կամ Պանգա–Գոնկոյ, մայրաքաղաք Գոնկոյի տերութեան որ ծովեզերքէն մինչև Դանկանիքա լիճը կը տարածուի. և կը վերաբերի Ափրիկեան ընկերութեան, որուն անուանական թագաւորն Պելճիքայի Լէոպոլտ Բ. թագաւորն է։

Ծովեզերաց վրայ՝ Լօանկոյ, մայրաքաղաք համանուն թագաւորութեան, որուն թագաւորն ընտրութեամբ կը դրուի։

Բորդուգալցիք մեծ մաս մը կը գրաւեն ատորին Կուի-

168. Որո՞նք են Հարաւային Կուինէոյ սահմանները. և գլխաւոր քաղաքները։

նէոյ, առանց մասնաւոր սահման մ'ունենալու իրենց կալուածոց. ամէնքը մէկտեղ Անկոլայի գաղթականութիւն կ'ըսուին, և երեք գլխաւոր մասն կը բաժնուին.

Ա. Հիւսիսային կողմը՝ Յատոռկ Անկոլա, յորում է Ս. Պօղոս Լոանտայի, ծովային նաւահանգիստ և մայրաքաղաք ամբողջ կալուածոց։

Բ. Մէկտեղը՝ Պենկոռէլա, որուն ծովային գլխաւոր քաղաքն է Ս. Փիլիպպոս Պենկոռէլայի, վատառողջ դրից վրայ. հոս կ'աքսորուին Բորդուգալի ոճրագործք։

Գ. Մոսսամեդես գաւառն, որ համանուն ծովային քաղաք մ'ունի։

Գաղղիա 1885էն ի վեր Գոնկոյի արևմտեան կողմը Օկուէ և Ամիմա գետոց մէկտեղի երկրին տիրած է, որուն մէկ գլխաւոր քաղաքն են Ֆրանսվիլ, Պրազավիլ։

169. Ջանազան գիտելիք երկու Կուինէայից վրայ. — Հիւսիսային Կուինէա 2,080,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունի, և 7,500,000 բնակիչ. Հարաւայինը 870,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն և 3 միլիոնէն աւելի բնակիչ, ամէնքն ալ սևամորթ և կռապաշտ։ Բորդուգալցի քարոզչաց իրենց տէրութեան հպատակները քրիստոնէութեան դարձնելու ըրած ջանքն՝ անոնց աւելորդապաշտութեանց վրայ հազիւ քանի մը քրիստոնէական սովորութիւններ աւելցընելու չափ ծառայած է։ Ամենք ալ կռապաշտութեան հետ մահմետականութիւն խառնած են։ Վայրենի ցեղերու կրօնից մէկ էական մասն ալ մարդակերն է։ Բազմակնութիւնն ալ չատ տարածուած է Ափրիկէի այս մասին մէջ։

Սաստիկ խղդուկ ջերմութեան պատճառաւ որ երկու Կուինէայից մէջ կը տիրէ, մանաւանդ անձրևաց եղանակին որ չատ անգամ մինչև վեց ամիս կը տևէ, տեղւոյն կլիման վնասակար է Եւրոպացւոց. սակայն հրաշալի ծաղիկներ կը բուսցընէ, և ընդհանուր բուսաբերութեան տարօրինակ աճեցուածն կու տայ, մանաւանդ ծովեզերաց վրայ, որ ընդհանրապէս ցած են, և երկու Կուինէաները հիւսիսէն և արևելքէն չրջապատող բարձր լեռներէն իջած բազմաթիւ գետակներու դարերէ ի վեր բերած և դիզած կաւավ պարարտացեալ։ Անթիւ հօտեր կան վղերուս, այծերմանց և կապ-

169. Ի՞նչ կայ գիտնալու արժանի կրկին Կուինէայից վրայ։

կաց. կը գտնուին դարձեալ ընձուղտ և ռնգեղջիւր, բազմաթիւն օձերու, մանաւանդ ահագին պօաներու: Ոսկեփոչին, փղոսկրն և պղպեղը գլխաւոր բերքն են այս երկրին, ուսկից բազմաթիւն սև գերեաց տարուած են Ամերիկայի զանազան կողմերը:

ՍՈՒԱՆ ԿԱՄ ՆԻԿՐԻՏԻԱ

170. ՍԱՀՄԱՆՔ. — Սուտանի, որ կ'ըսուի նաև Նիկրիտիա կամ Դաքրոռր, բնակչաց մէկ մասը սևամորթ ցեղին վերաբերելուն համար, սահմանքն են, հիւսիսէն՝ Սահարա, արևմուտքէն՝ Սենեկամպիա, հարաւէն՝ Սուրբին Նիկրիտիա, և արևելքէն՝ Նուպիա և Եթովպիա:

Նշանաւոր քաղաքք են, արևմտեան կողմը՝ Սկոռ, Պառկարայի մայրաքաղաքը:

Դէն–Պօքդոռ կամ Դոռնպոռքդոռ, դէպ ի հիւսիս, Նիկէրի ձախակողմեան ափանց վրայ. նշանաւոր քաղաք է կարաւաններու միջոցով Պէրպէրիստանի և Եգիպտոսի հետ ըրած վաճառականութեամբը:

Եաքոպա (բն. 150,000), Սաքադոռ և Քաւնօ (բնակիչ 50,000), Հառնսայի գլխաւոր քաղաքները. առաջնոյն մէջ կը նստի Ֆէլլադա ցեղին զօրաւոր իշխանն, որունք սևամորթներէն կը տարբերին և կեդրոնական Աֆրիկէի այս մասին կը տիրեն: — Եօլա, մայրաքաղաք է Ատամոռայի, արևելեան հարաւային կողմը, որ Ֆէլլադաներուն հպատակ թագաւորութիւն մ'է:

Քոռքա, Զատ լճին արևմտեան կողմը, Պոռնոռի մայրաքաղաքը:

Ակքր, մայրաքաղաք Ոռատայի, Զատ լճին արևելեան հիւսիսային կողմը:

170. Որո՞նք են Սուտանի գլխաւոր քաղաքները:

ՆԻԿՐԻՏԻԱ. ՀԱՐԱՒԱՅԻՆ· — ՔԱՖՐԱՍՏԱՆ ԵՒ ԴՐԱՆԶՎԱԼ

171. ՍԱՀՄԱՆՔ. — Հարաւային Նիկրիտիա, որուն մէջ կը պարունակուի նաև Քաֆրաստան, իրեն սահման ունի, հիւսիսէն՝ Սուտան, արևմուտքէն՝ Հարաւային Կուինէա և Ատլանտեան ովկիանոս, հարաւէն Օգդենդացւոց աշխարհն և Հնդկաց ծովը, և արևելքէն՝ Մոզամպիք, Զանզիպար և Ատյանի ափունքը:

ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Հարաւային Նիկրիտիոյ և Քաֆրաստանի մէջ կը պարունակուին ամբողջ կեդրոնական Աֆրիկէի փիչ ծանօթ աշխարհներն, հասարակածին հարաւային կողմը, որոնց վրայ կրնան աւելցուիլ Կիմպէզա անուանեալ ծովեզերեան երկիրն՝ արևմտեան հարաւային կողմը. իսկ արևելեան հարաւային կողմն ալ՝ Դրանզվաալեան և Օրանժ գետիւ հասարակապետութիւնները, զորս հաստատած են Պօէրք՝ հոլանտացի հին գաղթականք, երբ Բարեյուսոյ Գլխէն հեռացան՝ Անգղիացւոց հոն տիրելէն ետքը:

Հարաւային Նիկրիտիոյ մէջ կը գտնուին հետևեալ ժողովուրդք, մեծ չափերուն մօտ.

Ուանեամուէզի, գլխաւոր քաղաքներն Քարիմա, Ոձիձի:

Ուկանդա, գլխաւոր քաղաքն Մենկօ:

Մանիեմա, գլխաւոր քաղաքն Նիաննկոռե:

Մադիամվօ, հարաւային արևմտեան կողմն. գլխաւոր քաղաքն Քասկէ:

Քաֆրաստանի մէջ.

Պէճուանա, մէջտեղն. բազմաթիւ ցեղերու կը բաժնուի. որոց գլխաւորք են Պաքոռեննա, Քոլոպենկ, Լիդաքոռ:

Մաքալոլօ. գլխաւոր քաղաքն Լիմեռանդի:

171. Որո՞նք են Հարաւային Նիկրիտիոյ և Քաֆրաստանի սահմանքը:

Պանիէյ, որ հին Մոնոմոդապա կայսրութեան տեղն է՝ Զամպէզի մօտ։

Մադագէլանտ, առաջնայն հարաւակողմն, որուն 1898ին տիրացան Անգղիացիք։

Ծովային Քաղբաստան կը պարունակէ.

ՆԱՏԱԼ (բն. 55,000) անգղիական նոր գաղթականութիւնն որ օրէ օր ծաղկելու վրայ է. մայրաքաղաքն Բիւրդերարիցպուրկ. գլխաւոր քաղաքն Տուրպան, Նադալ նաւահանգստին վրայ, զոր այսպէս կոչած է Վասգոյ տէ Կամա Քրիստոսի Ս. Ծննդեան օրը գտած ըլլալուն համար։

Նադալի հիւսիսային կողմը կը բնակի Զուլու ըսուած բարբարոս ցեղն, որ յետ երկար պատերազմաց՝ մօտ տարիներուս մէջ ընդունեցաւ Անգղիոյ հպատակութիւնը։

ՕՐԱՆԺԻ հասարակապետութիւնն (բն. 210,000) Նադալի արևմտակողմն. մայրաքաղաքն Պլոմֆոնտայն, այս երկիրս ադամանդի հանքեր կը պարունակէ։

ԴՐԱՆԶՎԱԱԼԻ հասարակապետութիւնն (բն. 500,000). մայրաքաղաքն Բրեդորիա. առատ ոսկւոյ հանք ունի։

172. Զանազան գիտելիք Սուտանի, Հարաւային Նիկրիտիոյ և Քաֆրաստանի վրայ. — Այս երկիրներս որ գրեթէ 12,500,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունին և 20,000,000 բնակիչ, մեծաւ մասամբ կառապաշտ, Ափրիկէի ամբողջ մէջտեղն և հարաւային կողմերը կը գրաւեն։ Ընդարձակ և գեղեցիկ լճեր կը պարունակեն իրենց մէջ, որոնց գլխաւորներն են Ալպերտ, Վիկտորիա, Դանկանիկա և Նիասսա. բազմաթիւ մեծ ու պզտիկ թագաւորութիւններ կան այս տեղ՝ Եւրոպացւոց գեռ քիչ ծանօթ։ Սակայն ճանապարհորդք ոմանք որ վերջին տարիներուս մէջ յաջողած են ներսերը պտըտելու, կարծածնէն աւելի քաղաքակրթեալ ժողովուրդներ գտած են հոն. որոնց մէջ գլխաւորն է Ֆիղղադա մահմետական ցեղը։ Այս երկիրներուն հողը չատ գետակներէ ոռոգուելով՝ բարեբեր է բրնձի, բամբակի, կնեփի և լեղակի բերքերով. կը գտնուին նաև ոսկի և երկաթ, և Ափրիկէի գրեթէ ամէն կենդանիք։

Իսկ կեդրոնական Ափրիկէի հասարակածէն վար եղած մասն որ Հարաւային Նիկրիտիա կ'ըսուի, նոյնպէս բարե-

172. Ի՞նչ կայ գիտնալիք Սուտանի, Հարաւային Նիկրիտիոյ և Քաֆրաստանի վրայ։

բեր է և չատ բազմամարդ։ Ուսումնական հետաքննութիւնք եղած են հոս՝ արևմտեան կողմն եղած Զանզիզ գեղեցիկ գետոյն ընդարձակ հովտին մէջ, և դէպ ի արևմուտք Գոնկոյ գետին կողմերը. նոյնպէս դէպ ի հարաւ Լիմբոքօ, և կարիեք կամ Օրանժ գետոյ կողմերը։ Այս վերջին աշխարհիս մէջ, որ լի է բարձր լեռներով, ձորերով, լճերով և պղպեր դաշտագետիններով, կը բնակի Քաֆր ըսուած ազգն, որ սևամորթներէն կը տարբերին իրենց գունոյ նըւազ թանձրութեամբը, մարմնոյ գեղեցիկ չափակցութեամբ, բարուց քաղցրութեամբն և ճարտարութեամբ։ Չի, և մանաւանդ կով կը պահեն՝ ղրս հեծնելու կը գործածեն։ Իրենց գլխաւոր զբաղումներէն մէկն ալ է որսորդութիւնը, մանաւանդ փղի, որուն համար մեծ ճարպիկութիւն կը ցուցընեն. մեծ սեր ունին նաև երաժշտութեան

ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ. — ՕԴԵՆԴԱՅԻՈՅ ԱՇԽԱՐՀ

173. ՍԱՀՄԱՆՔ. — Բարեյուսոյ Գլխոյն կառավարութիւնն Ափրիկէի հարաւային մասը կը կազմէ։ Անոր սահմանքն են, հիւսիսէն՝ Օդենդայիք և Օրանժի հասարակապետութիւնը, արևմուտքէն և հարաւէն՝ Ատլանտեան ովկիանոսն, և արևելքէն՝ Հնդկաց ծովը։

Մայրաքաղաքն է Գլուխ կամ Գաբ, հիւսիսային կողմը, (բն. 55,000), նաւահանգիստ. հոս կը նստի Անգղիոյ կողմէն դրուած կառավարիչն, որոնց ձեռքն է այս երկիրս 1806ին ի վեր։

Նշանաւոր քաղաքներն՝ Գոնսդաւնս, արևելեան կողմը. անուանի իւր գեղեցիկ այգիներուն համար։ — Կրահամդաւն արևմտեան գաւառին գլխաւոր քաղաքն, ուր կան նաև Պաթհօրսդ, Իւիդհենհակ, Կրաֆրիհեդ, և Բորդէիզպագ. հիւսիսակողմն Քիմպերլէ՝ ադամանդի հանքաց մէջ Կրքքլանտ գաւառին գլխաւոր քաղաքն է։

175. Ո՞ւր կ'ընդայ Գլուխ Բարեյուսոյ, և որո՞նք են գլխաւոր քաղաքները։

ՕԴԴԵՆԴԱՑԻՈՑ ԵՐԿԻՐ. — Օդդենդացիք, որ Բարեյուսոյ Գլխոյ կառավարութեան դէպ ի հիւսիս եղած երկիրը կը բնակին, սևամորթ ազգ մ'են քիչ մը մութ կարմրի զարնող, և չատ ցեղերու կը բաժնուին: Ողորմելի գիւղերու մէջ կը բնակին, զոր Քրաալ կը կոչեն:



Գրպոհա կամ Գաբ

Գերմանիա այս երկրիս արևմտեան մասին գրեթէ ամբողջ տիրած է՝ մինչև Օրանժ գետը, կոչելով այս կալուածները Հարաւ. արևմտեան Գաղթականուհրիւն Ափրիկոյ. իրեն հպատակ ցեղերն են Նամաքուա, Քորաևա, Հերերօ ևն: Այս ծովեզերաց վրայ Անգլիա ունի Կէոփ կամ Ռոլֆիչի ծոցը:

174. Ջանազան գիտելիք. — Բարեյուսոյ Գլխոյ կառավարութիւնը՝ Օդդենդացւոց երկրին հետ միատեղ՝ գրեթէ 751,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունի. և 1,600,000 բնակիչ, որոնցմէ փոքրիկ մաս մը միայն սպիտակք են, Հոլանտացիք և Անգլիացիք, կրօնքով բողոքականք. մնացածը սևամորթ և Օդդենդացի կառապաշտք են:

Բարեյուսոյ կլիման առողջ և բարեխառն է. սակայն ամառ ժամանակ կիզիչ հովի մ'ենթակայ է, որ երբեմն ամբողջ մշակութիւնը կ'ապականէ. իսկ մայիսէն մինչև օգոստոս ամիսը չարաւնակ անձրևներով կ'ողողի: Եւրոպայի և Ափրիկէի բերքերը միանգամայն կը գտնուին այս աշխարհիս մէջ. աձենէն անուանին է Գոնոգանսի գինին:

Բարեյուսոյ Գլուխն որոյ անուամբ կը կոչուի վերոյիշեալ կառավարութիւնը՝ Բորդուգալիներէն նախ Գլոռիա Ծփանաց (Գաբ տէ Դոհրնանդ) կոչուեցաւ, վասն զի զայն գտած ժամանակնին սարսափելի մրրիկներու հանդիպեցան, յամին 1486: Երկրորդ ճանապարհորդութիւնն հազիւ համարձակեցան տասնուհինգ տարի վերջը կատարելու՝ Վասդոյ տէ Կամայի առաջնորդութեամբ, որ այսպէս Եւրոպացւոց դէպ ի Հնդկաստան բանուկ ճամբայ բացաւ մինչև ցհատուած Սիւէզի պարանոցին:

174. Ի՞նչ կայ գիտնալիք այս երկու երկիրներուն վրայ:

1 Պէտք է գիտնալ որ հասարակածին հարաւային կողմն եղած աշխարհներուն մէջ տարւոյն եղանակներն հակառակ են հիւսիսային կլիմայից եղանակաց. ուստի այն երկիրները բնակող ժողովուրդը ձմեռ կը կատարեն՝ մինչդեռ մենք ամառուան մէջ ենք:

Այրեցեալ գօտւոյն և անոր մերձաւոր երկիրներուն մէջ ամենևին իրական ձմեռ չկայ. այլ անոր տեղ կը փոխանակէ անձրևաց եղանակն որ հասարակածին վրայ մօտ վեց ամիս կը տևէ, իսկ այրեցեալ գօտւոյ մերձաւոր տեղերն երեք ամիս:

ՄՈԶԱՄՊԻԿ

175. ՍԱՀՄԱՆՔ. — Բորդուգալցիներուն, որոնք այս ծովեզերաց վրայ չատ մը կալուածներ ունին, Ընդհանուր հրամանատարութիւն Մոզամպիքի ըսած երկիրները, մեծաւ մասամբ հին Մոնոմոդապա կայսրութեան մնացորդներովը կազմուած են: Անոնց սահմանքն են, հիւսիսէն՝ Զանկէպար, արեւմուտքէն՝ Հարաւային Նիկրիտիա, հարաւէն՝ Քաֆրարատան, և արեւելքէն՝ Մոզամպիքի Ջրանցքը:

Մայրաքաղաքն է Մոզամպիք, ծովեզերաց մօտ կղզւոյ մը վրայ:

Նշանաւոր քաղաքներն են՝ Սօֆալա, արեւմտեան հարաւային կողմը, համանուն ծոցին վրայ, բարեբեր և ոսկւոյ հանքի կողմանէ առատ երկրի մը մէջ, որ երբեմն Ափուռնք Սօֆալայի կը կոչուի. այս քաղաքս հիմա չատ ինկած է իր առաջին պայծառութենէն: Քիլիւան, վաճառաշահ նաւահանգիստ է. ներսերը Սենիա, Դուռւսօ, Դէդէ Զամպէզէ գետին վրայ. վերջինս բնածխոյ և ոսկւոյ հանք ունի:

176. Զանազան գիտելիք. — Այս երկրիս տարածութիւնը 1,230,000, քառակուսի քիլոմէդր կը համարուի. իսկ բնակիչքն աւելի քան 3,500,000, մեծաւ մասամբ սեւամորթ կռապաշտք և զանազան ցեղերու բաժնուած, որոնք կիսագատ իշխաններէ կը կառավարուին. վասն զի Բորդուգալցիք ծովեզերաց միայն տիրած են: Հողը բազմաթիւ գետակներէ առատապէս ըմպելով՝ բարեբեր է, մանաւանդ բրնձի կղմանէ. անտառք լի են փղերով: Սօֆալայի երկիրն հարուստ է ոսկւոյ և արծաթի հանքերով:

175. Մոզամպիքի սահմանքը և քաղաքներն որո՞նք են:
176. Ո՞րչափ են Մոզամպիքի բնակիչքը, և կլիմայն ինչպէս է:

ԶԱՆԿԷՊԱՐ

177. ՍԱՀՄԱՆՔ. — Զանկէպարի սահմանքն են, հիւսիսէն՝ Այանի ափունքն, արեւմուտքէն՝ Հարաւային Նիկրիտիա, հարաւէն՝ Մոզամպիք, և արեւելքէն՝ Հնդկաց ծով:

Հետեւեալ քաղաքներուն ամէնքն ալ մայրաքաղաքք են փոքրիկ համանուն տէրութեանց, որոնք հպատակ կամ հարկատու էին Զանգիպարի սուլթանին:

Բայց հիմա թէ այս ծովեզերքիս և թէ ներսերուն տիրեցին Անգղիացիք և Գերմանացիք. որոնց կալուածներն կը կոչուին Արեւելեան Աֆրիկէ անգղիական և Արեւելեան Աֆրիկէ գերմանական. առաջնոյն կը վերաբերի Ճոշպայի ափունքէն Ռանկա, հիւսիսէն Հարաւ. երկրորդին՝ Ռանկայէն մինչև Տելկատօ հրուանդանն:

Ծովեզերքը կան. Մելինտա, նշանաւոր քաղաք էր Բորդուգալցիներուն ձեռքն եղած ժամանակ, հիմա ինկած է:

Պակաւոյս, ասկից համբայ կ'ելլեն ներսերը գնացող կարաւանք: Մօտերը չորս կղզիք կան. որոնց առաջին երկուքն Անգղիոյ պաշտպանութեան տակ են.

Բեմպա, բարեբեր կղզի մ'է.

Զանզիպար (տ. 182).

Մաֆիա.

Մոմպազա. արեւելեան Աֆրիկէի լաւագոյն նաւահանգիստ է.

178. Զանազան գիտելիք. — Զանկէպարի տարածութիւնը 550,000 քառակուսի քիլոմէդր կը հաշուի, և 1,500,000 բնակիչք, մասամբ մը մահմետական Արաբք, մաս մ'ալ սեւամորթ կռապաշտք, զանազան ցեղերու բաժնուած: Ճախճախուտ և վատառողջ պաշտպետիններն որ մեծաւ մասամբ այս երկիրս կը գրաւեն, ունին նաև անտառներ յորում բազմաթիւ փղոյ խումբեր կ'ապրին, ուսկից առատ փղոսկր կ'ելլէ:

177. Զրուցէ Զանկէպարի սահմանքն, և քաղաքները:
178. Ո՞րչափ է Զանկէպարի տարածութիւնն, և բնակիչքը:

ՍՕՄԱԼ

179. ՍԱՀՄԱՆՔ. — Սօմալի ընդարձակ երկիրն, որ երկար ժամանակ Աւոհլի և Աչեանի Սիռնիք կը կոչուէր, իրեն սահման ունի, հիւսիսէն՝ Աւէնի ծոցն և Պապ–իւլ–Մանտէպի նեղուցը, արեւմուտքէն Աբիսինիա և Նիկ–բիտիա, հարաւէն՝ Զանկէպար, և արեւելքէն՝ Հնդկաց ծով։

Նշանաւոր քաղաքներն են,

Զէյլա և Պէրպէրա, Պապ–իւլ–Մանտէպի նեղուցին վրայ, վաճառաշահ նաւահանգիստներ են Անգղիացւոց ձեռքը։

Սոնց մօտ Գաղղիա ունի Օպոք և Դաձոռրա նաւահանգիստները։

Հոռրոռր կամ Հարար, մէջտեղերը, մահմետական փոքրիկ թագաւորութեան մը մայրաքաղաք է։

Իսկ հարաւ. արեւմտեան ափանց վրայ Իտալիա վերջերս կալուածներ հաստատեց. որոնց մէջ են Մակատիշիո, Պրաւա, Մէրքա, Օպիա. (տ. 71)

180. Զանազան գիտելիք. — Սօմալի աշխարհը 318,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունի, և 400,000 բնակիչ։ Արեւելեան հարաւային կողմն, որ ընդհանրապէս Աչեանի Սիռունք կ'ըսուի, անբեր երկիր մ'է առանց քաղաքի։ Իսկ Աւէնի ծոցին ափունքն, որ կ'ըսուի նաև Աւէլ ճախճախուտ երկիր մ'է, որուն Սօմալի ըսուած ժողովուրդը շատ գործունեայ է, և Աբաբէոյ ծոցին և վերէն Ափրիկէի մէջ վաճառականութիւն կ'ընէ։ Մահմետականք են և իմամ մը կը կառավարուին, որ միշտ պատերազմի մէջ է Եթովպիոյ հետ։ Այս երկիրներուն բերքերն են ոսկի, վըզոսկր և համեմունք։

179. Ըսէ Սօմալ երկրին սահմանքն և քաղաքները։

180. Ի՞նչ կայ գիտնալիք Սօմալի երկրին և բնակիչց վրայ։

ԱՓՐԻԿԷԻ ԿՂԶԻՆԵՐԸ

181. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Ափրիկէի կղզիներն երկու մասն կը բաժնուին. մէկն Ատլանտեան ովկիանոսին մէջ, միւսը Հնդկաց ծովուն մէջ։

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍԻ ԿՂԶԻՆԵՐԸ. — Ատլանտեանին մէջ վեց խումբ և երեք առանձին կղզիք կը գըտնուին։

Վեց խումբերը կը տարածուին հիւսիսէն դէպ ի հարաւ.

Ասորեաք, (բն. 260,000), Բորդուգալցիներուն ձեռքը, տասն են թուով։ Գլխաւորները Դերչէյրա, Սոռրր Միքայէլ, Սոռրր Մարիամ, Ֆէյալ, Բիգոյ։

Մատերեաք, (բն. 120,000), Բորդուգալցիներուն ձեռքը, Ասորեանց արեւելեան հարաւային կողմը։ Այս կղզեաց մեծագոյնն է Մատերա, որուն գլխաւոր քաղաքը Ֆռնշգալ։ Անուանի է Մատէրեանց գինին։

Գանարեաք, (բն. 285,000), Սպանիացւոց ձեռքը, Մատէրեանց հարաւակողմը. քսան հատ են. մեծագոյնն և ամենէն բազմամարդն է Դէնէրիֆֆա, որուն գլխաւոր քաղաքն է Սանդա–Գրուզ։ Միւս կղզեաց մէջ նշանաւոր են Գանարիա, Ֆորդավենտուրա, Բալմա և Երկաթի կըղզին՝ որուն վրայէն անցուցին առաջին միջօրէականն Եւրոպայի տէրութիւնք երկար ժամանակ։

Դաւարի Գլխոյ կղզիք, (բն. 70,000), Բորդուգալցիներուն ձեռքը. մեծագոյնն է Սանդիակոյ, որուն մայրաքաղաքը Վիլլա տէ Բրայա։ Նշանաւոր են հետեւեալ կղզիներն ալ. Մայօ, Սոռրր Լուչիա, Սոռրր Վինչենցիոս, Հրոյ կղզին, Պրաւա։

Կոչիենոյ ծոցին կղզիք. գլխաւորներն են Ֆեռնանտոյ–Բօ, Սպանիացւոց ձեռքը՝ որ սակայն կը պարունակէ նաև Անգղիական գաղթականութիւն մը. Սոռրր Թովմաս և Իշխանի կղզին Բորդուգալցիներուն ձեռքը. Անիւնայոն, Սպանիացւոց կը վերաբերի։

181. Ատլանտեան ովկիանոսին մէջ Ափրիկէ քանի կղզիներ ունի։

Դրխտաև տ'Ա քռւնհա. երեք հրաբղխային կղզիներ են. Անգղիացիք հոս գաղթականութիւն հաստատած են որ ծաղկելու վրայ է:

Երեք առանձին կղզիներն, Անգղիացւոց հպատակ, հետեւեալքն են. Չաւբարձռւնն, Սոռրբ–Մատրեոս, և Սոռրբ–



Գետերման Նարոլէոնի ի Ս. Հեղինէ

Հեղինէ, որ հռչակաւոր է Մեծին Նարոլէոնի հոն աքսորմամբն, ուր և մեռաւ վեց տարի ապրելէն ետքը, 1821 տարւոյն մայիսի 5ին:

182. ՀՆԴԿԱՑ ԾՈՎԱՒՆ ԿՂԶԻՔ. — Ա յս ծովուս մէջ

182. Հնդկաց ծովուն մէջ Ափրիկէ ինչ կղզիները ուն:

կը գտնուին երեք խումբք կղզեաց, մեծ կղզի մը և երկու երկրորդականք:

Երեք խումբերն են,

Մասգարիւնեանք. երեք են Թուով Ռէիւնիօն կամ Պուրբ



Հանրութեան տունդ Գաղղիոյ Եվեղերքի Գաղղիոյ կղզեաց

պոն կղզին (բն. 180,000), Գաղղիոյ ձեռքը. նշանաւոր է խահուէն, չաքարը, բամբակն և ծխախոտը: Գլխաւոր քաղաքներն են Սոռրբ Դիոնեսիոս, Սոռրբ Պետրոս և Սոռրբ Պօղոս: — Մաւրիտիոս կամ Գաղղիոյ կղզի, (բն.

370,000)· գլխաւոր քաղաքն է Բօր–Լուի։ — Ռոտրիկ կղզի, չատ կրիայ կ'ելլէ ասկից· այս երկու կղզիներս Անգլիացւոց են։

Սէյշէլեանք, որոնք երկու խումբ կը բաժնուին· Մահէ կղզիք և Ալիբաձդ կղզիք· Անգլիացւոց են։

Գոմորեանք, Մոզամպիքի ջրանցքին հիւսիսային կողմը· չորս են գլխաւորները, այսինքն, Անկազիձա կամ Մեծ–Գոմոր, Մոհէլի, Անձուանե և Մայօդ։ Առնցմէ վերջինը Գաղղիոյ կը վերաբերի, միւսները տեղացի իշխանաց ձեռքն են։

Մեծ կղզին է,

Մատակասգար, (բն· 3,500,000)· տարած· 592,000 քառ· քիլ· այս կղզիս որ կ'ըսուի նաև Մադիաշ՝ Մոզամպիքի ջրանցքովը զատուած է Աֆրիկէէն, և զանազան թագաւորութեանց կը բաժնուի, որոնց մէջ գլխաւորն և ընդարձակագոյնն է Հէվաս, մայրաքաղաքը՝ Դանանարիվոս։ Ժամանակէ մը ի վեր Գաղղիացիք որ արդէն այս կղզւոյս պաշտպանք էին՝ տեղացիներէն թշնամութիւն կրելով յետ երկար պատերազմաց բոլորովին տիրացան անոր յամին 1896։ — Գաղղիացիք Մատակասգարի արևելեան կողմն ունին Սոդրր Մարիամ կըղզին, իսկ արևմտեան հիւսիսային կողմը Նոսի–Պէ և Նոսի–Գոմպա կղզիները։

Երկու երկրորդական կղզիք են,

Զանզիպար, (բն· 100,000), Զանկէպարի ափանց վրայ· արաբ սուլտանի մը կը վերաբերի Անգլիոյ պաշտպանութեան տակ· չատ արօտներ և մեծամեծ անտառներ ունի· գլխաւոր քաղաքն է Զանզիպար, (բն· 30,000), որ ունի գեղեցիկ նաւահանգիստ մը։

Սոքոդորա, (բն· 100,000), Կուարտաֆուի հրուանդանին դիմաց· քիչ ժամանակէ ի վեր Անգլիացւոց ձեռքըն է· գլխաւոր բերքն է հալուէ, արմաւ, և չրկակայներէն ալ բուստ կ'ելլէ։

ԱՄԵՐԻԿԱ

183· ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ· — Ամերիկա որ ամբողջ նոր աշխարհն կը կազմէ, Ասիայէն վերջը ամենէն մեծն է· ծակայն ի բաց առեալ գՈվկիանիա, բնակչաց կողմանէ ամենէն սակաւաթիւն է։

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ· — Ամերիկա ի բնէ երկու մեծ թերակղզիներէ ձևացեալ է, որոնք Բանամայի պարանոցաւ[1] միացեալ են։ Վերի կողմն եղածը կ'ըսուի Հիւսիսային Ամերիկա, իսկ վարինը Հարաւային Ամերիկա։

184· Տարածութիւն, բնակիչք և կրօնք· — Ամերիկայի տարածութիւնը 42,500,000 քառակուսի քիլոմէդր կը հաշուուի, և բնակիչքը գրեթէ 100,000,000· յորոց 65 միլիոն կը վերաբերին եւրոպական սպիտակ ցեղին, 14 միլիոն ամերիկեան գեղնագոյն ցեղին, գրեթէ 10 միլիոն ափրիկեան սևամորթ ցեղին· իսկ մնացորդն այս երեքիս խառնուրդէն յառաջ եկած ցեղերու։ Այս ժողովրդոց մէջ գրեթէ 45 միլիոն կաթուղիկեայք են, 33 միլիոն բողոքականք և մնացածը կռապաշտք։

Կլիմայ, բերք· — Ամերիկա իւր անսահման ընդարձակութեան պատճառաւ՝ հողագնտոյս ուրիշ մասանց ամէն կլիմայներն և բերքերն ունի· սակայն պէտք է գիտնալ որ

183· Քանի՞ թերակղզիներէ ձևացած է Ամերիկա։
184· Ո՞րչափ է Ամերիկայի տարածութիւնը, և բնակչաց թիւը։

1· 1885 տարւոյն մէջ սկսան այս պարանոցին հատումը, որով ջրանցքով մը՝ խաղաղական և Ատլանտեան ովկիանոսներն իրարու հետ պիտի միանան· այլ ներկայապէս էլևմտական պատճառներով աշխատութիւնք ընդհատած են։

ընդհանրապէս նուազ տաք է քան զհին աշխարհն, որոյ պատճառը գլխաւորապէս հոն գտնուած բարձր լեռներն են, ուսկից անթիւ առուակք և մեծամեծ գետեր կը բղխեն։ Այնիւ մեռածոց կողմանէ հարուստ է քան զամէն աշխարհ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

185. ՍԱՀՄԱՆՔ. — Հիւսիսային Ամերիկայի սահմանքն են, հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոս և անկէ ձեացեալ ծովերը, արեւմուտքէն՝ Մեծ ովկիանոս, հարաւէն՝ Բանամայի պարանոցն, Մեքսիգոյի ծոցն և Անդիլեանց ծովը. և արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս։

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Հիւսիսային Ամերիկան կրնայ 10 մասն բաժնուիլ.

2 հիւսիս. { Կրօէնլանտիա. / Նոր–Բրիտանիա.

1 միջին Միացեալ Նահանգք.

6 հարաւ. { Մեքսիգոյ. / Կուատեմալա. / Սալվատոր. / Հոնտուրաս. / Նիգարակուա. / Գոստա–Րիգա.

Վերջին 5 տէրութիւնները միատեղ կը ձեացընեն ըզ-Միջին Ամերիկա.

1 Ատլանտեան ովկիանոսին մէջ. Անդիլեանք, որոնք Կրօէնլանտիայէն վերջը Հիւսիսային Ամերիկայի մեծագոյն արշիպեղագոսը կը ձեացընեն։

185. Քանի՞ մասունք կը բաժնուի Հիւսիսային Ամերիկա։

186. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾՈՎԵՐԸ. — Հիւսիսային Ամերիկան թրջող երեք ովկիանոսք անոր եզերաց վրայ, բայց ի Պեհրինկի ծովէն (տես թիւ 92) ուրիշ չորս ծովեր ալ կը ձեացընեն.

2 Արկտիկ Սառուցեալ ովկիանոսէն.

Պաֆֆինի ծով / Լիւգրոնի կամ Քանի Բևեռային ծով } Բևեռային երկրներուն մէջ։

1 Ատլանտեան ովկիանոսէն.

Անդիլեանց ծով, որ երկու Ամերիկայից մէջ կը մտնէ։

1 Մեծ ովկիանոսէն.

Գորտեզի ծով կամ Գալիֆոռնիոյ ծոց, Մեքսիգոյի արեւմտեան կողմը։

187. ԾՈՎԵՐ. — Վերոյիշեալ ծովերը 5 գլխաւոր ծոցեր կը կազմեն.

3 Ատլանտեան ովկիանոսէն.

Հոդսոնի ծոց / Ս. Լաւրենտիոսի ծոց / Ֆոռնտի ծոց } Նոր–Բրիտանիոյ արեւելեան կողմը։

2 Անդիլեանց ծովէն.

Մեքսիգոյի ծոցն, համանուն երկրին արեւելեան կողմը. Հոնտուրասի ծոցը, Կուատեմալայի հիւսիսային արեւելեան կողմը։

188. ՆԵՂՈՒՑՔ. — Բաց ի Պեհրինկի նեղուցէն, զոր առաջ յիշեցինք (թիւ 94), Հիւսիսային Ամերիկայի մէջ 7 նշանաւոր նեղուցք կան, որոնք Ատլանտեանի չորերն ուրիշ ծովերու հետ կը միացընեն.

Տէվիսի նեղուցը կը հաղորդէ զայն Պաֆֆինի ծովուն հետ։

Լէնքեսդր, Պերրօ և Պենքս նեղուցներն՝ Արկտիկ Սառուցեալ ովկիանոսին հետ, ուսկից կ'անցուի Ամերիկայի հիւսիսային կողմը.

Հոդսոնի նեղուցը՝ Հուտսընի ծոցին հետ.

186. Հ. Ամերիկոյ ծովերուն վրայ տեղեկութիւն տուր։
187. Որո՞նք են Հ. Ամերիկոյ գլխաւոր ծոցերը։
188. Որո՞նք են Հ. Ամերիկայի գլխաւոր նեղուցները։

Պէյ՚–Իլի նեղուցը՝ Ս. Լաւրենտիոսի ծոցին հետ.
Ֆլորիտայի նեղուցն, որ կ՚ըսուի նաև Պահամայի ընբանցք՝ Մեքսիկոյի ծոցին հետ:



Հուսոնեան ծոց

189. Գետք. — Հիւսիսային Ամերիկայի 4 գլխաւոր գետերն հետեւեալ ծովերուն մէջ կը թափին:

1 Արկայինն ովկիանոսին մէջ.

Մաքէնզի, որ կը թրջէ զՆոր–Բրիտանիա:

189. Որո՞նք են Հ. Ամերիկայի գլխաւոր գետերը:

2 Ատլանտեան ովկիանոսին մէջ.

Ս. Լաւրենտիոս, որ կը թրջէ զՆոր–Բրիտանիա, և կը թափի Ս. Լաւրենտիոսի ծոցին մէջ.
Միսիսիրի, որ կը թրջէ զՄիացեալ Նահանգս և Մեքսիկոյի ծոցին մէջ կը թափի:

1 Մեծ ովկիանոսին մէջ.

Գոլոմպիա, որ կը թրջէ Միացեալ Նահանգաց արեւմտեան կողմը:

190. Լիճք. — Հիւսիսային Ամերիկոյ վերին կողմը շատ լճեր կը գտնուին, որոնց գլխաւորներն 11 են, այսինքն.

Մեծ Արջի լիճ Գերեաց լիճ Լերանց կամ Աթապասգա լիճ Այծեւանց լիճ	Ասոնք Մաքէնզիի միջոցով Սառուցեալ ովկիանոսին հետ հաղորդակցութիւն ունին:
Փոքր Ոռնիբեկ Մեծ Ոռնիբեկ	Որոյ վերջինը Հուսոնի ծոցը կը թափի:
Վերին լիճ Միչիկան Հուրոն Էրիէ Օնդարիոյ	Որոնք մէկմէկու մէջ կը թափին, և Ս. Լաւրենտիոս գետով Ատլանտեանին հետ կը միանան:

2 ուրիշ լճեր ալ արեւմտեան և հարաւային կողմերը կան.

Մեծ լիճ Աղի, Միացեալ Նահանգաց արեւմտեան կողմը, Ապառաժուտ լեռներէն պատեալ.
Նիգարակուա, հարաւային կողմը, որ Անդիլեանց ծովը կը հոսէ:

191. Նիագարա. — Էրիէ և Օնդարիոյ լճերն իրարու հետ միացընողն է Նիագարա գետն, որ Օնդարիոյ լիճը մտնելէն առաջ 32 մեղր բարձրութենէ վար թափելով հիանալի ջրվէժ մը կ՚ձեւացընէ, որոյ շառաչն շատ հեռու տեղերէ կը լսուի:

190. Որո՞նք են Հ. Ամերիկայի գլխաւոր լճերը:
191. Նիագարա գետին վրայ ի՞նչ կայ գիտնալիք:

192. ԹԵՐԱԿՂԶԻՔ. — Հիւսիսային Ամերիկայի մէջ 6 գլխաւոր թերակղզիք կը համրուին.

Լապրատոր, Նոր-Բրիտանիոյ արեւելեան հիւսիսային կողմը.



Գրիվէի նկարագրէն

Նոր-Սկովտիա, Նոր-Բրիտանիոյ արեւելեան կողմը.
Ֆլորիտա, Միացեալ Նահանգաց արեւելեան հարաւային կողմը.

192. Որո՞նք են Հ. Ամերիկոյ գլխաւոր թերակղզիք:

Եռզգադաւան, Մեքսիգոյի արեւելեան հարաւային կողմը.
Հիւս-Գալիֆոռնիա, Մեքսիգոյի արեւմտեան կողմը.
Աղասքայի թերակղզին, Ռուսական Ամերիկայի[1] արեւմտեան հարաւային կողմը:

193. ՀՐՈՒԱՆԴԱՆՔ. — Գլխաւոր հրուանդանները 6 են թուով.

Ֆէրոռէհ, Կրօէնլանտիոյ արեւմտեան հարաւային կողմը.
Հադրաս, Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը.
Գադոզ, Եուգագանի արեւելեան հիւսիսային կողմը.
Ս. Ղուկաս, Հին-Գալիֆոռնիոյ հարաւային կողմը.
Մենտոչինոյ, Գալիֆոռնիոյ արեւմտեան կողմը.
Սառուցեալ Գլուխ, Ռուսական Ամերիկայի հիւսիսային կողմը:

194. ՇՂԹԱՅՔ ԼԵՐԱՆՑ. — Երեք նշանաւոր շղթայք կան լերանց Հիւսիսային Ամերիկայի մէջ.

Ովկիանեան լերինք, որոնք ամբողջ Մեծ Ովկիանոսին ափունքը կը պատեն.
Ապառաժուտ լերինք, որոնք Արջային Սառուցեալ ովկիանոսին եղերքէն սկսելով՝ զանազան անուամբք մինչեւ Բանամայի պարանոցը կ'երկըննան.

Աղեհեկի կամ Արեալաշ լերինք, հարաւային կողմը, և կապոյտ լերինք՝ արեւելեան կողմը, որոնք կը կարեն ընդ Միացեալ Նահանգս արեւելեան հիւսիսէն դէպ ի արեւմտեան հարաւ:

195. ՀՐԱԲՈՒՂՔ. — Ովկիանեան և Ապառաժուտ լերանց շղթայից մէջ շատ հրաբուղխներ կան, որոնց երկու գլխաւորներն են,

Սուրբ Եղիա, Ռուսական Ամերիկայի մէջ.
Բորոգադերեդդ, Մեքսիգոյի մէջ:

193. Որո՞նք են Հ. Ամերիկայի գլխաւոր հրուանդանք:
194. Քանի՞ են Հ. Ամերիկայի լերանց շղթայք:
195. Քանի՞ են Հ. Ամերիկայի հրաբուղխք:

1. Ռուսական Ամերիկա հին անուն է ամբողջ Ալասքա գաւառին, զոր Ռուսք յամին 1867 վաճառեցին Միացեալ Նահանգաց տէրութեան:

ԲԵՒԵՌԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐ

196. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Բեւեռային անուամբ կը հասկըցուին այն քիչ ծանօթ երկիրներն, որոնք Ամերիկայի հիւսիսային և հիւսիս. արևելեան կողմերը տարածած են, և որոնց մեծագոյնն է,

Կրօհնլանտիա կամ Ամերիկա Դանիւոց, որ պատած է արևմտեան հարաւային կողմէն՝ Պաֆֆինի ծովով և Տէվիսի նեղուցով, արևելեան հարաւէն՝ Ատլանտեան ովկիանոսով, արևելեան հիւսիսէն՝ Արկտիկական Սառուցեալ ովկիանոսով. իսկ արևմտեան հիւսիսային կողմն անծանօթ է: Պալենայի որսի պատճառաւ, որ չատ առատ է այս ծովեզերաց վրայ, Տանիմարքացիք չատ մը վաճառականութեան կեդրոններ հաստատած են, որոնց գլխաւորքն են

Կոդհաւապ, արևմտեան կողմը. Եռղիւանհաւապ, հարաւային կողմը. և Ոսթենհոլմ, հիւսիսային կողմը:

Ուրիշ ծանօթ բեւեռային երկիրները Պաֆֆինի ծովուն արևմտեան և հիւսիսային կողմն կը գտնուին և են. Երկիրք Պաֆինի, Սոռթհեմպտընի, Սըմերսեդի, Կալդեսի իշխանին, Վիկտորիա և Ալբերտի, Պենքսի, Բերրի արշիպելագոսն, և ամենէն հիւսիսայիններն Էլլսմերի, Գրինհեղի և Կրաճդի երկիրները: Այոնց մեծ մասին վրայ իշխանութիւն կամ իրաւունքներ ունի Անգղիա:

197. Ձանազան գիտելիք բեւեռային երկիրներուն վրայ. — Բեւեռային երկիրները կը կարծուի թէ բեւեռին չուրջն ընդարձակ արշիպելագոս մը կը ձևացընեն, որուն կղզիքն իրարմէ զատուած են բազմաթիւ ընդեր միջա սահերով լի ծովու թևերէ կամ նեղուցներէ, որոնք կ'արգելուն Ատլանտեանէն դէպ ի Մեծ ովկիանոս նաւարկութիւնը. և սոնց մէջէն առաջին անգամ անցնողն եղաւ Մեգ-Գլուր ամերիկացի նաւապետն յամին 1853: Իսկ Եւրոպայի

196. Որո՞նք են Ամերիկայ բեւեռային երկիրները:
197. Ի՞նչ գիտելիք կայ Ամերիկայ բեւեռային երկիրներուն վրայ:

կողմէն Հիւսիսային բեւեռին առաջին անցքն ընողն եղաւ Չուետացին Նորտէնսքէօլտ (1878–79), որ Շուէտէն ճամբայ ելլելով ամբողջ Ասիայ հիւսիսային ծովեզերքը կարեց և Պէհրինկի նեղուցէն վար իջաւ: Այս երկիրներուս մէջ ձմեռն մինչև ինն ամիս կը տևէ, և սառնցմէ ծանօթ եղածներուն ամենէն հիւսիսայիններուն մէջ չորս ամսէն աւելի չարունակ գիշերային խաւար կը տիրէ: Տեղւոյն բնակիչքը, որ Եսքիմացիք կ'ըսուին, Եւրոպայի Լաբոնաց և Ասիոյ Սամոյեաններու ցեղին կը վերաբերին: Ձկնորսութեամբ միայն կ'ապրին, և ձմեռը գետնափոր նկուղներու մէջ կ'անցընեն: Բնագիտական Մորաւեան եղբարք ըսուած մէկ ազանդն Կրօհնլանտիոյ բնակչաց մաս մը քրիստոնեութեան դարձուցած է, որոնց թիւն 14,000 կը համարուի, բայ ի 6,000 Տանիմարքացիներէ:

ՆՈՐ–ԲՐԻՏԱՆԻԱ

198. ՍԱՀՄԱՆՔ. — Անգղիացիք Նոր–Բրիտանիա կոչած են զայս իրենց վերաբերելուն համար: Սահմանքն են, հիւսիսէն՝ Հուսոնի ծոցին նեղուցն և Արկտիկական սառուցեալ ովկիանոս, արևմուտքէն՝ Ալասքա և Մեծ ովկիանոս, հարաւէն՝ Միացեալ Նահանգք, և արևելքէն՝ Ատլանտեան ովկիանոս:

Նոր–Բրիտանեան ունի նաև չատ մը կղզիներ ալ՝ զինքը չրջապատող ծովերուն ափանց վրայ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՆԱՏԱՑԻ[1] (բն. 5,500,000). — Մայրաքաղաքն Օդդավա, (բն. 50,000), Ս. Լաբրենտիոս գետին մէկ հիւղին վրայ. մայրաքաղաք է Գանատա գաւառին և ամբողջ հիւսիսային Ամերիկոյ անգղիական գաւառաց: — Քէպէք, (բն. 65,000), հին մայրաքաղաքը, Ս. Լաբրենտիոսի վրայ գեղեցիկ նաւահան-

198. Որո՞նք են Նոր–Բրիտանիոյ սահմանք, և գլխաւոր քաղաքները:

1 Dominion of Canada.

գըստով՝ ամուր քաղաք է։ — Մոնրեալ, արևմտեան կողմը, (բն. 220,000)։ վաճառաշահ և գեղեցիկ քաղաք է, հոյակապ են մայր եկեղեցին և Վիկտորիա կամուրջն։ — Դորոնիդոյ, (բն. 190,000), Օնդարիոյ լճին վրայ, Վերին Գանատայի ամենէն ծաղկած քաղաքը։ — Ոչհիբեկ (բն. 26,000) գլխաւոր քաղաք է Մանիդոպա գաւառին, Գանատայի արևմտեան կողմը։

Ֆրետերիքտոն, արևելեան կողմը, գլխաւոր քաղաք Նոր–Պրունսուիք գաւառին։

Հէլիֆէքս, (բն. 40,000), Նոր–Սկոտիոյ գլխաւոր քաղաքն է՝ Ատլանտեան ովկիանոսին արևելեան հարաւային ափանց վրայ. աղէկ նաւահանգիստ։



Քէպէք

Արևելեան կողմն կայ Լապրատոր ընդարձակ թերակղզին, մեծաւ մասամբ անբեր, որուն բնակիչք կ'ըսուին փոքր Եսքիմացիք։ Իսկ արևմտեան ափունքն կը կոչուի Գոյռնկսիա անգղիական, որ առաջ հանք ունի ոսկւոյ։

199. ԿՂԶԻՔ. — Ատլանտեան ովկիանոսին մէջ, Նոր–Երկիր, Ս. Լաւրենտիոսի ծոցով և Պէլ'–Իլի նեղուցով բաժնուած է Լապրատորի ցամաքէն. նշանաւոր է արևելեան ծովափանց աւազուտն, ուր մեծ որս և վաճառականութիւն կ'ընեն ձողաձկան։

Սոռրթ Յովհաննէս կամ Եդուարդ Իշիաևի Գլուխ Պրըդոնի կղզի	Նոր–Երկրին Արևմըտեան հարաւային կողմը։

199. Որո՞նք են Նոր–Բրիտանիոյ կղզիք։

Պերմուտեան կղզիք, Միացեալ Նահանգաց արևելեան կողմը, ցամաքէն 900 քիլոմէդր հեռու, անբեր և ժայռուտ կղզիներ են։

Նոր–Երկրին հարաւային կողմն ուրիշ երեք կղզիք ալ կան, որոնք Գաղղիոյ կը վերաբերին, որ են. Ս. Պետրոս, Միքելոն և Փոքր–Միքելոն։

Մեծ ովկիանոսին մէջ,

Վանքուվեր կամ Ֆուճատրա և Շարլոտ թագուհոյ կըղզիները, Նոր–Բրիտանիոյ արևմտեան եզերքը։

200. Ձանազան գիտելիք. — Նոր–Բրիտանիան 1763ին Գաղղիացւոցմէ անցաւ Անգղիացւոց։ Տարածութիւնն է զրեթէ 7,990,700 քառակուսի քիլոմէդր, 25 անգամ մեծ քան զԲրիտանական կղզիները. սակայն միայն արևելեան հարաւային կողմերն իրապէս Անգղիոյ կը վերաբերին. իսկ արևմտեան և հիւսիսային մասերուն մէջ բարբարոս և աղքատ ցեղեր կը բնակին, որոնք չորքատանեաց և ձկանց որսորդութեամբ կ'ապրին և իրենց միակ բերքն է ընտիր մուշտակները։ Արևելեան հարաւային մասը բարեբեր և գեղեցիկ է։ Բնակիչքը 6,300,000 որոնց կէսէն աւելի Նոր–աղանդ են, 1,900,000 կաթուղիկեայք. մնացածները զանազան աղանդներու կը վերաբերին։

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ

201. ՍԱՀՄԱՆՔ. — Միացեալ նահանգաց սահմանքն են, Հիւսիսէն՝ Նոր–Բրիտանիա, արևմուտքէն՝ Մեծ Ովկիանոս, հարաւէն՝ Մեքսիկոյի ծոցն և Մեքսիկոյ, և արևելքէն՝ Ատլանտեան Ովկիանոս։

Քառասունուչորս ազատ Նահանգներէ ձևացած է ներկայացեալ այս Դաշնակցութիւնս. որոնց գլխաւորներն հետևեալքն են՝ հանդերձ իրենց նշանաւոր քաղաքներով։

200. Ինչ կայ գիտնալիք Նոր–Բրիտանիոյ վրայ։

201. Որո՞նք են Միացեալ Նահանգաց սահմաններն, և գլխաւոր քաղաքները։

Արևելեան Նահանգք.

Գոլումպիա Նահանգին և ամբողջ Դաշնակցութեան մայրաքաղաքն է Ուոշինկդըն (բն. 250,000). աթոռ է հասարակապետութեան գահերիցուն և կեդրոն խորհըրդարանաց:



Կապիտոլէում Ուոշինկդընի

Մասաչըսեդ. գլխաւոր քաղաքն Պոսդըն (բն. 475,000) իւր բազմաթիւ ուսումնական ընկերութեանց համար Միացեալ Նահանգաց Աթէնք ըսուած է. հոս ծնած է Բենիամին Ֆռանքլին իմաստասէրը:

Ռոտ Իսլանտ. գլխաւոր քաղաքն Բրովիտանս (բն. 150,000) գեղեցկագիր ծոցի մը վրայ վաճառաշահ քաղաք է:

Նիւ Եօրք. գլխաւոր քաղաքներն Նիւ-Եօրք (բնակիչ 1,700,000), Դաշնակցութեան ամենէն վաճառաշահ և բազմամարդ քաղաքն է, Հուտսընի բերանը կղզւոյ մը



Քաղաքապետարան Նիւ-Եօրքի

վրայ. հոյակապ շէնքեր և գեղեցիկ ճեմելիքներ ունի. առակախեալ հսկայածաւալ կամրջով մը միացած է քաղաքս Պրուքլինի (բն. 810,000) հետ: — Պըֆալօ (բնակիչ 270,000), շատ բանուկ նաւահանգիստ է Էրքէ լճին

վրայ։ — Ռոչեսթր (բն. 150,000) Օնդարիօ լճին վրայ վաճառաշահ և ամուր քաղաք է։ — Ալպանի (բնակիչ 100,000) Հուստոնի վրայ։

Նիւ-Ժէրսի. գլխաւոր քաղաքք Նիւարք (բն. 190,000) և Ժէրսի Սիթի (բն. 170,000)։



Հանդաստարան ի Ֆիլատելֆիա

Բէնսիլվանիա. գլխաւոր քաղաքք Ֆիլատելֆիա (բն. 1,075,000) Տելավէր գետին վրայ չատ բանուկ նաւահանգիստ և ծաղկեալ քաղաք է, համալսարան ունի։ — Բիտսպուրկ (բն. 250,000) Ալեղհկայի ամենէն ճարտարագործ քաղաքն է։

Մէրիլանտ. գլխաւոր քաղաքն Պալդիմօր (բնակիչ 450,000) մեծ և անուանի նաւահանգիստ է համանուն ծոցին վրայ որ 2000 նաւ կրնայ ընդունիլ։

Օհայօ. գլխաւոր քաղաքն Զինչիննատի (բն. 300,000).



Չինուորական դպրոց ի Ուեսթ-Բօինթ

ճարտարարուեստ քաղաք է, մեծ առուտուր ունի խոզեղինաց։

Հիւսիսային կողմն.

Միչիկան. գլխաւոր քաղաքք Տեդրոյա (բն. 220,000),

մեքենական գործարաններ ունի. առաջին չոգենաւն հոս չինուեցաւ 1818ին։ — Ռոչեսթըրսիին (բն. 220,000) Միչիկանի վրայ, մեծ վաճառականութիւն ունի արմտեաց։

Մինեսզոդա. գլխաւոր քաղաքը Ս. Պօղոս (բնակիչ 150,000) Միսիսիբիի վրայ, և անոր գիմաց Մինեափօլիս (բն. 175,000)։



Գետերուն Ռոչիսթըրի ի Մրնդ վիճակը

Միլին կողմն.

Փէնդուքի. գլխաւոր քաղաքն Լուիզվիլ (բն. 165,000)։

Ինտիանա. գլխաւոր քաղաքն Ինտիանափօլիս (բն. 115,000)։

Իլլինուա. գլխաւոր քաղաքն Չիքակօ (բն. 1,120,000) Միչիկանի վրայ, մեծ կեդրոն է արմտեաց և ապխտեղինոց վաճառականութեան։

Միսսուրի. գլխաւոր քաղաքն Սեն Լուի (բն. 450,000) մեծ և գեղեցիկ քաղաք է Միսիսիբիի վրայ։

Հարաւային կողմն.

Լուիզիանա. գլխաւոր քաղաքն Նոր-Օրլեան (բն. 250,000) գեղեցիկ քաղաք և շատ բանուկ նաւահանգիստ է Մեքսիկոյի ծոցին վրայ։

Արևմտեան կողմն.

Գալիֆոռնիա. գլխաւոր քաղաք Սան Ֆրանչիսքօ (բն. 310,000) Խաղաղական Ովկիանոսին վրայ նաւահանգիստ է. և այս եզերաց վրայ ամենէն վաճառաշահն եղաւ նահանգիս մէջ առատ ոսկեհանք գտնուելէն վերջը։

Գոլորատօ. գլխաւոր քաղաք Տենվեր (բն. 110,000)։ ածխոյ և մետաղաց հանքերու պատճառաւ քիչ տարուան մէջ բազմութիւն գաղթականաց հոս գիմելով չէնցուց քաղաքս։

202. ՀԵՌԱԻՈՐ ԿԱԼՈՒԱԾՔ. — Միացեալ Նահանգաց անցաւ, ինչպէս վերն յիշուեցաւ, Ալասքա ընդարձակ երկիրն յամին 1867, Նոր-Բրիտանիոյ արևմտեան հիւսիսային կողմը։ Մօտերը քանի մը արշիպեղագոսներ կան, որոնց գլխաւորներն են.

Ալեուդեան կղզիք, որ երկայն շղթայ մը կը ձևացընեն, որոնցմով Ամերիկա կարծես Ասիոյ հետ կը միանայ։

Ասոնց մօտ են դէպ ի հարաւակողմը՝ Ամիտոդ կղզին, Կալկան իշխանին, Եօրքի Դքսին և Գէորգ թագաւորին արշիպեղագոսները, որոնց վերջնոյս մէջ նշանաւոր է Սիդքա կղզին իւր Նոր-Արխանկել ամրոցով, երբեմն կեդրոն Ռուսաց կալուածոց Ամերիկայի մէջ։

Միացեալ Նահանգք Ովկիանիոյ հիւսիս. Բոլինեզիոյ արշիպեղագոսին մէջ Հաւաի կղզեաց ևս տիրացան 1897ին։

Յաջորդ տարին ալ Սպանիայէն պատերազմաւ չատ մը կղզիներ առին (տ. թ. 64)։

202. Որո՞նք են Միացեալ Նահանգաց հեռաւոր կալուածները։

203. Ձանազան գիտելիք. — Միացեալ Նահանգք՝ կալուածներով հանդերձ՝ 9,212,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն ունին: Բնակչաց թիւն է 70,000,000, որոնք սպիտակ ցեղին կը վերաբերին, բաց ի 6,000,000 սեւամորթ և խառնածին ցեղերէ: Տիրապետող կրօնք մը չկայ. այլ մեծաւ մասամբ բողոքականութեան այլ և այլ ճիւղերուն կը հետեւին. գրեթէ 8,000,000 կաթուղիկեայք կան, գլխաւորապէս Լուիզիանա և Մերիլանտ նահանգաց մէջ. իսկ կառավարչաք սակաւաթիւ են: Սկսեալ 1783էն, յորում յետ երկար պատերազմաց Անգղիոյ տիրապետութենէն ազատեալ իրենց անկախութիւնն ստացան, դաշնակից հասարակապետութիւն է տէրութիւնս՝ այժմ 44 անկախ նահանգներէ կազմուած, և 5 գաւառներէ (որոնք դեռ առանձին կառավարութիւն չունին բնակչաց նուազութեան պատճառաւ): Ամէն նահանգ ինքնավար տէրութիւն մ'է. այլ հասարակաց չահու խնդիրք՝ հասարակաց կրկին ժողովօք կ'որոշուին, որ են ներկայեան և երեսփոխանաց խորհրդարանը[1]. ասոնց ամենուն վրայ Գահերէց մը կայ, որ չորս տարի մէյմը կ'ընտրուի: Ուսմանց և ճարտարութեան կողմանէ Եւրոպայի հաւասարած են. իսկ մեքենականութեան կողմանէ գերազանցած: Միացեալ Նահանգաց լայնածաւալ երկիրն ծայրայեղ կլիմաներ ունի. Ատլանտեանի ափանց վրայ և շատ ներքին գաւառներ ձմեռն սաստիկ ցուրտ և ամառն չափազանց տաք կ'ընէ: Կոյս անտառաց ուռճալի բուսաբերութիւնն և լայնատարած լճերն ու գետերն որ ջրվէժներով իրարու մէջ կը հոսին վսեմ և հիանալի տեսարան մը կը ներկայացընեն: Հողն շատ բարեբեր է. Եւրոպայի ամէն բերքերն ունի, մանաւանդ ամենառատ արմաիք. ասոնցմէ զատ՝ կը բուսցընէ շաքարի եղէգ, բամբակ, լեղակ, ծխախոտ և այլն. ունի առատ երկաթ, կապար, պղինձ, հանքածուխ և քարիւղ: Սկսեալ 1848 տարիէն Գալիֆոռնիոյ և մանաւանդ Սաքրամէնդոյ գետին յատակին մէջ ոսկւոյ շատ հանքեր գտնուած են, որոնց հարբուտութիւնն աշխարհիս ամէն կողմէն գաղթականութիւններ հոն կը ձգէ: Արծաթի ամենահարուստ հանքեր կան խաղաղական ովկիանոսն Ատլանտեանէն զատող լերանց ՀՂԹայից մէջ:

203. Ի՞նչ դիտելիք կայ Միացեալ Նահանգաց բնակչաց և բերոց վրայ:

1 Չոր Կոպէրնիկ կը կոչեն:

ՄԵՔՍԻԳՈՅ

204. ՍԱՀՄԱՆՔ. — Մեքսիգոյ կամ Մեխիգոյի հասարակապետութեան սահմանքն են, հիւսիսէն՝ Միացեալ Նահանգք, արեւմուտքէն՝ Մեծ ովկիանոս, հարաւէն՝ Մեծ



Մեքսիգոյ

ովկիանոս և կեդրոնական Ամերիկա, և արեւելքէն՝ Անդիլեանց ծով և Մեքսիգոյի ծով:

204. Ո՞ւր կ'իյնայ Մեքսիգոյ, և որո՞նք են գլխաւոր քաղաքները:

Մայրաքաղաքն է Մեքսիկոյ, (բն. 340,000), հարաւակողմը, նոր աշխարհին ամենէն գեղեցիկ քաղաքներէն մին է. անուանի է մայր եկեղեցին, հին Մեքսիկացւոց մեհենին տեղւոյն վրայ, տէրութեան պալատն և փողերանոցը: Ասոր մօտ նշանաւոր քաղաքն են, Բուէպլա, (բն. 110,000), տէրութեան երկրորդ քաղաքը: — Վէրա–Գրուզ, (բն. 25,000), Մեքսիկոյ ծոցին մէջ, գլխաւոր ծովային քաղաքն և Ամերիկայի ամենէն վճառաշահներէն մին: — Ոչախաքա (բն. 30,000). գաւառէս ընտիր որդան կարմիր կ'ելլէ: — Մօրելիա (բն. 40,000) բարերեր գաւառի մը մէջ որ Մեքսիկոյ պարտէզը կը կոչուի: – Մէյտեղերն՝ Կուատալախարա (բն. 105,000): — Սան Լուիզ Բոդոսի (բն. 70,000): — Կուանաժուադո (բն. 60,000): — Գուէրեդարո (բնակիչ 37,000) ուր սպանուեցաւ Մաքսիմիլիանոս կայսրն յամին 1867: — Եուքադան թերակղզւոյն մէջ Մերիտա (բն. 50,000):

Այս թերակղզւոյս հարաւ. արեւելեան ափանց վրայ Անգղիա գաղթականութիւն մ'ունի որ կը կոչուի Հոնտուրաս անգղիական. գլխաւոր քաղաքն Պելիզ (բնակիչ 30,000). վայտաններկի և աքաժուի մեծ վաճառականութիւն ունի:

205. Ջանազան գիտելիք. — Մեքսիկոյ տարածութիւնն է 1,987,000, քառակուսի քիլոմէտր. բնակիչքը 12,100,000, մեծաւ մասամբ կաթուղիկեայք: Սպանիական գաղթականութեանց ամենէն հարուստն էր Մեքսիկոյ միջին դարուն մէջ, թէ հանքերուն կողմանէ՝ որ Ամերիկայի ամէն երկիրներէն աւելի ոսկի և արծաթ կը մատակարարէր, և թէ իւր ընտիր բերքերուն պատճառաւ, ինչպէս ցորեն, շաքար, քաքաօ, վանիլիա, բամբակ, լեղակ, ծխախոտ և աղնիւ փայտ: Երկրին բարձրութիւնն և մէջէն անցնող շատ մը լերանց շղթայքն, ընդհանուր անոյշ և բարեխառն կլիմայ կը պատճառեն. ծովեզերքն միայն տաք և վատառողջ են: Այս հասարակապետութիւնս երկար ժամանակ քաղաքական պատերազմաց և խռովութեանց ենթակայ ըլլալով, 1864 տարւոյն Գաղղիա զինուք միջամտութիւն ըրաւ, և իրենց վրայ կայսր ղրկեցաւ Մաքսիմիլիանոս իշխանն,

205. Մեքսիկոյ վրայ ի՞նչ գիտելիք կայ:

եղբայր այրէի Աւստրիոյ կայսեր. ոսկւոյ երեք տարի վերջը դարձեալ քաղաքական խռովութիւն ծագելով՝ զինքը սպանեցին և վերահաստատուեցաւ հասարակապետութիւնը:

ՄԻՋԻՆ ԿԱՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

206. ՍԱՀՄԱՆՔ. — Կեդրոնական Ամերիկայի 5 հասարակապետութեանց սահմանքն են, հիւսիսէն՝ Մեքսիգոյ, արեւմուտքէն և հարաւէն Մեծ ովկիանոս, և արեւելքէն՝ Բանամայի պարանոցն և Անդիլեանց ծովը:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Հինգ անկախ հասարակապետութիւնքն են, Կուատեմալա, Սալվատոր, Հոնտուրաս, Նիկարակուա և Գոստա–Րիքա:

ԿՈՒԱԴԵՄԱԼԱ, որոյ անուամբ ժամանակաւ հինգը միանգամայն կը կոչուէին, ունի 1,525,000 բնակիչք: Մայրաքաղաքը Նոր–Կուատեմալա (բն. 70,000), Մեծ ովկիանոսէն քիչ հեռու. բարձր դաշտի մը վրայ նոր ու գեղեցիկ քաղաք է. տուները միայարկ են՝ յաճախ հանդիպած երկրաշարժներու պատճառաւ. ինչպէս 1777ին, որ հինգ օր տևեց և 9,000 մարդկանց մահ պատճառեց:

ՍԱԼՎԱՏՈՐ, բնակիչքն են 800,000. հինգին մէջ ամենէն փոքրագոյնն է, սակայն շատ բարմամարդ է և վաճառաշահ. հարուստ հանքեր ունի արծաթի, երկաթի և կապարի. իսկ իր լեղակն աշխարհիս մէջ ամենէն գեղեցիկը կը համարուի: Մայրաքաղաքը Սան–Սալվատոր (բն. 62,000). յամին 1854 երկրաշարժէ գրեթէ բոլորովին կործանեցաւ:

ՀՈՆՏՈՒՐԱՍ, Կուատեմալայի արեւելեան կողմը կ'իջնայ, բնակիչքը 400,000. երկիրը բարերեր է ոսկւոյ և արծաթի հանքեր ունի, սակայն կլիմայն վատառողջ է: Մայրաքաղաքը Դէկուսիկալպա (բն. 12,000):

ՆԻԿԱՐԱԿՈՒԱ, Հոնտուրասի հարաւային կողմը, (բն.

206. Կեդրոնական Ամերիկայի հինգ հասարակապետութիւնքն որո՞նք են:

320,000)։ Երկիրն աքանչելի պտուղներ կը հասցընէ. ընդարձակ անտառներ և գաշտեր ունի, ուր բազմութիւն արջառոց կը սնուցանեն. շատ հրաբուղխներ ալ կան։ Մայրաքաղաքը Մանակուա (բն. 9,000), համանուն գեղեցիկ լճին վրայ։

ԳՈՍԴԱՆ–ՐԻԿԱ, Կեդրոնական Ամերիկայի արևելեան հարաւային ծայրը կ'ինկայ. (բն. 270,000). երկրին անունն յառաջ եկած է ոսկւոյ հանքերէն՝ որ ժամանակաւ առատ կը գտնուէր. բայց երկրին բուն հարստութիւնքն են չինուածոց փայտերն՝ մանաւորապէս աքաժոռ, խահուէ, բամբակ, լեզակ, և այլն։ Մայրաքաղաքը Սան–Եոզէ (բն. 30,000)։

207. Զանազան գիտելիք. — Կեդրոնական Ամերիկայի տարածութիւնն է 443,900 քառակուսի քիլոմէտր. և բնակչաց թիւը 3,313,000, գրեթէ ամբողջ կաթուղիկեայք։ Իր բարեբերութեամբն այս երկիրս Ամերիկայի ամենէն ղուարճալին պէտք էր ըլլալ, եթէ աեպ սաստիկ երկրաշարժներու ենթակայ չըլլար։ Առաջ իրարու դաշնակից էին աատնք՝ Կուատեմալայի գլխաւորութեան ներքև. սակայն հիմա ամէնքն ալ ազատ տէրութիւններ են՝ իրարմէ անկախ։

ԱՆԴԻԼԵԱՆՔ ԿԱՄ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՆԴԻԿՔ

208. Դիրք եւ բաժանումներ. — Անդիլեանց մեծ արշիպեղագոսն՝ որ կը գտնուի երկու Ամերիկայից մէջտեղ, իր համանուն ծովուն արևելեան հիւսիսային և արևելեան հարաւային կողմը, երեք գլխաւոր խումբ կը բաժնուի, այսինքն.

Լուգայեան կղզիք, հիւսիսային կողմը.
Մեծ Անդիլեանք, մէջտեղը,
Փոքր Անդիլեանք, արևելեան հարաւային կողմը։

207. Կեդրոնական Ամերիկայի տարածութիւնն և բնակիչքն որչափ են։
208. Անդիլեանք քանի՞ մասն կը բաժնուին։

209. Զանազան գիտելիք. — Անդիլեանց տարածութիւնը 257,000 քառակուսի քիլոմէտր կը հաշուի, և բնակչաց թիւը 4,000,000. մեծաւ մասամբ կաթուղիկեայք են, և երեք եպիսկոպոսութիւն կը վերաբերին. սպիտակքն Եւրոպացի են կամ Եւրոպացւոցմէ յառաջ եկած. սևամորթք Ափրիկէէ փոխադրուած են, և գունաւորք՝ սպիտակներէն և սևամորթներէն յառաջ եկած են։ Երկու եղանակք տարւոյ կան միայն Անդիլեանց մէջ. մէկ եղանակն, որ կը տեւէ նոյեմբերի սկիզբէն մինչև ապրիլ ամիսը, իսկ միւսն ամբողջ անձրեւային է։ Առաջին եղանակին մէջ աշխարհիս ամենէն պայծառ երկինքն է հոն. իսկ երկրորդին ժամանակ՝ անդադար ահաւոր և բուռն մրրիկներ կը տիրեն։ Սաստիկ երկրաշարժներու ալ ենթակայ են այս կղզիք։ Ապոյ, Ափրիկէի և Ամերիկայի ամենէն ճոխ բերքերը կը բուսանին այս կղզեաց մէջ. ինչպէս շաքարի եղէգ, խահուէ, ծխախոտ, լեզակ, և այլն։ Եւրոպայի բուսոց մեծ մասը կը մշակուի հոս, սակայն այն տեղէն բերուած գրեթէ ամէն մեծ կենդանիք չուտով կը ջնջուին Անդիլեանց մէջ. խոզն և ճադարը միայն կլիմային յարմարած են։

ԼՈՒԳԱՅԵԱՆ ԿՂԶԻՔ

210. Լուգայեան կամ Պահամա կղզիները՝ գրեթէ 500 հատ են, և Անգղիոյ կը վերաբերին։ Ամենէն նշանաւորն է Սան–Սալվատոր. զոր այսպէս կոչեց Քրիստափոր Գոլոմպոս, երբ հոն հասաւ հոկտեմբերի 12ին յամին 1492. նոր աշխարհին մէջ գտնուած առաջին երկիրն այս եղաւ։ Ամբողջ արշիպեղագոսը 60,000 բնակիչ ունի։

209. Անդիլեանց բնակչաց և կլիմային վրայ ինչ գիտնալիք կայ։
210. Քանի՞ են Լուգայեան կղզիք. և Գոլոմպոսի գտած առաջին կղզին որո՞ն է։

ՄԵԾ ԱՆԴԻԼԵԱՆՔ

211. Մեծ Անդիլեան կ'ըսուին այս չորս կղզիները. Գոռսպա, Ճաւայիգա, Հայիդի և Բորդոյ–Բիգոյ։

Գոռսպա, (բն. 1,630,000), արեւմտեան կողմը, և այս կղզեաց ամենէն մեծը. Միացեալ Նահանգաց ձեռքն է։ Երկիրը շատ բարեբեր է և սովորաբար երկու հունձք կու տայ. մեծամեծ անտառներէն առատ և ազնիւ փայտ կ'ելլէ շինութեան և ներկարարութեան. գլխաւոր բերքերն են՝ շաքար, եգիպտացորեն, անանաս, բամբակ, քաքաօ, խահուէ, և սքանչելի ծխախոտ, կրիայից պատեհանն ալ շատ յարգի է։ Մայրաքաղաքը Հաւանա (բն. 230,000) գեղեցիկ նաւահանգստով։

Նշանաւոր քաղաքք են՝ Մադանզաս (բն. 58,000) հիւսիսային կողմը լաւ նաւահանգիստ ունի։ — Բուէրտօ Բրինսիբէ (բն. 40,000) մէջտեղն։ — Սանդիակօ տէ Գոռսպա (բն. 60,000) հարաւակողմն ծոցի մը վրայ, գեղեցիկ նաւահանգիստ ունի։

Ճաւայիգա (բն. 665,000), Գուպայի հարաւային կողմը, Անգղիացւոց ձեռքը։ Երկիրն աղէկ մշակուած է, յառաջ կը բերէ շաքար, քաքաօ, լեզակ, բամբակ. պըտղոց մէջ նշանաւոր է անանաս, նարինջ, պանան, ևն. անուանի է նաև ռում։ Մայրաքաղաքն է Ֆինկդրև, (բն. 38,000), կղզւոյն գլխաւոր վաճառաշահ նաւահանգիստն։ — Սրանիչդավն (բն. 7,000) հին մայրաքաղաքն։ — Բոր–րոյալ (բն. 15,000) ընդարձակ ու գեղեցիկ նաւահանգիստ ունի. յաճախ երկրաշարժն ու մրրիկք վնասած են քաղաքիս։

Հայիդի կամ Սան–Տոմինկոյ կղզին, զոր Գոլոմպոս Իսբանիոլա կոչեց, երկու անկախ Հասարակապետութեանց կը բաժնուի. մէկն է Հայիդի, միւսը Դոմինիկեանը։

211. Մեծ Անդիլեան կղզիք քանի՞ հատ են, և որո՞նք են։

Հայիդիի Հասարակապետութիւն (բն. 960,000), Գուպայի արեւելեան կողմը. միւս կղզեաց բուսական բերքերէն զատ՝ ունի ազնիւ մետաղներ, մանաւանդ ոսկի։ Բնակչաց լեզուն գաղղիարէն է, և գոյներնին սև։ Մայրաքաղաքը Բորդ–օ–Բրինս (բն. 60,000)։

Դոմինիկեան Հասարակապետութիւն (բն. 420,000). լեզուն սպանիարէն է, և գունով սևամորթ և թուխ են։ Մայրաքաղաքը Սան–Տոմինկոյ (բն. 16,000)։

Բորդոյ–Բիգոյ, (բն. 810,000), Հայիդիի արեւելեան կողմը, սպանիական կալուած է։ Երկիրը շատ բարեբեր է, և միւս կղզեաց ամէն բերքերն առատութեամբ կը բուսցընէ։ Մայրաքաղաքը Սան–Ժոռան, (բն. 30,000)։

ՓՈՔՐ ԱՆԴԻԼԵԱՆՔ

212. Այս կղզիք որ Գարայիպ ալ կ'ըսուին հին բնակչաց անուամբն, երեք արշիպեղագոսներու կը բաժնուին, որ են.

Հողմոց, անդադար արեւելեան հողմոց ենթակայ ըլլալնուն պատճառաւ.

Կոռաւանաց կղզիք.

Հողմազատ կղզիք, որ այսպէս կոչուած են՝ միւս կղզեաց պէս փոթորկալից չըլլալնուն պատճառաւ։

Առաջին երկուքը Մեծ Անդիլեանց արեւելեան հարաւային կողմը կ'իյնան, իսկ վերջինը՝ հարաւային Ամերիկայի հիւսիսային կողմը։

213. Այս կղզեաց գլխաւորները բաժնուած են Գաղղիոյ, Անգղիոյ, Հոլանտայի և Տանիմարքայի մէջ։

Գաղղիոյ կը վերաբերին՝ Կոռաւաղոբա, որոյ շաքարն անուանի է. Մարի–Կալանդ, Տեզիռատ, Լէ Սանդ, Կուատալուբայի արեւելեան ափանց մօտ. Մարդինիք, նոյն

212. Քանի՞ արշիպեղագոսի կը բաժնուին Փոքր Անդիլեանք։

214. Որո՞նք են Գաղղիացւոց կղզիք Փոքր Անդիլեանց մէջ։

կղզւոյն արեւելեան հարաւային կողմը, որոյ անուանի է չաքարն և խահուէնը. Ս. Բարթողիմէոս և Ս. Մարտինոս կղզւոյն հիւսիսային մասը:

214. Անգղիոյ կը վերաբերին՝ Դորդոյա, Վիրձինկորտա, Անհկատա, Անկոռիկա, Անդիկոտ, Ս. Փրիստափոր, Տոմինիք, Ս. Լոչիա, Պարպուտա, վաճառաշահութեամբ և բազմամարդութեամբ նշանաւոր. Ս. Վինչենցիոս, Գրապաօ, Դրինիդատ, և այլն:

215. Հոլանտայի կը վերաբերին Ս. Մարտինոսի հարաւային մասը, Սապա և Ս. Եւստաքէոս, Գիւրասաօ, Օրուպա և Պոռնեն-Ամիէ:

Իսկ Տանիմարքայի կը վերաբերին՝ Ս. Խաչ, Ս. Թովմաս և Ս. Յոհաննէս:

214. Որո՞նք են Անգղիացւոց կղզիք փոքր Անդիլեանց մէջ:

215. Որո՞նք են Հոլանտացւոց և Տանիմարքայի կղզիք փոքր Անդիլեանց մէջ:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

216. ՍԱՀՄԱՆՔ. — Հարաւային Ամերիկայի սահմանքն են, հիւսիսէն՝ Անդիլեանց ծովն և Բանամայի պարանոցն, որ զայն Հիւսիսային Ամերիկայի հետ կը միացընէ. արեւմուտքէն՝ Մեծ ովկիանոս. հարաւէն՝ Մագէլանի նեղուցն, որ զայն Հրոյ երկրէն կը զատէ. և արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս:

217. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Հարաւային Ամերիկա 11 գլխաւոր տէրութեանց կը բաժնուի, որոնք են.

4 հիւսիս. կողմը
- Վենեցուէլա.
- Նոր-Կրանատա կամ Գոլումպիա.
- Էքուադոր կամ Հասարակած.
- Կույանա.

3 արեւմտ. կողմը
- Բերու.
- Պոլիվիա.
- Չիլի, հանդերձ արեւմտեան մասամբ Բատակոնիոյ.

4 արեւել. կողմը
- Պրազիլ.
- Բլատա կամ Արժենդինեան դաշնակցութիւն, հանդերձ Բատակոնիոյ հիւսիսային մասամբ.
- Բարակուայ.
- Ուրուկուայ:

216. ԾՈՎՔ. — Հարաւային Ամերիկան թրջող ծովերը նոյներն են որ անոր սահմանը կը ձեւացընեն. այսինքն, Ատլանտեան ովկիանոս, Անդիլեանց ծով և Մեծ ովկիանոս: Ուրիշ ծովեր չեն կազմուիր ասոնցմէ. այլ մանր ծոցեր:

216. Որո՞նք են Հարաւային Ամերիկայի սահմանքը:
217. Քանի՞ մասանց կը բաժնուի Հարաւային Ամերիկա:
218. Որո՞նք են Հարաւային Ամերիկոյ ծովերը:

219. ԾՈՑՔ. — Գլխաւոր ծոցերը 10 են.

4. Ատլանտեան ովկիանոսէն կը ձգտանան.

Ամերիկա-Սրբոց ծոց, Պրազիլի արեւելեան կողմը.
Ս. Ամերոն, Ս. Գեորգ, Մեժ Ծոց } Բազակոնիոյ արեւելեան կողմը.

4. Մեծ ովկիանոսէն.

Բեհրինգ, Լոս Գոնոս } Բազակոնիոյ արեւմտեան կողմը.
Կոշայաքոշիլ, Գոլումպիոյ արեւմտեան հարաւային կողմը.
Բանամայի ծոց, Համանուն պարանոցին հարաւային կողմը.

2. Անդիլեանց ծովէն.

Տարիեն, Մարագայիպօ } Գոլումպիոյ հիւսիսային կողմը:

220. ՆԵՂՈՒՑՔ. — Երկու են գլխաւորները.

Մակէյրանի նեղուց, որ կը բաժնէ զԱմերիկա Հրոյ Երկրէն.
Լրմեռ, ընդ մէջ Հրոյ երկրին և Տէրուէթեանց կղզւոյն:

221. ԼԻՃՔ. — Զորս գլխաւորներն են.

Մարագայիպօ, Գոլումպիոյ հիւսիսային կողմը.
Դիդիգագա, Բերուի հարաւային կողմը.
Լոս Բադոս, Մէրիմ } Պրազիլի հարաւային կողմը:

222. ԳԵՏՔ. — Հարաւային Ամերիկայի գլխաւոր գետերն Ատլանտեան ովկիանոս կը թափին.

Օրենօք, որ կը թրջէ Գոլումպիոյ արեւելեան կողմը.
Ամազոնաց գետ կամ Մարանիոնօ, Ամերիկայի ամենէն մեծ գետն որ 5,000 քիլոմէթր երկայնութիւն ունի: Բերուէն կը ծագի և կը կտրէ զՊրազիլ: Մատէյրա, Դոբայոս, և

219. Որո՞նք են Հարաւային Ամերիկոյ գլխաւոր ծոցերը:
220. Քանի՞ են Հարաւ. Ամերիկոյ գլխաւոր նեղուցները:
221. Քանի՞ են Հարաւ. Ամերիկոյ գլխաւոր լճերը:
222. Որո՞նք են Հարաւ. Ամերիկայի գլխաւոր գետերը:

Քահիկոս որ իւր ճիւղերն են. Եւրոպայի մեծ գետերուն կը հաւասարին.

Դոգալիդի կամ Բարա, որ կը թրջէ զՊրազիլ, և գետաբերնին մօտ Ամազոնին հետ կը միանայ.

Սան-Ֆրանսիսգոյ, որ կը թրջէ զՊրազիլ.

Լա Պլաթա, որ կը ձգտանայ Բարակոտայ, Բարաննա և Ուրուկոտայ գետերէն, որոնք կը թրջեն զՊրազիլ, և Բարակուայ, Ուրուկուայ ու Բլատա հասարակապետութիւնները, որոնք վերայիշեալ գետերէն առած են իրենց անունը:

223. ՀՐՈՒԱՆԴԱՆՔ. — Գլխաւոր 9 հրուանդաններն ասոնք են.

Կալլիմաս, Գոլումպիոյ հիւսիսային կողմը.
Օրանիժ, Ս. Ռոքոս, Ֆրիօ } Պրազիլի ափանց վրայ.
Հոռն, Հրոյ երկրին հարաւային կողմը.
Ս. Անտոն, Բլատայի արեւելեան հարաւային կողմը.
Կոշասանաց Գլուխ, Բազակոնիոյ արեւելեան հարաւային կողմը.
Ակուլյա, Բարիլեա } Բերուի արեւմտեան հիւսիսային կողմը:

224. ԼԵՐԻՆՔ ԵՒ ՀՐԱԲՈՒԽՔ. — Ամենէն մեծն՝ Անտեսաց Կորտիլիանիերռն չղթայն է, որ հարաւային Ամերիկայի արեւմտեան կողմը բռնած է՝ ծովեզերաց մօտ, և ամբողջ արեւմտեան կողմը բռնած է՝ ծովեզերաց մօտ, և Հիմալայայէն (թիւ 99) վերջը աշխարհիս ամենէն բարձր լեռները կը պարունակէ, որոնց բարձրագոյնն է Ակոնգագուա կոչու (6970 մ.) Քիլիի մէջ: — Անդիսանիա, Գորդոբախի և Բիլիկոգա գլխաւոր հրաբուխներն են Էքուադորի մէջ:

225. Քանի՞ են Հարաւային Ամերիկոյ գլխաւոր հրուանդանները:

224. Որո՞նք են Հարաւային Ամերիկոյ լերինք և գլխաւոր հրաբուխք:

ՎԵՆԵՑՈՒԵԼԱ.

225. ՍԱՀՄԱՆՔ. — Վենեցուելայի դաշնակից Համարակալեստութեան սահմանքն են, հիւսիսէն՝ Անդիլեանց ծովը, արևելքէն՝ Կույանա անգղիական, հարաւէն՝ Պրազիլ, և արևմուտքէն Նոր–Կրանատա:

Մայրաքաղաքն է Գարագաս (բն. 75,000), գուարճալի ու բարեբեր դաշտի մը մէջ՝ Անդիլեանց ծովուն մօտ, որոյ վրայ վաճառաշահ նաւահանգիստ մ'ունի Կուայրա անուամբ, հայրենիք է անուանի Պոլիվար զօրավարին:

Նշանաւոր քաղաքք են, Վալենսիա (բն. 40,000), համանուն լճին վրայ, գեղեցիկ դիրք ունի: — Պարքուզիմիդօ (բն. 32,000), անուանի է լեղակը, քաքաօն և խահուէն: — Վարինաս, անուանի է ծխախոտը: — Մարագայիպօ (բն. 33,000) նաւահանգիստ է համանուն լճին մօտ: — Ս. Յակոբոս (բն. 18,000) ծաղկեալ քաղաք է բարեբեր դաշտի մը մէջ:

226. Զանազան գիտելիք. — Վենեցուելայի տարածութիւնն է 1,044,000 քառակուսի քիլոմէդր. իսկ բնակիչքը 2,250,000, որոնցմէ ի բաց առեալ քանի մը վայրենի ցեղեր, ամէնքը կաթուղիկեայք են: Գլխաւոր բերքն են ազնիւ փայտ, խահուէ, լեղակ, քաքաօ, բամբակ, շաքար, ծխախոտ և ասկէոյ հանք:

Վենեցուելա ունի փոքր Անդիլեանց մէջ Մարգարիտա և ուրիշ հինգ մանր կղզիներ:

225. Որո՞նք են Վենեցուելայի սահմանքը և գլխաւոր քաղաքները:

226. Ինչ կայ գիտնալիք Վենեցուելայի վրայ:

ԳՈԼՈՒՄԲԻԱ.

227. ՍԱՀՄԱՆՔ. — Գոլումպիա, որ ամբողջապէս Հարաւային Ամերիկայի մասն կը համարուի թէ և Բանամայի պարանոցէն վեր բաւական ընդարձակ գաւառ մ'ալ ունի, իրեն սահման ունի հիւսիսէն՝ Անդիլեանց ծովը, արևելքէն՝ Վենեցուելա, հարաւէն՝ Էքուադոր, և արևմուտքէն՝ Մեծ ովկիանոս:

Մայրաքաղաքն է Պոկոդա, կամ Սանդա–Ֆէ տէ Պոկոդա (բն. 100,000), երկրին մէջտեղը բարձր դաշտի մը վրայ չինուած. ամենահարուստ է մայր եկեղեցին, յորում Ս. Աստուածածնայ արձան մը կայ 1358 ադամանդներով զարդարեալ. ասոր մօտերն է Դէքուէնտամա մեծ լրվէժն, որ 145 մէդր բարձրութենէ վար կը թափի:

Նշանաւոր քաղաքք են, Բանամա (բն. 25,000) համանուն պարանոցին վրայ: — Մեդեղին, (բն. 40,000):

228. Զանազան գիտելիք. — Գոլումպիոյ Համարակալեստութեան տարածութիւնն է 1,203,100 քառակուսի քիլոմէդր. բնակչաց թիւը 3,540,000, որոնք գրեթէ առ հասարակ կաթուղիկեայք են, բաց ի 120,000 Հնդկաց: Առաջ Գոլումպիոյ Համարակալեստութեան մասն կը նկատուէին նաև Վենեցուելա և Էքուադոր. սակայն 1830ին, Գաշնակցութիւնը լուծուելով՝ իւրաքանչիւրն անկախ տէրութիւն եղաւ. և այժմ Գոլումպիա կ'ըսուի Նոր–Կրանատա երկիրն միայն, որ ինն գաւառաց կը բաժնուի և Գահերէց մ'ունի չորս տարուան համար: Կլիմայն՝ հիւսիսային կողմը բարեխառն է և առողջարար, իսկ ծովեզերքը տաք և վատառողջ. գլխաւոր հանքերն են ոսկի, արծաթ, բլաղին, աղ և գոհարեղէնք. և տնկոց մէջ՝ ծխախոտ, բամբակ, քաքաօ, խահուէ, քինա, և այլն:

227. Որո՞նք են Գոլումպիոյ սահմանք և գլխաւոր քաղաքները:

228. Ինչ կայ գիտնալիք Գոլումպիոյ բնակչաց և բերոց վրայ:

ԷՔՈՒԱԴՈՐ

229. ՍԱՀՄԱՆՔ. — Էքուադորի հասարակապետութեան, որ է հին Քուիտոյի թագաւորութիւնը, սահմանքն են, հիւսիսէն՝ Գոլումպիա, արեւելքէն՝ Պրազիլ, հարաւէն՝ Բերու, և արեւմուտքէն՝ Մեծ ովկիանոս:

Մայրաքաղաքն է Քուիտոյ (բն. 80,000), Բիչինգա հրաբղխին ոտքը, ծովուն երեսէն 2,900 մէտր բարձր դրքի մը վրայ շինուած է, անոր համար հասարակածին տակ ըլլալով հանդերձ՝ օդը տաք չէ:

Նշանաւոր քաղաքք են Կուայաքուիլ (բն. 40,000). շատ բանուկ նաւահանգիստ ունի: — Կուենկա (բնակ. 30,000):

Անտառից չղթայն որ զէքուադոր հիւսիսէն հարաւ կը կտրէ երեք հրաբուղխ կը պարունակէ. Անդիանա, Բիչինգա և Գոդոբախի. վերջինս Նոր Ալխարհի ամենէն ահաւորն է, որոյ մանչիւնն 200 քիլոմէդր հեռուէն կը լսուի:

Էքուադորէն 900 քիլոմէդր դէպ ի արեւմուտք կ'իյնայ Կալապակոս կամ Կրիայից ըսուած կղզեաց խումբն, որ այս տէրութեանս կը վերաբերի:

230. Ջանազան գիտելիք. — Էքուադորի տարածութիւնն է 630,000 քառակուսի քիլոմ. և բնակչաց թիւը 1,400,000 որոնք կաթուղիկեայք են՝ բաց ի 200,000 Հնդկաց: Գլխաւոր բերքերն են ծխախոտ, լեղակ, բամբակ, ընծիր քինաուն նաև ոսկւոյ և առատ աղի հանք: Ջեռագրծոց մէջ նշանաւոր է իր յարդեայ գլխարկներու վաճառականութիւնը:

229. Ջրուցէ Էքուադորի սահմանքն և գլխաւոր քաղաքները:

230. Ինչ բերք ունի Էքուադոր:

ԿՈԼՈՒՄԲԻԱ

231. ՍԱՀՄԱՆՔ. — Կուլոմբիայի սահմանքն են, հիւսիսէն և արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, արեւմուտքէն՝ Վենեցուելա և Պրազիլ, և հարաւէն՝ Պրազիլ:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Ժամանակաւ շատ ընդարձակ էր այս աշխարհս, որ Եւրոպայի հինգ տէրութեանց մէջ բաժնուած էր. սակայն ամերիկեան տէրութեանց ձեռնասէն վերջը՝ Բորդուգալցւոյ մասն անցաւ Պրազիլի, Սպանիացւոյն՝ Վենեցուելայի. իսկ մնացած մասն այժմ բաժնուած է Անգղիացւոյ, Հոլանտացւոյ և Գաղղիացւոյ մէջ:

Անգղիական Կուլանայի (բն. 285,000), որ արեւմտեան կողմը կ'իյնայ, գլխաւոր քաղաքներն են Ջորձթաուն կամ Տեմերարա (բն. 50,000), որ շատ վաճառաշահ նաւահանգիստ ունի: — Նոր–Ամստերտամ, առաջնոյն հարաւային կողմը:

Հոլանտական Կուլանա (բն. 72,000), որ մէջտեղը կ'իյնայ, կ'ըսուի նաև Սուրինամ, հոն գտնուող համանուն գետին անուամբ. գլխաւոր քաղաքն է Բարամարիպո (բն. 30,000), գեղեցիկ քաղաք և վաճառաշահ նաւահանգիստ:

Գաղղիական Կուլանա (բն. 30,000), արեւելեան կողմը կ'իյնայ. գլխաւոր քաղաքն է Գայեն (բն. 9,000), ուր կ'աքսորէ Գաղղիոյ տէրութիւնը յեղափոխութիւն յարուցանող խռովարարները:

232. Ջանազան գիտելիք. — Ամբողջ Կուլանայի տարածութիւնը կը կարծուի 580,000 քառակուսի քիլոմէդր, ծանօթ բնակչաց թիւը 400,000, որոնց մեծ մասը կաթուղիկեայք են. ներքին կողմերն անծանօթ են, ուր շատ մը հընդկի ցեղեր կը բնակին: Կլիմային սաստիկ ջերմութիւնը բարեխառնած է ծովեզերեայ հողմերով, բազմաթիւ առուակներով և ընդարձակ անտառներով. գլխաւոր բերքերն են խահուէ, շաքար, բամբակ, պղպեղ, քոքոյ և խէժ:

231. Ըսէ Կուլանայի սահմանքն և գլխաւոր քաղաքները:

232. Ինչ կայ գիտնալիք Կուլանայի բնակչաց և բերաց վրայ:

ԲԵՐՈՒ

233. ՍԱՀՄԱՆՔ. — Բերուի սահմանքն են, հիւսիսէն՝ Էքուադորի հասարակապետութիւնը, արեւմուտքէն՝ Մեծ ովկիանոս, հարաւէն՝ Մեծ ովկիանոս և Պոլիվիա, և արեւելքէն՝ Պոլիվիա և Պրազիլ:

Մայրաքաղաքն է Լիմա (բն. 110,000), ինն քիլոմէդր հեռու Մեծ ովկիանոսէն. գեղեցիկ և մեծ քաղաք է, փառաւոր և հարուստ եկեղեցիներ ունի. ատեպ ենթակայ է երկրաշարժի:

Լիմա

Նշանաւոր քաղաքք են, Գալեաոյ, (բն. 34,000). Նաւահանգիստ է Լիմայի, որոյ հետ երկաթուղով միացած է, ամուր բերդեր ունի: — Գուզքօ (բն. 20,000): — Արեքուիբա (բն. 30,000), համանուն հրաբղխին մօտ, շատ ենթակայ է երկրաշարժի, յամին 1868 գրեթէ ամբողջ կործանեցաւ: — Հուանգավելիքա, որուն նշանաւոր է սնդկի հարուստ հանքը:

234. Ջանազան գիտելիք. — Բերուի տարածութիւնն է 1,157,000 քառակուսի քիլոմէդր. և բնակիչքն 3,000,000,

233. Ո՞ւր կ'իյնայ Բերու, և որո՞նք են գլխաւոր քաղաքները:

234. Ի՞նչ տեսակ երկիր ունի Բերու. և ինչ պատմական ղեկք արժանի է յիշատակութեան:

մեծաւ մասամբ կաթուղիկեայք. 300,000 ալ վայրենի հընդկիկք կան: Ունի արծաթի, սնդկի, զմրուխտի և ոսկւոյ հանքեր. յետինը Սպանիացւոց հոս եկած ժամանակ այնքան առատ էր, մինչև ամենէն անարդ կարասիները չինելու կը գործածէին զայն բնակիչք: Այս մեռուզաց գլխաւոր տեղին է Անտեան լերանց շղթայն, ուսկից սկսեալ մինչև ծովեզերք եղած երկիրը չոր ու աւազուտ գաւառ մ'է, ուր ամենևին չանձրեւեր. արեւելեան կողմն ընդարձակ տաք և խոնաւ դաշտագետիններ կան՝ Ամազոնի մէջ թափող բազմաթիւ գետակներէ առոգեալ: Անտեաններէն դէպ ի վեր երկելով՝ աստիճանաբար կը հասնուի մինչև մշտնջենաւոր ձեամբ պատեալ տեղւանք այնպես որ Բերուի մէջ ամէն տեսակ կլիմայ կը գտնուի և հետեւաբար ամենազգի բերք: Նշանաւոր են կոչենիլի-կոյտերը, մանաւանդ Լոպոս կղզեաց մէջ:

Բերու 1821էն ի վեր, յորում ապատեցաւ Սպանիոյ տիրապետութենէն, ազատ հասարակապետութիւն է: Մօտերս 1879–82 ամաց մէջ Բիլիի դէմ ըրած պատերազմներով ստիպուեցաւ վերջնոյս թողլու Դարաբագա գաւառը, և կոչենիլի կոյտերու առժամանակեայ գործածութիւնը:

ՊՈԼԻՎԻԱ

235. ՍԱՀՄԱՆՔ. — Պոլիվիոյ սահմանքն են, հիւսիսէն և արեւելքէն՝ Պրազիլ, հարաւէն՝ Բարակուայ, Արճենդինա և Բիլի, և արեւմուտքէն՝ Բերու և Մեծ ովկիանոս:

Մայրաքաղաքն է Սիւքրը կամ Զուքիսաքա (բն. 25,000). ի պատիւ համանուն զօրավարին այսպէս կոչուեցաւ. գեղեցիկ դաշտի մը մէջ չինուած է հարուստ արծաթահանքի մը մօտ. անոր համար Լա–Բլադա ալ կ'ըսուի այս քաղաքս, որ արծաթ ըսել է:

Նշանաւոր քաղաքք են, Լա–Բազ (բն. 45,000). անուանի է ասոր ոսկեհանքը: — Բոդոզի, (բն. 23,000).

235. Որո՞նք են Պոլիվիոյ սահմանք. և նշանաւոր քաղաքք:

աշխարհիս ամենէն հարուստ արծաթահանքն և ամենէն բարձր քաղաքն է (4000 մ. ծովուն երեսէն):

236. Ջանազան գիտելիք. — Պոլիվիոյ տարածութիւնն է գրեթէ 1,334,000 քառակուսի քիլոմէտր. բնակ. 2,325,000, գրեթէ ամբողջ կաթուղիկեայք: Առաջ Արեւենդինայի դաշնակցութեան մաս կը կազմէր. սակայն 1825 տարւոյն՝ Պոլիվար և Սիւքը զօրավարաց օգնութեամբ իր ազատութիւնը գտնելով՝ անկախ հասարակապետութիւն եղաւ, և ի պատիւ Պոլիվարի՝ երկիրն ալ Պոլիվիա կոչեցաւ: Քիլիի դէմ պատերազմին մէջ ինքն ալ դաշնակից ըլլալով Բերուի հետ՝ հարաւային կողմէն երկրի մաս մը կորնչուց: Անտեառնց արեւմտեան կողմն եղած գաւառն, ինչպէս ի Բերու, անբնակ և անջրդի անապատ մ'է, որ Ատագաման կ'կոչուի: Այս լերանց շղթայից արեւելեան կողմն անոյշ կլիմայ մը կը վայելէ և ինն ամիս չարունակ անամպ երկինք մը, յորմէ յետոյ անձրեւները կ'ողողեն զերկիրը: Գլխաւոր բերքերն են արմի, ձիթենի, արմաւենի, բամբակենի, շաքարի եղէգ, և կոչանոյի կոյտեր. լերանց մէջ ալ կան առատ ոսկւոյ և արծաթի հանքեր:

ՔԻԼԻ

237. ՍԱՀՄԱՆՔ. — Քիլիի կամ Չիլիի սահմանքն են հիւսիսէն՝ Պոլիվիա, արեւմուտքէն և հարաւէն՝ Մեծ ովկիանոս, և արեւելքէն՝ Արեւենդինա:

Մայրաքաղաքն է Սանդիակոյ (բն. 200,000), զուարճալի դրից վրայ. նշանաւոր են փողերանոցն և մայր եկեղեցին. ենթակայ է քաղաքս յաճախ երկրաշարժի:

Նշանաւոր քաղաքք են Վալբարաիզոյ (բն. 106,000), Քիլիի ամենէն վաճառաշահ նաւահանգիստը. երկաթուղւով միացած է Սանդիակոյի հետ: — Գոնսեբսիօն (բն. 25,000), Մեծ ովկիանոսի մօտ: — Սերենա (բն. 13,000),

236. Ի՞նչ կայ գիտնալիք Պոլիվիոյ վրայ. և վերջերս ինչ պատերազմ ունեցաւ:

237. Քիլիի սահմանքն որո՞նք են. և ինչ նշանաւոր քաղաքներ ունի:

նշանաւոր է նաւահանգիստն. ասոր մօտ հարուստ հանքեր կան, մանաւանդ պղնձի: — Վալտիվիա, Ամերիկայի գեղեցկագոյն նաւահանգիստներէն մէկն է:

Հարաւային կողմերը կայ Բիլոռ արշիպեղագոսը. իսկ ցամաքէն 600 քիլոմէտր դէպ ի արեւմուտք ունի Քիլի Ս. Փելիքս և Ս. Ամբրոսիոս կղզիները, և Ժուան–Ֆերնանտէզ երեք կղզեաց խումբն, որոնցմէ մէկուն վրայ 1709ին սկովտացի նաւաստի մը[1] նաւաբեկութեամբ իյնալով՝ Ռոպինսոն Գրուզօ ծանօթ վիպասանութեան պատճառն եղաւ:

238. ԲԱՂԱԿՈՆԻԱ ԲԻԼԻԻ. — Յամին 1881 Քիլիի և Արեւենդինայի հասարակապետութիւնները իրարու մէջ բաժնեցին Հարաւային Ամերիկոյ վարի կողմն եղած Բազակոնիա աշխարհը. այժմ առաջնոյս կը պատկանի Անտեառնց և Մեծ ովկիանոսին մէջ եղած երկիրն մինչև հարաւային ծայրը, յորում կը գտնուի Մակէլլան՝ իր հին կալուածն, և Հրոյ երկրին արեւմտեան կէսը: Այս երկիրներուս ծովեզերքը բազմաթիւ արշիպեղագոսներ կան, որոնց գլխաւորներն են Լոս–Գոնոս կղզիք, Ոչխարնկդրն, Ս. Ատուածածնայ կղզիք, Հանովր և Ատելայիտ:

239. Ջանազան գիտելիք. — Վերջին տարիներուս մէջ ստացած երկիրներովը Քիլի 776,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն ունի, գրեթէ առաջնոյն կրկնապատիկը. իսկ բնակիչքն 3,317,000, մեծաւ մասամբ կաթուղիկեայք. կան ասոնցմէ զատ հարաւակողմն՝ Արաւգանոս ըսուած 300,000 հոգւոյ չափ բարբարոս և ինքնագլուխ ժողովուրդ մը, զոր դեռ Քիլի կարող եղած չէ նուաճել: Վարչութիւնն ազատ հասարակապետութիւն է՝ սկսեալ 1825էն, յորում ազատեցան Սպանիոյ հպատակութենէն: Երկրին բարեբերութիւնն համեմատական է բարեխառն կլիմային. ունի այգի, ձիթենի և երկու աշխարհագ բերքերուն մեծ մասը. սակայն այս գեղեցիկ աշխարհս ասկղ կ'աւերեն երկրի առատանութիւնք՝ պատճառեալ Անտեան լերանց հրաբուխներէն, որոց կոզերն կը պարունակեն առատ ոսկւոյ, արծաթի և պղնձի հանքեր:

238. Բազակոնիոյ ո՞ր մասին տիրած է Քիլի:
239. Ո՞րչափ են Քիլիի բնակիչքը. և ինչ բերքեր ունի:

1. Ալեքսանդր Սելքիրք:

ՊՐԱԶԻԼ

240. ՍԱՀՄԱՆՔ. — Պրազիլի սահմանքն են, հիւսիսէն՝ Ատլանտեան ովկիանոս, Կույանա և Վենեցուելա. արեւմուտքէն՝ Էքուադոր, Բերու, Պոլիվիա, Բարակուայ



Ռիօ–տէ–Եանէյրօ

և Բլատա. հարաւէն՝ Ուրուկուայ և Ատլանտեան ովկիանոս, և արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս:

240. Որո՞նք են Պրազիլի սահմանքը, և գլխաւոր քաղաքները:

Մայրաքաղաքն է Ռիօ–տէ–Եանէյրօ (բն. 500,000), հարաւ. արեւելեան կողմը ծոցի մը ծայրը, որ աշխարհիս ամենէն գեղեցիկ և ընդարձակ նաւահանգիստներէն մէկը կը ձեւացընէ. կանոնաւոր կերպով չինուած է նոր քաղաքն և շատ վայելուչ շէնքեր և հրապարակներ ունի:

Նշանաւոր քաղաքք են, Բեռնարնպուքոյ կամ Ռեսիֆ (բն. 190,000), արեւելեան կողմը. մեծ նաւահանգիստ է և շատ վաճառաշահ քաղաք մասնաւորապէս ներկարարութեան և չինուածոց փայտերու: — Սան–Սալվատոր կամ Պահիա (բն. 200,000), Ամենայն Սրբոց ծոցին մէջ, Պրազիլի գլխաւոր վաճառաշահ քաղաքներէն

Պրազիլի անտառ

մէկն է, և մայրաքաղաքն էր առաջ: — Բարապիկսա (բն. 40,000) գեղեցիկ նաւահանգիստ է. Պրազիլի փայտի առուտուր ունի: — Հիւսիս. կողմը կան՝ Բարա կամ Պէլեմ (բն. 65,000) ցած և խոնաւ դաշտի մը մէջ: — Սան Լուիզ տէ Մարանհաւօ (բն. 40,000) կըղզւոյ մը վրայ, գաւառն ամէն տեսակ պտուղ կը հասցընէ: — Հարաւակողմն կան՝ Սաւդոս (բն. 30,000) շատ վաճառաշահ նաւահանգիստ է: — Բորդօ Ալէկրէ (բն. 55,000) ծաղկած քաղաք է Լոս Բագոս լճին մօտ: — Ասոր մօտ կայ Ս. Կատարինէ՝ գեղեցիկ և բարեբեր կղզին:

241. Ձանազան գիտելիք. — Պրազիլի տարածութիւնն է գրեթէ 8,361,000 քառակուսի քիլոմէդր. իսկ բնակիչքը 15,000,000, որոնցմէ մէկ միլիոնէն աւելի գերութիւնէ ազատագրեալը են. իսկ կրօնքով գրեթէ ամբողջ կաթուղիկեայք. կը գտնուին տակաւին ներսերը մօտ 600,000 անշուշտ վայրենիներ: Պրազիլ Բորտուգալէն ազատուելով՝ իր ազատութիւնը գտաւ յամին 1825, և մինչև 1889 վարչութիւնն սահմանադրական կայսրութիւն էր, անկէց ետքը դաշնակից հասարակապետութիւն եղաւ: Երկրին հիւսիսային կողմը ճահճային դաշտերէ ձեւացած է, որոնք յաճախ Ամազոնէն և իր ճիւղերէն կ'ողողին. տարաւային գետառները լեռնոտ, առուղնարար և բարեբեր են: Ամերիկայի ամէն բուսական բերքերն ունի. ներկի և կահուց ընտիր փայտեր, նոյնպէս ալնիւ մետաղներ և քարեր, ինչպէս ոսկի, ադամանդ, և այլն: Կենդանեաց մէջ գլխաւորներն են յաւազ, կապիկ, կոկորդիլոս, բաժակաւոր օձ, ջայլամն և թռչնակ:

ԱՐՁԵՆԴԻՆԱ ԿԱՄ ԲԼԱԴԱ

242. ՍԱՀՄԱՆՔ. — Արճենդինեան Դաշնակցութեան սահմանքն են, հիւսիսէն՝ Պոլիվիա, արևմուտքէն՝ Չիլի, հարաւէն՝ Չիլի և Ատլանտեան ովկիանոս, և արևելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, Ուրուկուայ, Պրազիլ և Բարակուայ:

Մայրաքաղաքն է Պուէնոս–Այրես (բն. 565,000), Ռիո տէ լա Բլազայի հարաւային ափանց վրայ, որոյ առնուամբն կոչուած է ամբողջ տէրութիւնը, մեծ և գեղեցիկ քաղաք է: — Լա Բլադա (բն. 65,000) նոր քաղաք է Պուէնոս–Այրէս գաւառին մէջ: — Ռոզարիոյ (բնակիչ 50,000), Բարանայի ձախակողմեան ափանց վրայ. չատ գեղեցիկ և կեդրոնական դիրք ունի: — Մենտոզա, արեւմտեան կողմը, գեղեցիկ քաղաք մ'էր, սակայն 1861ին

241. Ի՞նչ կայ գիտնալիք Պրազիլի բերոց վրայ:
242. Արճենդինեան Դաշնակցութիւնն ո՞ւր կ'իյնայ, և որո՞նք են գլխաւոր քաղաքները:

գրեթէ ամբողջ կործանեցաւ երկրաշարժէ: — Գորտովա (բն. 67,000), երկրին մէջտեղը: — Գադաւարքա (բն. 25,000) հիւսիսակողմն. ասոր մօտ արծաթի ամենահարուստ հանքեր կան. անոր համար ամբողջ աշխարհն Բլադա ալ ըսուած է, որ սպանիարէն արծաթ կը նշանակէ:

Պուէնոս–Այրես

243. ԲԱԴԱԿՈՆԻԱ ԱՐՁԵՆԴԻՆԵԱՆ. — Բադակոնիա աշխարհին արևմտեան կողմը մինչև Անտեանց չղթայն Չիլիի կը վերաբերի, ինչպէս որ առաջ յիշեցինք (տես թիւ 238). իսկ արևելեան կողմը մինչև Ատլանտեան ովկիանոս Արճենդինայի է, որուն կը վերաբերի նաև Մակէլլանի նեղուցէն վար Հրոյ երկրին արևելեան կէսը:

244. Ձանազան գիտելիք. — Արճենդինայի տարածութիւնը Բադակոնիայով հանդերձ է 3,000,000 քառակուսի քիլոմէդր. իսկ բնակիչքը գրեթէ 4,250,000, որոնք՝ բաց ի Բադակոնացիներէն՝ մեծաւ մասամբ կաթուղիկեայք են. վերջին տարիներուս մէջ Իռլանտացիներէն քշուած Հրեայք ևս բազմութեամբ սկսան հոս գաղթել: Եւրոպացին ալ ամէն տարի գրեթէ 40,000 մարդ կը գաղթի հոս, մանաւանդ

243. Բադակոնիոյ ո՞ր մասին տիրած է Արճենդինեան Դաշնակցութիւնը:
244. Ո՞րչափ է Արճենդինեան Դաշնակցութեան տարածութիւնը, և ի՞նչ կլիմայ և բերք ունի:

Իտալացիք: Կլիմայն՝ երկրին գրեթէ ամէն մասին մէջ առողջարար է և օդն բարեխառն. հարաւային կողմը կայ ընդարձակ Բառնբաս անապատ լոտի գաշտն, ուր ոչ խմելու ջուր կը գտնուի և ոչ փայտ: Հողը բարեբեր է, բայց քիչ մշակուած. մերձաւոր աշխարհայ ամէն բերքերն ունի. հիւսիս. արևմտեան կողմերն ալ հարուստ արծաթահանք կան: Վայրենի վիճակի մէջ կը գտնուին եզ, ձի, շուն և խոզ, որոնք խմբով կ'արածին անապատներու և անտառներու մէջ:

Յամին 1810 Սպանիոյ հպատակութենէն ելաւ. յետոյ զանազան երկիրներ իրեն հետ միացան. այժմ տասնուչորս գաւառներէ ձևացեալ է Արճենդինայի Դաշնակից հասարակապետութիւնը:

ԲԱՐԱԿՈՒԱՅ

245. ՍԱՀՄԱՆՔ. — *Բարակուայի սահմանքն են, հիւսիսէն՝ Պոլիվիա և Պրազիլ, արևելքէն՝ Պրազիլ, իսկ հարաւէն և արևմուտքէն՝ Արճենդինա:*

Մայրաքաղաքն է Ասունսիոն կամ Վերափոխումն (բն. 25,000). Հնգամեայ պատերազմին (1865–70) առաջ կըրկինէն աւելի բնակիչ ունէր և շատ աւելի ծաղկած էր. հիմա ինկած է:

Վիլլարիկա (բն. 13,000), երկրին մէջտեղը. հասարակապետութեան երկրորդ քաղաքն է: — Հոռնայիդա, բերդաքաղաք, հարաւակողմը. վերջին պատերազմին մէջ շատ նշանաւոր եղած է:

246. Զանազան գիտելիք. — *Բարակուայի տարածութիւնն է 253,000 քառակուսի քիլոմէտր. բնակիչքը 460,000, կաթուղիկեայք և գրեթէ 70,000 վայրենի հնդիկք: Այս երկիրս սկզբան շատ զարգացաւ Յիսուսեան կրօնաւորաց*

245. *Բարակուայի սահմանքն և գլխաւոր քաղաքն որոնք են:*

246. *Որչափ է Բարակուայի տարածութիւնը. և ինչ բերք կը բերէ:*

ձեռքով. 1813ին Սպանիոյ տիրապետութենէն ազատելով՝ անկախ հասարակապետութիւն եղաւ: Սակայն վերջերս շատ տկարացաւ՝ Պրազիլի, Արճենդինայի և Ուրուկուայի դէմ ըրած վերոյիշեալ պատերազմաւ. և քնակիչց երկու երրորդը պակսեցաւ: Կլիմայն զով և չոր է բարձր տեղերն, իսկ ցած գաշտերը տաք և խոնաւ: Գլխաւոր բերքերն են բամբակ, ծխախոտ, եգիպտացորեն, շաքարի եղէգ, գետնախնձոր, և յատուկ տեսակ մը թէյ, որ իրեն ըսուած ծառին տերևն է:

ՈՒՐՈՒԿՈՒԱՅ

247. ՍԱՀՄԱՆՔ. — *Ուրուկուայի Արևելեան հասարակապետութեան սահմանքն են, հիւսիսէն՝ Պրազիլ, արևմուտքէն և հարաւէն՝ Ատլանտեան ովկիանոս. իսկ արևելքէն՝ Արճենդինա:*

Մայրաքաղաքն է Մոնդեվիտեոյ կամ Ս. Փիլիպպոս (բն. 175,000), Ռիո տէ լա Բլադայի հիւսիսային ափանց վրայ. ամուր քաղաք է, մեծ և վաճառաշահ նաւահանգիստ ունի:

Երկրորդական քաղաքներն են Գոլոնիա և Գաւեղոնես:

248. Զանազան գիտելիք. — *Ուրուկուայի տարածութիւնն է 186,900 քառակուսի քիլոմէտր. բնակիչքը 800,000, կաթուղիկեայք, որոնց մէջ շատ եւրոպացի գաղթականներ ալ կան, ինչպէս Իտալացիք, Գաղղիացիք, Սպանիացիք, և այլն: Կլիմայն ընդհանուր բարեխառն է. և հողն առհասարակ շատ բարեբեր. գեղեցիկ արօտներ ունի՝ ուր անհամար բազմութիւն արջառոց կ'արածին, որ երկրին գլխաւոր հարստութիւնը կը կազմեն. կան նաև վայրի ձիեր, որոնք հազարներով մկտեղ կ'արածին: Ուրուկուայ իւր անկախութիւնն ստացաւ 1825 տարւոյն, և քիչ վերջը աղաւ հասարակապետութիւն եղաւ:*

247. *Ո՞ր կողմն է Ուրուկուայ. և յիշատակութեան արժանի քաղաքն որո՞նք են:*

248. *Ինչ կայ գիտնալիք Ուրուկուայի կլիմային և բերքոց վրայ:*

ԿՂԶԻՔ ՀԱՐԱՒԱՅԻՆ Ա.ՄԵՐԻԿՈՅ

249· Բայց ի Հրոյ երկրէն և միւս վերոյիշեալ կղզիներէն՝ հարաւային Ա.Մերիկոյ մասն կը ձևացընեն ուրիշ կղզիներ ալ, որոնց գլխաւորներն են հետևեալքը·

Մալուինեան կղզիք, որոնց Անգղիացիք Ֆօլքլանտ կ'ըսեն. Մակէլլանի նեղուցին արևելեան կողմը: Առաջ Սպանիացւոց էին, այժմ թողուցած են, և Անգղիացիք միայն քանի մը կալուածներ ունին հոն:

Հարաւային Գեորգիա. և Սանտուիչի արշիպելագոսը. Հոռն հրուանդանին արևելեան կողմն, Ատլանտեան ովկիանոսին մէջ: Անոնցմէ վար Հարաւային Շեդլընտ և Հարաւային Որկադեան կղզիներն, որոնք քիչ ծանօթ են և միշտ ձեամբ և սառոյցով պատած: — Լոբի–Ֆիլիբ, Վիգդորիա, Ժուանվիլ և Կրեհէմի երկիրներն, անծանօթ և սառնապատ ծովեզերք են՝ երկրագնտիս հարաւային բևեռին վրայ:

249· Հարաւային Ա.մերիկա ուրիշ ինչ կղզիներ ունի:

Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա

250· ԴԻՐՔ. — Ովկիանիա կազմող կղզիներն, ինչպէս առաջ ըսինք, ցրուած են ամբողջ Մեծ ովկիանոսին մէջ, որ հին և նոր աշխարհաց մէջ կը տարածուի, և մասնաւորապէս Ասիոյ արևելեան հարաւային կողմը:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Ովկիանիա չորս մաս կը բաժնուի, որ են

Մալեզիա, արևմտեան հիւսիսային կողմը.
Մելանեզիա, արևմտեան հարաւային կողմը.
Միքրոնեզիա, հիւսիսային կողմը.
Բոլինեզիա, արևելեան կողմը:

251· Ջանազան գիտելիք· — Ովկիանիա, որ հաղագընտոյս հինգ մասանց մէջէն ամենէն աւելի տեղ բռնած է, ծովերը դարս հանելով՝ ամենէն փոքրագոյնն և նուազ բնակիչ ունեցողն է: Երկիրներուն տարածութիւնն ամբողջ 10,650,000 քառակուսի քիլոմէդր կը կարծուի. իսկ բնակիչքը գրեթէ 40,000,000, որոնք երկու տարբեր ցեղերու կը վերաբերին: Առաջինն է մալայեցի ցեղն, որ Մալաքքայի թերակղզիէն եկած է և դեղնագոյն ցեղին մէկ տեսակն է. ասիկայ տարածուած է Մալեզիայի, Միքրոնեզիայի և Բոլինեզիայի մէջ: Երկրորդն է սևամորթ ցեղին մէկ տեսակն՝ ովկիանեան սև բնուածք, որոնք մարդկութեան ամենէն բթամիտ և ամենէն խեղճ արարածները կը կարծուին: Մալեզիայի մէջ մշակութականութիւնը բաւական տարածուած է. սակայն Ովկիանիոյ ժողովրդոց մեծագոյն մասին կրօնքը կռապաշտութիւն է. զանազան տեղեր եւրոպական քաղա-

250· Քանի՞ մաս կը բաժնուի Ովկիանիա:
251· Ովկիանիոյ բնակիչքն ո՞ր ցեղերու կը վերաբերին, և ինչ բերք ունի երկիրը:

քակրթութիւնն և քրիստոնէութիւնն սկսած է տեղացւոց մէջ մտնալ։

Ովկիանեա, է բաց առեալ Աւստրալիոյ մեծ մաս մը, հրաշալի երկոյթ ունի և հակայաձև բուսաբերութիւն. թէպէտ այրեցեալ գօտւոյ ներքև կ'իյնայ, բայց կլիմայն ղով և բարեխառն է միշտ՝ ծովային անոյշ հողմերուն պատճառաւ, որոնք օդը կը զովացընեն։ Հանքերն են ոսկի, երկաթ, պղինձ, անագ, ադամանդ։ Աւստրալիա՝ Գալիֆոռնիոյ պէս՝ աշխարհիս ամենէն հարուստ հանքն ունի ոսկւոյ։ Բերքերն են, բրինձ, եգիպտացորեն, շաքարի եղէգ, քափուր, կինամոն, պղպեղ, խահուէյ, մեխակ, արմաւ, անուշահոտ սանդալ փայտը, նարնջենի, հայի ծառ, և այլն։ Թռչնոց մէջ նշանաւոր են դոյնզդոյն թութակներն և դրախտահաւը։ Անոյշ ամէն վայրի կենդանիներն ալ ունի։

ՄԱԼԶԻԱ.

252. ԿՂԶԻՔ ՄԱԼԶԻՈՅ. — Մալզիա կամ Արևմտեան Ովկիանիա, որոյ վրայէն կ'անցնի հասարակածն, հինգ գլխաւոր արշիպեղագոսներէ կը ձևանայ, որոնք երկար ժամանակէ ի վեր ծանօթ են Կղզիք Արևելեան Հնդկաց անուամբ. այսինքն են,

Փիլիպպեանք, հիւսիսային կողմը.
Սոնտի արշիպեղագոսն, արևմտեան հարաւային կողմը.
Պոռնեոյի արշիպեղագոսն, Ջիլեպեսի արշիպեղագոսն } միջին կողմերը.
Մոլուքեանք, արևելեան կողմը։

253. ՓԻԼԻՊՊԵԱՆՔ, (բն. 7,000,000). — Հրաբղխային կղզիներ են, Սպանիացւոց ձեռքն էին. 1898ին Միացեալ Նահանգք մեծաւ մասամբ տիրեցին սոսնց։

Լուսոն (բն. 2,400,000), այս կղզեաց ամենէն մեծն։ Գլխաւոր քաղաքն է Մանիլլա, գեղեցիկ ղրից վրայ, վաճառաշահ նաւահանգիստ։

252. Մալզիոյ արշիպեղագոսք քանի՞ են։
253. Փիլիպպեան արշիպեղագոսին կղզիներն որո՞նք են։

Միւռաւաւա (բն. 1,200,000). Նշանաւոր է իւր բարեբերութիւնն և ոսկւոյ հանքը։ Գլխաւոր քաղաքներէն մէկն է Սէրանկան։

Վիտայես կղզիք. այսպէս կը կոչուին ընդ մէջ Լուսոնի և Միւռաւաւոյ եղած չատ մը մանր և բարեբեր կղզիք, որոնցմէ մէկուն մէջ ապաննուեցաւ Մակէլլան։

Բալաւան, արևմտեան կողմն երկայն կղզի մ'է, մասամբ մը Սպանիացւոց ձեռքը։

254. ՍՈՆՏԻ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍ. — Մեծաւ մասամբ Հոլանտացւոց ձեռքը. մեծ չղթայ մ'են կղզեաց՝ գրեթէ 5,000 քիլոմէդր երկայնութեամբ, արևմուտքէն դէպ ի արևելք. և Մալաքքայի թերակղզւոյն չարունակութիւն մը գրեթէ կը ձևացընեն։ Անոնց գլխաւորներն են՝ երկու մեծագոյնք. այսինքն,

Հագուստ քաղաքացւոց ի Ճաւա

Սումատրա (բն. 3,575,000). մեծ և չատ հրաբղխային կղզի մ'է։ Գլխաւոր քաղաքներն են, Բատաւիկ, կղզւոյն արևմտեան ծովեզերքը. և Բալեմպանկ, արևելեան ափանց վրայ. ասոնք Հոլանտացւոց են։ — Կան նաև երեք անկախ թագաւորութիւնք. Աչին, համանուն քա-

254. Սոնտի արշիպեղագոսին Սումատրա և Ճաւա կղզիներուն վրայ ի՞նչ տեղեկութիւն կրնաս տալ։

զաքով, որ 1873–83 ամաց մէջ չատ անգամ կատաղի պատերազմներ ըրած է Հոլանտացւոց դէմ. Տէրի և Սիաք թագաւորութիւններն, արևելեան կողմը։ —

Հագուստ գիւղուհւոյ ի Ձաւա

Սումադրայի արևելեան կողմն ունին Հոլանտացիք նաև Պանքա կղզին, որ հարուստ հանք ունի անագի, և Պիլիդոն կղզին, ուսկից կ'ելլէ բրինձ, անուշահոտ փայտեր և երկաթ։

Պադաւիա

Ձաւա (բն. 2,000,000). Հոլանտացւոց ձեռքը գեղեցիկ և լեռնոտ կղզի մ'է, Սումադրայի արևելեան հարաւային կողմն, ուսկից զատուած է Սոնտի նեղուցով։ Գլխաւոր քաղաքներն են, Պադաւիա (բն. 100,000).

Հագուստ պալատականաց Ձաւացւոց



Մեհեան ի Մաւորա

Հիւսիսային ափանց վրայ գեղեցիկ և վաճառաշահ նաւահանգիստ ունի. ազուոր է նոր քաղաքն ուր Եւրոպա-

ցիք կը բնակին. մեր ազգէն ևս վաճառականք հաստատուած են այս տեղ: — Շերիսոն, Սամարանկ, Ոռրտապայա, հիւսիսային ափանց վրայ: — Սոդրաքարդա կամ Սօղո (բն. 100,000), Ճորձաքարդա, մեծ քաղաքներ են կղզւոյն ներսերը:

Բաց ի վերոյիշեալներէն, նշանաւոր է Սոնտի արշիպելագոսին մէջ Մատուրա կղզին, Ճաւայի արևելեան հիւսիսային կողմը, արտաքոյ կարգի բարեբեր և բազմամարդ, Հոլանտացւոց իշխանութեան ներքև: Կան նաև հետևեալ երկրորդականներն Ճաւայի արևելեան կողմը. Պալի, Սումպաւա, Ֆլորես, որոնք նոյնպես Հոլանտացւոց են. Դիմոր, որ Բորդուգալցւոց և Սպանիացւոց մէջ բաժնուած է:

255. ՊՈՌՆԵՈՅԻ ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍ. (բն. 4,000,000). — Աւստրալիայէն վերջը աշխարհիս ամենէն մեծ կղզին է Պոռնեոյ, որուն արևմտեան և հարաւային կողմերն Հոլանտացւոց են, իսկ միւս մասերն անկախ թագաւորութիւնք, որոնց գլխաւորներն են՝ Պոռնեոյ, համանուն մայրաքաղաքաւ, և Մադդաս, որոյ մայրաքաղաքին մէջ կը գտնուի կ'ըսեն աշխարհիս ամենամեծ ադամանդը: Հոլանտացւոց գլխաւոր կալուածներն են՝ Սամպաս, Բոնդիանաք, Լանտաք, և Պանտիր–Մասին: Անգլիացիք ալ կալուածներ ունին Սարաւաք թագաւորութեան մէջ, կղզւոյն արևմտեան եզերքը:

Պոռնէոյի արևելեան հիւսիսային կողմն կը գտնուին Սուլու կղզիները, որոց մէկ մասին Սպանիա կ'իշխէ:

256. ՋԷԼԷՊԷՍԻ կամ ՍԷԼԷՊԷՍԻ ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍ. — Այս արշիպելագոսին գլխաւոր կղզին է Ջելեպես (բն. 1,500,000), որոյ մեծ մասն կամ Հոլանտացւոց է կամ անոնց հարկատու իշխաններու. կան քանի մը անկախ թագաւորութիւններ ալ: Առաջնոց կը վերաբերին հարաւային կողմը՝ Պոռնէոյի և Մաքասսար կալուածներն. յետնոյս անուամբ կը կոչուի Ջելեպեսի և Պոռնէոյի մէջ

255. Պոռնէոյի արշիպելագոսին վրայ ինչ տեղեկութիւն կայ:

256. Ջելեպես արշիպելագոսին վրայ ինչ գիտնալիք կայ:

եղած նեղուցը, ունին նաև Մենատաո, և Կորոնդալոյ կալուածներն՝ հիւսիսային կողմը: Ջելեպեսի մէջ հաստատուած են հայազգի սակաւաթիւ վաճառականք:

Ջելեպեսի արևելեան հարաւային կողմը կը գտնուին Պուդոն և Մռեւա կղզիներն, ուր կը բնակին Հոլանտացւոց հարկատու ճարտար Մալայեցիք:

257. ՄՈԼՈՒԲԵԱՆ ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍ. (բն. 375,000). — Այս կղզիներս, որ կ'ըսուին նաև Հաւևոնց կղզիք[1], երկու կը բաժնուին. Մեծ Մոլուքեանք և Փոքր Մոլուքեանք և գրեթէ ամբողջ Հոլանտացւոց են: Փոքր կամ բուն Մոլուքեանք հինգ են թուով. Դեռնատ, Դիտոր, Մաքիան, Մոդիր և Պաչիան: Մեծ Մոլուքեանց գլխաւորներն են Ճիլոլոյ, Ջերամ, Անպոռան որ առատ մեխակենի կը բուսցընէ. և Պանուա հրաբղխային փոքր կղզիք ուր Հոլանտացիք մշկընկոյզ կը մշակեն:

258. Ընդհանուր գիտելիք Մալեզիոյ վրայ. — Մալեզիոյ տարածութիւնն է գրեթէ 1,910,000 քառակուսի քիլոմեթր, և բնակիչքն 33,000,000 կը համարուի: Հարաւային Ասիոյ ամէն բերքն և կենդանիներն ունի: Կլիմայն՝ ինչպես ամբողջ Ովկիանիոյ մէջ՝ բարեխառն է, ծովուն մերձաւորութեան պատճառաւ:

259. Մասնական տեղեկութիւնք. — Փիլիպպեանք ընտնուեցան Մակէլլանի ձեռքով: Ենթակայ են երկրաշարժի և սաստիկ մրրկաց և անձրևաց. սակայն հողն շատ բերքեր է և գլխաւորապես յառաջ կը բերէ բրինձ, բամբակ, անանաս, և այլն: — Սոնտի արշիպելագոսին մէջ Սռեւադրա նշանաւոր է հրաբուղխներովն և բարձր լերանց չըզթայովն որ ձիլիմայն կը զովացընէ՝ հասարակածին տակ ըլլալովն հանդերձ: Գլխաւոր բերքն են բրինձ, քոքոյ, արմաւենի, պղպեղ, ապանաս, լահուձ, քափուր, և այլն:

Ճաւա ալ առաջնոյն յատկութիւններն ունի. միայն ան-

257. Քանի՞ մասն կը բաժնուի Մոլուքեան արշիպելագոսն. և որո՞նք են նշանաւոր կղզիները:

258. Ո՞րչափ է Մալեզիոյ տարածութիւնը, և ո՞րչափ են բնակիչքը:

259. Մալեզիոյ գլխաւոր կղզեաց վրայ ինչ գիտնալիք կայ:

1. Iles des Epices.

ձրևաց եղանակին որ չսրուքեան կը յաջորդէ, լեռներէն իջած հեղեղները գաշտերն ողողելով՝ զոր կ՚ապականեն. երկիրը չատ հրաբղխային ըլլալով՝ երկրաշարժք չատ աւերած կ՚ընեն. ինչպէս վերջին անգամ 1883ին օգոստոս 25ին գիշերն և հետևեալ օրը չորս քաղաքք բոլորովին հիմնայատակ եղան, ուրիշներ ծովուն տակը գնացին, և չատերն ալ մեծ վնաս կրեցին, 40,000է աւելի անձանց կորստեամբ: Բերքերն են բրինձ, չաքար, խահուէ, լեղակ, քափուր, պղպեղ, կնդրուկ, և տեսակ մը ծիծռանց բայն զոր Զինք և Մալայեցիք ուտելու կը գործածեն:

Պոռնեոյ ալ թէպէտ հասարակածին տակ, նոյնպէս բարեխառն կլիմայ կը վայելէ՝ մէջի բարձր լերանց պատճառաւ: Գլխաւոր բերքերն են մեխակ, քափուր, պղպեղ, մըշկընկոյզ, պամպուս, սակի, ադամանդ, երկաթ. կենդանեաց մէջ վագր, փիղ, և մեծ օրանկ–ուդաև կապիկներ:

Զեղեպես կղզիք ամենաքաղցր կլիմայ մ՚ունին և բնութեան հիանալի տեսարաններ կ՚ընծայեն աչաց. յառաջ կը բերեն բամբակ, քափուր, աղինձ բրինձ, սանդալ փայտ, սակի. և տեսակ մը ծառ ալ կայ, ուսկից ոչխաս ըսուած սարսափելի թոյնն կ՚ելլէ, զոր տեղացիք իրենց նետերուն կը քսեն: — Մոլուքեանք, որոնց մէջ կը հասկըցուին նաև Թիմորեանք, հրաբղխային և չատ բարեբեր կղզիներ են: Գլխաւոր բերքն են համեմունք, մասնաւորապէս առատ մեխակ և մշկընկոյզ:

ՄԵԼԱՆԵԶԻԱ.

260. ԿՂԶԻՔ ՄԵԼԱՆԵԶԻՈՑ. — *Հարաւային Ովկիանեան որ իւր բնակչաց գունոց համար Մելանեզիա ըսուած է, 3 մեծ երկիրներ կը պարունակէ և 8 գլխաւոր արշիպեղագոսք:*

Երեք մեծ երկիրներն են.

261. ԱՒՍԹՐԱԼԻԱ, (բն. 3,150,000). *այս կղզիս որ*

260. Քանի՞ մասն կը բաժնուի Մելանեզիա:

261. Քանի՞ մասն կը բաժնուի Անգլիացւոց գաղթականութիւնն Աւստրալիա:

առաջ կ՚ըսուէր նաև Նոր–Հոլանտա՝ զայն գտնողներուն անուամբ, այնչափ ընդարձակ է՝ որ աշխարհագիրք ոմանք երրորդ ցամաք մը կը համարին, ներսերն չատ տեղ դեռ անծանօթ են, և Անգլիացիք որ տիրած են կղզւոյս՝ 5 գլխաւոր գաղթականութիւններ հաստատած են ծովեզերաց վրայ.

Ա. Նոր–Ուէյլզ Հարաւային, (բն. 1,170,000), *որ կ՚ընսուի նաև Աբևելեան Աւստրալիա. մայրաքաղաքն է Սիտնէյ (բն. 387,000), ճէրբըն նաւահանգստին վրայ. գեղեցիկ քաղաք է, և շրջակայքը չատ բարեբեր: — Բաթաւարդա, գաղթականութեան երկրորդ քաղաքն: — Պոդանի–Պէյ, Սիտնէյի հարաւակողմը:*

